«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիր

«ՀՀ Ազգային ժողովի՝ քաղաքական բանավեճեր վարելու և ռազմավարական հաղորդակցություն ապահովելու կարողությունների հզորացում» ծրագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

www.ichd.org

Աղբահանության ծառայությունների մատուցման որակի բարելավման ուղիները ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի վեց խոշորացված համայնքներում

Համահամայնքային քննարկումներ
Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի խոշորացված համայնքներում

Քննարկումների արդյունքների վերլուծություն

Վերլուծությունը մշակվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում՝ «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ենթադրամաշնորհային ծրագրի հետ համագործակցությամբ, ինչպես նաև Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» շրջանակում՝ բրիտանացի ժողովրդի տրամադրած աջակցությամբ իրականացվող «ՀՀ Ազգային ժողովի՝ քաղաքական բանավեճեր վարելու և ռազմավարական հաղորդակցություն ապահովելու կարողությունների հզորացում» ծրագրի աջակցությամբ:

Փաստաթղթի բովանդակության համար պատասխանատու է միայն Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության կամ Միացյալ Թագավորության պաշտոնական տեսակետները:

Ստորև քաղաքացիների արտահայտած տեսակետներն ու կարծիքները հնչեցվել են քննարկումների մասնակիցների կողմից և միշտ չէ, որ արտահայտում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի տեսակետներն ու կարծիքները:

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտագիտության խոսք 5
Ներածություն 7
Մեթոդաբանություն 8
Համահամայնքային քննարկումների ձևաչափը 8
Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը 10
Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ 12
Խոշորացման գործընթացի ազդեցությունը աղբահանության բարելավման վրա 12
Արդյունավետ, թափանցիկ, հաշվետվողական կառավարման հիմնախանդիրների ազդեցությունը աղբահանության բարելավման վրա 12
Համայնքում կարողությունների և մարդկային կապիտալի ազդեցությունը աղբահանության բարելավման վրա 13
Աշխարհագրության, ենթակառուցվածքների, լանդշաֆտի կտրտվածության և ճանապարհների ազդեցությունը աղբահանության բարելավման վրա 14
Աղբահանության ծառայությունների տեսակի ազդեցությունը ծառայությունների բարելավման վրա 14
Աղբահեռացման հաճախականության և ժամանակացույցի ազդեցությունը աղբահանության ծառայությունների բարելավման վրա 15
Աղբարկղերի և աղբանոթների տեղադրման ծածկույթի, խտության, ծավալի ազդեցությունը աղբահանության ծառայությունների բարելավման վրա 15
Հանրային կամ մասնավոր կազմակերպության կողմից ծառայությունների մատուցման ազդեցությունը աղբահանության բարելավման վրա 16
Համայնքի բյուջեի, մուտքերի, վարձավճարների հավաքագրման, սուբսիդավորուման, ծախսերի գերակայությունների խնդիրներն ու աղբահանության բարելավման այլընտրանքները 16
Մշակույթի, կենցաղի, սոցիալական նորմերի, արժեքների, վերաբերմունքի և վարքագծի ազդեցությունը աղբահանության ծառայությունների որակի բարելավման հնարավորությունների վրա 17
Տնտեսական գործունեության. Տնտեսության հիմնական ճյուղեր և տնտեսվարողների կարիքներ փոխկապակցությունը աղբահանության ծառայությունների որակի բարելավման խնդիրներին 19
Աղքատության խնդրի ազդեցությունը աղբահանության ծառայությունների որակի վրա 19
Աղբահանության ծառայությունների որակի իրավական կարգավորման և վերահսկողության խնդիրները 19
Բնապահպանական չափորոշիչների, հանրային առողջապահության ազդեցությունը աղբահանության ծառայությունների որակի վրա 20
Աղբահանության ծառայությունների բարելավման՝ աղբի տեսակավորման և վերամշակման խնդիրները 21
Շահեր, դիրքորոշում, մտադրություններ, զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք 21
Ա. ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 21

Ա.1. ԽՈՇՈՐԱՑՈՒՄ 21
Ա.2. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 23
Ա.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ 27
Բ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ (ՖԻԶԻԿԱԿԱՆ). ԼԱՆԴՇԱՖՏԻ ԿՏՐՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ 27
Գ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 29
Գ.1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴՈՒՍ, ՇՐՋԻԿ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ 29
Գ.2. ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱՖԻԿ 31
Գ.3. ԱՂԲԱՐԿՂԵՐԻ ԵՎ ԱՂԲԱՆՈԹՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏՈՊՈԳՐԱՖԻԱ՝ ԾԱԾԿՈՒՅԹ, ԽՏՈՒԹՅՈՒՆ, ԾԱՎԱԼ 35
Գ.4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ/ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 38
Դ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ, ՄՈՒՏՔԵՐ, ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ԾԱԽՍԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 40
Ե. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿԵՆՑԱՂ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ, ԱՐԺԵՔՆԵՐ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ, ՎԱՐՔԱԳԻԾ 49
Զ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐ 54
Է. ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ 55
Ը. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 55
Թ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ, ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 59
Ժ. ԱՂԲԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ, ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ 62
4. Սոցիալական երկխոսություն 66
Ա. ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 66
Ա.1. ԽՈՇՈՐԱՑՈՒՄ 66
Ա.2. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 68
Ա.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ 72
Բ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ (ՖԻԶԻԿԱԿԱՆ). ԼԱՆԴՇԱՖՏԻ ԿՏՐՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ 73
Գ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ 75
Գ.1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴՈՒՍ, ՇՐՋԻԿ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ 76
Գ.2. ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱՖԻԿ 78
Գ.3. ԱՂԲԱՐԿՂԵՐԻ ԵՎ ԱՂԲԱՆՈԹՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏՈՊՈԳՐԱՖԻԱ՝ ԾԱԾԿՈՒՅԹ, ԽՏՈՒԹՅՈՒՆ, ԾԱՎԱԼ 84
Գ.4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ/ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 86
Դ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ, ՄՈՒՏՔԵՐ, ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ԾԱԽՍԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 90

Ե. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿԵՆՑԱՂ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ, ԱՐԺԵՔՆԵՐ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ, ՎԱՐՔԱԳԻԾ 98
Զ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐ 105
Է. ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ 105
Ը. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ 106
Թ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ, ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 111
Ժ. ԱՂԲԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ, ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ 117
Հավելված 1. Գունային կոդավորում 120
Հավելված 2. Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքների քննարկման սցենարները 121
Ախուրյան, Աշոցք, Սցենար 1. Աղբահանության ճակատում՝ անփոփոխ 121
Ախուրյան, Աշոցք, Սցենար 2. Աղբի ու աղբատարի արանքում 122
Ախուրյան, Աշոցք, Սցենար 3. Նվեր աղբատարի ատամնանիվները չեն հաշվում 123
Ախուրյան, Աշոցք, Սցենար 4. Փողով, մտքով ու պատասխանատվությամբ 124
Ստեփանավան, Թումանյան, Սցենար 1. Աղբահանության ճակատում՝ անփոփոխ 125
Ստեփանավան, Թումանյան, Սցենար 2. Աղբի ու աղբատարի արանքում 126
Ստեփանավան, Թումանյան, Սցենար 3. Նվեր աղբատարի ատամնանիվները չեն հաշվում 127
Ստեփանավան, Թումանյան, Սցենար 4. Փողով, մտքով ու պատասխանատվությամբ 128
Դիլիջան, Նոյեմբերյան, Սցենար 1. Աղբահանության ճակատում՝ անփոփոխ 129
Դիլիջան, Նոյեմբերյան, Սցենար 2. Աղբի ու աղբատարի արանքում 130
Դիլիջան, Նոյեմբերյան Սցենար 3. Նվեր աղբատարի ատամնանիվները չեն հաշվում 131
Դիլիջան, Նոյեմբերյան Սցենար 4. Փողով, մտքով ու պատասխանատվությամբ 132
Հավելված 3. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը 133
Հավելված 4. Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքների վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով 134
Հավելված 5. Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքային տարբերակներում ներառված հիմնախնդիրները, հիմնական առանցքները 135
Հավելված 6. Համահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը 135

Երախտագիտության խոսք

Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր աջակցել են Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսություն» ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի վեց խոշորացված համայնքներում աղբահանման ծառայությունների մատուցման որակի բարելավման այլընտրանքների վերաբերյալ համահամայնքային քննարկումների կազմակերպմանը: Շնորհակալ ենք նրանց մասնակցության, կառուցողական քննադատության և ընկերական խորհուրդների համար:

Ցանկանում ենք մեր խորին երախտագիտությունը հայտնել Եվրոպական հանձնաժողովին, որը մեզ ընձեռել է քննարկումներն ու սույն ամփոփումն իրականացնելու հնարավորությունը: Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պրն. Պյոտր Սվիտալսկուն: Արդյունավետ կառավարման, քաղաքացիական մասնակցության և երկխոսության, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում Հայաստանի կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը նրա անմիջական և եռանդուն աջակցությունը նպաստել է ծրագրի և մասնավորապես՝ քննարկումների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և այս խնդիրները որպես գերակայություն ճանաչելու գործին:

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նաև Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամին» և Հայաստանի Հանրապետությունում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. տկն. Զուդիթ Ֆարնուորթին, Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպանության ծրագրերի ղեկավար տկն. Օքսաննա Աբրահամյանին, ծրագրերի ղեկավար տկն. Մանե Թադևոսյանին՝ Տավուշի մարզում քննարկումն իրականացնելու գործում աջակցության և ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմի ներկայացուցիչներին սույն ձևաչափով քննարկումներին ծանոթացնելու հնարավորություն ընձեռելու համար: Երախտապարտ ենք նաև Հայաստանի Հանրապետության Վեցերորդ գումարման Ազգային Ժողովի Աշխատակազմի ղեկավար պրն. Արա Սաղաթելյանին և Աշխատակազմի ղեկավարի տեղակալ պրն. Արսեն Բաբայանին՝ քննարկումներին ՀՀ Ազգային Ժողովի աշխատակզմի ներկայացուցիչների մասնակցությունն ապահովելու և ծրագրի իրականացմանը շահագրգռ աջակցության համար:

Քննարկումների նախապատրաստման և իրականացման համար ոգեշնչման աղբյուր են դարձել խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների ներկա վիճակն ու դրանց բարելավան այլընտրանքները համայնքի բնակիչներին հնարավորինս պարզ ու հասանելի ներկայացնելու, դրանց վերաբերյալ բնակիչների կարծիքները արդյունավետ կերպով լսելի դարձնելու գործում հայաստանյան քաղաքացիական հասարակության մի շարք կառույցների եռանդուն ջանքերը: Անցած տարիներին նրանց հետևողական և նվիրված աշխատանքի արդյունքում ձևավորված համայնքային ծառայությունների բարեփոխման օրակարգը հնարավոր դարձավ ամբողջականացնել և ներկայացնել խոշորացված համայնքների բնակիչների, պետական կառավարման հանրապետական և տարածքային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, զարգացման գործընկերների շահագրգիռ քննարկմանը, լսելի դարձնել նրանց ձայնը և ամփոփել նրանց բարձրաձայնած կարծիքները, մտահոգություններն ու առաջարկները սույն փաստաթղթում:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ենթադրամաշնորհային ծրագրի նախաձեռնությունն ու իրականացման պատասխանատվությունը ստանձնած «Կոմպասս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոնին, իր գործընկերներ՝ «ՀԿ Կենտրոն», «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» և «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի» հետ միասին, և «Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման»՝ («ՀամաՁարԿ») կոալիցիայի անդամներին, մեր գործընկերներին, ում շահագրգիռ և արդյունավետ մասնակցությամբ մշակվել են համահամայնքային քննարկումների սցենարները, ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի վեց խոշորացված համայնքներում ապահովել աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքների ու հարակից խնդիրների վերաբերյալ շահագրգիռ հարյուրավոր քաղաքացիների մասնակցությունը քննարկումներին: Քննարկումները նախապատրաստելու և արդյունքներն ամփոփելու ընթացքում ՄՁՄԿ աշխատակազմը բովանդակալից քննարկումներ է ունեցել «ՀամաՁարԿ» կոալիցիայիմիավորման անդամների հետ: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել համագործակցության և սույն ամփոփման մշակման գործում մեծ ներդրում ունենալու համար:

Խորին շնորհակալություն ենք հայտնում միավորման համակարգող խմբին և անձամբ Ղարիբ Հարությունյանին, Հայկարամ Դրմեյանին, Մարինե Ավետիսյանին, Արփինե Հակոբյանին, Սյուզան Հովսեփյանին և Արթուր Ղազարյանին մասնագիտական մոտեցման և քննարկումները նախապատրաստելու և կազմակերպելու գործում մեծ ներդրում ունենալու, քննարկումներին մասնակցելու, անգնահատելի գաղափարների և ողջամիտ դիտողությունների համար:

Շնորհակալություն ենք հայտնում նաև «Կառուցողական երկխոսություն» ծրագրի մեր գործընկերներին՝ Իրավաբանների հայկական ասոցիացիային, Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոնին

(ՍԻՎԻՏԱՍ), ՓՄՉ համագործակցության ասոցիացիային, Հայաստանի համայնքների միությանը և «Ագորա Սենթրլ Յուրոփ» հասարակական կազմակերպությանը (Չեխիա) իրենց ներդրման և համագործակցության համար:

Ներածություն

Խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքների վերաբերյալ ՀՀ քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու և հասարակությանը հուզող խնդրի քննարկումներին ակտիվորեն ներգրավելու նպատակով, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» (ՄԶՄԿ) հասարակական կազմակերպությունը, ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցողական երկխոսություն» ծրագրի և դրա «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում, ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի վեց խոշորացված համայնքներում 2018թ. նոյեմբերին-դեկտեմբերին նախաձեռնեց համահամայնքային քննարկումների շարք: ՀՀ Տավուշի մարզում քննարկումները իրականացվել են Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» շրջանակում՝ բրիտանացի ժողովրդի տրամադրած աջակցությամբ իրականացվող «ՀՀ Ազգային ժողովի՝ քաղաքական բանավեճեր վարելու և ռազմավարական հաղորդակցություն ապահովելու կարողությունների հզորացում» ծրագրի աջակցությամբ:

Համահամայնքային քննարկումների ձևաչափով ՄԶՄԿ-ն նախկինում քննարկման է դրել հասարակությանը հուզող բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման, ՀՀ Սահմանադրության փոփոխությունների, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման, ՀՀ պաշտպանության ոլորտում քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ հարցերը: Այս ձևաչափը հասարակության տարբեր խմբերը ներկայացնող մեր համաքաղաքացիներին հնարավորություն է ընձեռում անմիջականորեն և արդյունավետ կերպով մասնակցել քննարկումներին, արտահայտել իրենց կարծիքն ու մոտեցումները և բարձրաձայնել իրենց մտահոգող խնդիրները:

Քննարկումները, որոնց մասնակցել են հանրապետության շուրջ 300 քաղաքացի, իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան (Ախուրյան և Աշոցք համայնքներ), Լոռու մարզի Վանաձոր (Ստեփանավան և Թումանյան համայնքներ) և Տավուշի մարզի Դիլիջան (Դիլիջան և Նոյեմբերյան համայնքներ) խոշորացված համայնքներում:

Քննարկումներն իրականացվել են «Մասնակցային մոնիթորինգ՝ հանուն խելացի համայնքների ստեղծման Հայաստանում» ծրագրի շրջանակներում 2018թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին Հայաստանի երեք մարզերի վեց խոշորացված համայնքներում համայնքային մի շարք ծառայությունների որակի գնահատման հետազոտության, մասնագետների, այդ թվում՝ ԵՄ աջակցությամբ իրականցվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում «ՀամաՁարԿ» միավորման և դրա անդամ կազմակերպությունների հետ քննարկումների, մամուլում հրապարակումների, կարծիքների և վերլուծականների հիման վրա ՄԶՄԿ փորձագետների կողմից մշակված ընդհանուր առմամբ 12 հնարավոր տարբերակների շուրջ, որոնք ներկայացված են Հավելված 2-ում:

Համահամայնքային քննարկումների ՄԶՄԿ ձևաչափը հնարավորություն է ընձեռում արձանագրել քննարկման ընթացքում հնչած յուրաքանչյուր ամփոփ միտք և առաջարկություն, ամփոփել ու վերլուծել դրանք և դնել հանրության ու որոշում կայացնողների առջև: Քննարկման ընթացքում արտահայտված բոլոր մտքերը ներկայացված են ՄԶՄԿ պաշտոնական էլեկտրոնային կայքում՝ http://www.ichd.org հասցեում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մասնակցության՝ երկխոսության և բանավեճի արդյունքներն ամփոփված են սույն փաստաթղթում և վստահելի տեղեկությունների աղբյուր են համայնքների զարգացմանը, համայնքային ծրագրերում և բյուջեներում երեխաների և երիտասարդների, կանանց և տղամարդկանց, տարեցների հիմնախնդիրների արծարծմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, կոռուպցիայի դեմ պայքարին և աղքատության հաղթահարմանն ուղղված հանրային քաղաքականության բարեփոխումների մշակման պատասխանատուների և շահագրգիռ պետական, համայնքային, հասարակական, մասնավոր հատվածի կազմակերպությունների և միջազգային զարգացման գործընկերների համար:

Մեթոդաբանություն

Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքների շուրջ հանրային քննարկումների իրականացման և դրա արդյունքների վերլուծության մեթոդաբանությունը բաղկացած է երկու մասից: Մեթոդաբանական առաջին մասը ներկայացնում է համահամայնքային քննարկումների ձևաչափը, իսկ երկրորդը՝ քննարկումների արդյունքների վերլուծական գործիքները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը

Համահամայնքային քննարկման (Town Hall Meeting) ձևաչափը մշակվել և ներդրվել է ՄԶՄԿ կողմից 2005 թվականին, հանրային որոշումների կայացմանը քաղաքացիների արդյունավետ մասնակցությունն ապահովելու նպատակով: Իր տեսակի մեջ եզակի մասնակցային ժողովրդավարության այս ձևաչափը մշակվել է «Ամերիկան խոսում է» (America Speaks) կազմակերպության փորձի հիման վրա, որը մշակել է այս ձևաչափի մեթոդաբանական սկզբունքները և դրանք առ այսօր հաջողությամբ կիրառում է ԱՄՆ-ում:

Որոշում կայացնողները հաճախ դժվարանում են գնահատել հանրային շահերի կենտրոնում գտնվող այս կամ այն խնդրի վերաբերյալ հասարակ քաղաքացիների մեծամասնության կարծիքներն ու ընկալումները: Ավելին, նման իրավիճակում քաղաքացիները ևս օտարվում են հանրային կառավարման գործընթացից և հակված չեն մասնակցել հանրային կյանքին: Արդյունքում, արատավոր շղթան փակվում է մարտահրավեր նետելով ժողովրդավարությանը երկրում:

Համահամայնքային քննարկումների գործընթացը հնչեցնում է քաղաքացիների ձայնը, լսելի դարձնում նրանց կարծիքներն ու մոտեցումները հանրային որոշումների կայացման գործում՝ հանրային կարևորագույն խնդիրների վերաբերյալ հասարակության անդամների կամքն ու դիրքորոշումը կառավարման ղեկը ստանձնած գործիչներին անմիջականորեն հայտնելու հնարավորություն ընձեռելու միջոցով:

Յուրաքանչյուր քննարկում ապահովում է բազմակարծությունն ու քաղաքական դաշտում հավասարակշռությունը՝ գործընթացում հարյուրավոր հասարակ քաղաքացիների միաժամանակյա ընդգրկման, քաղաքացիների արտահայտած կարծիքների անհապաղ և արդյունավետ ամփոփման, ինչպես նաև արդյունքների լայնածավալ տարածման ու տեղեկատվության ստացման շնորհիվ:

Ձևաչափի համեմատական առավելություններն են, մասնավորապես. հիմնախնդրի վերաբերյալ կարծիքների վերուղղումը, արդյունավետ մասնակցությունը՝ հնչած որևէ միտք չի անտեսվում, քննարկումների շարունակականությունը, գերակայությունների հստակ առանձնացումը: Ձևաչափի հաջող կիրառման հիմնական գրավականներն են, մասնավորապես. Բազմակարծության ապահովումը յուրաքանչյուր սեղանի շուրջ, որոշում կայացնողների ներգրավումը գործընթացի յուրաքանչյուր փուլում, բարձրորակ բովանդակության, կառուցվածքի և ընթացքի ապահովումը, գործընթացի ազդեցությամբ կատարվող իրական փոփոխությունները:

Համահամայնքային քննարկումների ձևաչափը խարսխված է քաղաքացիների միջև երկխոսության և կարծիքների փոխանակման վրա, ի հակադրություն՝ երկարաշունչ ելույթների, հարցուպատասխանի կամ զեկուցումների: Քննարկումներին կլոր սեղանի շուրջ ձայնի հավասար իրավունքով մասնակցում են հասարակության տարբեր խմբերը ներկայացնող քաղաքացիներ՝ 10-15 հոգի յուրաքանչյուր սեղանի շուրջ, ովքեր իրենց կարծիքն են արտահայտում քաղաքականության, միջոցների տրամադրման, պլանավորման կամ այլ կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ: Եթե առանձին քննարկումը մասնակիցների թիրախ խմբին չի ներկայացնում սեռային կամ տարիքային հատուկ պահանջներ, ապա յուրաքանչյուր սեղանի շուրջ, ինչպես նաև դահլիճում, ապահովվում է կանանց, տղամարդկանց, երիտասարդների հնարավորինս հավասար կազմ: Յուրաքանչյուր սեղանի շուրջ քննարկումը վարում է բարձր որակավորում ունեցող սեղանավարը (facilitator), ինչն ապահովում է մասնակիցների հետևողականությունը քննարկվող խնդրի շրջանակներում, ինչպես նաև ժողովրդավարական սկզբունքների պահպանումը քննարկման ընթացքում: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների իրազեկման պատշաճ մակարդակն ապահովելու նպատակով, նրանց տրամադրվում են հնարավորինս մանրամասն և հավասարակշռված տեղեկություններ խնդրի վերաբերյալ:

Ձևաչափի շրջանակներում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում առանձին սեղանների շուրջ ընթացող քննարկումները վերածել ընդհանուր խմբային քննարկման ողջ դահլիճում: Յուրաքանչյուր սեղանի շուրջ արտահայտված մտքերն ու կածիքները գրանցվում և կենտրոնացվում են անլար համակարգչային ցանցի միջոցով: Յուրաքանչյուր սեղանին ներկա է գրառող, ում պարտականությունն է գրանցել քննարկման մասնակիցների հնչեցրած յուրաքանչյուր միտք և ուղարկել այն գլխավոր օպերատորին, ով ապահովում է ժամանած ուղերձների ցուցադրումը քննարկման բոլոր մասնակիցների համար տեսանելի դիրքերում տեղակայված էկրաններին: Քննարկման ավարտին համակարգչային ծրագրի միջոցով յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն է ընձեռվում քվեարկել ի օգուտ հստակ ձևակերպված հարցերի շուրջ սեփական դիրքորոշման: Հատկանշական է, որ ողջ խումբը

հնարավորություն ունի անդրադառնալ ցանկացած առանձին սեղանի շուրջ հնչեցված մտքերին, ինչպես նաև քվեարկության միջոցով որոշում կայացնողների հասցնել իրենց դիրքորոշումը խնդրի վերաբերյալ: Քննարկման ավարտին ամփոփվում և հնչեցվում է քվեարկության միջոցով ներկաների արտահայտած ընդհանրական դիրքորոշումը: Որոշում կայացնողներն ակտիվորեն ներգրավվում են քննարկմանը՝ մասնակցելով քննարկմանը, դիտելով գործընթացը, ինչպես նաև քննարկման ավարտին արձագանքելով քաղաքացիների հարցադրումներին ու կամարտահայտությանը:

Միով բանիվ, համահամայնքային քննարկման կազմակերպումը պահանջում է. (ա) քննարկման խնդրի հստակեցում և ձևակերպում, (բ) քննարկման համար անհրաժեշտ փորձագիտական տեղեկությունների ապահովում, այլընտրանքային տարբերակների տեսքով, (գ) անհրաժեշտ ծրագրային ապահովում, (դ) անհրաժեշտ համակարգչային սարքավորում, (ե) քննարկումների վայրի, պայմանների ու կահավորման ապահովում, (զ) համակարգչային ցանցի կազմակերպում, (է) պատշաճ որակավորում ունեցող սեղանավարների և գրառողների առկայություն, անհրաժեշտության դեպքում՝ նրանց վերապատրաստման միջոցով, (ը) քննարկման մասին քաղաքացիների իրազեկում և մասնակիցների կազմի ապահովում, (թ) քննարկման ընթացքում սպասարկող և տեխնիկական անձնակազմի առկայություն, (ժ) քննարկման արդյունքների ամփոփում, (ի) արդյունքների վերաբերյալ իրազեկում բոլոր շահագրգիռ անձանց: Հավելված 3-ում ներկայացված է համահամայնքային քննարկման տիպական տարածական նկարագիրը:

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծությունը

Համահամայնքային քննարկումների արդյունքների համեմատական վերլուծության մեթոդաբանությունն անուղղակի սոցիալական երկխոսություն է ապահովում քննարկվող խնդրի՝ Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքների վերաբերյալ ՀՀ երեք մարզերի քաղաքացիների վերաբերմունքն ու դիրքորոշումն արտահայտող փաստարկների համադրման և այդպիսով՝ միջնորդավորված զուգահեռ «երկխոսություն» ծավալելու միջոցով (Հավելված 4):

Համեմատական վերլուծության մեթոդաբանությունը հենվում է երկու բաղադրիչների. (ա) համահամայնքային քննարկումների արդյունքների (ուղերձների) վերլուծություն՝ արծարծված հիմնախնդիրների (Հավելված 5) և երեք հիմնական՝ գիտելիք[1], վերաբերմունք[2] և ընկալում հարթությունների (dimensions) առումով, և (բ) քննարկման դրված սցենարների վերաբերյալ կամ հիմնախնդիրների շուրջ արտահայտված կողմ և դեմ կարծիքների՝ ուղերձների ամփոփում:

Նման մոտեցումն ապահովում է քաղաքացիների միջև միջնորդավորված բանավեճն ու երկխոսությունը՝ նրանց հնչեցրած կարծիքների՝ ուղերձների, ամփոփման միջոցով: Որոշ դեպքերում բանավեճը կամ բողոքը միակ հնարավոր ձևաչափն են: Այն դեպքերում, երբ մարդիկ ներգրավվում են բանավեճի կամ ընդդիմախոսության մեջ, կողմերը փորձում են անհրաժեշտ ճնշում գործադրել կամ քաղաքական աջակցություն ձեռք բերել իրենց պահանջներն ու պատկերացումները տեղ հասցնելու նպատակով: Քանզի բանավեճի ու երկխոսության նպատակները տարբեր են, ուստի երկուսն էլ հաղորդակցության դաշտի կարևորագույն տարրեր են: Ցավո՜ք, հաճախ երկխոսության և բանավեճի միջև հավասարակշռությունը զգալիորեն շեղված է երկրորդի կողմը:

Հանրային քննարկումներում բանավեճային ձևաչափը գերակշռում է բազում պատճառներով, այդ թվում. (ա) ոմանք համոզված են, որ բանավեճն ու ընդդիմախոսությունը լսելի դառնալու միակ ուղին են, (բ) երկխոսության մոդելը շատերի ընկալմամբ նպաստում են վիճակի պահպանմանը կամ դանդաղ փոփոխություններին, (գ) համայնքային կամ հասարակական մակարդակներում իրական և արդյունավետ երկխոսության դրական օրինակների եզակի են, (դ) բանավեճից բացի այլ մեթոդների համար հաստատված կանոնների բացակայությունը, (ե) անձանց տարբեր խմբերի միջև առկա թշնամական մթնոլորտը ենթադրում է, որ հաղորդակցությունը ևս պիտի լինի թշնամական, (զ) բանավիճելն ավելի հրապուրիչ ու հետաքրքիր է, քան երկխոսելը, և բանավիճողին նկատելի է դարձնում, (է) բանավեճն ու ընդդիմախոսությունը «խոսել-դատարկվելու» գործառույթ ունի, (ը) բանավեճի պարագայում մարդիկ կարող են լսելու չտալ ու չսովորել բաներ, որոնք չեն սիրում, (թ) բանավիճելն ավելի հեշտ է. ռիսկերը քիչ են, բանավիճողը նվազ խոցելի է, (ժ) մարդիկ սիրում են հանդես գալ խմբերի, այլ ոչ սեփական անձի անունից, (ի) երկխոսությունը ընկալվում է որպես «հալելու ու հալվելու» միջոց, (լ) վախը, որ երկխոսությունը զիջումներ է պահանջում, (խ) վախը, որ երկխոսելու պարագայում խնդրելու են «ձուլվել-միակարծիք դառնալ», (ծ) վախը, որ շփոթմունքը, խոցելիության զգացումը կամ հակառակ կողմից կարծիքն ըմբռնելը երկխոսողին դարձնում է նվազ համոզիչ, (կ) վախը, որ երկխոսության պարագայում, եթե դիմացինը մնում է բանավեճի շրջանակներում, ապա երկխոսություն սկսողը կարող է տանուլ տալ երկխոսությունը, (հ) շատերը տեղյակ չեն երկխոսության առանձնահատկություններին և չգիտեն, թե ինչու է այն շահեկան: Այսպե՜ս, շատերը տեղյակ չեն, օրինակ, որ իրենց համոզչությունը միայն շահում է, երբ հակառակ կողմին հասկանալ են տալիս, որ լսել են նրան:

Իհարկե՜, երկխոսության ծավալումն ինքնին ամենաբուժիչ չէ, սակայն բանավեճ-երկխոսություն խառնուրդի հավասարակշռումը օգտակար է այն հաղորդակցության և խնդիրների լուծման բազմաթիվ

---

[1] Գիտելիքը ներառում է. (ա) կյանքի փորձի և կրթության միջոցով անձի ձեռք բերած փորձառությունն ու հմտությունները, խնդրի տեսական կամ գործնական ըմբռնումը, (բ) առանձին ոլորտում կամ ընդհանուր առմամբ հայտնի տեղեկություններն ու փաստերը, և (դ) դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ իրազեկությունը: Գիտելիքի վերաբերյալ փիլիսոփայական քննարկումները հաճախ սկսվում են գիտելիքի պլատոնական սահմանմանը հղումով՝ «գիտելիքը հիմնավորված ճշմարիտ հավատն է»: Այդուհանդերձ, գիտելիքի համընդհանուր ճանաչման և ընդունման արժանացած սահմանումը կամ նման սահմանման հեռանկարը բացակայում է, իսկ միմյանց հետ մրցող տեսությունները բազում են: Անգլերենի օքսֆորդյան բառարան. http://www.oed.com:

[2] Վերաբերմունքը ենթադրական կառուցվածք է, որն արտահայտում է առարկայի հանդեպ անձի համակրանքի կամ հակակրանքի աստիճանը: Վերաբերմունքը, ընդհանուր առմամբ, բացասական կամ դրական պատկերացումներն են անձի, վայրի, առարկայի կամ դեպքի հանդեպ, որոնք հաճախ կոչվում են վերաբերմունքի առարկա: Մարդիկ կարող են նաև հակասական կամ տարակուսելի վերաբերվել առարկային, ինչը նշանակում է, որ նրանք միաժամանակ թե՛ դրական, թե՛ բացասական վերաբերմունք ունեն խնդրո առարկայի հանդեպ: Վերաբերմունքը գնահատական է: Այն ձևավորվում է ԱՎԳ մոդելով (ազդեցություն, վարքագիծ և գիտակցում): Զգայական արձագանքը հուզական արձագանք է, որն արտահայտում է առարկային անձի կողմից տրված նախապատվության աստիճանը: Վարքագծային մտադրությունն արտահայտվում է անձի խոսքի կամ տիպական վարքագծային միտումների միջոցով: Գիտակցական արձագանքն առարկայի գիտակցական գնահատումն է, որը ներառում է առարկայի վերաբերյալ անձի պատկերացումներն ու համոզմունքները: Վերաբերմունքը հաճախ անձնական փորձի կամ դիտարկման ճանապարհով միջավայրից քաղած դասերի արդյունք է: Breckler, S. J., & Wiggins, E. C. (1992). On defining attitude and attitude theory: Once more with feeling. In A. R. Pratkanis, S. J. Breckler, & A. C. Greenwald (Eds.), Attitude structure and function. Hillsdale, NJ: Erlbaum: էջեր՝ 407-427:

խոչընդոտների հաղթահարելու գործում, որոնք ստեղծվում են բացառապես բանավեճի ձևաչափի պարագայում: Երկխոսության առավել բարձր մակարդակը կարող է խթանել քննարկումներում առավել մեծ թվով անձանց ներգրավումը: Երկխոսությունը հնարավորություն է ընձեռում հարստացնել քննարկումը սեփական փորձի օրինակներով, փոխանակել տարակուսանքը, մտավախություններն ու շփոթմունքը: Այս պարագայում ավելի շատ տեղեկություններ են փոխանակվում և ըմբռնումը խորանում է: Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքների քննարկումը հաճախ հիմնվում է մյուսների կողմից խնդրի ընկալման, ցանկությունների և գերակայությունների թյուր ընկալման վրա: Արդյունքում՝ հնարավորությունների զարգացման նախաձեռնությունները կարող են դուրս գալ ուղեգծերից[3]:

Վերլուծությունը ենթադրում է նաև դասակարգված և խմբավորված ուղերձների համեմատական վերլուծությունը հակադրություն-համադրություն (Contrast-Coherence) սանդղակով (Հավելված 6): Վերլուծության փուլերն են.

Փուլ 1-ին. Նախնական մշակման փուլում հեռացվել են կրկնվող կամ տեխնիկական ուղերձները, քերականորեն սրբագրվում է ողջ տեքստը:

Փուլ 2-րդ. Տեսակավորման փուլում հեռացվել են անձնական կամ ազգային վիրավորանք[4] կրող ուղերձները, որոնք կարող են տրամադրվել կամ վերլուծվել առանձին հետազոտության շրջանակներում, մասնավորապես, ի հայտ բերելու համար առանձնապես բացասական վերաբերմունքն ու ընկալումը, որոնք, օրինակ, խոչընդոտում են հարաբերությունների կարգավորմանը:

Փուլ 3-րդ. Ըստ հիմնախնդիրների դասակարգման փուլում հնչած ուղերձները դասակարգվել են ըստ Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների հիմնախնդիրների (Հավելված 5) և ապա ամփոփվել Սոցիալական երկխոսության վերլուծական աղյուսակում: Այս փուլում յուրաքանչյուր ուղերձ տեղադրվել է համակարծիք ուղերձների վանդակում, ներառելով թե՛ ռացիոնալ, թե՛ իռացիոնալ թե՛ հուզական փաստարկները: Հակառակ վանդակում տեղադրվել են ընդդիմախոս փաստարկներ պարունակող ուղերձները: Որոշ դեպքերում ընդդիմախոս վանդակներում ուղերձներ չկան:

Փուլ 4-րդ. Սինթեզի փուլում դասակարգված ուղերձներն ու փաստարկները վերլուծվել են համադրություն-հակադրություն սանդղակի միջոցով: Այս փուլում հիմնախնդիրները դիտարկվել են երկու առանցքներով՝ (ա) ինչպիսի ազդեցություն կունենան Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավումն այս կամ այն առանձին հիմնախնդրի վրա, և (բ) ինչպիսի ազդեցություն կունենա առանձին հիմնախնդիրն այլընտրանքների վրա: Դիտարկվող հիմնախնդրի վերաբերյալ առանձին վերաբերմունքի կշիռն ու ընկալման սրությունը պայմանավորվել են ոչ թե այդ վերաբերմունքն արտահայտող արտահայտությունների, այդ թվում՝ ռացիոնալ, իռացիոնալ, հուզական և այլ, հաճախականությամբ կամ քանակով, այլ նման արտահայտությունների բազմազանությամբ ու բազմակողմանիությամբ: Այսինքն առանձին վերաբերմունքը կարևորվել է այնքանով, որքանով ավելի բազմազան են այն հիմնավորող կամ արտահայտող ձևակերպումները: Ձևակերպումների մեխանիկական կրկնությունը չի փաստում առանձին վերաբերմունքի միանշանակ կարևորության մասին, այլ կարող է արտահայտել, օրինակ, հիմնախնդրի վերաբերյալ առկա կարծրատիպերի տարածվածությունը:

[3] Doug Stone, Robert Ricigliano and Eric Collins. Conflict Management Group. 1993:

[4] Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանքը սահմանվում է որպես արտահայտություն կամ գործողություն, որը որևէ մեկին կարող է պատճառել հուզական ցավ կամ որևէ այլ կերպով կարող է բորբոքել անհատին: Վիրավորանքը հարաբերական հասկացություն է, քանզի վիրավորանքի զգացումը հաճախ պայմանավորված է առանձին անհատի անձնական արժեքներով: Սույն մեթոդաբանության շրջանակներում վիրավորանք չեն համարվել այն արտահայտությունները, որոնք ազատորեն շրջանառվել են հայաստանյան կամ միջազգային լրատվամիջոցներում:

Հիմնական դիտարկումներ և եզրակացություններ

Խոշորացման գործընթացի ազդեցությունը աղբահանության բարելավման վրա

Համայնքային քննարկումների ընթացքում բնակիչներն ընդգծում են համայնքերի խոշորացման արդյունքում աղբահանության կազմակերպման ոլորտում վերջին տարիների թե՛ դրական, թե՛ բացասական փոփոխությունները:

Քննարկումների մասնակիցների մի խումբ գտնում է, որ համայնքների խոշորացումը դրականորեն է ազդել աղբահանության կազմակերպման վրա. համայնքները ձեռք են բերել կամ ստացել են նոր աղբատար մեքենաներ, տեղադրվել են աղբամաններ: Քաղաքացիների կարծիքով, խոշորացված համայնքների բյուջեն թույլ է տալիս գնել համայնքի բոլոր բնակավայրերը սպասարկող անհրաժեշտ աղբատար տեխնիկա, որն անհնար կլիներ գնել մինչև խոշորացումն առանձին համայնքների բյուջեով:

Համայնքի բնակիչների մի խմբի կարծիքով, համայնքերի խոշորացումից հետո ավագանին սկսել է ավելի շահագրգռված աշխատել, ուշադրություն դարձնելով՝ համայնքի բոլոր բնակավայրերի աղբահանության խնդիրներին: Մասնակիցների մեկ այլ խմբի կարծիքով, առաջին հերթին հարկավոր է փոխել մշակույթը և պահանջատեր լինել՝ աղբահանության պատշաճ կազմակերպման հարցում:

Միաժամանակ, քննարկման մասնակիցներից ոմանք կարծում են, թե համայնքների խոշորացումն էական ազդեցություն չի գործել համայնքի բնակավայրերում աղբահանության կազմակերպման վրա, ըստ բնակիչների՝ հիմնականում շահել են համայնքների կենտրոնական բնակավայրերը, իսկ գյուղերում, աղբահանության մասով ոչինչ չի փոխվել: Քանի որ մարդիկ, չունեն աղբը թափելու հարմար վայր, աղբատար մեքենաների հաճախման գրաֆիկը հստակ չէ, ուստի շատերը ստիպված այրում են աղբը:

Բնակիչների կարծիքով, խոշորացման արդյունքում համայնքների ընդհանուր բյուջեն մեծացել է, բայց դրան զուգահեռաբար ավելացել են նաև խնդիրները և հրատապ լուծում պահանջող հարցերը, իսկ համայնքների ղեկավարները հիմնականում ուշադրություն են դաձնում կենտրոնին: Քննարկման մասնակիցների կարծիքով, քանի որ համայնքային բյուջեն ձևավորվում է բոլոր բնակավայրերի հարկատուների գումարներից, հետևաբար այդ գումարներն էլ պետք է հավասարապես ուղղվեն բոլոր բնակավայրերի խնդիրների լուծմանը: Ինչ կերպ համայնքի կենտրոնում է կազմակերպվում աղբահանությունը, նույնկերպ պետք է իրականացվի համանյքի բոլոր բնակավայրերում, նկատում են բնակիչները: Քաղաքացիներից ոմանք էլ առաջարկում են աղբահանության կազմակերպման հարցում հնարավություն տալ բնակավայրերին ինքնուրույն կազմակերպել այն:

Արդյունավետ, թափանցիկ, հաշվետվողական կառավարման հիմնախանդիրների ազդեցությունը աղբահանության բարելավման վրա

Քննարկումների մասնակիցների կարծիքով, ինչպես ամբողջ համայնքի բյուջեի, այնպես էլ աղբահանության համար նախատեսված գումարների նկատմամբ բնակիչները պետք է կարողանան վերահսկողություն իրականացնել: Ըստ քաղաքացիների, եթե բնակիչներին տրվեն վերահսկողական գործիքներ, վերջիններս ավելի պահանջատեր կլինեն համայնքային իշխանությունների հանդեպ, ինչն էլ կբարձրացնի աշխատանքի արդյունավետությունը, ընդ որում՝ ոչ միայն աղբահանության ոլորտում: Բնակիչներն առաջարկում են համայնքային վերահսկողության տարբեր մոդելներ, օրինակ՝ ստեղծել առաձին հասարակական խորհուրդ որի իրավասությունը կլինի զբաղվել համայնքում աղբահանության կազմակերպման վերահսկողությամբ, կամ համայնքի բյուջեից գումար տրամադրել և ստեղծել հաստիք, որի հիմնական պարտականությունը կլինի համայնքում աղբահանույթան կազմակերպումը և վերահսկումը: Բնակիչներից ոմանց կարծիքով էլ, որոշակի պարբերությամբ համայնքային քննարկումների կազմակերպումը, և կատարված աշխատանքների ու ծախսերի մասին բնակիչներին տեղյակ պահելը հաշվետվողականության և վերահսկողության լավագույն տարբերակներից մեկն է: Բնակիչների մի խմբի կարծիքով ՁԼՄ-ների ներգրավումը ևս արդյունավետ վերահսկողական գործիք կարող է լինել: Որոշ քաղաքացիներ առաջարկեցին, ընտրություններից առաջ մշակել պայանագրի ձևանմուշ, որտեղ նշված կլինեն համայնքի ղեկավարի կողմից ընտրվելու դեպքում կարևոր խնդիրերին լուծում տալու պատրաստակամությունը. սա բնակիչներին հնարավարություն կտա վերահսկողություն իրականանացնել, և համայնքի ղեկավարությունից պահանջել իր պարտականությունները կատարել պատշաճ կերպով:

Համայնքների բնակիչները հաճախ տեղյակ չեն, թե ով է համայնքում աղբահանության պատասխանատուն, և նույնիսկ եթե բնակիչները փորձեն վերահսկել, ապա վերջնական արդյունքում պարզ չէ, թե ում պետք է դիմեն: Քննարկումների մասնակիցների մի խմբի կարծիքով, եթե համայնքի աղբահանույթյունն իրակացվի մասնավոր կազմակերպության կողմից, այդ դեպքում կրկնակի վերահսկողություն կիրականացվի՝ համայնքային իշխանությունների և բնակիչների կողմից: Միաժամանակ, որոշ բնակիչների կարծիքով համայնքային իշխանություններն ավելի լավ գիտեն համայնքային

խնդիրները և հնարավորությունները, հետևաբար ավելի լավ կարող են կազմակերպել աղբահանությունը, իսկ բնակիչները հստակ տեղյակ են ումից պահանջել որակյալ ծառայություններ:

Քաղաքացիներից ոմանց կարծիքով, համայնքներում աղբահանության արդյունավետ կազմակերպման գործում կարևոր է համայնքի ղեկավարի և ավագանու դերը: Ըստ բնակիչների՝ կախված համայնքի ղեկավարի ջանասիրությունից և սրտացավությունից՝ աղբահանությունը կարող է արդյունավետ կազմարպվել, ինչպես օրինակ, Ստեփանավան համայնքում: Քննարկման մասնակիցների կարծիքով, պետք է պահանջատեր լինել համայնքի ավագանուց, և ստիպել որ նրանք հանդիպումներ ունեան բնակիչների հետ ոչ միայն ընտրությունների նախօրյակին: Բնակիչների կարծիքով, համայնքային կարևոր խնդիրները քննարկելու համար անհրաժեշտ է ապահովել համայնքի ղեկավարի և բնակիչների հաճախակի հանդիպումները և պարբերաբար համայնքային քննարկումներ կազմակերպել: Աղբահանության արդյունավետ կազմակերպման համար օգտակար գործիք կարող են դառնալ նաև համայնքային քննարկումները:

Բնակիչների կարծիքով, համայնքերում աղբահանության արդյունավետ կազմակերպման համար կարելի է դիտարկել միջազգային փորձը, ընտրված համայնքներում իրականացանել պիլոտային ծրագրեր և ընտրել համայնքի բնակավայրերին ավելի համապատասխանող տարբերակը: Միաժամանակ, որոշ քաղաքացիների կարծիքով, զարգացած երկրներում աղբահանության համար տրամադրվող գումարները չեն կարող համեմատվել Հայաստանի համայնքային բյուջեների հետ, հետևաբար ավելորդ ծախսերից խուսափելու համար, ուղղակի պետք է աղբահանությունը շարունակել իրականացնել նույն ձևով:

Քնարկման մասանակիցների կարծիքով, աղբահանության արդյունավետ կազմակերպման համար պետք է հաշվի առնել համայնքի բոլոր բնակավայրերի առանձնահատկությունները և իրականացնել նախորդ տարվա աշխատանքների գնահատում, ինչը կարևոր հիմք կդառնա աղբահանության կազմակերպման հետագա ծրագրերի մշակման համար: Բնակիչները նշում են, որ աղբահանության արդյունավետ կազմակերպումը երկարատև և շարունակական գործընթաց է, և առաջին հերթին հենց համայնքի բնակիչները պետք է ինքնակազմակերպվեն, դիմեն համայնքային և մարզային իշխանություններին՝ իրենց համայնքում աղբահանության պատշաճ կազմակերպման պահանջով:

Համայնքում կարողությունների և մարդկային կապիտալի ազդեցությունը աղբահանության բարելավման վրա

Քննարկման մասնակիցների կարծիքով, թեև համայնքներում բարձր է գործազրկության մակարդակը, այնուամենայնիվ, բնակիչները աղբահանության կազմակերպման համակարգում աշխատելու ցանկություն չունեն մի քանի պատճառներով՝ առաջին հերթին տարածված կարծրատիպը, թե աղբահանության ոլորտում աշխատելը պատվաբեր չէ: Երկրորդ կարևոր պատճառը վարձատրությունն է՝ ցածր աշխատավարձը, որի պատճառով աղբահանության ոլորտում աշխատողները շահագրգռված չեն լրացուցիչ ջանք գործադրել և բացի իրենց հիմնական գործառույթից աղբահանության կազմակերպման հարցում որևէ լրացուցիչ աշխատանք կատարել: Այսպես, ինչպես նշում են քննարկումների մասնակիցները, կոմունալ ծառայության աշխատակիցները միայն մաքրում են աղբամանները՝ ուշադրություն չդարձնելով ճամփեզրին կուտակված աղբին:

Աշխարհագրության, ենթակառուցվածքների, լանդշաֆտի կտրտվածության և ճանապարհների ազդեցությունը աղբահանության բարելավման վրա

Քննարկումների մասնակիցների զգալի հատվածի կարծիքով համայնքներում աղբահանության արդյունավետ կազմակերպումը մեծապես կախված է համայնքային ենթակառուցվածքներից, մասնավորապես՝ ճանապարհներից: Բնակիչների կարծիքով, աղբահանության կազմակերպումից առաջ պետք է նախ վերակառուցել կամ վերանորոգել համայնքային ճանապարհները, քանի որ կախված ճանապարհների որակից՝ աղբատար մեքենաները հաճախ չեն կարողանում պատշաճ կերպով սպասարկել համայնքի բոլոր բնակավայրերը: Ինչպես նշում են քաղաքացիները, մի շարք բնակավայրերի ճանապարհները նախատեսված չեն մեծ աղբատար մեքենաների համար և բավականին վտանգավոր են: Գյուղական բնակավայրեր տանող ճանապարհները գրեթե անանցնելի են հատկապես ձմռան ամիսներին, ինչը նման բնակավայրերում աղբահանությունը դարձնում է գրեթե անհնար: Հետևաբար, ըստ բնակիչների, աղբահանության բարելավմանն ուղղված միջոցներն առավել նպատակահարմար է ուղղել համայնքային ճանապարհների վերանորոգմանը:

Մինչ ճանապարհների վերանորոգումը, բնակիչները, որպես լուծում, առաջարկում են համայնքի քաղաքային և գյուղական բնակավայրերում աղբահանությունն իրականացնել տարբեր գաբարիտների մեքենաներով. մասնավորապես գյուղերում և քաղաքի ծայրամասային թաղամասերում աղբահանությունն իրականացնել փոքր ամենագնաց մեքենաներով, ինչը հնարավորություն կտա ամբողջ համայնքում առավել անվտանգ և արդյունավետ կազմակերպել աղբահավաքության գործընթացը:

Աղբահանության ծառայությունների տեսակի ազդեցությունը ծառայությունների բարելավման վրա

Քննարկումների մասնակիցների մի խմբի կածիքով համայնքներում աղբահանության իրականացման լավագույն տարբերակը շրջիկ մեքենաներն են՝ հատկապես գյուղական բնակավայրերում: Բնակիչների կարծիքով, քանի որ ամենօրյա գրաֆիկով չի իրականացվում աղբահավաքությունը, հետևաբար համայնքներում տեղադրված աղբամանները լցվում են, իսկ կենդանիներն այդ աղբը տարածում են և աղտոտում աղբավայրի շրջակայքը, մինչդեռ շրջիկ մեքենաներով աղբահանության դեպքում բնակիչներն իրենց տանը կհավաքեն աղբը և սահմանված ժամին կհանձնեն աղբահավաք մեքենաներին, դրանով խուսափելով, աղբամաններում աղբի կուտակումներից:

Միաժամանակ, որոշ բնակիչների կարծիքով, շրջիկ աղբահավաք մեքենենաներն անարդյունավետ են, քանի որ բնակիչները մինչև մեքենայի գալը աղբը պահելու խնդրին են բախվում: Մյուս կարևոր խնդիրը, որը բարձրացնում են բնակիչները, շրջիկ մեքենաների ժամանակացույցն է՝ գրաֆիկը: Ըստ քաղաքացիների, շրջիկ մեքենայի ժամանման և բնակիչների տանը գտնվելու գրաֆիկները հաճախ չեն համապատասխանում, իսկ բնակավայրերում աղբամաններ հիմնականում չկան, ուստի մարդիկ աղբը ստիպված պահում են տանը, ինչի արդյունքում գարշահոտ է տարածվում:

Քննարկման մասնակիցները շրջիկ մեքենայով աղբահանության իրականացման դժվարություններից նշում են նաև համայնքի տեխնիկական հնարավորությունների անբավարար լինել: Ըստ բնակիչների, համայնքներում չկան բավարար չափով աղբահան մեքենաներ, որպեսզի հնարավոր լինի ժամանակին և արդյունավետ կազմակերպել աղբահավաքությունն ամբողջ համայնքում. օրինակ՝ Ախուրյան խոշորացված համայնքում 11 բնակավայրերի համար աշխատում է ընդամենը մեկ շրջիկ մեքենա, որը բավարար չէ ամբողջ համայնքի աղբը ժամամանկին հավաքելու համար:

Աղբահեռացման հաճախականության և ժամանակացույցի ազդեցությունը աղբահանության ծառայությունների բարելավման վրա

Աղբահանության կազմակերպման գործընթացում աղբիհանության հաճախականությունն ամենակարևոր խնդիրներից է, նշում են քննակման մասնակիցների զգալի մասը: Ըստ բնակիչների, աղբահանության կազմակերպման գրաֆիկը չի հրապարակվում, ինչը քաղաքացիներին հնարավորություն կտար հստակ տեղեկություն ունենալ շրջիկ մեքենաների այցելության հաճախականության և ժամերի մասին, և աղբը ժամանակին թափել: Միաժամանակ, ինչպես նշում են մասնակիցներից ոմանք, աղբատար մեքենաները բավականին մեծ պարբերությամբ են ժամանում, հատկապես խոշորացված համայնքների գյուղական բնակավայրերում, որի պատճառով աղբամաններում կուտակված աղբը դառնում է թունավոր, իսկ շուրջբոլորը տարածվում է գարշահոտ: Քննակումների ընթացքում բնակիչներն առաջարկեցին շրջիկ մեքենայի այցելության տարբեր գրաֆիկներ, ընդ որում, ըստ քննարկման մասնակիցների՝ ցանկալի է, որ յուրաքանչյուր բնակավայրի համար սահմանվի բնակիչներին առավել հարմար գրաֆիկ: Միաժամանակ, որոշ մասնակիցներ նշում են, որ բնակավայրերում տեղադրված աղբամանները, որոշակի առումով կլուծեն աղբատար մեքենաների հաճախականության հարցը, քանի որ մարդիկ ստիպված չեն լինի իրենց տներում պահել աղբն ու սպասել մեքենային: Բնակիչերի մի խումբ էլ առաջարկում է սահմանել աղբահավաքության սեզոնային գրաֆիկ, ըստ որի ամռան ամիսներին աղբահանությունն ավելի հաճախակի կազմակերպվի:

Ինչպես նշում է քննարկման մասնակիցների մի խումբ, որոշ բնակավայրերում, օրինակ՝ Դլիջան, Թումանյան, Խաչարձան, աղբահանությունը բավականին լավ է կազմակերպված, մյուս համայնքերը կարող են ուսումնասիրել և ներդնել հաջողված փորձը: Օրինակ՝ Արշալույս համայնքում աղբահանությունն իրականացվում է ամենօրյա գրաֆիկով, ընդ որում առանց ոևէ յուրահատուկ տեխնիկայի՝ վարձելով գյուղի մեքենաներից մեկ որպես աղբատար: Արշալույսի բնակիչները կարծում են, որ իրենց համայնքի փորձը բավականին արդյունավետ է, և կարող է օրինակ ծառայել մյուս բնակավայրերի համար:

Ինչպես նկատում են քննարկման մի շարք մասնակիցներ, անհատական աղբամանների տեղադրումը կարող է դառնալ հարցի լուծումներից մեկը, յուրաքանչյուրը կվճարի և պատասխանատվություն կկրի իր աղբամանի համար, սակայան մասնակիցների մեկ այլ խումբ նշում է, որ անհատական աղբամանների մոդելը Հայաստանում չի աշխատի, քանի որ աղբամանի համար կվճարի մեկը, մինչդեռ աղբամանից կօգտվեն նաև մյուսները, ինչը տարաձայնությունների ու բախումների առիթ կդառնա:

Ինչպես նշում են քննարկման մասնակիցները, միայն աղբամանների տեղադրումը չի կարող աղբահանության հարցը լուծել, քանի որ շրջիկ մեքենաների բացակայության, կամ ոչ հաճախ այցելությունների պատճառով աղբը կոտակվում է, դանում թունավոր, հետևաբար մարդիկ փորձում են ինքնուրույն կազմակերպել աղբահանությունը, հիմնականում այրելով, կամ բնակավայրից հեռու ինչ որ տեղ թափելով:

Քննարկումների ընթացքում հնչեց կարծիք, թե աղբահանության ժամանակին և պատշաճ կազմակերպելու դեպքում մարդիկ կվճարեն ծառայությունների դիմաց, մինչդեռ ներկայում դժգոհեն ծառայությունների որակից և շարունակում են չվճարել:

Աղբարկղերի և աղբանոթների տեղադրման ծածկույթի, խտության, ծավալի ազդեցությունը աղբահանության ծառայությունների բարելավման վրա

Համայնքային քննարկումների մասնակիցների կարծիքով պետք է հստակ որոշվեն աղբամանների տեղադրման չափորոշիչները, քանի որ, ինչպես նշում են բնակիչները, այն քաղաքացիները, որոնց բնակության վայրին մոտ է տեղադրված աղբամանները, դժգոհում են հոտից և աղբամանի շուրջը թափված աղբից, մինչդեռ բնակիչները, որոնց տնից կամ բնակարանից աղբարկղը հեռու է, դժգոհում են հեռավորությունից և աղբամանին հասնելու դժվարությունից, ուստի վերջինները նախընտրում են կա՛մ այրել աղբը, կա՛մ էլ ստեղծել իրենց հարմար, ավելի մոտ ինքնաշեն աղբավայր: Միաժամանակ, քննարկման մասնակիցներից ոմանք կարծում են, որ քաղաքացիներն առաջին հերթին պետք է փոխեն իրենց վարքագիծը: Բնակիչները նշում են, որ կան բնակավայրեր, որտեղ մարդիկ կիլոմետրեր են անցնում աղբը աղբամանում թափելու համար՝ անգամ հասնելով մոտակա համայանք, և կան բնակիչներ, որոնք զլանում են իրենց համայնքում, տան մոտ գտնվող աղբարկի մեջ թափել այն:

Քննարկման ընթացքում հակադիր կարծիքներ հնչեցին բնակելի շենքերի մոտ աղբամանների տեղադրելու հարցում. Որոշ մասնակիցներ կարծում են, որ ժամանակին աղբահանություն իրականացնելու դեպքում նպատակահարմար կլինի աղբամաններ տեղադրել տների մոտ, միաժամանակ, բնակչների մի խմբի կարծիքով էլ քաղաքացիներին դուր չի գա, որ իրենց տան դիմաց տեղադրվեն աղբամանները, քանի որ տարածքում ստեղծվում է հակասանիտարական վիճակ:

Մասնակիցները տարբեր կարծիքներ ունեին նաև համայնքներում մեծ աղբամանների տեղադրման վերաբերյալ: Բնակիչների կարծիքով համայնքներում, հատկապես այն բնակավայրերում, որտեղ աղբահավաքությունը հաճախ չի կազմակերպվում, պետք է տեղադրվեն մեծ աղբամաններ, սակայն բնակիչների մի խումբ էլ, նշում է, որ որոշ համայնքներում նման փորձ արվել է, բայց այդ բնակավայրերում սկսել են ավելի ուշ տանել աղբը, ինչի արդյունքում հակասանիտարական իրավիճակ է ստեղծվում այդ աղբամանների շրջակայքում:

Քննարկումների մասնակիցների կարծիքով աղբամանների ավելացումը նպաստել է համայնքների արտաքին բարեկարգությանը, բնակիչները, որոնք սովոր էին աղբը թափել «որտեղ պատահի», արդեն սկսել են օգտվել աղբամաններից, ինչի արդյունքում համայնքերը դարձել են ավելի մաքուր և ակնահաճո: Մասնակիցները նկատում են, որ աղբամանների անհրաժեշտություն կա գրեթե բոլոր համայնքներում. կան համայնքեր, որտեղ ընդհանրապես բացակայում են աղբամանները, և կան այնպիսի համայնքներ, որտեղ կա՞մ աղբամաններն են քիչ, կա՞մ էլ դրանց տեղաբաշխումն է անհարմար, նշում են քաղաքացիները: Միաժամանակ, բնակիչները կարևորում են աղբամանների տեղադրումը հատկապես հանգստյան գոտիներին հարակից վայրերում, քանի որ աղբը թափելու տեղ չունենալով, մարդիկ աղտում են հանգստյան գոտիները՝ վնաս պատճառելով նաև բնությանը:

Հանրային կամ մասնավոր կազմակերպության կողմից ծառայությունների մատուցման ազդեցությունը աղբահանության բարելավման վրա

Քննարկումների մասնակիցներից շատերը համաձայն են աղբահանության համար ավել գումար վճարել մասնավոր կազմակերպություններին, համարելով, են արդյունքում համայնքներում ավելի լավ կկազմակերպվի աղբահանությունը: Բնակիչների մի խմբի կարծիքով մասնավոր կազմակերպություններն ավելի լավ կիրականացնեն աղբահանությունը, քան համայնքային իշխանությունները մի քանի պատճառներով: Նախ, մասնավորը մտածում է իր շահի մասին, և փորձելու է հնարավորինս լավ կատարել աշխատանքը, որպեսզի կարողանա բնակիչներից հավաքագրել աղբահանության վարձավճարները: Մյուս կողմից, մասնավորին պատվիրակելու դեպքում տեղական իշխանությունները ավելի հետևողական կվերահսկեն աղբահանության կազմակերպման գործընթացը, քան այսօր, երբ և՞ պատվիրատուն, և՞ կատարողը, և՞ վերահսկողը տեղական իշխանություններն են: Վերջապես, մրցույթի արդյունքում ընտրված կազմակերպությունները շահագրգռված կլինեն որակյալ աշխատելու, հակառակ դեպքում կարող են տուգանվել, անգամ որոշ դեպքերում հնարավոր կլինի նոր մրցույթ հայտարարել և աղբահանության կազմակերպումը հանձնել մեկ այլ կազմակերպության:

Միաժամանակ, բնակիչները նշում են, որ արդար մրցույթ անցկացնելու համար նախ պետք է հստակ սահմանվեն մրցույթի անցկացման չափորոշիչները և ապահովվեն արդար մրցակցության բոլոր պայմանները: Բնակիչների մի խումբ էլ առաջարկում է մենաշնորհներից խուսափելու համար աղբահանության կազմակերպումը ոչ թե ամբողջությամբ հանձնել մեկ կազմակերպության, այլ ապահովել համայնքի կամ այլ կազմակերպությունների հետ համատեղ աշխատելու հնարավորություն:

Համայնքային քննարկումների ընթացքում մասնակիցները կարևորեցին նաև հանրության կողմից աղբահանության կազմակերպման գործընթացի վերահսկողության հարցը, նշելով, որ համայնքային իշխանություններին վերահսկելն ավելի հեշտ է, քան մասնավորին: Միաժամանակ բնակիչները նշում են, թե համայնքերում աղբահանությունը բավականին ծախսատար է, իսկ մասնավոր կազմակերպությունները եթե շահույթ չստանան, ապա չեն աշխատի, հետևաբար աղբահանության կազմակերպումը մասնավորին հանձնելով՝ կա՞մ որակը կվատանա, կա՞մ վարձավճարը կբարձրանա:

Համայնքի բյուջեի, մուտքերի, վարձավճարների հավաքագրման, սուբսիդավորման, ծախսերի գերակայությունների խնդիրներն ու աղբահանության բարելավման այլընտրանքները

Քննարկումների մասնակիցները նշում են, որ աղբահանության որակի բարելավումը որոշակիորեն փոխկապակցված է վարձավճարների բարձրացման հետ, որը սակայն բնակիչները միշտ չէ, որ ի վիճակի են վճարել: Ըստ քաղաքացիների, մարդիկ ներկայում դժվարանում են վճարել անգամ ամենաանհրաժեշտ կոմունալ ծառայությունների դիմաց, իսկ աղբահանության դեպքում կա՞մ օգտվում են աղբահանության ծառայություններից և չեն վճարում՝ կուտակելով պարտք, կա՞մ նախընտրում են ընդհանրապես չօգտվել այդ ծառայություններից և սեփական ուժերով կազմակերպել աղբահանությունը՝ վառելով կամ ինքնուրույն այն աղբավայր տանելով: Միաժամանակ, մասնակիցներից ոմանք նշում են, որ. «Բնակիչը օրական 350 դրամի ծխում է, բայց 200 դրամ ամսեկան չեն ուզում աղբահանության գումար վճարել»:

Քննարկումների մասնակիցների կարծիքով երբ բնակիչների համար տեսանելի դառնա աղբահության կազմակերպման որակի փոփոխությունը, նրանք ավել բարձր վարձավճարներն անգամ հակված կլինեն

վճարելու: Հակառակ դեպքում, ինչպես նշում են քաղաքացիները, վստահության մակարդակը բավականին ցածր է, մարդիկ հաճախ չգիտեն ինչպես են ծախսվում իրենց վճարած գումարները, հետևաբար նախընտրում են վարձավճարները չվճարել: Միաժամանակ, մասնակիցների մի խմբի կարծիքով, մադրիկ աղբահանության վարձավճարները կվճարեն միայն այն պարագայում, երբ կհասկանան, որ աղտոտված շրջակա միջավայրը խիստ բացասական ազդեցություն է ունենում հենց իրենց ու երեխաների առողջության վրա: Բնակիչներից ոմանք ընդգծում են, թե գումար վճարելով, քաղաքացիները դառնում են աղբահանության կազմակերպման մասնակից, ինչի շնորհիվ պատկան մարմիններից որակյալ ծառայությունների պատշաճ մատուցում կարող են պահանջել:

Բնակիչների կարծիքով աղբահանության ծառայությունների դիմաց վճարների գանձման հստակ համակարգ պետք է սահմանվի: Ինչպես նշում են քննարկումների մասնակիցները, եթե լինի հստակ սահմանված վճարման համակարգ, բնակիչն ինքը կստիպի մյուսներին ևս վճարել, քանի որ սա հնարավորություն է տալիս վճարած գումարի դիմաց պահանջել համապատասխան ծառայություն: Մասնակիցները նշում են գանձված վարձավճարների օգտագործման նկատմամբ վերահսկողության անհրաժեշտությունը: Միաժամանակ, քաղաքացիների մի խումբ էլ նշում է, թե համայնքային բյուջեն ևս ձևավորվում է բնակիչների վճարած հարկերից, և արդյունավետ կառավարման դեպքում համայնքային իշխանությունները կարող են առանց վարձավճարի կազմակերպել աղբահանությունը:

Քննարկումների մասնակիցների կարծիքով մասնավոր կազմակերպությունը շահույթի համար կփորձի բարելավել աղբահության որակը, ընդգրկելով ավելի մեծ թվով շահառուների, սակայն բնակիչների կարծիքով մասնավոր կազմակերպություն, աղբահանության կազմակերպման որակի բարելավմանը զուգահեռ կբարձրացնի նաև ծառայության համար նախատեսված վարձավճարները: Միաժամանակ, բնակիչների մի խումբ էլ առաջարկում է մասնավորին զուգահեռ պահպանել նաև համայնքի մասնակցությունը աղբահանության կազմերպման գործում, նշելով, որ արդյունքում կառաջանա մրցակցություն, ինչի արդյունքում կշահի բնակիչը:

Համայնքային քննարկումների մասնակիցների մեկ այլ խմբի կարծիով, տեղական իշխանություններն ավելի լավ կիրականացնեն աղբահանության վարձավճարների հավաքագրման գործընթացը, քանի որ ունեն լծակներ, իսկ այն բնակիչները, որոնք աղբահանության ծառայությունների դիմաց չեն վճարում, մասնավորին ևս չեն վճարի: Միաժամանակ, քննարկումների մասնակիցներից ոմանք էլ, նշում են, թե համայնքային բյուջեից պետք է ֆինանսավորվի աղբահանությունը, կամ գոնե նախատեսվի ֆոնդ, որից կվճարվի համայնքի սոցիալապես անապահով խավի աղբահանության վճարները: Միաժամանակ, որոշ բնակիչներ նշում են, որ եթե ներդրվեն վարձավճարների հավաքագրման հստակ մեխանիզմներ՝ հավաքագրում տեսուչի միջոցով կամ հնարավորություն գումարը վճարել կոմունալ մյուս վճարների հետ (օնլայն, փոստ, տերմինալ), ապա մարդիկ ավելի մեծ պատրաստակամությամբ կվճարեն: Ներկայում բնակիչները հաճախ չգիտեն էլ, թե ում և ինչպես վճարել, ուստի հաճախ վարձը չեն վճարում:

Բնակիչները բարձրացնում են նաև համայնքում նույն վարձավճարի դիմաց աղբահանության կազմակերպման որակի տարբերությունների հարցը, նշելով. «Ստեփանավանի կենտրոնական փողոցում խնդիր չկա, ամեն օր մաքրվում է: Բայց այդ փողոցից հարյուր մետր հեռու իրավիճակը լրիվ այլ է՝ տասը օրը մեկ: Ընդ որում, և՛ մենք, և՛ կենտրոնական փողոցի բնակիչները վճարում ենք նույն գինը»: Քաաքացիների կարծիքով պետք է տարբեր վարձավճարներ սահմանվեն քաղաքային և գյուղական համայնքների բնակիչների համար, քանի որ գյուղերում և քաղաքներում թե՞ կուտակված աղբի քանակը, թե՞ աղբահանության հաճախականությունը տարբեր են: Քննարկումների մասնակիցները կարևորում են նաև քաղաքային և գյուղական համայնքներում բնակիչների վճարունակության տարբեր մակարդակները. ըստ բնակիչների՝ գյուղական համայնքներում մարդիկ երբեմն ի վիճակի չեն աղբահանության վարձը վճարելու. «Ախուրյանում հավաքագրումը նորմալ է իրականացվում՝ ի տարբերություն Աշոցքի: Աշոցքում իրավաբանական անձ գրեթե չկա, վճարողները բնակիչներն են, իսկ Ախուրյանում շատ են, դրա համար էլ վճարը հավաքվում է»: Միաժամանակ, ինչպես նշում են բնակիչները, սահմանամերձ համայնքների բնակիչները աղբահանության գումարը վճարելուց ազատված են:

Քննարկումների մասնակիցների մի խմբի կարծիքով յուրաքանչյուր միավոր տեխնիկայի գնումը կամ նվիրատվությունը ենթադրում է համայնքի բյուջեի վրա լրացուցիչ ծախսերի բեռի ավելացում: Բնակիչների մեկ այլ խումբ էլ կարծում է, թե բնակիչներն ի վիճակի կլինեն լրացուցիչ գումարների վճարել տեխնիկայի վերազինման համար, եթե տեսնեն, որ դրա արդյունքում իրենց մատուցվող ծառայությունների որակը բարձրացել է:

Մշակույթի, կենցաղի, սոցիալական նորմերի, արժեքների, վերաբերմունքի և վարքագծի ազդեցությունը աղբահանության ծառայությունների որակի բարելավման հնարավորությունների վրա

Աղբահանության կազմակերպման գործում դրական արդյունքի հասնելու համար առաջին հերթին պետք է սկսել մարդկանց կրթությունից, կարծում է համայնքային քննարկումների մասնակիցների մեծամասնությունը: Ինչպես ընդգծում են բնակիչները, նույնիսկ եթե համայնքներում տեղադրված

աղբարկղերն ավելացվեն և ամենօրյա ռեժիմով աղբահավաքություն իրականացվի, մարդիկ մինչև չսովորեն աղբը ճիշտ տեղում թափել, ոչինչ չի փոխվի: Քաղաքացիների կարծիքով կենցաղային էթիկա պետք է սովորեցնել վաղ տարիքում. Օրինակ՝ դպրոցում, երբ աշակերտը գիտի, որ ինքը պետք է հավաքի իր հետևից դասարանը, այն ավելի մաքուր է պահում, քան երբ նրա փոխարեն դասասենյակը մաքրում է դպրոցի հավաքարարը: Հետագայում դժվար է մարդկանց մտածելակերպն ու վարքագիծը փոխել, նշում են քաղաքացիները: Ինչպես ընդգծում են բնակիչները, մարդիկ նույնիսկ աղբամանները պահպանել-շահագործել-չվնասելու մշակույթ չունեն. համայնքերում մեծ խնդիր է աղբարկերի գողությունը և դրանց նորմալ արտաքին տեսքի պահպանումը:

Քննարկումների մասնակիցների մի խմբի կարծիքով համայնքներում աղբահանության խնդրի դրական լուծման հարցում մեծ դեր կարող են ունենալ շաբաթօրյակները: Ինչպես նշում են բնակիչները, հատկապես երիտասարդները բավականին ակտիվ են շաբաթօրյակների ընթացքում, սա նպաստում է մտածելակերպի փոփոխությանը, պնդում են քաղաքացիները: Բնակիչները կարևորում են նաև համայնքի ղեկավարի, համայնքի բնակիչների համար հեղինակություն ունեցող անձանց ներգրավումը շաբաթօրյակներին: Միաժամանակ, համայնքների բնակիչների մի այլ խումբ նշում է, թե շաբաթօրյակների արդյունքում մաքրված տարածքները արագորեն կրկին աղտոտվում են, և հիմնական աղտոտողներն այն բնակիչներն են որոնք ընդհանրապես չեն մասնակցել շաբաթօրյակներին և չեն գիտակցում աղբը թափելու հետևանքները:

Մասնակիցները նշում են, թե աղբահանության ծառայությունների վարձավճարների հավաքագրման հետ կապված խնդիրները սերտորեն կապված են մշակույթի և մտածելակերպի հետ: Երբ բնակիչը կգիտակցի աղբի վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի և սեփական առողջության վրա, կսկսի մեծ ուշադրություն դարձնել աղբահանությանը և կվճարի աղբահանության պատշաճ կազմակերպման համար:

Բնակիչների կարծիքով համայնքերում պետք է աղբահանության կազմակերպումը հարմարեցնել նաև տարեց բնակչության պահանջներին:

Տնտեսական գործունեության. Տնտեսության հիմնական ճյուղեր և տնտեսվարողների կարիքներ փոխկապակցությունը աղբահանության ծառայությունների որակի բարելավման խնդիրներին

Քննարկման մասնակիցների կարծիքով զբոսաշրջիկներին գրավելու կարևոր պայման է տարածքի մաքրությունը և աղբարկղերի առկայությունը: Զբոսաշրջիկը նախընտրում է մաքուր տարածքներում կազմակերպել իր հանգիստը: Արտասահմանցին՝ ի տարբերություն հայաստանցի զբոսաշրջիկի, իրենից հետո հավաքում է աղբը:

Փոքր համայնքներում մեծ խնդիր է նաև գոմաղբի հեռացման համակարգի բացակայությունը: Քննարկման մասնակիցները նշում են, որ անասնապահությամբ զբաղվող բնակիչները, չունենալով գոմաղբը թափելու համար որևէ հարմարեցված աղբավայր, այն թափում են համայնքի կենտրոնական փողոցներում, իսկ քանի որ համայնքային իշխանությունները նման քաղաքացիների վրա ներգործելու որևէ լծակ չունեն, ապա ամբողջ համայնքում տարածվում է գարշահոտություն և աղբ:

Միաժամանակ, քննարկման մասնակիցները բազմիցս նշել են, թե տնտեսվարողները կարևորագույն ֆինանսական ներդրում են ունենում աղբահանության ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքման առումով, փոքր բնակավայրերում հաճախ հենց տնտեսվարողներն են կրում վարձավճարների հիմնական բեռը: Հանուն արդարության հարկ է նշել նաև, պնդում են քաղաքացիները, թե տնտեսվարողները նաև կենցաղային աղբի ձևավորման հիմնական աղբյուրներից մեկն են: Ընդհանուր առմամբ, տնտեսական գործունեությունը աղբահավաքման կարևորագույն շահառուներից է յուրաքանչյուր համայնքում և տնտեսվարողների ձայնը նույնպես պետք է լսելի լինի, նշում են քննարկման մասնակիցները:

Աղքատության խնդրի ազդեցությունը աղբահանության ծառայությունների որակի վրա

Ինչպես նկատում են քննարկման մասնակիցները, թիրախ համայնքներում աղքատությունը տարածված է՝ աղքատ է գրեթե յուրաքանչյուր երրորդը: Հատկապես գյուղական բնակավայրերում, ուր մարդիկ մշտական եկամտի աղբյուր չունեն, բնակիչները դժվարանում են վճարել նույնիսկ կենսական անհհարժեշտության կոմունալ ծառայությունների դիմաց, և աղբահանության վարձավճարների հավաքագրումը լրացուցիչ բեռ է ընկալվում: Մասնակիցներից ոմանց կարծիքով, նույնիսկ եթե աղբը ոչ սահմանված վայրում թափելու համար տուգանք նշանակվի, մարդիկ չեն կարողանալու վճարել ոչ միայն վարձավճարը, այլև վարչական տուգանքը, ուստի գյուղական համայնքներում տուգանքների մեխանիզմի ներդրումն աննպատակահարմար է:

Քննարկումների ընթացքում հնչել է կարծիք, թե շրջակա միջավայրի մաքրության հարցը կապված է բնակչության կենսամակարդակի հետ. եթե բնակչության կենսամակարդակը բարձրանա, մարդիկ կսկսեն ավելի մաքուր պահել շրջակա միջավայրը:

Աղբահանության ծառայությունների որակի իրավական կարգավորման և վերահսկողության խնդիրները

Քննարկման մասնակիցների կարծիքով աղբահանության ոլորտում դրական փոփոխությունների համար պետք է սահմանել տուգանք՝ չսահմանված վայրում աղբ թափելու համար: Ինչպես նկատում են բնակիչները, «մինչև մարդու գրպանին չես խփում, ոչինչ չի փոխվում»: Մասնակիցների կարծիքով, ինչպես ճանապարհային երթևեկություն, այս դեպքում ևս մինչև խիստ տուգանքներ չսահմանվեն, ոչինչ չի փոխվի: Հետևաբար, տուգանքների համակարգի ներդրումը կարևոր է աղբահանության նորմալ կազմակերման համար, կարծում են որոշ քաղաքացիներ: Համայնքային քննարկումների մասնակիցներից ոմանք առաջարկեցին տուգանք սահմանել, ոչ միայն չնախատեսված վայրում աղբը թափող քաղաքացիների, այլև աղբահանության ոլորտի այն աշխատակիցների համար, որոնք պատշաճ չեն կատարի իրենց պարտականությունները: Տուգանքների համակարգի ներդրումը համայնքային իշխանություններին աղբահանության ոլորտում մարդկանց վրա ազդելու գործիքներ կտա, նկատում են բնակիչները:

Պետք է ոչ թե համայնքի բնակիչներին տուգանել, այլ համայնքին, նշում են քննարկումների մասնակիցներից ոմանք էլ, առաջարկելով առավել «կեղտոտ» համայնքներին զրկել որոշակի արտոնություններից, օրինակ՝ կրճատել պետական բյուջեից հատկացվող դոտացիաները կամ պաշտոնատար անձանց համար սահմանել վարչական պատասխանատվություն: Ըստ քաղաքացիների, սա կխթանի թե՛ համայնքի բնակիչների, թե՛ համայնքային իշխանությունների հետևողականությունը՝ աղբահանության արդյունավետ կազմակերպման գործում:

Բնակիչների մի խմբի կարծիքով տուգանքների համակարգի ներդրումը նպատակահարմար է, սակայն պարզ չեն մեխանիզմները, որոնք հնարավորություն կընձեռեն հայտնաբերելու կարգազանց

քաղաքացիներին: Միաժամանակ, քաղաքացիներն առաջարկում են մեխանիզմներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի որոշակի վերահսկողություն սահմանել: Այսպես, առաջարկում են աղբամանների մոտ տեղադրել տեսախցիկներ կամ համայնքային բյուջեից գումար առանձնացնել և պատասխանատու նշանակել, որի գործառույթը կլինի վերահսկել համայնքում աղբահանության պրակտիկան:

«Գյուղերում չի աշխատի «գործ տալու» մեխանիզմը, քանի որ հատկապես փոքր բնակավայրերի բնակիչներն իրար ճանաչում են ու մեկը մյուսին չի բացահայտի, նշում են քաղաքացիները: Բնակիչների կարծիքով, հատկապես գյուղական համայնքներում դժվար կլինի տուգանել սխալ վայրում աղբը թափած քաղաքացուն, որովհետև «գյուղի կեսը միմյանց բարեկամ է», կամ համայնքի ղեկավարն առաջիկա ընտրություններում ձայն չի ստանա այն ընտրողից՝ ում տուգանել է: Նմանատիպ խնդիրներից խուսափելու համար, քննարկումների մասնակիցներն առաջարկում են այլ համայնքներից «բերել» տեսուչների: Մյուս կողմից, հարուստները, որոնց համար տուգանքի գումարը մեծ նշանակություն չունի, կշարունակեն աղբը թափել իրենց հարմար վայրում, իսկ աղքատ գյուղացիների համար ընդամենը կավելանան պարտքերը, նշում են բնակիչները:

Քննարկման մասնակիցների կարծիքով մինչև խնդրին իրավական կարգավորման լուծում չտրվի, օրենք չընդունվի, աղբահանության խնդիրը կմնա չլուծված, իսկ տուգանքները ձևական բնույթ կկրեն: Սակայն տուգանքներ սահմանելուց առաջ մարդկանց պետք է տեղյակ պահել սխալ վայրում աղբը թափելու հետևանքների մասին, ապա նոր տուգանել, ընդգծում են համայնքների բնակիչները:

Քաղաքացիների կարծիքով, տուգանք սահմանելուց առաջ նախ պետք է աղբահանության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել. համապատասխան վայրերում աղբամաններ տեղադրելով, և ճիշտ ժամանակին աղբահավաքություն կազմակերպելով: Հակառակ դեպքում, եթե օրինակ համայնքում չկա աղբարկղ՝ բնակիչն այլընտրանք չունի, քան աղբը թափել չնախատեսված վայրում: Բնակիչները գտնում են, թե հարկավոր է տուգանքների արդյունքում ձևավորված գումարն ուղղել համայնքում աղբահանության խնդրների լուծմանը:

Բնապահպանական չափորոշիչների, հանրային առողջապահության ազդեցությունը աղբահանության ծառայությունների որակի վրա

Քննարկումների ընթացքում բնակիչները բարձրաձայնում են նաև աղբահանության էկոլոգիական խնդիրները: Ինչպես նշում են քաղաքացիները, աղբահանությունը միայն տարածքը մաքուր պահելը չէ, այն ունի բնապահպանական և առողջապահական ավելի մեծ նշանակություն: Այսօր, համայնքների բնակիչները իրենց աղբը հիմնականում թափում են դաշտերում, որտեղից իրենց հիմնական բերքն են ստանում, որտեղ ընտանի կենդանիներն են արածում, գետերում, որտեղ իրենք և իրենց երեխաներն են լողում:

Սոցիալական գովազդի միջոցով բնակիչներին պետք է տեղյակ պահել աղբահանության սխալի հետևանքով առաջացող էկոլոգիական խնդիրների մասին, ուշադրություն դարձնել աղբավայրերին. ստացվում է, որ «գյուղից աղբը հավաքում են, տանում ընդամենը երկու կիլոմետր հեռու թափում»:

Համայնքներում աղբահանության կազմակերպման կարևոր խնդիրներից է աղբամաններից աղբի ցրիվ տալու կանխարգելումը: Ինչպես նշում են համայնքների բնակիչները, քանի որ աղբահավաքությունն ամեն օր չի իրականացվում, ապա թափառող և ընտանի կենդանիներն աղբամաններում հավաքված աղբը տարածում են բնակավայրի ողջ տարածքում: Խնդիրը կարգավորելու համար քննարկումների մասնակիցներն առաջակում են կա՞մ ցանցապատել աղբամանները, կա՞մ տեղադրել կափարիչով աղբամաններ: Միաժամանակ, որոշ բնակիչներ էլ նշում են, թե ցանցապատումն անօգուտ է, քանի որ մարդիկ կսկսեն աղբը ցանակապտից ներս շպրտել, չհասնելով նույնիսկ աղբամանին, իսկ կափարիչի առկայության դեպքում շատերը կզզվեն ձեռքով բացել և աղբը կթափեն աղբամանի կողքը:

Քննարկումների ընթացքում նշում են մեծ աղբամանների և բնակելի շենքերի մոտ աղբարկղերի անհրաժեշտությունը, սակայն մասնակիցների մի մասն էլ կարծում է, թե մեծ աղբամանների պատճառով, հատկապես ամռան ամիսներին, գարշահոտություն է տարածվում ամբողջ համայնքում:

Մասնակիցների կարծիքով, թեև բնակիչները հասկանում են աղբի այրման բացասական էկոլոգիական հետևանքները, սակայն աղբահանության կազմակերպման խնդիրների պատճառով (աղբարկղների բացկայություն, շրջիկ աղբահավաքության անկանոն գրաֆիկ) ստիպված այրում են աղբը:

Բնակիչների կարծիքով, աղբահանության կարևոր խնդիր է նաև աղբամանների և աղբատար մեքենաների սանիտարահիգիենիկ վիճակը: Սակայն, ինչպես նկատում են որոշ բնակիչներ, աղբամանների և աղբատար մեքենաների սանիտարահիգիենիկ մաքրում չի իրականացվում, կամ դրա արդյունքները նկատելի չեն: Լավագույն դեպքում մեքենաները լվացվում են սովորական ջրով, նշում են քաղաքացիները: Մարդիկ հաճախ նախընտրում են համայնքում աղբաման չունենալ, քան ունենալ կեղտոտ և գարշահոտ տարածող աղբամաններ, որոնք երբեք չեն մաքրվում:

Աղբահանության ծառայությունների բարելավման՝ աղբի տեսակավորման և վերամշակման խնդիրները

«Աղբի տեսակավորումը խնդրի լուծում է. երբ սկսենք տեսակավորել, վերամշակել, աղբի ծավալը միգուցե նվազի, թե չէ ի՞նչ տարբերություն ես եմ տանում աղբը ծորում թափում, թե՞ շրջիկ մեքենան», նկատում են բնակիչները: Քննարկման մասնակիցների կարծիքով աղբահանության ներկա վիճակը կարելի է բարելավել, եթե տարբերակված աղբահանության միջոցով աղբի գոնե մի բաղադրիչի հարցը լուծվի: Բնակիչները հատկապես առանձնացնում են պլաստիկի և ապակու տեսակավորված աղբահավաքության անհրաժեշտությունը: Քաղաքացիների մի խմբի կարծիքով, օրինակ, պլաստիկի տեսակավորված հավաքումը կթեթևացնի աղբահանության խնդիրը, իսկ վերամշակումը կապահովի լրացուցիչ եկամուտ, ինչը կուղղվի աղբահանության կամզակերպմանն ու ծառայությունների որակի բարելավմանը: Քաղաքացիները կարևորում են նաև պլաստմասե տոպրակների արգելումը և դրանց փոխարինումը թղթե տոպրակներով, որոնք հեշտ քայքայվում են և չեն վնասում շրջակա միջավայրին: Բնակիչների կարծիքով, այդուհանդերձ, աղբի տեսակավորումից առաջ պետք է մտածել այդ աղբի վերամշակման գործարան հիմնելու մասին: Մյուս կողմից, քննարկման մասնակիցները բարձրաձայնում են բնակիչների շրջանում աղբի տեսակավորման մասին գիտելիքի պակասի մասին, որն անհրաժեշտ է լրացնել սեմինարների, հանրային քննարկումների միջոցով:

Միաժամանակ, մասնակիցների մի խմբի կարծիքով աղբի տեսակավորումն առաջնահերթ խնդիր չէ, հատկապես գյուղական վայրերում, որտեղ պլաստիկն օգտագործում են կենցաղային նպատակներով, եբեմն նույնիսկ ձմռանը տաքանալու համար: Քննարկումների մասնակիցներից ոմանք նշում են, թե հատկապես գյուղական բնակավայրերում, որտեղ անգամ հասարակ աղբակղ չկա դեռ վաղ է աղբի տեսակավորման մասին խոսելը: Ինչպես նշում են քաղաքացիները, առանձին համայնքերում փորձ արվել է տեսակավորել աղբը, մարդիկ տեսակավորված հավաքում են աղբը, սակայն աղբահավաքության ընթացքում ամբողջը հավաքում և խառնվում է իրար:

Քննարկման մասնակիցները կարևորում են նաև գյուղատնտեսական և շինարարական աղբի տարանջատման խնդիրը: Համայնքերում չկան առանձնացված աղբամաններ շինարարական աղբի համար, իսկ գոմաղբը բնակիչները թափում են կենցաղային աղբի համար նախատեսված աղբամաններում:

Բնակիչների կարծիքով աղբահանության կազմակերպման կարևոր խնդիր է աղբավայրը: Ինչպես նշում են քննարկման մասնակիցները, խոշոր աղբավայրերը հիմնականում գտնվում են համայնքներին շատ մոտ, և ուժեղ քամին ողջ աղբը նորից «լցնում է» համայնք: Որոշ բնակավայրերում աղբավայրը գտնվում է կենսական նշանակություն ունեցող վայրում, օրինակ՝ դաշտավայրերին մոտ, կամ ձորի վրա, որտեղ հոսում է խմելու ջուրը և տեղափոխման անհրաժեշտություն կա: Այսպես, քննարկումների մասնակիցներն առաջարկում են Նոյեմբերյան բնակավայրի աղբավայրը տեղափոխել բլրի հակառակ կողմը:

Շահեր, դիրքորոշում, մտադրություններ, զգացմունքներ, վախեր, մտահոգություններ, արժեքներ, կարծրատիպեր, համոզմունք

Ա. ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա.1. ԽՈՇՈՐԱՑՈՒՄ

Եթե խոշորացված համայնք է, բոլոր մաս հանդիսացող համայնքներն էլ ներդրում ունեն ու պետք է բոլորն էլ հավասարապես օգտվեն:

Պետք է ոչ թե խոշորացում լինի, այլ ամեն գյուղ ունենա իր աղբահանման համակարգը:

Մինչև խոշորացումը աղբահանության հետ լրիվ նույն վիճակն էր, ոչինչ չի փոխվել:

Խոշորացումից հետո Ղազանչին ստացել է նոր աղբատար մեքենա, Բավրայում նոր աղբարկղեր են տեղադրվել:

Համայնքները խոշորացան, բայց... Այրել ենք, այրում ենք ու այրելու ենք:

Բավրան խոշորացումից միայն շահել է աղբահանության մասով: Աշոցքում էլ աղբահավաք մեքենա ենք ստացել, որը մաքսատան համար է աշխատում, մենք էլ իմիջիայլոց օգտվում ենք:

Եթե խոշորացված համայնքներ չլինեին, ամեն գյուղ իր աղբի հարցը կլուծեր:

Խոշորացումից հետո միակ տարբերությունն այն է, որ կենտրոնում աղբահանությունն ավելի լավ է իրականցվում, իսկ մնացած բնակավայրերում նույն իրավիճակն է:

Խոշորացված համայնքներում պետք է կենտրոնացում չլինի ու ողջ բյուջեն հավասարաչափ բաշխվի:

Խոշորացումը շատ վատ է, որովհետև մենք չենք կարողանում տնօրինել մեր գյուղի բյուջեն:

Խոշորացված համայնքներում պետք է աղբատարությունը լինի ամեն օր, իսկ համայնքներում պետք է լինի շաբաթը երկու անգամ, բայց հստակ ժամերի և գրաֆիկով:

Մինչև համայնքների խոշորացումը բոլոր բնակավայրերի ավագանիները եղել են համայնքապետերի գրպանի ավագանի ու երբեք շահագրգռված չեն եղել աղբահանության համար իրական գումարներ տրամադրել բյուջեից: Թղթի վրա, իհարկե, միլիոններ են ծախսել: Հիմա ավագանին իրոք շահագրգռված է այս հարցը լուծելու:

Խոշորացումից հետո շատ բան է փոխվել: Սարչապետում առաջ չկար աղբահանություն, ձորն էին գցում աղբը:

Խոշորացումից հետո աղբամաններ դրեցին, մեքենա բերեցին: Բայց քաղաքացին էլ պիտի պահանջատեր լինի, հասկանա իր կարիքները:

Խոշորացման հետևանքով երևացող տարբերությունները ավելի շատ ոչ թե հենց խոշորացման հետևանք է, այլ անձի: Ստեփանավանի քաղաքապետը շատ լավ է հետևում և կազմակերպում աղբահանության պրոցեսը:

Ստեփանավանի խոշորացած համայնքի Որրասար և Կաթնաղբյուր բնակավայրերում աղբը հիմնականում այրում են կամ լցնում ջրատարը:

Խոշորացման դրական հետևանք ունենք աղբահանության մասով, մարդիկ ուշադիր հետևում են, աղբահանությունը կազմակերպում են: Այս հարցում շահել ենք:

Սխալ է խոշորացումը մեր համայնքների համար: Մի համայնքի ղեկավարը չարչարվում է իր համայնքի համար, միանում մյուսին, որը ոչ մի բան էլ չի անում:

Խոշորացման արդյունքում համայնքները սկսեցին տուժել. հիմա ոչ թե ավելի շատ գումար է հավաքվում, այլ ավելի շատ ծախսվում է: Դա ազդում է նաև աղբահանության վրա:

Ոչ մի գյուղ մինչև համայնքի խոշորացում չէր կարող իր բյուջեի հաշվին աղբի մեքենա գնել: Խոշորացումը մեզ օգնեց:

Երբ խոշորացված չէինք աղբահանություն չկար, խոշորացումից հետո աղբամաններ էլ հայտնվեցին: Դա մեզ գոհացնում է:

Աղավնավանքում ինչ-որ ծրագրով աղբամաններ են տրամադրել, որոնք լրիվ բավարարում է գյուղի կարիքներին: Անձի համար հիսուն դրամ ենք վճարում: Խոշորացումից հետո աղբահանության համար Դիլիջանից են գալիս:

Խոշորացումից համայնքներ կան, որ օգտվել են, համայնքներ կան, որ ընդամենը ծխախոտ նետելու ամաններ են տրամադրել:

Ձուջևան համայնքում խոշորացումից հետո փողոցի վրա նոր աղբամաններ են դրել: Դրանք համայնքից հեռու են ու շաբաթը մեկ աղբի մեքենա է գալիս:

Նախկինում ամեն մարդ ինքն էր որոշում աղբի հարցը ոնց լուծել. խոշորացումից հետո իհարկե իրավիճակ փոխվեց, բայց դե աղբամանները հեռու են ու մշակույթ էլ չկա:

Նոյեմբերյանի խոշորացումից հետո աղբահանության կարիքների բավարարման համար կանխատեսումներ ենք արել, բայց հիմա պիտի վերլուծենք պրակտիկան, հասկանանք, թե խոշորացումից հետո կարիքներն ինչպես են փոխվել՝ հաշվի առնելով բնակավայրի առանձնահատկությունները՝ ռելիեֆը, աղբի գոյացումը և այլն:

Խոշորացումը Բարեկամավանի վրա ոչ մի ազդեցություն չունեցավ, այդ թվում նաև աղբահանության ոլորտում:

Խոշորացումը Դիլիջան համայնքին մեծ օգուտ տվեց, միջազգային դոնորները նվիրեցին մեքենաներ ու աղբարկղեր, ու շատ լավ կազմակերպվում է աղբահանություն:

Բայց խոշորացումը իրա հետ բերեց այլ բացասական բաներ, աղբահանությունը լուծվեց, բայց մյուս հարցերը մնում են չլուծված:

Խոշորացման տրամաբանությունը այն պիտի լիներ, որ խոշորացումից ավելի պիտի օգտվեին փոքր բնակավայրերը, քան մեծերը: Ճիշտ է, Բարեկամավան, մեկ մեկ սկսել է մեքենա գալ, բայց որ մարդ չկա համայնքում բնակվող, ինչպե՞ս պիտի կյանքներս կլավանա:

Ներկայում քննարկվում է խոշորացված համայնքում բոլոր բնակավայրերում նույն համակարգը ներդնելու հարցը: Պետք է հասկանալ, թե ինչպիսի ընդհանուր համակարգ է ներդրվելու, հետո նոր անդրադառնալ յուրահատուկ կարիքների:

Շատ կցանկանայի, որ Կամո գյուղին ավելի շատ ուշադրություն դարձվեր: Աղբահանության ոլորտում ընդհանրապես ոչինչ չի արվում մեզ մոտ:

Բյուջեն ընդհանուր է հավաքվում, ո՞վ է որոշել, որ դա պետք է կենտրոնացված լինի Աշոցքում ու Ախուրյանում:

Համայնքի բյուջեից աղբահանության համար հատկացումների դեպքում Թումանյանի փոքր գյուղերում, ըստ իրենց չափի, հատկացումների դեպքում հարց լուծել հնարավոր չէ, քանի որ գումարը շատ քիչ է ստացվում: Նորից կշահի համայնքի կենտրոնը:

Ծառայությունը քիչ թե շատ լավ է: Թող բյուջեից գումար հատկացնեն և բարելավեն ծայրամասերի աղբահանությունը: Այդքան էլ շատ բան չկա անելու հիմա:

Էդ համայնքները միավորողը տեսել ա ինչ ա անում: Կաթնաղբյուրն ու Ուրասարը Ստեփանավանին ո՞նց են միանում:

Ուշադրություն դարձնում են միայն համայնքի կենտրոնին, իսկ գյուղերում նույնիսկ աղբարկղեր չկան:

Թող աղբահանության ծրագիրը ինչպես քաղաքներում են կազմակերպում, նույն ձև իրականացնեն նաև գյուղերում:

Եթե մայրաքաղաքում էդ բանը կազմակերպված չէ, գյուղում ինչխ բդի կազմակերպվի:

Պետք է բողոքներին չնայել՝ աղբամանները դրվեն կենտրոնական փողոցներում:

Ամենալավ տարբերակը համայնքներն իրար չմիացնելն էր: Էդ ժամանակ ամեն գյուղ իր համար էս հարցը կլուծեր:

Նոյեմբերյանի սահմանամերձ Բարեկամավան բնակավայրում ընդհանրապես աղբահանություն չի իրականացվում:

Գյուղական համայնքներում չկան հնարավորություն, որ աղբը հավաքեն տանեն մի տեղ կենտրոնացնեն:

Մեծ համայնքները կարող են օգնել փոքր համայնքներին և բնակիչների հետ համատեղ կազմակերպեն աղբահանությունը:

Ինչպես բոլոր հարցերում, էստեղ էլ կենտրոններում աշխատանքներ տարվում է, իսկ հեռավոր գյուղերին ուշադրություն չեն դարձնում:

Բոլոր դեպքերում սահմանամերձ գյուղերը միշտ առանձնահատուկ պայմաններով են, անգամ աղբահանության դեպքում:

Մոտակա տաս օր-մի ամսից նոր մեքենաներ ենք ստանալու, հենց էդ մեքենաները գան, դրանց մի մասը կուղղվի նաև գյուղական համայնքների աղբահանության կազմակերպմանը:

Ես Աշոցք բնակավայրից եմ ու շատ գոհ եմ աղբահանության վիճակից:

Արևիկ համայնքում աղբարկղ չկա, մենք այն բերում-թափում ենք Գյումրիում:

Մեր գյուղում ամեն օր վիճում են, թե ինչու Աշոցքում կա աղբահանություն, իսկ մեր գյուղում չկա:

Նախկինում մաքսատունը (Բավրա) ամենավատն էր աղբի տեսանկյունից, հիմա այդ խնդիրը կարծես թե կարգավորվել է:

Ստեփանավան քաղաքում աղբահավաքությունը շատ լավ է իրականացվում:

Ձուջևանի անունը պիտի լինի Աղբևան:

Ա.2. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետք է վերահսկում լինի սկսած աղբի հավաքումից, մինչև բյուջեի ծախսում:

Ծառայության որակի վերահսկողություն պետք է սահմանել: Համայնքի կողմից հատուկ խումբ պետք է ստեղծել, որը պետք է վերահսկի, թե ինչպես է իրականցվում աղբահանությունը:

Աղբահանության ցանկացած տարբերակ, որի նկատմամբ բնակիչները վերահսկողություն կունենան, նախընտրելի է:

Ծառայություն մատուցողների հաշվետվողականության աստիճանը պիտի բարձրացվի, վերահսկողություն է պետք սահմանել: Սակայն ինչպե՞ս պիտի էդ վերահսկողությունն իրականացնել: Սա մեծ խնդիր է:

Քաղաքը բոլորի աչքի առջև է, վերահսկողությունն էլ ավելի շատ է, նորմալ աշխատում են, գյուղերի մասին մարդ չգիտի:

Հիմա վերահսկողությունը շատ լավ է: Համայնքի ղեկավարությունը բավականին դրական տեղաշարժ է ապահովել ոլորտում՝ գրագետ վերահսկելով:

Աղբահանության որակի վերահսկման և մոնիթորինգի խնդիր էլ կա, որի վրա գումար չի ծախսվում:

Ստեփանավանում մի անգամ ԶԼՄ-ներին կարողացել ենք լավ ներգրավել աղբահանության վերահսկողություն իրականացնելու համար: Կարելի է կրկնել:

Աղբահանության ծառայությունը պետք է իրականացվի ոչ թե համայնքապետարանի կողմից այլ երրորդ կառույցի կողմից, քանի որ համայնքապետարանը ինքն իրեն չի կարող վերահսկել:

Շուրջ երեք հեկտարի վրա աղբավայր է հիմնվել, որը ոչ մի կերպ չի կառավարվում ու վերահսկվում, իսկ առաջիկա տարվա բյուջեում գումար չկա: Խնդիր է դառնում: Առաջարկում ենք ցանկապատել, մի մարդ նշանակվի որ հետևի, որ չայրեն աղբը, պետք եղած դեպքում իրականացնի շրջապատի մաքրում

Ճիշտ վերահսկողական մեխանիզմի միջոցով է միայն հնարավոր ամբողջ շղթային անխափան գործունեությունն ապահովել:

Նվեր տրված մեքենան մտնում է համայնքի բալանսի մեջ, և ավագանին ավտոմատ ստիպված պետք է իրականացնի վերահսկողությունը:

Համայնքի ղեկավարը կարող է բնակիչներին տեղյակ պահել, որ մեքենա կա, բայց շահագործման գումարը չկա, կսահմանվի գումար մեքենայի պահպանման և վառելիքի համար:

Ես հարկ եմ տալիս, բայց ինձ չեն ասում, թե ինչի վրա է ծախսվում գումարը: Տարիքով մեծ մարդը չի կարող ինտերնետով տեսնել բյուջեն: Պիտի հանդիպեն, տեղյակ պահեն:

Եթե մեր բողոքները ավելի բարձր ատյանների հասնեն, գուցե հարցերը լուծվեն: Մեր մասին չգիտեն:

Քաղաքներում հիմնականում մաքրվում են հիմնական փողոցները, ծայրամասերից անընդհատ բողոքներ են գալիս, որ տարեցտարի վիճակը չի փոխվում: Աղբամանների ավելացման հստակ պահանջ կա: Հաշվի չի առնվում սեզոնայնությունը, հետևաբար աղբահանման ժամանակացույցի պլանավորման ու հանրայնացման խնդիր կա:

Ու՞մ կրնաս բողոքես: Ինչխ բդի բողոքենք, օր: Համակերպվել ենք արդեն, որ աղբի խնդիրն ամենավերջինն է:

Մի քանի օր առաջ մեքենայից մի կին իջավ, շուրջը նայեց, որ տեսնի մարդ կա, թե չէ, ու մի մեծ տոպրակով աղբ գցեց փոսը: Ես ու՞ր գնամ, ու՞մ բողոքեմ:

Այս քննարկումներին պետք է հրավիրել նաև յուրաքանչյուր համայնքի ղեկավարին:

Եթե փոսն է լուծումը, արդեն լրիվ հարցը կայանում է վարչական ղեկավարի կարողություններում: Մեկը կարողանում է կազմակերպել և հետևել, մյուսը՝ ոչ:

Վարչական ղեկավարները ինչի համար են գումար ստանում, պետք է ուսումնասիրեն հասկանան՝ որտեղ ինչ տեսակ է պետք հարցը լուծել. թե չէ միայն ղեկավար լինելով խոմ չի:

Աշոցք համայնքի ղեկավարը եկավ Կրասարի աղբավայրերը փակեց, դրա շնորհիվ համայնքը մաքրվեց, տհաճ հոտը կորավ:

Աղբահանության գումարը բարձրացնելու համար համայնքի ղեկավարն առաջին հերթին պետք է հարցնի բնակիչներին:

Դպրոցի միջոցառման ժամանակ համայնքի ղեկավարն իր ավտոյով գալիս է ու տանում աղբը:

Համայնքի ղեկավար ընտրելուց պետք է ճիշտ ղեկավար ընտրվի ու ճիշտ ավագանի ընտրվի, ում միջոցով բոլոր խնդիրները բարձրացվի:

Բնակչությունը պետք է պահանջի համայնքի ղեկավարներից իրենց պարտականությունները կատարել:

Դիլիջան համայնքի ղեկավարը տեսախցիկով հետևում է թե որտեղ են գտնվում մեքենաները, այդպիսով բավականին արդյունավետ հսկողություն է իրականացվում:

Կախված է համայնքի ղեկավարից՝ նվեր տրված իրերը ըստ անհրաժեշտության օգտագործվեն:

Բնակիչները, համայնքի ղեկավարները պետք է հասկանալ որ բնապահպանական հարցերն ամենակարևորն են:

Ես համայնքի ղեկավար եմ, բայց չգիտեմ՝ ուր գցեմ իմ տան աղբը:

Համայնքապետերը պետք է գան կանգնեն գյուղացիների մոտ ու միասին որոշեն, թե որն է ամենաճիշտ ճանապարհը աղբահանությունը իրականացնելու համար:

Աշոքում ավագանին բավականին ակտիվ մասնակցում է համայնքի կյանքին:

Բարերարը մեր հարցերը չի լուծի, դա անհավանական է: Ճիշտը համայնքի կենտրոնացված միջոցներով աղբատար մեքենաներ ու աղբամաններ ձեռք բերելն է, աշխատացնելը: Բնակիչների ու համայնքի ընդհանուր ֆինանսական մասնակցությամբ հնարավոր է այս հարցը լուծել:

Բացարձակ հավատ չկա, որ մենք դառնանք բյուջետային կառավարման մասնակից:

Եղած մրցույթներին, որ արվում են աղբահանության ոլորտում, միշտ մի կազմակերպություն է մասնակցում: Բայց իրականում այլ ցանկացողներ էլ չկան:

Աղբահավաքման կազմակերպությունների համար ֆինանսապես այդքան էլ շահավետ չի, որ այլ ընկերություններ էլ մասնակցեն մրցույթներին: Հետո, մյուսները տեխնիկա էլ չունեն, իսկ ներկա կազմակերպությունը գոնե էդ տեխնիկան արդեն ունի:

Վստահության խնդիր կա. էսօր էլ մեքենայի վրա բան է փչանում, բնակչից են փող վերցնում: Վաղը նոր մեքենայի սպասարկումն էլ ենք մենք անելո՞ւ:

Մենք վստահ չենք, որ նախատեսվող գումարները արդյունավետ են օգտագործվում:

Եթե ես գյուղում տեսա աղբ թափողին, ես նրան չեմ տա «գելի բերան», ես իրան կարող եմ դիտողություն անել, բայց վստահ էլ չեմ, որ դա որևէ արդյունք կտա:

Այն, որ աղբը քո դռան դեմից չեն տանում, ուղղակի կախված է ավագանու ու համայնքապետի ընտրությունների ժամանակ խղճով ու ճիշտ ընտրություն կատարելուց: Այն որ այսքան խնդիր է կուտակվել այս բնագավառում հենց արդյունքն է այն բանի, որ ժամանակին ընտրել ենք հարևանին ու բարեկամին:

Ստեփանավանի քաղաքապետի՝ տևական ժամանակ հետևողական աշխատանքի արդյունքում քաղաքում աղբահանության հարցն ահագին լավ կազմակերպված է:

Ամեն ինչ պայմանավորված է կազմակերպչի տրամադրվածությունից, եթե ցանկություն լինի, կարող են կազմակերպել:

Պետք է փորձարկումներ լինեն, պիլոտային ծրագրեր, որ լավագույն տարբերակները գտնենք:

Ամեն հաջորդ տարվա համար պետք է նախորդ տարվա գնահատում տեղի ունենալ, օրինակ եթե տեսնում ենք որ մի տարածքում մի աղբամանը քիչ է, կողը դնում ենք երկրորդը:

Պետք է միջազգային փորձը ուսումնասիրել:

Պետք է փորձել արտասահմանյան փորձն ուսումնասիրել, նոր հեծանիվ չենք կարողանալու հորինել: Էսքան խոսում ենք, սրա օգուտը ո՞րն է մի ընդհանուր հայտարարի գալ:

Ընտրություններից բացի բնակիչներն ավագանու հետ չեն շփվում:

Աղբահանության խնդիրը ներքին ռեսուրսներով կազմակերպելու դեպքում հարցը շատ հեշտ կլուծվի: Մի հատ կազմակերպիչ է պետք ընդամենը:

Մենք կարող ենք ինքնուրույն էլ աշխատացնել, առանց նվերների. էլ չասեմ, որ նվեր ստանանք, ավելի լավ:

Ոչ մեկս էլ չգիտի, թե ոնց է տնօրինվում համայնքային բյուջեն, եսիմ ո՞նց են ծախսում:

Եթե համայնքի բյուջեն նպատակային ծախսվի, ապա հնարավոր է էս հարցը լուծել:

Աղբահանություն իրականացնող - բնակիչ կապը շատ թույլ է, էս երկուսի մեջ փոխհամագործակցության եզրեր է պետք գտնել:

Անհրաժեշտ է այլ երկրների օրինակները ուսումնասիրել: Հասկանալ, թե ինչպես են իրենք կազմակերպում աղբահանությունը համայնքներում, ոչ մեծ քաղաքներում:

Նվիրատուն պետք է երաշխիք ուզի, որ տրված մեքենան ըստ անհարժեշտության պետք է գործի:

Օրինակ ԵՄ-ի կողմից Դիլիջան համայնքը մեքենաներ են ստացել, բայց պայմաններից մեկն այն է, որ նվիրատուն հստակ երաշխիքներ է պահանջում, պարբերաբար հետևում է:

Մարդիկ ակտիվ չեն աղբահանությունը բարելավելու հարցերում:

Ամեն բնակավայր իր առանձնահատկությունն ունի, ցանկալի է նախ քննարկեն, և բնակիչները իրենք լուծումներ առաջարկեն:

Ստեփանավանը Հայաստանի ամենամաքուր քաղաքներից է, բայց դա հիմնականում համայնքային իշխանությունների շնորհքն է:

Պիլոտային ծրագրեր են իրականացվում մեր մոտ, որ ճիշտ տարբերակներ գտնենք:

Պետք է հասկանալ, որ կուռուպցոն ռիսկեր կան:

Գյուղացիները իրենք կարող են ինքնակազմակերպվել:

Համատիրությունների առկայությունը չարդարացրեց իրեն, քանի որ բնակիչները փող չտվեցին:

Մարդիկ պետք է հասկանան, որ եթե իրենք հավաքվեն իրենց պահանջները ներկայացնեն որևէ արդյունքի կհասնեն, հիմա իրավիճակի է փոխվել:

Ջուլգաղբյուր գյուղի բնակիչները պետք է դիմեն գյուղապետին, իսկ նա էլ արդեն մարզպետարան:

Աղբարկղի համար պետք է ունենալ հետևողականություն և ֆինանս:

Եթե նորմալ աղբահանություն ենք ուզում, պետք է ամեն բնակավայրում հավաքվենք, քննարկենք, թե տվյալ բնակավայրում ինչպես է ավելի նպատակահարմար իրականացնել աղբահանությունը:

Ավագանին պետք է նորմալ վարձատրվի, որ կարողանա նաև անկողմնակալ լինել:

Հիմա նստած քննարկում ենք, չէ, կարելի է չէ բոլոր հարցերը այսպես նորմալ քննարկել լուծումներ գտնել:

Աղբամանները վերացան այն ժամանակ, երբ աղբատար մեքենաներ հայտնվեցին: Չհասկացանք՝ ինչո՞ւ:

Պետք է աղբահանության վրա ծախսվող գումարների թափանցիկություն լինի:

Առաջարկները պետք է լինեն այնպիսին, որ հնարավոր լինի իրականացնել:

Պետք է ինչ-որ կողմից սկսել ու հերթով խնդիրները լուծել, ոչ թե բոլորը միանգամից:

Սրանք այնպիսի հիմնավոր խնդիրներ են, որ կարճ ժամկետներում հնարավոր չէ լուծել: Հակառակը՝ ժամանակ է պետք:

Մեր երկրում կառավարման խնդիր կա, աղբահանությունը դրա արտահայտումն է:

Եթե համայնքն իրականացնի աղբահանությունը, մենք ավելի պահանջատեր կլինենք:

Բոլոր ոլորտներում ավագանիներում հանձնաժողովներ կան, թող լինի նաև աղբահանության հանձնաժողով...

Պետք է համակարգ լինի, եթե կոմունալ ծառայությունները լավ չլինեն, դատի տան: Մարդիկ իմանան իրենց իրավունքները և պարտականությունները:

Բազմաբնակարան շենքերում աղբահանության ծառայության մատուցման թերությունների դեպքում մեկ էլ հայտնաբերում ենք, որ ոչ ոք պատասխանատու չէ. համատիրության գործը չի, թաղապետարանի գործը չի, ո՞ւմ գործն է:

Մեր մարզադպրոցն ամենափոքր ֆինանսավորում ստացող մարզադպրոցն է, բայց աշխարհի չեմպիոն ենք տալիս: Կարևորը աշխատելու ցանկությունն է:

Պետք է սա ներդնել այն վայրերում, որտեղ նման պահանջարկ կա, պետք է պահանջարկը ուսումնասիրել:

Կարող է նորմալ բիզնես ծրագիր լինել, ծառայություն առաջարկել մարդկանց:

Կարելի է մշակել պայմանագրի ձև, ներկայացնել թեկնածուներին, որպեսզի ցույց տանք հետագայում թե ինչի տակ է ստորագրել և պահանջենք իրականացնել:

Կամավորությունը, կամ համայնքի համար մեծ ազդեցություն ունեցող մարդկանց խոսքը շատ կարևոր կլինի, աղբահանությունը ճիշտ կազմակերպելու համար:

Հաճախ է լինում, որ աղբահանության համար հավելյալ գումարներ են պահանջում, այդտեղ կոռուպցիոն ռիսկեր կան:

Ծառայություն մատուցողն էլ հաճույքով չի իրականացնում իր գործառույթը, շատ անտարբեր են, աշխատողները վերցնում են միայն մեծ աղբերը, դրա համար ոչինչ չի փոխվում աղբահանության ճակատում:

Ստեփանավանին նվիրեցին նոր աղբատար մեքենա, բայց մենք դա չենք տեսել:

Համայնքն ավելի լավ գիտի, թե որոնք են աղբահանության խնդիրները, ուստի ավելի լավ կկազմակերպեն աղբահանությունը:

Համայնքապետի սրտացավ լինելու դեպքում ամեն խնդիր էլ հնարավոր է լուծել ու ոչինչ էլ չի խանգարի:

Մենք ունենք մեքենաներ, բայց գարաժում կանգնած է, չեն հասկանում՝ ինչպես ծախսերը կազմակերպել, որ աշխատի:

Ստեփանավանի աղբանները Ֆրանսիայից ենք նվեր ստացել, ու ներկայում իրավիճակը անհամեմատ լավ է: Քաղաքապետն էլ հետևում է:

Պետք է աղբահանության խնդիրները այնպես լուծել, որ հաջորդ տարի նոր խնդիրներ չառաջանան:

Ա.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ

Եթե աշխատավարձ նորմալ տան, շատ մարդիկ չեն ամաչի կգնան կաշխատեն:

Աղբահանության ոլորտում զբաղվող աշխատակիցները քիչ են ու պետք է աշխատատեղեր ավելացնեն որպեսզի արդյունքը ավելի տեսանելի լինի:

Եթե աղբահանություն կազմակերպող կազմակերպությունը շահագրգռված լինեն միայն այդ դեպքում արտաժամյա կաշխատեն:

Մարդիկ միայն 55000 դրամ աշխատավարձ են ստնում, միայն աղբամանները մաքրելու համար, ոչ թե փողոցը մաքրելու, բայց աշխատավարձը քիչ է:

Դժվար է ասել, արդյոք մարդիկ կգնան աղբահավաքության մեջ աշխատելու:

Պետք է ժողովրդի միջից վերացնել կարծարտիպը, թե աղբահանության համակարգում աշխատելը ամոթ է:

Գյուղում մարդիկ կան, ովքեր գործազուրկ են: Համայնքապետարանը կարող է այս ընտանիքներին ներգրավել աղբահանության ծառայությունը մատուցելու գործում:

Բ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ (ՖԻԶԻԿԱԿԱՆ). ԼԱՆԴՇԱՖՏԻ ԿՏՐՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Պետք է ոչ թե ասել՝ վատ ճանապարհներ են, մեքենաներ չեն գալիս, այլ նորոգեն ճանապարհները:

Մենք մեղավոր ենք, որ ճանապարհներ չկան կամ հեռու ենք, ուրեմն պետք է աղբի մեջ ապրե՞նք:

Ամբողջ աշխարհում ինչու չկա՞ն վատ կամ դժվարանցանելի ճանապարհներ, թող համապատասխան մեքենաներ բերեն:

Ձմռանը աղբահանությունը ընդհանրապես վատթարանում է, ճանապարհները անանցանելի են դառնում: Նույնիսկ մեքենայի առկայության դեպքում խնդիր կլինի:

Հասկացեք, ձմռանը ճանապարհները գրեթե անանցանելի են, Աշոցքում ենք, չէ՞: Աղբահավաքության հարցում սա կարևոր է:

Մեր գյուղում նույն ձևով չի կարող աղբատարություն իրականացվել, քանի որ ճանապարհային խնդիրներ կան:

Աթանում ճանապարհ չկա, որ աղբահավաք մեքենա գա:

Համայնքների խոշորացումը լավ ազդեցություն է ունեցել աղբահանության ոլորտի վրա: Գյուղերը նույնպես սպասարկվում են հիմա: Բայց խնդիրը այն է, որ աղբատար մեքենան բավականին ուշ է գալիս, կամ մինչև չես զանգում, չի գալիս: Դա էլ բացատրություն ունի, ու դա այն է, որ ճանապարհները լավը չեն ու մեքենան հաճախ չի կարող մոտենալ:

Մարց գյուղում աղբամաններն իրարից հեռու են գտնվում, կան ոչ բարեկարգ ճանապարհներ, արդյունքում եղած աղբամաններն էլ հասանելի չեն բնակչությանը: Հետևաբար աղբը նետում են որտեղ պատահի:

Շատ դեպքերում աղբահանության հարցերը չեն լուծվում, որովհետև ճանապարհների հարց կա. ամեն մեքենա չի հասնում:

Ճանապարհների որակը ուղիղ ու մեծ ազդեցություն ունի աղբահանության վրա, մանավանդ փոքր ու հեռավոր գյուղերի դեպքում: Ճանապարհները բարելավել է պետք:

Ստեփանավանում ծայրամասերի ճանապարհները թեև շատ լավը չեն, բայց շրջիկ մեքենայի համար այդտեղով անցնելը խնդիր չի: Ուղղակի մեքենաների թվի խնդիր է:

Ձմռանը ճանապարհների փակ լինելու պատճառով շատ համայնքներում աղբահանության իրականացումը դառնում է անհնար:

Բյուջեում ավելի կարևոր ծախսեր կան, քան աղբահանությունը: Օրինակ՝ ճանապարհները: Իսկ աղբահանության մասով ավելի արդյունավետ կլինի մարդկանց գիտակցության բարձրացման ուղղությամբ աշխատելը:

Եթե լավ ճանապարհ չունենք, ինչքան ուզում ենք աղբահանության վրա ծախսեր անենք, դրանց արդյունավետությունը բարձր չի լինելու: Առաջնահերթությունների խնդիր ունենք:

Կիսաքանդ ճանապարհներով, կիսաղքատ, անջուր ու անջեռուցում գյուղում խոսել աղբահանության մասին, ակտուալ չէ:

Ստեփանավան խոշորացված համայնքում Կաթնաղբյուր գյուղի ճանապարհը շատ վատն է 16 կմ ճանապարհը անցնում է 40 րոպեում, դրա համար, առաջի հերթին պետք է ճանապարհները վերանորոգել:

Հարցի լուծումը շղթայական է. համայնքի բյուջեն չի բավարարելու ամբողջական լուծումներ տալու համար: Ներդրումային ծրագրերի կարիք կա՝ հատկապես ճանապարհների շինարարության համար:

Երբ խոսում ենք նոր տեղերում աղբամաններ դնելու մասին, պետք է հիշենք, որ կենտրոնականից դուրս փողոցները մեծամասամբ անանցանելի են՝ ճանապարհների իմաստով:

Աղբահանության հարցը տվյալ պահին Ստեփանավանում առաջնային խնդիրը չէ: Ավելի լուրջ խնդիրներ էլ կան, օրինակ՝ ճանապարհները:

Որտեղ մարդիկ դեռ հին ձևով են աղբը հեռացնում, մեքենա չի այցելում ու աղբաման չկա, դրա պատճառը հիմնականում վատ ճանապարհներն են: Ճանապարհներով է պետք առաջին հերթին զբաղվել կամ ամենագնացներ գնել:

Եթե ճանապարհը լավը չլինի, ոչ մի մեքենա էլ չի հասնի մեր գյուղեր:

Մոտակա հինգ տարին եթե ճանապարհների հարցը չլուծվի, մարդիկ գյուղերում քիչ-քիչ կպակասեն, ու այդպիսով աղբահանության հարցը իրան-իրան կլուծվի:

Օրինակ, նվեր ենք ստացել կանգառներ, բայց ճանապարհ ու ավտոբուսներ չկան. նույն էլ այստեղ՝ մեքենաներ կան, բայց աղբամաններ ու գիտակցություն չկա:

Ամեն դեպքում ճանապարհներն է պետք սարքել:

Ինչից խոսում ենք, վերադառնում ենք նորմալ ճանապարհների բացակայությանը:

Ավելի լավ է աղբի համար նախատեսված գումարները ծախսեն ճանապարհների վրա, հետո անցնեն աղբահանությանը:

Հանրապետությունում կան շատ լավ ճանապարհներով համայնքներ, որոնք նույնպես աղբահանության խնդիրներ ունեն:

Խաչարձան համայնքում աղբահանությունը սկսել է խոշորացումից հետո, միակ խնդիրը ձմռան ամիսներին ճանապարհների անանցանելիությունն է: Կարելի ա ավելացնել աղբամանների թիվը, որպեսզի աղբը կուտակվի դրանցում, մինչև աղբահանությունը տեղի կունենա:

Աղբավայրի շրջապատում ամբողջ տոպրակներ են, ճանապարհ չկա, կամերաներ պետք է դրվի, որ ով աղբը այլ վայրում թափելիս նկարվի ու պատասխանատվության կանչվի:

Գյուղական համայնքներում ամենագնաց մեքենա է պետք, գործածության մեջ կան ոչ ամենագնաց մեքենաներ, բայց Գոշում մի անգամ ճանապարհների պատճառով մեքենա է շրջվել:

Սահմանամերձ գյուղում յուրահատկություններ կան. այլընտրանքային ճանապարհ սարքելու համար պետք է հաշվի առնել Ադրբեջանի կողմից գնդակոծությունը, սահմանի մոտիկությունը...

Հատկապես ձմռանը վայրեր կան, որտեղ մեքենաներ չեն կարող հասնել:

Ռելիեֆի պատճառով Դիլիջանում աղբամանները շրջվում են և աղբը մնում է գետնին

Գյուղի ճանարհները նեղ են ու դրա պատճառով շատ տեղեր աղբատար մեքենան չի կարող հասնել:

Շատ գյուղեր աղբատար մեքենաներ չեն մտնում, էլ ո՞րն է դրանց օգուտը:

Ահնիձոր համայնքում փոքր «քիփլիկ» մեքենա ունեինք աղբահանության համար, հիմա մեծ մեքենա են բերել, ի տարբերություն նախորդի, սա չի կարողանում բոլոր տեղերը նորմալ հասնել:

Բացի ձմեռները, բնակավայրեր կան, որ փողոցները այնքան նեղ են, որ հատուկ տեխնիկա է պետք:

Մեր առանձին համայնքներին անհրաժեշտ են ամենագնացներ, որ հնարավոր լինի աղբահանությունը կազմակերպել: Համայնք սովորական մեքենան չի բարձրանում:

Ձուջևանում բարձրադիր տեղամասերում աղբը դժվարությամբ է հեռացվում

Մարդիկ կալոշներով քայլում են մինչև կենտրոնական փողոց, հետո հագնում իրենց հիմնական կոշիկները: Ըտեղ ի՞նչ աղբատար կհասնի:

Քաղաքի աղբի մեքենան այլ պիտի լինի, գյուղինը՝ այլ:

Հաղարծինում և Ոսկեպարում ամենագնաց մեքենայի անհրաժեշտություն կա:

Գ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Գ.1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԳՈՒՍ, ՇՐՋԻԿ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական փողոցներում կարելի է աղբամաններ դնել, հեռու փողոցներում՝ մեքենայով հավաքել:

Շրջիկ աղբի մեքենաներին դեմ եմ, ախր ես որտեղ հավաքեմ աղբը մինչև տանելը: Մեր մոտ գյուղ է՝ շները կցրեն:

Գյուղերում աղբարկղեր չկան, իսկ շրջիկ մեքենաները քիչ են:

Աշոցքի համայնքի Կրասար բնակավայրում նույնիսկ աղբարկղեր չկան, իսկ շրջիկ մեքենաները սպասարկում են Աշոցքը:

Արևիկում նույն իրավիճակն է. կենտրոնական մասերում ապրողներն օգտվում են շրջիկ մեքենայի ծառայությունից, ծայրամասերում կամ այրում են, կամ հավաքում, մեքենայով տանում Գյումրի:

Շրջիկ մեքենային զուգահեռ արդեն կա նաև կենտրոնական աղբահանություն: Առաջ մեքենան գալիս էր, բայց մարդիկ աղբը մեջը չէին գցում, իսկ հիմա տանում են աղբը գցում աղբարկղ:

Շրջիկ մեքենան ավելի լավ է, որովհետև կենդանիների, կուտակումների և այլ տեխնիկական հարցերը կլուծվեն:

Գյուղերում շրջիկ մեքենայի գաղափարը ավելի ճիշտ է: Աղբամանը չի աշխատի այնպես, ինչպես շրջիկ մեքենան: Աղբամանը նաև կարող է լցվել ու երկար ժամանակ մնալ տեղում մեքենայի ուշ գալու պատճառով:

Շրջիկ ավտոմեքենաներն անարդյունավետ են, քանի որ, օրինակ, Աշոցքում ժամերը հարմար չէին, մարդիկ տանում ուրիշ տեղերում՝ դաշտերում, ճամփեզրերին էին թափում:

Գյուղերում մարդիկ շատ աղբ են ունենում, ամբողջը լցնում են շրջիկ մեքենայի մեջ, էլ տեղ չի մնում մյուսների աղբի համար:

Ենթադրենք կան կենտրոնացված աղբամաններ: Մինչև գան էդ աղբը տանելու, կենդանիներն էդտեղ բան չեն թողնի: Իսկ շրջիկ մեքենայի դեպքում ամեն մեկը աղբը կպահի իր տանը, մինչև հավաքեն: Ու կենդանիներից էլ կպահի:

Շրջիկ մեքենան աղբահանության խնդիր չի լուծի, քանի որ մենք միգուցե իր այցի ժամանակ տանը չլինենք:

Գյուղում առաջին փուլում արդյունավետ է շրջիկ մեքենան, իսկ հետո՝ աղբարկղերի տեղադրումը:

Շրջիկ մեքենան էլ է պարտադիր, աղբամանն էլ: Երկուսն էլ միաժամանակ պետք են:

Աղբատար մեքենաները մուտք ունեն միայն կենտրոնական փողոցներ: Պետք է տարբերել դրանք շրջիկ աղբահավաք մեքենաներից:

Յուրաքանչյուր գյուղ թող ինքը որոշի, աղբաման, թե շրջիկ մեքենա: Բայց երկուսն էլ իրար հետ ավելի լավ են:

Մարդաշատ վայրերում պետք է լինեն աղբամաններ, գոնե մեկ հատ: Նաև շրջիկ մեքենաներ: Այդ համակարգը կարող է աշխատել:

Աղբամաններն ենք գերադասում շրջիկ մեքենային, բայց այն պայմանով, որ աղբը ժամանակին հեռացնեն:

Ստեփանավանի ծայրամասերում աղբահանության վիճակն ավելի վատ է: Մի երկու շրջիկ մեքենա է շրջում և դա բավարար չէ:

Շրջիկ մեքենաները ձեռնտու չեն, քանի որ դրանք ուշ-ուշ են գալիս, և գարշահոտը տուն է լցվում:

Ստեփանավանում շրջիկ մեքենաները գան-չգան աղբահանության գումարը պահանջում են:

Թումանյանի բնակավայրերում մարդիկ սովոր չեն սպասել շրջիկ մեքենային: Աղբը թափում են իրենց սովոր տեղերում:

Աղբի տեսակավորումը խնդրի լուծում է. երբ սկսենք տեսակավորել, վերամշակել, աղբի ծավալը միգուցե նվազի, թե չէ ի՞նչ տարբերություն ես եմ տանում աղբը ծորում թափում, թե՞ շրջիկ մեքենան:

Եթե համայնքներում աղբարկղներն ավելացվեն, տրանսպորտ տրամադրվի, շրջիկ ծառայությունը բարելավվի, մեր բարեկեցությունն էլ կբարելավվի

Եթե ընտրելու լինենք շրջիկ ծառայություն, թե աղբամաններ, իհարկե աղբամանները, շրջիկին կարող ես հասցնել:

Ինչի համար եք ասում կա՞մ աղբաման, կա՞մ մեքենա, թող երկուսն էլ լինի:

Այգաբացում ո՞չ աղբարկղ ունենք դրված, ո՞չ էլ աղբահավաք մեքենա: Ամբողջովին մենք ենք տանում-բերում:

Աղբը կարող ենք դնել դրսում կոնկրետ ժամերին, մեքենան գա և հավաքի: Աղբամանները կուտակումների համար վատ են:

Տասնմեկ գյուղի համար մի աղբատար մեքենա է աշխատում, էդ ավտոն ի՞նչ անի:

Կամո համայնքում մի մասն այրում է աղբը, մյուս մասը՝ հավաքում, սեփական մեքենայով տանում Գյումրիում թափում, մոտավորապես 12 կմ:

Անգամ գյուղի կաթի հավաքման մեքենան գյուղի թաղերով չի պտտվում, կանգնում է կենտրոնում, մարդիկ մոտենում են: Նույնն էլ կարելի է աղբի դեպքում՝ կենտրոնական մի տեղում կանգնի:

Հիմա մենք աղբը պարկերով դնում ենք մեր մեքենաները, բերում ենք այն տեղերում, ուր աղբամաններ կան, թափում ենք:

Աղբահանության համար առաջինը տեխնիկա է պետք: Ախուրյանում էլ, Աշոցքում էլ չկան նորմալ քանակի մեքենաներ:

Իրականում Ախուրյանում աղբատար մեքենա չկա, երկու հատ կա, մեկը միշտ փչացած է, մյուսում էլ՝ աղբը ձեռքով են լցնում:

Եթե մեքենա եկավ, աղբը չենք վառի:

Մեկ աղբահան մեքենան կարող է հարյուր բահով լցնողի գործ անել:

Մեկին ձեռք է տալիս զնգզնգացնող աղբի մեքենաները, մյուսին չէ. ես էդ ժամին գործի եմ, աղբս մնա տանը:

Մեքենաների և աղբատարների առկայության դեպքում բնակիչները կդժգոհեն միայն եթե աղբահանությունը ժամանակին չիրականացվի:

Մեր երկու աղբատար մեքենան չի կարող ամբողջ Ախուրյան համայնքի աղբը հավաքել: Դրա համար էլ նորմալ աղբահան մեքենաներ են պետք:

Մեր գեղի աղբը պռես արած էլ գցեն գը, աղբատար մեքենան էլ պռես չի գրնա էնե:

Եթե աղբահանության հարցը գյուղերում չլուծվի, գյուղացին փոսը փորելու է աղբը լցնի փոսի մեջ ու աղբը լցնի մեջը:

Գյուղապետարանը մեքենա ունի՞, որ մի հատ էլ հատկացնի աղբահանության համար:

Լորուտում, մեր թաղում աղբաման չկա, մեքենան էլ չի այցելում, ու մարդիկ առաջվա պես աղբը այրում են կամ տալիս են անասունին:

Կենտրոնացված աղբահանությունը ոչ մի օգուտ չի տալիս գյուղերի համար ու չի արդարացնում իրեն:

Մեր աղբահանության հիմնական համակարգն այսօր այն է, որ աղբը վառենք: Հույսներս մաքրելու վրա չենք կարող դնել:

Ամեն գյուղում, ամեն մարդ գիտի, թե ինչ է անելու իր աղբի հետ: Կենտրոնացվածը չի աշխատի:

Եթե աղբաման չկա, մարդիկ ստիպված գետն են լցնում աղբը:

Ժողովուրդն ամեն գյուղում արդեն գտել է իր ավանդական աղբահանության մեթոդները:

Աշոցքում այս պահի դրությամբ ոչ մի աղբաման չունենք: Ես իմ աղբը այրում եմ:

Աղբամանը ամենաճիշտ տարբերակն է, աղբը նորմալ լցնում ես՝ առանց շուրջը կեղտոտելու:

Իրականում մեր բախտը բերել է, որ Ֆրանսիայից նվեր ստացանք էդ աղբամանները: Առաջ ծառից մեխ ունեինք մեխած, էնտեղ էինք կախում աղբի տոպրակները:

Աղբահանությունը ակամայից կատարում է նաև գյուղացին՝ հավաքելով աղբը իր տան բակից ու գետափին կամ ձորում թափելով:

Դիլիջանի ու համայնքների աղբահանությունը կենտրոնացված է այս պահին ու շատ արդարացված է նման գործելաոճը:

Աղբահանության կենտրոնացվածությունը ձեռնտու չէ գյուղացուն, քանի որ գյուղացին աղբի մեծ մասը վառարանում է վառում ու չի տանի թափելու:

Կենտրոնացված աղբահանությունը փոքր համայնքներում անիմաստ է և շռայլություն:

Ախուրյանում տեղ չկա աղբը լցնելու, տանում են սրա-նրա դռան դիմաց գցում: Ամեն մեկը իր ֆանտազիայով է թափում աղբը:

Նա ով մեքենա ունի, կարող է իր աղբը տանել-թափել, տարեցները չեն կարողանում հարմարվել:

Նոյեմբերյանում ծայրամասերում տներ ունենք, որտեղ աղբամաններ չկան, մենք էլ այլ կերպ ենք լուծում խնդիրը: Մի մեծ տակառ ենք վերցնում, վրա գրում աղբ, ու մեքենան անցնելիս, արդեն դա էլ է տեղափոխում:

Որ աղբարկղ դրվի համայնքում, պարզ չի, որ բոլորին էլ հարմար կլինի տանել աղբարկղ լցնել աղբը:

Բարեկամավանում ամեն տուն ունի իր բնական ճանապարհով ստեղծված աղբամանը, որտեղից մեքենան գալիս տանում է:

Բարեկամավանում աղբահանություն չկա, յուրաքանչյուր բնակիչ իր տնամերձ տարածքում աղբը թափում է, բայց ավելի մաքուր է, քան այն համայնքներում որտեղ աղբահանություն է կազմակերպվում:

Իհարկե մենք կարող են պայմանավորվել հարևաններով, բայց ցանկալի է, որ կենտրոնացված աղբահանման համակարգ լինի:

Քարինջում կարծես ավելի հարմար է ձորը նետել աղբը, ոչ թե հավաքել:

Մեր գյուղում փոս ենք փորում ու աղբը լցնում մեջը: Լավ կլիներ, որ Ախուրյանի պես մեզ մոտ էլ նորմալ աղբահանություն կատարվեր:

Աղբահանության կենտրոնացված ծառայությունը չի կարող աշխատել, ինչպես կենտրոնացված ջրամատակարարումը չաշխատեց. Վեղլա ջուր դառնալուց հետո ջրի մատակարարումն էլ ավելի վատացավ:

Ոսկեվանում մի մեքենա ունենք առայժմ, որը չի բավարարում, չի հասցնում համայնքից համայնք գնալ, աղբը հավաքել:

Գ.2. ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱՖԻԿ

Համայնքների խոշորացումը լավ ազդեցություն է ունեցել աղբահանության ոլորտի վրա: Գյուղերը նույնպես սպասարկվում են հիմա: Բայց խնդիրը այն է, որ աղբատար մեքենան բավականին ուշ է գալիս, կամ մինչև չես զանգում, չի գալիս: Դա էլ բացատրություն ունի, ու դա այն է, որ ճանապարհները լավը չեն ու մեքենան հաճախ չի կարող մոտենալ:

Խոշորացված համայնքներում պետք է աղբատարությունը լինի ամեն օր, իսկ համայնքներում պետք է լինի շաբաթը երկու անգամ, բայց հստակ ժամերի և գրաֆիկով:

Պետք է աղբահանության որոշակի հստակ գրաֆիկ լինի, մարդիկ իմանան՝ ինչ, ոնց, ինչպես...

Անհատական փաթեթների ներդրումը կբերի նորից կաստաների առաջացմանը: Այսինքն, դու հարուստ ես, քո համար ուրիշ ծառայություններ են մատուցում ու ուրիշ գրաֆիկով, իսկ եթե հնարավորություն չունես, ապա՝ ոչ: Ես դրան կտրականապես դեմ եմ: Թող այս ծառայությունը բոլորի համար ունենա նույն գինը ու նույն ձև իրականացվի:

Վճարը հարյուրից դարձավ երկու հարյուր դրամ: Արդյունքում աղբահանության գրաֆիկը չի խախտվում, բայց անհավասար պայմանները պահպանվել են:

Գոյություն չունի աղբահանության ժամանակացույց, արդյունքում դժվար է վերահսկել պրոցեսը: Բնակչությունը պետք է հստակ տեղեկացված լինի աղբահանության գրաֆիկի մասին, որպեսզի կարողանա հետևել ծառայությունների իրականացման որակին:

Քանի որ Գոշը տուրիստական համայնք է, հատկապես ամռան ամիսներին, կախված աղտոտվածության աստիճանից՝ կոմունալ ծառայությունների հետ կապը պահելով փոխում ենք աղբահանության գրաֆիկը:

Պետք է սահմանվի աղբահանության սեզոնային գրաֆիկ, որով պետք է ֆիքսվի այն, որ ամառը աղբահանությունը ավելի հաճախակի լինի:

Ես Ախուրյանի ավագանու անդամ եմ: Մենք արդեն նախատեսել ենք հարյուր քսան նոր աղբաման ձեռք բերել հունվար-փետրվար ամիսներին: Մենք նախատեսում ենք նաև մեքենայի այցելությունների հաճախականությունը ավելացնել: Եթե բնակչությունը լուրջ մոտենա անձը հարյուր դրամ չնչին վարձավճարին ու ժամանակին միշտ մուծի, ապա ամեն ինչ նորմալ կաշխատի:

Եթե մեքենան շաբաթական երկու անգամ գյուղի տներից աղբը հավաքի, նույն հաճախականությամբ կարող է աղբամաններից տանել:

Աղբահանության հիմնական խնդիրը տվյալ պահին շրջիկ մեքենաների այցելության հաճախականությունն է՝ տասը օրը մեկ անգամ:

Համայնքի մեծությունը կամ աղբի քանակը չպետք է ազդի աղբատար մեքենայի այցելության հաճախականության վրա: Այդ աղբը որ երկար ժամանակ մնում է, թունավոր է դառնում:

Թումանյանում շրջիկ մեքենան շաբաթական երկու անգամ հավաքում է աղբը: Նորմալ հաճախականություն է: Հիմնականում մենք գոհ ենք:

Լավ կլիներ սեզոնային աղբահանություն արվեր. օրինակ՝ ամռանը, երբ աղբն ավելի շատ է կուտակվում, կարելի է հավելյալ գումար վճարել և աղբահանության հաճախականությունն ավելացնել:

Եթե աղբամաններից աղբի հեռացման հաճախականության խնդիրը նորմալ չլուծվի, ես կշարունակեմ չվճարել աղբահանության համար:

Ստեփանավանում աղբահանությունը լավ է կազմակերպված «շենքային» թաղամասերում, իսկ սեփական տներով թաղամասերում այդքան էլ հաճախ չէ:

Թող մոնիտորինգ անեն ամեն բնակավայրի համար ու, ըստ բնակիչների ցանկության, որոշեն աղբատար մեքենայի այցելությունների հաճախականությունը:

Աղբահանության հաճախականությունը հիմնական խնդիրն է, ինչքան էլ շատ լինեն աղբամանները եթե լցվում են, ամեն ինչ փչանում է:

Շրջիկ մեքենայի կամ աղբամաններից աղբը հեռացնող մեքենայի հաճախ այցելելը շատ բան չի փոխի, մինչև մարդկանց գիտակցությունը չբարձրացվի: Պատահական տեղ աղբ նետողը նուն ձև կշարունակի:

Աթանում 250 բնակիչ կա ու ունենք չորս աղբաման: Հաճախակի լցվում է գյուղամիջի աղբամանը: Ու քանի որ աղբը ուշ-ուշ է տարվում, խնդիրը գյուղամիջի աղբարկղի դեպքում է: Ստացվում է, որ մնացած աղբամանները նորմալ են սպասարկվում:

Նոյեմբերյանում շրջանում աղբահանությունը հաճախակի չի տեղի ունենում ամռանը:

Դիլիջանում բոլոր աղբարկղերը բաց են, բայց քանի որ հաճախակի է կատարվում աղբահանությունը, մենք թափառող շների հետ խնդիր չունենք:

Բաց աղբամանները ավելի հարմար են, բայց միայն այն դեպքում, երբ աղբահանությունը հաճախակի իրականացվի:

Կենտրոնական բնակավայրերում էլ մեծ խնդիրներ կան. օրինակ՝ Ախուրյանի ծայրամասերում միայն երեքշաբթի և շաբաթ օրերին է մեքենան հավաքում աղբը:

Աղբահավաք մեքենաները միանշանակ գերադասելի են աղբամաններից, շաբաթը երկու անգամ:

Եթե Կամոյում շաբաթական գոնե երկու անգամ աղբահանություն իրականացվեր, շատ շնորհակալ կլինեինք:

Պետք է գոնե շաբաթը մեկ անգամ աղբատար մեքենա այցելի մեր գյուղեր:

Շաբաթը մեկ անգամ աղբահանության իրականացնելու ծրագիրը ավելի լավ է չլինի, քանի որ ոչ մի հարց չի լուծվի այդպես:

Վաղ առավոտյան բոլորս էլ տանն ենք, եթե աղբահավաք մեքենան գա, շատ լավ կլինի: Գոնե շաբաթը երկու անգամ:

Շաբաթական երկու-երեք անգամով հազիվ էլ հասցնեն աղբը հավաքել մեքենաները:

Եթե շաբաթը մեկ գա մեքենան, նորմալ է, բայց չի գալիս:

Սարչապետում աղբամաններ չկան: Շրջիկ մեքենան շաբաթը երկու անգամ գալիս հավաքում է աղբը:

Թումանյանում շաբաթը երկու անգամ մեքենան գալիս, աղբը տանում է ու դա լրիվ հերիք է: Լավ կազմակերպման դեպքում հնարավոր է խնդիրները լուծել նաև առանց մեծ ծախսերի:

Սարչապետ գյուղում շաբաթական երկու անգամ շրջիկ մեքենան շրջում է և աղբը հավաքում, սակայն մինչ աղբահանության կազմակերպումը կուտակված աղբը դեռ մնում է ծորերում:

Շրջիկ մեքենաների դեպքում, ես կարծում եմ, առնվազն երկու օրը մեկ մեքենան պետք է այցելի բնակիչներին: Ցմեռը կարելի է՝ ասենք, շաբաթը մեկ:

Մարց գյուղում միայն գլխավոր փողոցում կա տեղադրված աղբաման, բայց շաբաթներով մեքենան չի գալիս, աղբը չեն տանում:

Բաղանիսում աղբահանությունն իրականացվում է շրջիկ մեքենայով, շաբաթը մեկ անգամ, կիրակի օրը: Աղբը տարվում է գյուղից դուրս կենտրոնական մի վայր, որտեղ գյուղի ամբողջ աղբը թափվում է: Սա սահմանից դուրս է գրեթե, դեպի Ադրբեջան:

Դովեղում երկու շաբաթը մեկ է իրականացվում աղբահանությունը: Շրջիկ մեքենան գյուղից է: Դեպի սահմանը ծոր կա՝ հատուկ մեկուսացված աղբը թափելու համար: Մեքենա ունենք, բայց աղբամաններ դեռ չունենք:

Շաբաթը երկու անգամ Ոսկեպարում լինի շրջիկ աղբարկղ

Դիլիջանում կան տուպիկներ, որտեղ աղբարկղեր չկան, մարդիկ պետք է մի շաբաթ

Մեր թաղամասում ամեն հինգշաբթի գալիս տանում են աղբը, բայց մարդիկ պետք է մի շաբաթ սպասեն որ աղբը թափել:

Գյուղում պիտի մի աղբատար մեքենա լինի, որ երկու շաբաթը մեկ գա, տներից հավաքի աղբը:

Հովք համայնքում շաբաթը մեկ անգամ աղբահանություն իրականացնելը գյուղի կարիքներին բավարարում է:

Շատ կուզենամ, որ շատ լինեն աղբամանները ու գոնե շաբաթը երեք անգամ պարբերկանությամբ աղբահանություն:

Ամենաճիշտը անհատական աղբարկղերն են, մարդիկ կիմանան որ շաբաթական մի անգամ կգա կտանի, իսկ այսօր քսան տանը հասնում է մի աղբաման, արդեն շաբաթվա կեսին աղբամանը լցվում է:

Ուզում ենք շաբաթը նվազագույնը երկու անգամ դատարկվող աղբարկղներ:

Որոշ գյուղեր կան, որ ամիսը մեկ հազիվ աղբատար մեքենան գնա:

Քարինջում ամիսը մեկ հազիվ աղբահավաք մեքենա գա: Ժողովուրդն էլ աղբը չի լցնում աղբարկղ, որ հոտ չգա: Ստիպված ուրիշ տարբերակներ են գտնում:

Ստեփանավանում ամեն օր տանում են աղբը, իսկ Քարինջ գյուղում ամիսը մեկ անգամ, այն էլ մի քանի անգամ զանգելուց հետո:

Ամիսը երկու անգամ է գալիս աղբահանության մեքենան, աղբամաններ չկան. ստիպված վառում ենք:

Ոսկեպարում ամիսը մեկ հազիվ աղբատար մեքենա գա, աղբը տանի: Բոլորն էլ տանում են ծորը լցնում, հետո էլ՝ վառում:

Աղբը պետք է ամեն օր հավաքել, որպեսզի կարողանանք խոսել նորմալ աղբահանության մասին:

Ամենաճիշտն էն է, որ գյուղապետարանը պայմանագիր կապի գյուղում գործող մի գյուղտեխնիկայի հետ, ներսից մարդիկ աղբամանները գոնե երեք օրը մեկ դատարկեն իրենց ինքնաթափը, տանեն թափեն: Տասնմեկ գյուղին մեկ-երկու մեքենայի միջոցով ինչպե՞ս կսպասարկեն:

Պետք է աղբահանությունը իրականացվի ամենօրյա ռեժիմով, որպեսզի գարշահոտ չլինի:

Քաղաքում օրական երկու անգամ են անում, թող այդպիսի աղբահանություն իրականացվի նաև գյուղերում: Այդ ժամանակ ոչ մի խնդիր էլ չի լինի:

Ռուսաստանի հյուսիսում, Սիբիրում աղբի հավաքելու հետ ոչ մի խնդիր չկա: Ամեն օր հավաքելու դեպքում սառելու խնդիր էլ չկա: Օրը նույնիսկ երկու անգամ են հավաքում:

Արշալույս գյուղում լավ փորձ ունեն, ամեն օր կոնկրետ ժամին տրակտորը լաֆետով կուգա, մարդիկ իրենց աղբը տոպրակով փաթաթած կբերեն, կդնեն լաֆետի մեջը: Էդպիսի գյուղ էլ չկա, որ համապատասխան տեխնիկա չունենա, հնարավոր չեղնի էդպես կազմակերպելու աղբահանությունը, մի հոգի էլ կունենա իր համար գործ: Մեր կարծիքն էս մասով առիթ չի եղել հայտնելու:

Մեր բնակավայրերում շատ կարևոր է աղբամաններ ունենալը, բայց պետք է ապահովել ամենօրյա աղբահանություն: Սովետական ժամանակ առավոտյան և երեկոյան շրջիկ մեքենան գալիս էր աղբը տանում, ու ոչ մի կուտակում չէր լինում:

Կոնկրետ օր չկա, որ գյուղացին իմանա մեքենան գալիս է: Պատահում է, որ մենք ենք զանգում, ասում՝ եկեք:

Աղբահանության խնդրի լուծման համար ամենակարևոր քայլը այն է, որ աղբահանությունը իրականացվի ամենօրյա ռեժիմով:

Ստեփանավանում աղբարկղերն ամեն օր դատարկվում են, բայց միայն կենտրոնական թաղամասերում: Օրինակ՝ Չարենց փողոցում աղբամաններ ընդհանրապես չկան:

Ըստ օրենքի +5 ջերմաստիճանի և ավելիի դեպքում ամեն օր պետք է իրականացվի աղբահանություն, բայց եթե գյուղի բյուջեն ամբողջապես էլ դնեն այդ գործի մեջ, չի հերիքի դրա համար:

Եթե աղբատարարները շատ լինեն ու ամենօրյա ռեժիմով մաքրություն իրականացվի համայնքներում, ապա աղբահանության խնդիր չի լինի ու մարդիկ մեծ սիրով աղբը կտանեն ու կթափեն աղբարկղի մեջ:

Կարելի է գյուղերից դուրս մեծ աղբավայրեր կառուցել ու ամեն օր աղբը հավաքել, տանել այնտեղ լցնել:

Թումանյանում հինգշաբթի և կիրակի օրերին է իրականացվում աղբահանությունը՝ շրջիկ մեքենայի միջոցով: Աղբը հավաքում ենք տանը, մեքենային հանձնում:

Դիլիջանում ամեն օր, առավոտյան 8-ին աղբամաններից շրջիկ մեքենան հավաքում է աղբը: Հիմնականում գոհ ենք:

Հովքում տարածք կա, որ գիշերվա ժամերին մայրուղուց աղբ են բերում, թափում: Հո չե՞ս կարող ամեն օր մաքրող բերել:

Պատասխանատուները մտածում են, որ կարող են մի անգամ մեքենա ուղարկել գրել երեք անգամ, սրա պատճառով գարշահոտ է տարածվում:

Եթե բյուջեն ունի գումար, որ երկու մեքենա գնի, թող նույն մեքենայի համար շատ բենզին լցնեն, երկու անգամ գնա գա:

Մեր մոտ երկու անգամ աղբատար մեքենաները գալիս են, բայց մարդիկ կան, որ տանը չեն լինում, ավելի լավ է աղբամաններ էլ լինեն:

Եթե մեկ անգամ աղբ հավաքելը քիչ ա, ապա անհրաժեշտ է պարզապես աղբարկղերն ավելացնել, ու թող հավաքվի: Մեքենան հետո կգա կհավաքի կտանի

Խաչարձան համայնքում երբ աղբի կուտակումը շատ է լինում, զանգում ենք, աղբահանության ծառայությունը արձագանքում է, հարցը հրատապ լուծում:

Ինչքան էլ շատ լինի աղբաման, եթե մեքենաները ուշ-ուշ են գալիս, աղբը կուտակվում է:

Նոյեմբերյանում մարդիկ հստակ գիտեն, թե մեքենան երբ է գալիս, առավոտյան 7-ին, ու տան մոտ սպասում են մեքենային:

Աղբահանությունը նաև պետք է հարմարեցնել սեզոններին. տարվա տարբեր շրջաններում տարբեր պարբերականությամբ է պետք իրականացնել:

Մարդիկ առանձին գումար և ժամանակ չեն ծախսում աղբը թափելու համար, իրենք իրենց առօրեային հարմարեցնում են աղբը թափելու ժամանակը:

Բնակավայրերում թող աղբարկղեր լինեն, մարդիկ երբ ցանկան, տանեն իրենց աղբը թափեն, կարող է մեզ այդ ժամերը հարմար չեն:

Երբ սկզբում հատուկ աղբամաններ էին դրել, նորմալ էր, բայց նորմալ չհավաքեցին, արդեն իմաստը կորավ աղբի բաժանման:

Աշոցքից դուրս աղբահանություն ընդհանրապես չի կատարվում: Աղբամանները կան, բայց աղբը տանող չկա: Աղբամանի իմաստն էլ ո՞րն է:

Գյուղում աղբամաններ դրին, ավելի շատ աղտոտվեց գյուղը, քանի որ աղբը լցվեց աղբամանները, հետո շուրջբոլորը, քանի որ տանող չկար: Առաջ գոնե գյուղից դուրս էին տանում աղբը թափում:

Մարդիկ եթե տեսնեն, որ աղբամանները լիքն են, այլևս աղբն այդտեղ չի թափի, կմտածի որտեղ տանի վառի կամ հորի:

Նախկինում մեր գյուղում քառասուն աղբաման է եղել, աղբը ուշ-ուշ էին հավաքում, էլի նույն վիճակն էր:

Ամեն առավոտ աղբը հավաքում են, բայց ժամը չորսի կողմը աղբամանը բացում ես, մեջը դատարկ է, իսկ կողքերը լրիվ աղբ:

Բնակիչներից մեկը ծրագիր ներկայացրեց Ձորագետի աղբահանության համար: Ծրագիրը շահեց, աղբահանությունը կազմակերպվեց երեխաների շնորհիվ, աղբամաններ տեղադրվեց, աղբամանները լցվեց, բայց համայնքի պատասխանատուները չկազմակերպեցի աղբահավաքությունը:

Մեքենաները աղբամաններից հավաքում են, բայց տների մոտ դրված ավելի փոքր աղբամաններին ձեռք չեն տալիս:

Դիլիջանում կանոնավոր ձևով աղբահանություն է իրականացվում

Գյուղի ժողովուրդը որ տեսնին ժամանակին աղբը կտանեն, ինչխ գրնա չճարե: Հարևանները ամոթանք կուդան:

Աղբարկղերը մեզ մոտ խնդիր են առաջացրել, քանի որ աղբը լցվում է դրանց մեջ, հետո երկար ժամանակ չի հեռացվում, ու դա խնդիր է: Անցյալում, որ աղբարկղեր չկային, ու մենք ինքնուրույն էինք մեր աղբով զբաղվում, իրավիճակը ավելի լավ էր:

Գ.3. ԱՂԲԱՐԿՂԵՐԻ ԵՎ ԱՂԲԱՆՈԹՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏՈՊՈԳՐԱՖԻԱ՝ ԾԱԾԿՈՒՅԹ, ԽՏՈՒԹՅՈՒՆ, ԾԱՎԱԼ

Ով է ասում, որ աղբամանները հեռու են. ինչի, որ խանութը հեռու է լինում, չեն գնում... թող աղբի համար էլ գնան:

Մարդկանց վերաբերմունքը պետք է փոխենք. մեկի համար հեռու է, մյուսի համար մոտիկ է: Մարդիկ պետք է հասկանան, որ կա հանրային շահ:

«Կարևորն ինձանից հեռու լինի», մարդկանց մեծ մասն այսպես է մտածում աղբարկղերի մասին: Սակայն կան նորմատիվներ, որոնք եթե հետևողականորեն պահպանվեն, ամեն ինչ նորմալ կլինի: Ուղղակի պետք է մարդկանց բացատրել, թե ինչ են այդ նորմատիվները:

Մարդ կա աղբամանից հեռու է, բայց տանում-նետում է աղբամանում, մարդ էլ կա հենց քթի տակ է, բայց չի օգտվում:

Աղբամանները տներից պետք է հեռու լինեն, և հատկապես ամռան ամիսներին գարշահոտ է տարածվում շրջակայքում:

Եթե աղբահանությունը ճիշտ ժամանակին լինի, ոչ մեկն էլ չի բողքի իր տանը մոտ լինելու պատճառով:

Ոսկեպարում աղբամանները քիչ են, մոտ չորս հատ՝ բոլորն էլ գյուղամեջում դրած: Ով գյուղամեջից հեռու է ապրում, աղբը տանում է, ձորը գցում: Շներն էլ հավաքում են, բերում գյուղ:

Կոթիում փողոցներում ավելացրել են աղբամանները, եթե նույնիսկ հեռու է աղբամանը, մեքենայով են բերում, թափում:

Աղբամանը պետք է ունենա իր նորմալ տեղը, ոչ թե ուր պատահի, ինչպես պատահի:

Խաչարձանում աղբարկղերը շուրջ չորս հարյուր մետր հեռու է դրված, ոչ ոք չի ուզում այդքան քայլել, պետք է վերանայել այդ բաշխվածությունը, ավելացնել աղբարկղերը:

Հայ ազգը բողոքում է և նրանից, որ աղբամանը իրենց մոտ է, և նրանից՝ որ աղբամանը հեռու է:

Մարդ կա, հնարավորություն ունի աղբը տանել մի հեռու տեղ այրելու, մարդ կա, մեքենա չունի, աղբը մոտակայքում մի տեղ լցնում է՝ այլ տարբերակ չունենալով:

Աղբարկղերը պետք է տեղադրել դպրոցում, ծայրամասերում, ոչ թե միայն գյուղապետարանում: Ես չեմ կարող ծայրամասից աղբը բերել գյուղապետարանի մոտ: Ես իմ տան մոտ եմ տեղ ստեղծել, որտեղ աղբ եմ թափում, իսկ հարևանս բերում է լցնում նույն տեղում (Արևիկ բնակավայր):

Թող աղբաման լինի, թող տանս մոտ լինի, չկա:

Որպես բնակիչ, համաձայն չեմ լինի, որ աղբաման դնեն իմ տան կողքը:

Ստեփանավանի ծայրամասերի աղբամանները թեև մի քանի տարի առաջ նորոգվել են, բայց արդեն շատ վատ վիճակում են՝ ջարդված, առանց կափարիչի... Պետք է դրանք փոխել:

Մեծ տարաների գաղափարն այնքան էլ լավը չի, քանի որ գարշահոտության աղբյուր կհանդիսանան այդ տարաները: Սա վերաբերում է հատկապես քաղաքների կենտրոնական հատվածներին:

Դիլիջանում աղբամանները տեղադրված են բազմաբնակարան շենքերի մոտ, որտեղից բեռնատարներով աղբը տեղափոխվում է:

Աղբամանները տեղադրված են հիմնականում կենտրոնական փողոցներում, իսկ ծայրամասերում չկան, պետք է քաղաքի կեսն անցնենք, որ գցենք աղբամանների մեջ:

Ոչ բոլորը համաձայն կլինեն, որ աղբամանները տեղադրեն իրենց տան մոտ:

Իմ տանից աղբաման տարածությունը կիլոմետրից ավել ա, բայց ես չեմ զլանա աղբը տանի աղբամանում թափի:

Բնակիչը կհամաձայնվի աղբամանը իր տան դեմը լինի միայն այն դեպքում, երբ անընդհատ տանեն աղբը թափեն:

Դիլիջանում քոլեջի մոտ աղբաման կա, բայց սարսափելի վիճակում է: Հա՜մ քոլեջն է թափում աղբը, հա՜մ մոտակա տների բնակիչները:

Համայնքներում աղբամանները այնքան քիչ են, բայց չեմ ուզենա, որ իմ տան դիմացը դնեն:

Որոշ մարդիկ տեղադրված աղբամանները քաշել-տարել են իրենց տան բակ, որ հարմար լինի: Ալարկոտ ենք, էլի:

Եղել է, որ աղբամանը տարել էին, հետո գտանք, հետ բերեցինք: Բայց դե դրա իմաստն էլ չենք հասկանում:

Ավելի ճիշտ կլինի, որ մեծ համայնքներում կամ մեծ փողոցներում իրար կպած մեծ աղբամաններ լինեն:

Ես երկու օր առաջ Ստեփանավանից եմ եկել, շատ մաքուր քաղաք է, ամեն հիսուն մետրի վրա աղբաման կա: Առաջարկում եմ սկսել աղբամաններից:

Եթե պետք է ամբողջ գյուղը կեղտոտ լինի, միայն իմ դուռը մաքուր, էդ էլ մի բան չի:

Մարցում թաղամաս կա, որ աղբարկղերի քանակը չի համապատասխանում մարդկանց թվին: Հազիվ մի աղբաման լինի:

Նշված է, որ Սարագյուղում կա երեք աղբաման: Ասեմ, չկա: Կարող եք գալ և նայել:

Թումանյան համայնքում չկան աղբամաններ ու մեծ կարիք կա աղբամանների, կամ գոնե հատուկ վայրեր առանձնացվեն, որտեղ մարդիկ կարողանան իրենց աղբը թափել:

Մենք գյուղից տոպրակներով աղբը բերում ենք քաղաքի աղբամաններում թափում:

Ձրառատում աղբաման չկա: Առաջարկում եմ սկզբից աղբամաններ տեղադրել, նոր աղբահանություն կազմակերպել: Ամենակարևորը աղբամանն է:

Թող աղբամաններ դնեն այնտեղ, որտեղ միշտ աղբի կուտակումներ են լինում:

Մեր գյուղին երեք աղբամանը շատ քիչ է, նորից նույն իրավիճակը կուգա: Էդ էլ որ լցվավ, կողքերը նորից կուտակում է լինելու: Աղբամանը իրենով ոչ մի հարց էլ չի լուծում, եթե աղբահանություն չի լինելու, դրա իմաստը ո՞րն է:

Ախուրյանում աղբաման գոյություն չունի: Մի քանի հատ կա, բայց համայնքի մակարդակով զրո է: Դրա պատճառով էլ աղբի խնդիր ունենք:

Աղբամանները չպետք է լինեն որևէ մեկի տան դիմաց, այլ ավելի չեզոք ու հարմար տարածքներում պետք է տեղադրեն:

Առաջարկում ենք, որ աղբամանները տեղադրեն ամեն գյուղի թաղերի վերջում:

Մի գյուղում երեք աղբամանը շատ քիչ է:

Աղբամաններ գյուղերում պետք է չափերով ավելի մեծ լինեն, քան քաղաքներում են:

Աղբաման ավելացնելով աղբահանության հարց չես լուծի:

Բայց ինչի ավելի շատ չենք անում աղբամանները, եթե դրա կարիքը կա. ինչ չափանիշներով են հաշվում՝ քանի հատ:

Քարինջ գյուղում ընդամենը 12 աղբաման կա, սկզբում կենտրոնացված էր՝ երեք աղբաման, հետո փորձեցին բաժանել այդ 12 աղբամանները, որը սակայն բավարար չափով չի սպասարկում բնակչությանը:

Ստեփանավանում աղբամանները բավարար են միայն կենտրոնի համար, օրինակ չորրորդ միկրոթաղամասում աղբամաններ չկան

Ավելի հարմար է գետը լցնեն, քան կես կիլոմետր գնան աղբամանի մեջ լցնեն, հետևաբար ավելի մոտ պետք է լինեն աղբամանները:

Հանգստյան գոտիների տարածքում աղբամաններ չկան, հետևաբար մարդիկ հանգստից հետո աղբը թափելու տեղ չունեն, ստիպված ձորն են լցնում:

Բնակիչները աղբը սովորաբար տանում են կենտրոնական փողոցի աղբամաններում լցնում (Ստեփանավան), որ իրենց մոտ չկուտակվի:

Եթե աղբամաններ լինեն, մարդիկ կիմանան՝ որտեղ է պետք աղբը թափել: Չկա, թափում են ուր պատահի:

Ստեփանավանի ծայրամասերում առաջարկում էին աղբամաններ տեղադրել, որպեսզի աղբը տանը չհավաքվի:

Որտեղ որ աղբը շուտ է լցվում ու մնում, առաջարկում եմ հավելյալ աղբամաններ տեղադրեն: Այդպիսով հարցը կլուծվի: Օրինակ, Ստեփանավանի մեր թաղում այդպես ենք հարցը լուծել:

Աղբամանների անհրաժեշտություն կա քաղաքի գերեզմանոցների մոտ, որտեղ առաջացած ծաղիկների և այլ աղբը հիմա չգիտենք ինչ անենք:

ԱՍԻՖ-ի հետ համատեղ նախատեսվում է երեք մեքենա և հինգ հարյուր նոր աղբաման տեղադրել Ստեփանավանում

Մայրուղու վրա գտնվող աղբամանները գյուղացուն հարմար չեն:

Մեքենայով անցնում են, աղբը շպրտում աղբամանի մոտ:

Առաջին տարին է, որ աղբահանություն է իրականացվում Դիլիջանի Գոշ համայնքում, ճիշտ է հատվածներ կան որտեղ աղբամաններ չկան, բայց տեղեր էլ կան որ աղբամանը մաքուր է, իսկ աղբը կողքը դրած:

Երբ աղբամաններ չկան, մարդիկ ինչ որ տեղեր ուղղակի աղբանոցի են վերածում:

Նոյեմբերյանում մոտավորապես 70%-ով աղբամանները բավարարում են աղբի հավաքման համար: Բայց դեռ խնդիր ունենք: Երկու գյուղի համար մի աղբատեղի է նախատեսված:

Դիլիջանում թաղամասեր կան, որտեղ աղբամաններ չկան, ու մարդիկ երբեմն մի կիլոմետր քայլում են, որպեսզի աղբը նետեն կենտրոնական մասում տեղադրված աղբամանում:

Բարեկամավան համայնքում ընդհանրապես աղբահանություն չի իրականացվում, մարդիկ իրենց ուժերով են կազմակերպում այդ պրոցեսը: Ոչ մեքենա կա, ոչ աղբաման:

Աղբատար մեքենայի առկայությունն էլ լուծում չի, քանի որ գյուղացիների մեծ մասը ալարում է նույնիսկ աղբը մեքենայում թափի, պետք է անպայման աղբամաններ տեղադրվեն:

Դիլիջանում թաղամասեր կան, որտեղ աղբամաններ ընդհանրապես չկան: Մարդիկ աղբը թափում են որտեղ պատահի:

Նոյեմբերանում ընդհանրապես աղբաման չկա:

Աղավնավանքում քսան տարի անընդմեջ աղբը թափում էինք գետը: Հիմա, երբ արդեն աղբամաններ կան, գյուղը բավականին կոկիկ տեսք է ստացել:

Բաղանիսում ես ինքս մեր հարևաններից էլ եմ աղբը հավաքում, տանում կենտրոնական աղբամանում թափում, բայց թաղամասեր կան, որտեղ մարդիկ որտեղ ասես թափում են աղբը:

Ձուջևանում ձմռանը աղբամանները հավաքում էինք, որ չգողանան:

Քանի որ օրինակ՝ Գոշում, աղբամաններ են տեղադրվել, բայց աղբամանների և մեքենաների համար անհասանելի լինելու պատճառով չի լինի տեղադրել: Նոր ամենագնաց մեքենա ենք պատվիրել, որ կարողանա այդ բոլոր փողոցները մտենեն:

Դիլիջանը աղբարկղերի խնդիր չունի, բայց աղբարկղերով միայն հարցը չես լուծի:

Ինչքան աղբամանների քանակը շատ լինի, էնքան էլ աղբը շատ կլինի:

Աղբարկղերի քանակները պետք է լինի ըստ շնչի ու աղբահանությունը իրականացվի հաշվի առնելով, թե այդ տարածքում ինչքան բնակիչ կա:

Դպրոցի հավաքարարը ստիպված աղբը հավաքում ու վառում է, որովհետև տեղ չկա թափելու:

Գյուղի վերջին ապրողը կբերի՞ գյուղամեջ աղբը թափի: Չի բերի: Էսօր էլ ինքը, քանի որ ծայրամասում է ապրում, աղբի մոտակա մի առուն է լցնում, էդպես էլ շարունակելու է:

Եթե մեկը բերի իմ տան դեմը աղբը դնի, կտամ գլխին:

Պետք է հանրային կառույցների շուրջը աղբահանությունը ավելացնել:

Խաչարձանում աղբարկղերը նոր են տեղադրել, բայց պակասություն է անում, քսանհինգ տանը մեկ աղբարկղ է դրված, մարդիկ տանում գետն են գցում:

Ոսկեպարի այն տեղամասերում, որտեղ ասֆալտապատ է տեղադրել աղբարկղ

Մարդկանց համար կարևորը աղբը իրենց տանը չլինի, եթե տան դիմացն է՝ ոչինչ:

Աղբարկղերը եթե մի 50 մետր հեռավորության վրա, էլի ոչինչ, բայց եթե հանկարծ հեռավորությունը 2 կմ է, ապա ստիպված մեր սեփական մեքենաներով ենք տանում թափում

Դիլիջանի կենտրոնական մասում աղբահանությունը միգուցե լավ է իրականացվում, բայց, օրինակ, Շամախյանում, որտեղ թե՛ առանձնատներ կան, թե՛ բազմաբնակարան շենքեր, գրեթե մեքենա չեն տեսել, որ բարձրանա:

Առաջ մեր դպրոցի տարածքում աղբարկղ չկար, շուրջն էինք թափում, իսկ հիմա նորմալ աղբարկղ կա, մեջն ենք գցում:

Կենտրոնական փողոցը քաղաքի դեմքն է, դրա համար էնտեղ շատ լավ է:

Ժողովրդի մոտավորապես յոթանասուն տոկոսն է, որ ընհանրապես կարող է մոտենալ աղբարկղին, մնացած երեսուն տոկոսը ստիպված աղբը թափում են ձորը:

Քառասուն աստիճան մառոզին հեչ մարդ աղբը ձեռքը չի գնա գյուղի կենտրոն:

Ձմռանը աղբը հավաքվում է, բայց թեկուզ ֆիզիկապես հնարավոր չէ այդ աղբը տեղափոխել: Խոսքը մեկ տնտեսության աղբի մասին չէ, այլ մի քանի:

Գ.4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ/ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Անգամ եթե մասնավորին պատվիրակվի ծառայության մատուցումը, համայնքը պետք է վերահսկողություն սահմանի: Տուգանքներ պետք է սահմանվեն:

Եթե մասնավորն իմանա, որ գումարը հավաքվելու է, ներդրում էլ հնարավոր է կատարի: Նախադեպ չկա, բայց հնարավորություն կա:

Եթե մասնավորին հանձնվի, կդառնա Երևանի Sanitek-ը:

Ավելի լավ է համայնքն իրականացնի աղբահանությունը, քան մասնավորը, որովհետև գոնե առաջին դեպքում կիմանանք ումից պահանջենք:

Եթե մասնավորն իրականացնի աղբահանությունը, գինը կբարձրանա, դա բնակչին ձեռնտու չի լինի:

Համայնքից կարող ես պահանջել, իսկ մասնավորին ոչինչ չես կարող ասել:

Մի քիչ մեր գրպանին կխփի, բայց համաձայն ենք մասնավորին փոխանցվի աղբահանության ծառայության մատուցումը:

Եթե մասնավորի կողմից աղբամանները շատացվեն, նորմալ աղբահանություն կազմակերպվի բոլոր համայնքներում, բոլորն էլ կողմ կլինեն մասնավորին փոխանցել:

Մեր համար տարբերություն չկա պետականը, թե մասնավորը, կարևորը որակյալ լինի:

Մասնավորն իր գումարը ինչու պետք է ծախսի, սկզբից խոստումներ կտան, հետո ժողովրդի «քթից կբերեն»:

Մասնավորին կարելի է տալ կարճ ժամանակներով, որ եթե լավ աշխատի, երկարացնենք, չէ՝ փոխենք:

Մասնավորին ենք տալիս ճանապարհների սպասարկումը, հիմնարկները, ամեն ինչ: է մի բան հարցնեմ. պետությունն էլ ու՞մ է պետք: էդ էլ տանք մասնավորին ու պրծնենք:

Համայնքապետարանն ավելի լավ լեզու կգտնի բնակիչների հետ, քան թե մասնավորը:

Մասնավորն ինչո՞ւ պետք է ավելորդ գումար ծախսի, ինչպես մենք չէինք գա այս քննարկմանը, եթե մեր հետևից մեքենա չուղարկեիք:

Եթե վերահսկողությունը ճիշտ լինի, մասնավորը լավ կաշխատի:

Եթե համայնքի գույքը տրվի մասնավորին, բոլորն էլ կթալանեն, օգտագործեն իրենց շահերի համար:

Փոքր համայնքներում՝ ասենք մի հիսուն տնտեսությամբ, կարող ենք հավաքվել, ընտրել մի մասնավոր ընկերություն կամ անհատ ձեռներեց, որը կիրականցնի աղբահանությունը՝ իր մեքենայով, բանվորով, ամսական 300000 աշխատավարձով:

Մասնավորը եթե լավ չարեց իր գործը, կարող ես փոխել, իսկ հանրայինի դեպքում դա հնարավոր չէ:

Դուք միայն ասում եք մասնավորի աղբը, իսկ պետ հիմնարկների աղբը, դպրոցների աղբը...

Միանշանակ մասնավորեցումը խնդրի լուծում է:

Ամեն դեպքում մասնավորը և անհատականը ամենալավ տարբերակն է. երանի թանկ չլինի:

Ստեփանավանում աղբահանությունը իրականցնում է մասնավոր ընկերություն՝ պահելով ժամանակացույցը: Սակայն հենց ժամանակացույցն էլ խնդիր է:

Աղբահանմամբ զբաղվող մասնավոր ընկերություններին պետք է համայնքի կողմից մեծ վերահսկողություն իրականացվի:

Ստեփանավանում հիմա էլ մասնավոր կազմակերպությունն է իրականացնում աղբահանությունը, բնակիչները վերահսկում են:

Բնակչի տեսանկյունից տարբերություն չկա, թե ով է իրականացնողը՝ մասնավորը, թե պետականը:

Մենք չենք հիշում, թե պետականը ոնց էր: Համենայն դեպս հիմա, որ ասում ենք լավ է, արդեն երկար ժամանակ է մասնավորն է անում:

Մասնավորի կողմից ծառայությունների մատուցումը ձեռնտու կլինի միայն այն դեպքում, երբ ծառայությունների որակը բարձրացնի:

Ստեփանավանում աղբահանությանը նաև մասնավորն է մասնակցում:

Աղբահանության հարցը մասնավորին տալը սխալ է: Վեոլիա ջուրը մասնավոր ձեռնարկություն է, հետները շատ դժվար է աշխատել: Նույնն էլ աղբահանության դեպքում կլինի:

Աղբահանության հարցը մասնավորին հանձնելով ՏԻՄ-ն իրենից հեռացնում է խնդրի լուծումը: Ինչքան ուզում ես հետո դատի տուր, արդյունավետությունը, մեկ է, ընկնելու է:

Մասնավորին հանձնելով ծառայությունը, կարող ես նրանից նաև որակ պահանջել:

Աղբահանությամբ զբաղվող մասնավոր ընկերությունները ավելի լավ է պայմանավորվի կոնկրետ բնակչի կամ շենքի լիազորի հետ, ոչ թե համայնքի: Պետք է բնակիչը ու մասնավորը խոսեն և խելամիտ գին որոշեն ու պատասխանատվություն ստանձնի հենց բնակչի առաջ:

Եթե նորմալ գումար սահմանվի, մասնավորը իր գումարի պատճառով կգա և աղբը կտանի:

Ահնիձոր համայնք հասնելու համար քառասուն լիտր վառելիք է պետք, հիմա տաս-քսան լիտրինը բնակչությունը հավաքում, տալիս է, մնացածը ՏԻՄ բյուջեից է ֆինանսավորվում: Մասնավորի դեպքում էս պակասող մասն ինչպե՞ս ենք ֆինանսավորելու:

Պետականի հետ գոնե լեզու են գտնում, մասնավորի հետ չգիտես ինչպես կլինի:

Եթե տեխնիկան նվեր ստանա համայնքը, աղբահանության գումարը կնվազի, քանի որ այժմ Ստեփանավանի աղբահանությունն իրականացվում է մասնավորի կողմից:

Մասնավորը եթե գա, ինքը իր եկամուտի համար կփորձի լավ ծառայութուններ մատուցել, որ լավ էլ գումարներ աշխատի:

Մասնավորները ավելի մասնագիտացված կլինեն, ոչ թե պետականը, որն ուրիշ շատ խնդիրներ ունի:

Աղբահանությամբ զբաղվող մասնավոր ընկերությունը ռիսկային են, քանի որ նրանք յուրաքանչյուր պահի կարող են հրաժարվել աշխատել կամ կարող են սաբոտաժ անել:

Մասնավորի դեպքում բողոքներն ավելի արագ արձագանք կստանան:

Եթե ՏԻՄ-երն են իրականացնում աղբահանությունը, վերահսկում է միայն բնակչությունը, եթե մասնավորը՝ և ՏԻՄ-ն է վերահսկում և բնակչությունը, հետևաբար որակն էլ ավելի լավ կլինի:

Մասնավորին ծառայություն պատվիրակելու համար պետք է հստակ մշակվի աշխատանքի նկարագիրը, օրինակ՝ պետք է հստակ սահմանել, թե ի՞նչ որակ ենք ուզում:

Մասնավոր ընկերությունների ընտրության դեպքում պետք է լինեն հստակ ստանդարտներով ու արդար մրցույթներ:

Մասնավորի առավելությունն այն է, որ պատասխանատուն մեկն է: Պետք գործի կարող ես հրաժարվել կամ դատի տալ մոտեցումը:

Դիլիջանի տարածքում այսպես կոչված «բեսեդկաները» հիմնականում մասնավոր են, և տերերը մի կամ երկու աղբաման տեղադրում են, բայց պետք է ասել, որ դրանք բավարար չեն: Միևնույն ժամանակ, կան մարդիկ, որոնք ուղղակի թափում են աղբը՝ անկախ որևէ հանգամանքից:

Պետք է մասնավորին ներգրավել այս գործի մեջ: Պետությունը օժանդակի, որ մասնավորը նորմալ ծառայություն մատուցի:

Նախկին կոմունալ ծառայությունները հիսուն-վաթսուն աշխատող ունեին, որ փողոցներն ավլում ու լվանում էին: Բայց դա պետական էր, ու հավանաբար աշխատում էր վնասով: Ամեն դեպքում մասնավորին տալը ճիշտ է:

Մասնավորը գնալու է էժան ու հեշտ աղբահավաքություն կազմակերպելու, կարող է աղբը տեսակավորի ու առանձնացված նյութերը վաճառի:

Մասնավորի ծառայությունները թանկ են, բայց շատ հաճախ՝ ոչ որակով:

Մասնավորը եթե շահ ունի, ավելի լավ է կատարում իր գործը, քան համայնքը:

Պետք է այնպես ղեկավարել, որ մասնավորը, մտածելով սեփական շահի մասին, լավ կազմակերպի աղբահանությունը:

Պետք է հասկանալ, թե որոնք են բնակավայրի կարիքները, որքան ծախս է արվում, նոր միայն որոշել՝ տալ մասնավորին,, թե ոչ:

Չեն հետևում, ծրագիրն արվում է տեխնիկան գնվում, աղբարկղերը դրվում, բայց չեն հետևում ու հոգացավ չեն: Սա բերում է նրան, որ աղբահանությունը պիտի մասնավորը իրականացնի:

Եթե այսօր համայնքապետարանին բողոք է ներկայացվում, էնտեղից վազում են, փորձում խնդիրը լուծել: Եթե մասնավորին տանք այդ ծառայությունը, համայնքապետարանին կարծես ձեռնտու է. բողոքի դեպքում մատ թափ կտա մասնավորի վրա, կտուգանի, ուղիղ կապ չի ունենա արդեն բնակիչների հետ:

Եթե ուզում ենք հիմնավոր լուծում ունենալ, պետք է մասնավորին տալ արտոնյալ պայմաններ, ազատել հարկերից: Դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրություններ կատարել, հաշվարկել, պիլոտ անել:

Որպեսզի կարողանանք հասկանալ, թե որքանով է արդյունավետ մասնավորին այս ծառայությունը հանձնելը, պետք է ուսումնասիրել համայնքներ, որտեղ նման փորձ արդեն կա, հասկանալ, թե ինչպիսին է պրակտիկան, նոր միայն այն ներմուծել այլ համայնքներ:

Մասնավորը ավելի վատ է ապահովում աղբահանությունը, երբ մի կազմակերպություն է, ինչ ուզում անում է, իսկ համայնքնապետարանը ավելի վերահսկելի է:

Պետք է հասկանալ՝ ինչպես է կազմակերպվում աղբահանությունը եթե տարբեր կազմակերպություններ են կամ էլ մասնավորի հետ համատեղությամբ:

ՏԻՄ-երի աշխատանքը ավելի թափանցիկ է, քան մասնավորինը, չես կարողանա վերահսկել::

Իսկ եթե մրցակցություն լինի, մասնավորները գուցե ավելի լավ աշխատեն, քան այսպես ասած մենաշնորհ ունեցող պետականը:

Եթե աղբի տեսակավորման համար համայնքը պետք է գումար տա, չենք ուզի, բայց եթե ինչ որ մասնավորի հետ համագործակցություն լինի, և դա եկամուտ բերի, կարելի է փորձել:

Ամենաճիշտն էն է, որ գյուղապետարանը պայմանագիր կապի գյուղում գործող մի գյուղտեխնիկայի հետ, ներսից մարդիկ աղբամանները գոնե երեք օրը մեկ դատարկեն իրենց ինքնաթափը, տանեն թափեն: Տասնմեկ գյուղին մեկ-երկու մեքենայի միջոցով ինչպե՞ս կսպասարկեն:

Համայնքը պիտի պատվիրատու, ոչ թե այսօրվա նման՝ համ պատվիրատու համ կատարող: Սա ճիշտ մոդել չէ: Միայն պատվիրատու լինելու դեպքում, համայնքը կկազմակերպի գնումը և կիրականացնի հսկողություն

Աղբահանության բիզնեսը դառնալու է շահավետ, իրենք են խնդրելու որ աղբամաններ տեղադրեն:

Աղբահանությունը պետք է շատ չհետապնդի, քանի որ աղբահանությունը ի սկզբանե հանդիսանում է համայնքապետի գլխավոր գործը:

Աղբահանությունը պիտի դարձնենք եկամտաբեր, բիզնեսը պիտի շահույթի ակնկալիք ունենա: Բայց պիտի նաև հաշվի առնենք, որ այսօր բիզնեսը ընկած է գերշահույթի հետևից: Մյուս կողմից էլ, եթե բիզնեսը իմանա, որ իր վնասը ինչ-որ կերպ կփակվի, ապա այդ դեպքում գուցե հնարավոր կլինի, նորմալ շահույթի ակնկալիքով բիզնեսին ներգրավել այս գործում:

Արդյոք փորձ կա, որ մի քանի կազմակերպություն մատուցի աղբահանության ծառայություն:

Մենք տեսել ենք՝ Երևանում աղբահանություն անողը փողը կառնի, բայց աղբահանության վիճակն էլի լավ չի:

Դ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ, ՄՈՒՏՔԵՐ, ՎԱՐՉԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ԾԱԽՍԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վճարը հարյուրից դարձավ երկու հարյուր դրամ: Արդյունքում աղբահանության գրաֆիկը չի խախտվում, բայց անհավասար պայմանները պահպանվել են:

Ես Ախուրյանի ավագանու անդամ եմ: Մենք արդեն նախատեսել ենք հարյուր քսան նոր աղբաման ձեռք բերել հունվար-փետրվար ամիսներին: Մենք նախատեսում ենք նաև մեքենայի այցելությունների

հաճախականությունը ավելացնել: Եթե բնակչությունը լուրջ մոտենա անձը հարյուր դրամ չնչին վարձավճարին ու ժամանակին միշտ մուծի, ապա ամեն ինչ նորմալ կաշխատի:

Եթե աղբամաններից աղբի հեռացման հաճախականության խնդիրը նորմալ չլուծվի, ես կշարունակեմ չվճարել աղբահանության համար:

Լույսի համար սովոր ենք վճարել, աղբի համար էլ կսովորենք, թող գան տանեն:

Աշոցքի խնդիրներից մեկն այն է, որ աղբման չկա: Աշոցքում աղբի դիմաց վճարը քիչ է, որովհետև ծառայություն էլ չկա, ինչի՞ դիմաց վճարենք:

Աշոցքում վճարը չեն գալիս հավաքելու, եթե նորմալ հավաքագրում կազմակերպվի, մարդիկ կվճարեն:

Վճարումների պատրաստակամություն կլինի եթե մարդիկ իմանան, որ աղբահանության համակարգն աշխատում է:

Ախուրյանում կա շրջիկ մեքենա, սակայն մեքենան ոչ բոլոր փողոցներն է սպասարկում, այդ պատճառով շատերը գումարը չեն վճարում:

Հասկանալի է, որ կան մարդիկ, որ ծանր սոցիալական վիճակում են, բայց դե եթե իմանան, որ իրենց առողջության համար է, կվճարեն:

Աղբահանության մեքենան հեռվից ենք տեսել, էն էլ ճամփով անցնելուց: Էդ մեքենան որ չենք տեսել, ինչի՞ համար վճարենք:

Եթե իմանում ենք, որ մեկն անվճարունակ է, մենք ունենք գյուղական խորհուրդ, օգնում ենք, վճարում ենք, որ աղբը չկուտակվի:

Աղբահանության մեքենան հեռվից ենք տեսել, էն էլ ճամփով անցնելուց: Էդ մեքենան որ չենք տեսել, ինչի՞ համար վճարենք:

Նախաձեռնող չկա, որը կարողանա կազմակերպել և գյուղացիներից գումար հավաքագրի: Այդ ժամանակ բոլորը կհամաձայնվեն վճարել աղբի համար:

Մարդիկ հաճախ չեն վճարում աղբահանության գումարը ու մեքենայի ծախսը չի լինում ապահովել:

Աշոցքում և՛ վճարումները, և՛ աղբահանությունը նորմալ կազմակերպվում է:

Կարելի է նաև համակարգ մշակել, թե ով որքան է աղտոտում և համապատասխանաբար վճարի:

Ախուրյանում վարձավճարը հարյուր հիսուն դրամ է, իսկ Աշոցքում հարյուր դրամ: Բայց Աշոցքում փողը չի հավաքվում:

Եթե մարդը փաստացի բնակվում է, պարտավոր է վճարել աղբահանության համար: Եթե չեն պահանջում, մարդը չի էլ վճարում:

Աղբի չվճարելու համար տուգանք պետք է սահմանվի, որպեսզի բոլորը վճարեն:

Աղբահանության դիմաց վճարումների ցածր մակարդակը ուղղակիորեն կապված է աղբահանության ծառայության վատ որակի հետ: Որակը բարձրանա, վճարն էլ կվճարենք:

Աշոցքում իրավաբանական անձ գրեթե չկա, վճարողները բնակիչներն են, իսկ Ախուրյանում շատ են, դրա համար էլ վճարը հավաքվում է:

Ես աշխատող մարդ եմ, առավոտյան գնում եմ աշխատանքի: Մեքենան գալիս է, ու ես չեմ կարողանում իմ վճարած ծառայությունից օգտվել: Ավելի լավ կլինի մի կենտրոնացված տեղ լինի, որտեղ կարելի է աղբը թափել ցանկացած ժամի:

Շատ լավ կլիներ, որպեսզի աղբահանության վճարները հավաքվեն ինչպես այլ ծառայությունների դեպքում: Կտրոն չի տրվում վճարի դիմաց, իսկ մենք մոռանում ենք, որ վճարել ենք: Պետք է վճարել ինչպես գազի ու լույսի դեպքում:

Որպեսզի բնակչի վրա չմնան վճարումները, առաջարկում ենք, որ համայնքի բյուջեից ինչ-որ գումար հատկացվի ու սուբսիդավորվի:

Եթե մարդկանց մի մասը սկսի վճարել և լինի նորմալ աղբահանություն, վճարողներն իրենք կճնշեն չվճարողներին, որ վճարեն:

Աղբահանման մեքենան մեր փողոցով չի գալիս, թե «ինձ հարմար չի»: Սեփական ուժերով տան մոտ տեղ եմ սարքել, որտեղ այրում եմ աղբը: Ու բնականաբար չեմ վճարում: Բա ի՞նչ անեմ...

Ինձ թվում է, որ աղբահանության համար վճարը պետք է դառնա օրենքի պես մի բան ու ներդրվի նաև փոքր գյուղերում: Համայնքը պատրաստ է մեքենաներ ուղարկել փոքր գյուղեր վճարի հավաքագրման դեպքում: Թող բոլորը պարտադիր վճարեն: Այդ դեպքում ամեն ինչ կբարելավվի:

Համապատասխան վճարի դիմաց մեզ նորմալ ծառայություն պետք է տրամադրվի: Պատրաստ ենք ավել վճարել, բայց իմանանք ինչի՞ դիմաց:

Որպեսզի ավել վճարենք, նաև վերաբերմունքի ու վստահության խնդիր կա. պիտի հավատացած լինենք, որ վճարը նորմալ հաշվարկվել է, ոչ թե ուռճացվել, իսկ ծառայություն մատուցողն էլ պետք է նորմալ վերաբերմունք ցույց տալ:

Պետք է նաև վստահ լինենք, որ մեր վճարած գումարներն արդյունավետորեն են ծախսվում: Մեզ հետ պետք է խոսեն այդ մասին, ասեն, թե ինչպես են ծախսվում այդ գումարները, ինչպես է ծառայության վճարը գոյանում:

Վերահսկողության մեխանիզմն ու խստությունը անհրաժեշտ պայմանն է: Եթե երկու հարյուր դրամ էլ վճարի բնակիչը, կպահանջի:

Մենք համաձայն ենք, որ մեր վճարած հարկերից որոշակի գումար պետությունը հատկացնի աղբահանության խնդրին:

Պետք է ստիպել բոլորին վարձավճարը ժամանակին վճարել: Այդ դեպքում մարդիկ շահագրգռված կլինեն, որ ամեն ինչ ճիշտ կազմակերպվի ու մեկը մեկին կհետևի, որ սխալ տեղ աղբ չթափեն և այլն:

Աղբահանության վճարումներից պետությունը օգուտ չի քաղում, այդ պատճառով աղբահանության հարցով չի զբաղվում:

Նոր մեքենան լուծում չէ: Նոր մեքենայով նույն սպասարկումն է լինելու, վճարն ավելացնելու են, բայց ծառայության որակն էլ նույնքան վատ է մնալու:

Ձուրն էլ, որ վատ է լինում, չենք վճարում, թող աղբն էլ լավ լինի, վճարենք:

Ժողովուրդն անվճարունակ է: Առաջին հերթին հացի խնդիրն է պետք լուծել, նոր աղբահանության:

Հիմա մարդիկ պատրաստ են վճարելու, ուղղակի ճիշտ կազմակերպում չկա:

Եթե տանը ոչ մեկ չի աշխատում, ո՞վ պետք է տա աղբահանության վճարը: Նույնիսկ ամիսը անձը հարյուր դրամը էդ մարդկանց համար շատ է:

Քաղաքում անձի քանակով են վճարում աղբը, իսկ ինչի մեր մոտ այդպես չի:

Սկզբից մարդու ուղեղին հասնելու համար պետք է շրջիկ մեքենա լինի, որ մարդ սովորի նորմալ վճարել:

Ես ինչքան հասկանում եմ, որ սցենարն էլ քննարկում ենք, վերջը՝ վարձավճարի բարձրացումն է: Աչքիս էդպես էլ լինելու է:

Եթե մեկը չվճարի, հաստատ հարևանները կխոսեն, ամոթանք կտան:

Մասնավորը միանգամից կթանկացնի վարձավճարը:

Մասնավորի դեպքում ինքը կախված կլինի բնակչից, եթե նորմալ չկազմակերպեց բնակավայրի աղբահանությունը բնակիչն էլ չի վճարի:

Եթե համայնքի բյուջեից տեղադրվեն աղբամաններ, իսկ աղբատար մեքենաների շահագործման համար վճարի գյուղացին, ապա բոլոր խնդիրները կլուծվեն:

Շատ չէ, բայց մարդիկ պատրաստ են մի քիչ էլ ավել վճարել - մի քիչ ավելի լավ աղբահանության համար:

Եթե լինի հինգ հարյուրից ավել աղբահանության գինը, մասնավորին էլ չենք վճարի:

Աղբահանությունը մասնավորին հանձնելու դեպքում հարյուր դրամ վարձավճարը կարող է դառնալ հազար դրամ: Սա չի աշխատի:

Կարելի է այնպիսի մոդել մտածել, որը թույլ կտա մասնավորին ու համայնքին մրցել. ով ավելի լավ ծառայություն մատուցի, նրան էլ կընտրեմ ու կվճարեմ: Օրինակ՝ մի թաղամասը մասնավորն է սպասարկում, մյուսը տեսնում է, որ դա ավելի լավ ծառայություն է, քան մատուցվում է համայնքի կողմից ու կսկսի մասնավորից օգտվել: Աստիճանաբար մրցակցության արդյունքում կհասկանանք, թե ով պետք է ապահովի աղբահանության ծառայությունը:

Պետությունը պետք է իր գործը անի. մշակի համապատասխան մի օրենք, ըստ որի աղբահանությունը կազմակերպվելու է բոլոր համայնքներում ու հստակ սահմանի կոնկրետ գումար ու, հենվելով այդ ամեն ինչի վրա, մենք պետք է կատարեն վճարումը:

Եթե կա ամրագրած օրենք լույսի վերաբերյալ, պետք է լինի նաև օրենքի աղբի մասին, մինչև իրավական ուժ չտաք և տուժ տուգանք չսահմանենք, ապա վճարման խնդիրը չես լուծի:

Եթե աղբահանությունը կատարի մասնավոր շահույթ հետապնդող ընկերություն, ապա այն ավելի շահագրգիռ կլինի ավելի շատ բնակչություն սպասարկելու ու վարձավճարները ժամանակին հավաքագրելու:

Ես խանութ ունեմ, հազար դրամ եմ մուծում: Բայց եթե նորմալ կազմակերպվի, պատրաստ եմ ավելի շատ վճարել:

Տարիներ են պետք: Մարդիկ նախ պետք է գիտակցեն, որ աղբը տանելու համար վճարելը դա նորմալ, ընդունված երևույթ է:

Մեր մոտ առանձին աղբամաններ ունենալու գաղափարը չի աշխատի, եթե դրա դիմաց վճարը բարձրանալու է:

Մեքենայով եթե տուգանք է գալիս, թող աղբի համար էլ այդպես լինի: Թող նկարեն, ապացուցեն, վճարի:

Խիստ տուգանքներ պետք է սահմանել. աղբը թափեցիր արգելված տեղում, տեսախցիկը ֆիքսեց, պետք է վճարես: Մինչև մարդու գրպանին չես խփում, բան չի փոխվում:

Հիմա մարդիկ ունեն փորած փոսեր, ամեն մեկն իր տան մոտ: Որ մտցնեք աղբահանության կարգ, նա չի վճարի՝ ասելով, որ շարունակում է օգտագործել իր փոսը: Բայց իրականում, որ մեքենան հասավ տան դեմը, ինքն էլ է աղբը լցնելու մեքենան: Ես կվճարեմ, ինքը կասի «փոս ունեմ»:

Եթե մենք առանձին աղբի բաժանորդներ դառնանք, շատ լավ կլինի, բայց իրենց համար հարմար չի լինի կամ էլ բաժանորդավճարը այնքան թանկ կլինի, անհասանելի կդառնա:

Որպես ամփոփում բոլոր հնարավոր սցենարների. լավագույն տարբերակը մեկն է. ամեն գյուղում մի փոս է փորվում որպես աղբավայր, մի մարդ է նշանակվում իր տեխնիկայով աղբահանություն իրականացնելու համար, էս մարդուն գյուղապետարանը փող է վճարում, ինքն էլ հաստատված ժամանակացույցով էդ գործն անում է: Մարդիկ հաստատ կվճարեն աղբահանության դիմաց, որովհետև կտեսնեն արդյունքը:

Լորուտում բավական լավ է իրականացվում աղբահանությունը, աղբամաններ կան, բայց մենք աղբահանության համար չենք վճարում:

Քաղաքաբնակները սովոր են աղբահանության վճարներին, գյուղերում՝ ոչ:

Համայնքի բյուջեից պետք է սուբսիդավորվի սոցիալական ցածր խավի աղբահանության վճարները կամ համայնքի իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որ գինը իջնի:

Ստեփանավանի կենտրոնական փողոցում խնդիր չկա, ամեն օր մաքրվում է: Բայց այդ փողոցից հարյուր մետր հեռու իրավիճակը լրիվ այլ է՝ տասը օրը մեկ: Ընդ որում, և՞ մենք, և՞ կենտրոնական փողոցի բնակիչները վճարում ենք նույն գինը:

Ուրասարում աղբաման ընդհանրապես չկա, բա ժողովուրդն ի՞նչ անի, էդ աղբն ու՞ր թափի: Համապատասխանաբար՝ աղբի համար էլ չենք վճարում:

Ավելի լավ կլինի մեքենան գա, աղբը տանի, դրա դիմաց էլ վճարենք:

Թումանյան համայնքում աղբահանման վճարները ցածր են, նկատելի էլ չեն: Բայց այլ խնդիր կա. երբ պլաստիկն առանձնացնում ենք, դա չգիտենք ինչ անենք, ուր տանենք: Թումանյանում պլաստիկի համար տարա չկա:

Ես կարծում եմ, որ աղբահանության համար պարտադիր վճարել է պետք ու ըստ այդմ պահանջել:

Ստեփանավանում վարձը 200 դրամ է, Սարչապետում՝ անձի համար 50դրամ: Հիմնականում վճարումները նորմալ են հավաքվում:

Պարտադիր չի անպայման վճարել աղբահանության համար, որպեսզի կարողանաս պահանջել: Մենք չենք վճարում, բայց կարողանում ենք պահանջել:

Ներկայում ավագանին ասում է բյուջե չկա, իսկ բնակիչներն ասում են երեք հոգու համար վարձավճարները բավականին թանկ է:

Թումանյանի բնակչության ութսուն տոկոսը կանոնավոր դրամական եկամտի աղբյուր չունի, հետևաբար ինչքան էլ ցածր լինի աղբահանության վճարը, միևնույն է՝ որոշ մասի համար դա կարող է բարձր թվալ:

Որպես կանոն՝ մարդկանց 80-90% -ը չի վճարում աղբահանության վճարը ու նախընտրում է վառել:

Այն գյուղերը, որոնք բողոքում են աղբահանությունից ու դրա համար չեն վճարում, ինձ թվում է, որ ուղղակի չեն կարողանում վարձի հավաքագրման հարցը կազմակերպել ու լուծել: Եթե վճարի հարցը լուծեն, ապա աղբահանությունը կիրականացվի:

Գումարը հավաքում է տեսուչը: Հաճախ իրենք գալիս են, մենք տանը չենք լինում, ավտոմատ դառնում ենք չվճարող:

Եթե աղբահանության գումարի հավաքելը կազմակերպվի կոմունալների պես (օնլայն, փոստ, տերմինալ), միանշանակ վճարումների քանակը կաճի:

Մեր գյուղերում չվճարելու պատճառը մարդկանց գիտակցությունն է: Մտածում են, եթե հարևանս չի վճարում, ես ինչի՞ վճարեմ:

Մատների վրա կարող եմ հաշվել այն գյուղական համայնքները, որտեղ աղբահանության կամ այլ ծառայությունների վճարները խնդիրներ չեն առաջացնում:

Մեր համայնքում աղբահանության համար անձին պետք է յոթ հազար դրամ, բայց վճարում են՝ հազարի չափ. կամ պետք է վճարն ավելացնել, կամ համայնքի բյուջեյից, կամ էլ այլ միջոցներ ծախսել:

Մենք այդքան էլ պատրաստ չենք վճարել ավելին՝ ավելի լավ ծառայության համար: Հիմիկվա ծառայությունն ու գումարը բավարար են:

Կեղտոտվածության պատճառով որքան հիվանդ երեխաներ են ծնվում, եթե մարդիկ հասկանան, որ դա փոխկապակցված է, գուցե պատրաստ լինեն վճարել:

Աղբատար մեքենաները սովորաբար հրաժարվում են տանել գյուղատնտեսական և շինարարական աղբը: Դրա դիմաց վճարել պատրաստ եմ և լրացուցիչ երբեմն վճարում ենք: Հիմա մասամբ դա այրում ենք:

Շինաղբի հավելյալ վճարը երկուսից երեք հազար դրամ է՝ մեկ անգամվա համար: Հիմա դա վճարում ենք:

Առաջարկում եմ հատուկ ծրագիր մշակել, որ ինչ-որ կոնկրետ օրերին կատարել շինարարական և այլ աղբի տեղափոխում և այդ օրերի համար լրացուցիչ վճար գանձել:

Քաղաքում մոտավորապես 70%-ն է վճարում, իսկ գյուղում 70%-ը չի վճարում:

Հովանավոր է պետք, թե չէ մենք պատրաստ չենք վճարել:

Բոլորն էլ խոսում են, բայց ոչ մեկը չի ցանկանում հարյուր դրամ ավելի վճարել, կամ իր ժամանակը տրամադրի քննարկումներին:

Ես բնակիչ եմ ու վճարում եմ աղբահանության համար, բայց չգիտեմ՝ ումից պահանջեմ, որ նորմալ իրականացվի:

Հատուկ նախատեսված աղբավայրերում բնակիչները չեն տանում աղբ թափեն, քանի որ նախատեսված գումարը չի ուզում վճարի բնակիչը:

Ես ամիսներով չեմ վճարել աղբի համար, բայց երբ ինձ պետք է եղել, առանձին գումար եմ տվել, եկել տարել են. սա էլ լուծում չի:

Համայնքը երբեք չի կարա լուծի աղբահանության խնդիրը, քանի որ ինչ գումար էլ համայնքը առաջարկում է վճարելու համար, միևնույն է բնակիչը դժգոհում է: Նույնիսկ ամսեկան 200 դրամին նա համաձայն չի:

Նույնիսկ տուգանքների սահմանումը ոչ մի օգուտ չի տա, քանի որ միևնույն է բնակիչը փող չունի վճարելու համար:

Ավելի լավ է, որ համայնքը աղբահանության հարցով զբաղվելու համար վճարի մասնավորին ու մասնավորը իրականացնի ողջ գործընթացը:

Վարձավճարի ավելացումը գյուղական համայնքներում հնարավոր է բացասական հետևանքներ ունենա:

Բնակիչները կողմ եմ ավելի վատ ծառայություններ ստանան, բայց՝ անվճար, քան լավը՝ վճարովի:

Եթե բնակիչների մի մասը չի վճարում, տուժում են նաև այն բնակիչները, որոնք վճարել են. մեքենան այդ թաղամաս չի գնում:

Մարդիկ պետք է հասկանան, թե ինչի համար են վճարում և ինչու հենց այդքան:

Մարդիկ պետք է գիտակցեն, որ եթե ուզում ես լավ աղբահանություն պետք է լավ էլ վճարես:

Ավելի լավ է, որ համայնքապետարանը կարգավորի աղբահանության վճարի հավաքագրումը:

Ուզում ենք, իդեալական լինի, բայց չենք ուզում վճարել՝ չնայած գիտակցում ենք անհրաժեշտությունը:

Եկեք դուք պայմաններ եք ստեղծել, ինձանից էլ պահանջեք, որ վճարեմ, ոչ թե հակառակը:

Մեզ մոտ մարդիկ տան կահույքը, ներքնակը տանում են դնում աղբամանի մոտ, բայց ճիշտ կլիներ, որպեսզի ինքը վճարի նման աղբը տեղափոխելու համար:

Ավելի լավ կլինի շատ վճարեմ, բայց վստահ լինեմ, որ նորմալ ծառայություն կստանամ:

Անհատական փաթեթը չի աշխատի մեր պայմաններում ու կռվի բուն կդառնա: Էդ մասնավոր աղբարկղի մեջ չվճարողն էլ կբերի ու աղբ կնետի:

Համայնքում աշխատատեղեր կան միայն ուսուցիչների, բժիշկների համար ու մի քանի վարչական մարմիններում: մեկ էլ զորամասում: Բայց դա բավարար չի վճարունակ բնակչություն ունենալու համար: Ստեփանավանի մոտ երեսուն տոկոսն է աշխատում:

Ես Քարինջի բնակիչ եմ, բայց ինձ ոչ մեկը չի մոտենում, ասի՝ վճարի աղբի համար: Ու՞մ վճարեմ:

Մարդիկ պիտի իմանան, թե որն է այն օղակը, ում պիտի վճարեն:

Սարչապետում աղբատարի վարորդն է վճարները հավաքում:

Տվյալ պահին գերակա խնդիրը աղբահանության ոլորտում կարելի է ասել, որ վճարման մեխանիզմների ներդրումն է և վերահսկողությունը: Որ վճարեն բոլորը, վճարեն հարմար եղանակով: Թող չվճարողին տուգանեն, բայց հիմնավոր:

Աղբահանության համար ասել են, որ Արդշինբանկում կարող ենք վճարել աղբի համար: Բայց մի բանկով հարց չի լուծվի, մանավանդ, որ տվյալ բանկով ոչ մի գործարք չեմ անում:

Դովեղում, որպես սահմանամերձ գյուղ, աղբահանության վճար չկա: Հիմա մտածում ենք վճարի մասին, բայց պիտի ծառայության որակը փոխենք: Օրինակ՝ երբ աղբամաններ տեղադրվեն, միգուցե սկսենք վճար հաշվարկել ու հավաքել:

Եթե լինի աղբարկղեր, ապա գյուղացին ժամանակի ընթացքում կսովորի, որ աղբը պետք է աղբամանի մեջ թափել, բայց աղբահանությունը պետք է լինի անվճար, քանի որ գյուղացին չի վճարի:

Դիլիջանում աղբահանության վճարը անձի համար 100 դրամ է, ու մենք դժգոհ չենք:

Սահմանամերձ համայնքի բյուջեն այնքան քիչ է, որ նա չի կարող սուբսիդավորել աղբի վարձավճարները: Համայնքին գումար պետք է տա կառավարությունը կամ պետք է գործարան կառուցեն, որ բնակիչները աշխատեն ու կարողանան վճարում կատարեն:

Աղավնավանքում մարդիկ կան, որոնք չեն վճարում հիսուն դրամը՝ հիմնավորելով, թե աղբամանները հեռու են, կամ 5-6 երեխա ունի, այդ գումարը չի կարողանում վճարել:

Աղբահանության վճարի ձևավորումն անարդար է. կրծքով կերակրվող երեխայի համար էլ են նույն գումարը գանձում: Բայց պետք է այդ վճարի ձևավորման համար սահմանել, թե որ խումբը որքան պետք է վճարի:

Այս պահի դրությամբ բացառված է, որ գյուղում որևէ մեկը աղբահանության համար գումար կվճարի:

Բաղանիսում և Ոսկեվանում, որպես սահմանամերձ բնակավայրեր, վարձավճար չի գանձվում:

Ես հիմա ժամանակավոր ապրում եմ Դիլիջանում, բայց ոչինչ չեմ վճարում: Գումարը գանձվում է ըստ գրանցման վայրի:

Եթե աղբահանությունը նորմալ լինի, մարդիկ պատրաստ կլինեն նորմալ վճարել:

Երբ Իջևանում ուսանող էի, ես աղբահանության համար վճարում էի, գրանցումը պարտադիր չի:

Մարդիկ կան, որ ասում են՝ ես աղբը այրում եմ կամ գետն եմ լցնում, ես չեմ վճարի: Դրա համար պետք է տուգանել:

Այս պահին գյուղացին նույնիսկ մթերք գնելու գումար նույնիսկ չունի, ինչպես նա պետք է աղբի համար վճարի:

Եթե կենտրոնացված աղբավայրում պետք է վառեն աղբը, ապա իմաստը, որն է դրա համար վճարի գյուղացին, եթե միևնույն է գյուղացին նույնպես վառում է այն:

Մասնավորը չի կարող աղբահանություն կազմակերպել, քանի որ ինքը մեխանիզմ չի ունենալու վճարները հավաքելու:

Մեր համայնքում չենք վճարում աղբահանության համար. սահմանամերձ համայնքներում այդպես է:

Կան մարդիկ, որ պատրաստ են ավելի վճարել, քանի որ գոհ է շրջիկ աղբահանությունից:

Մասնավորը հենց մտավ դաշտ, կառաջանա վճարների խնդիրը: Արդյոք համայնքի բնակիչը կարող է վճարել մասնավոր ծառայության համար:

Աղբի վճարները այնքան նվազ են, որ մարդիկ պատրաստ են կրկնակի էլ վճարել, որ որակը էլ ավելի լավանա:

Այսօր, յուրաքանչյուրի անձինք գանձվում է հիսուն դրամ: Մասնավորը մտավ գուցե վարձը կդառնա հազարներ: Մոտեցումը պիտի լինի, որ ինչ որ կարող է բնակչությունը վճարի, մյուս մասը պետք է վճարի համայնքը:

Հասկանում ենք, որ կթանկանա, բայց հազար դրամներից խոսելուց առաջ, պետք է հաշվարկել թե մասնավորին պատվիրելու դեպքում, որքան կդառնա վճարը, գուցե մի քանի հարյուրի մասին է, ոչ թե հազարների, ու այդ դեպքում բնակչին էլ հարմար կլին ու մատչելի:

Խաչազանում բնակչության ութսուն տոկոսը հաստատ վճարում է աղբահանության համար:

Կոթիից »«ձեռներդ լվացեք», Կոթին ոչ մի գումար չի վճարի:

Ավտոյի առկայությունը դեռ քիչ է, քանի որ ոչ մեկ չի վճարի նրա ծախսերի, վարորդի և օգտագործման համար:

Մասնավորը ավելի հեշտ կհավաքի աղբը, եթե չվճարես՝ աղբը չի տանի:

Մասնավորի դեպքում վարձավճարը կբարձրանա:

Եթե նույնիսկ մասնավորը սկսի աղբահանությամբ զբաղվի, միևնույն է բնակիչը չի վճարելու աղբահանության համար ու վճարելու է համայնքը:

Նույն գումարով մասնավորը պատրաստ չէ աշխատել, իսկ բնակիչը պատրաստ չէ ավել վճարել:

Համոզված եմ, որ ոչ մի գյուղացի պատրաստ չի աղբի համար վճարի նույնիսկ եթե աղբահանությունը տեղի ունենա օրական տաս անգամ:

Ես Դիլիջան համայնքում շատ եմ լսել, թե ինչ են անում, որ վճարեմ արտահայտությունը:

Եթե ես հիմա չեմ վճարում համայնքին, վաղն էլ մասնավորին չեմ վճարելու:

Աղբի դեպքում մասնավորին կվճարեն այն դեպքում, եթե մասնավոր սպառնա դատարանով:

Բնակիչը նույնիսկ չի կարողանում ավելի կարևոր վարձեր \գազ, ջուր, հոսանք\ վճարի, աղբի վարձի մասին հաստատ չի էլ մտածի:

Թանկացումից կարող է որակը բարելավվի, բայց արդյո՞ք բնակիչները կարող են վճարել այդ որակի համար:

Վճարողները մի յոթանասուն-ութսուն տոկոս են: Սկզբում խստացվել էր, հետո ավելի մեղմացավ:

Հետաքրքիր է, որ որոշ մարդիկ չգիտեն, որ պետք է վճարեն աղբահանության համար:

Հնարավոր է չվճարել, բայց դրա համար թե որքան տույժ կա, չգիտենք:

Օտարերկրյա ներդրողին ու ծառայություն մատուցողին բերեցին Հայաստան, դրեցին նոր տեխնոլոգիաներ, բայց չկարողացան աշխատեցնել, քանի որ վարձավճար չկարողացան հավաքել:

Ես ինչքան լաց եմ լինում, չի նշանակում, թե էդքան անվճարունակ եմ: Շատ լավ կլիներ հասկանալ իրականությունն իր ամբողջության մեջ: Օրինակ՝ սահմանամերձ համայնքում պետք է հասկանալ, թե որն է առաջնային. կա ընտանիք, որը չորս երեխա ունի ու չի վճարում աղբահանության համար: Արդյո՞ք այս դեպքում աղբահանության վճարն առաջնային է:

Եթե պահանջում ենք ծառայության որակի լավացում, պետք է պատրաստ լինենք նաև ավել վճարել:

Պետք է վճար սահմանվի, աշխատողներ ներգրավել, որ տեսակավորում իրականացնեն: Ամբողջ տեսակավորված աղբը սեղմվի ու խտացվի ու տեղափոխվի ըստ հնարավորության, գուցե ինչ-որ գործարանների, գուցե հենց Վրաստան, որտեղ ներդրվել է աղբի վերամշակումը:

Պետք է հասկանալ խնդրի կարևորությունը, վարձավճարը բարձրացնենք, ծառայությունը լավացնենք, նոր վերահսկողություն սահմանել:

Դիլիջանը հանրապետությունում միակ համայնքն է, որտեղ թաղապետարանը պայմանագիրը կնքում է ըստ աղբամանների քանակի, համապատասխանաբար հաշվարկվում է նաև աղբահանության վճարը: Սա շատ արդյունավետ պրակտիկա է:

Միշտ կարող են լինել ավել վճարել ցանկացող մարդիկ, մեծ հաշվով դա այնքան քիչ է, որ կարելի է փորձել:

Գյուղական բնակավայրերում ոչ մի բնակիչ աղբահանության համար գումար չի վճարում::

Բիզնեսի համար ավելի բարձր վճարներ ու տուգանքներ պիտի լինեն:

Բնակիչը օրական 350 դրամի ծխում է, բայց 200 դրամ ամսեկան չեն ուզում աղբահանության գումար վճարել:

Հոգեբանության խնդիր կա նաև այստեղ: Եթե դու քո հարյուր դրամ վարձը տալիս ես, ապա հետևողական ես լինելու ու հետևելու ես, որ ամեն ինչ ճիշտ կազմակերպվի: Դու այդ հարյուր դրամով մասնակից ես դառնում այդ պրոցեսին:

Ուզում ենք վարձը քիչ տանք, բայց լավ հավաքեն աղբը:

Աղբամանները պետք է անպայման կափարիչ ունենան: Բայց այդ դեպքում ես կզզվեմ կափարիչին դիպչելուց: Երևի լավը կամ կափարիչի ավտոմատ բացվելն է, կամ ոտքով: Ավտոմատ բացվող աղբամանը, իհարկե, հնարավոր տարբերակ չէ մեր համայնքների դեպքում, քանի որ մեր համայնքները աղքատ են: Նույնիսկ աղբահանության վարձը մարդիկ չեն տալիս, ինչ մնաց խելացի աղբամաններ գնվեն:

Մասնավորը շահույթ պետք է հետապնդի, դա պարզ է: Եթե մենք մասնավորին ենք հանձնում աղբահանության ծառայությունը, որակը միգուցե կլավանա, բայց վարձերը կբարձրանան:

Փոքր համայնքում որ մարդուն ասես՝ փող տուր, աղբդ տանեմ, չեն տա: Հաստատ:

Ծախսերը բյուջեի հաշվին է պետք անել, ոչ թե բնակչի: Բնակիչն առանց այդ էլ փող չունի:

Ես եմ, ավտո ունեմ, շաբաթը մեկ մեշոկով աղբը կգցեմ ավտոս, կտանեմ, կթափեմ, էլ աղբահանության համար ինչի՞ պիտի փող տամ:

Բայց մարզպետարանը, կամ համայնքապետարանը այնքան փող ունի՞, որ կարողանա այդքան մեքենաներ առնել, բոլորի հարցերը լուծել:

Ամեն լավ բան փող արժի, պետք է գումար ծախսել աղբի ազդեցությունը ուսումնասիրել:

Սկզբից պետք է լինի պատասխանատվությամբ, հետո մտքով ու նոր փողով:

Ախուրյանում հավաքագրումը նորմալ է իրականացվում՝ ի տարբերություն Աշոցքի:

Եթե աղբահանության գումարը նշված է 100 դրամ, և աղբահանությունը նորմալ չի իրականացվում, միգուցե գումարն ավելացվի և ծառայության որակը բարելավվի:

Մարդ կա, 200 դրամը չի տալիս, ասում է ինձ պետք չի ձեր աղբահանանությունը: Իր աղբը տանում է, գցում ձորը: Այս մարդկանց ոչ ոք պատասխանատվության չի ենթարկում:

Ես վստահ չեմ, որ լրացուցիչ հարյուր դրամ կտամ աղբահանության համար:

Մեր մոտ էդ եվրոպական բաները, թե առանձին առանձին աղբահանություն մեր մոտ չի աշխատի. հարյուր դրամ հազիվ ենք տալիս:

Ձուշևանում որոշեցինք մարդը յոթանասուն դրամ հավաքենք աղբահանության համար: Բայց տվողները միշտ նույն մարդիկ էին: Մնացածն էլ ասում էին, որ աղբ չունեն, դրա տեղը տանում էին դպրոցի հետևը գցում կամ վառում:

Գյուղերում հիսուն, քաղաքում՝ հարյուր դրամ արժի աղբահանությունը:

Գյուղացիների մեծ մասը ամիսներով թղթադրամի երես չի տեսնում ու ապրում է իր աճեցրածով, ի՞նչ աղբի գումարի մասին է խոսքը:

Մենք պատրաստ ենք թղթե պարկերի համար քսան դրամ տալ ամեն անգամ գնում կատարելիս, բայց չենք ուզում օրինակ հազար դրամ ամսական ավելի տանք, որ աղբահանությունն ավելի լավ կազմակերպվի:

Եթե ջրի, լույսի և գազի համար մուծում ենք, ինչի պետք է չմուծենք աղբի համար:

Պետք է հստակ գումար սահմանվի, ոչ թե մեկը շատ մուծի, մյուսը՝ ինչքան ուզենա:

Չմուծել հասկացություն չկա, ես չեմ հավատում:

Մուծենք, բայց աղբահավաքությունը չանե՞ն: Գազի սպասարկում է, էլի:

Աղբամանների ավելացումը դեռևս չի նշանակում, որ աղբահանության խնդիրը կլուծվի, քանի որ կգա մի պահ, երբ պետք է բնակիչը ավել մուծի: Այս պայմաններում դժվար թե բնակիչը համաձայնվի ավելի շատ մուծել:

Մեր մուծած գումարն էդքան էլ շատ չի, որ ինչ-որ մեծ ծառայություն էլ պահանջենք:

Եթե քաղաքում էլ գյուղում էլ նույն գումարն են մուծում աղբի համար, ինչու է քաղաքում ավելի լավ, քան գյուղերում:

Եթե մեր հարկերի հավաքման համակարգը նորմալ լինի, մենք կունենանք մի քիչ էլ գումար՝ սուբսիդավորելու համար աղբահանությունը:

Եթե բյուջեն միասին են հավաքում, ուրեմն աղբահանության բոլոր ծառայությունները նույնպես պետք է միանման լինեն:

Աղբահանությանը ավելի շատ միջոցներ տրամադրելու համար պետք է բյուջեն ավելանա: Իմ կարծիքով, դա հնարավոր է միայն մարդկանց զբաղվածությունը, տնտեսական ակտիվությունը ավելացնելու միջոցով:

Թանկացումներ չենք ուզում, թող համայնքի բյուջեյից ծախսվի:

Ես առաջարկում եմ, որ Ախուրյանի ավագանին կարևորի աղբահանության ոլորտը, գումար հատկացնի, նոր մեքենաներ ձեռք բերեն ու փոքր բնակավայրերում ունենանք շրջիկ մեքենաներ:

Բյուջեի միջոցներն էլ մեր միջոցներն են, աղբի վրա մեր միջոցների մեծ ծախսերի կարիք չկա, քանի որ հարցը նորմալ լուծվում է: Այլ հարց է, որ թերևս կարիք կլիներ պլաստիկի առանձնացման խնդրին առանձին մոտեցում ցուցաբերելը:

Պետությունը չպետք է թելադրի համայնքին, թե ինքը իր հավաքագրված գումարները ոնց ծախսի ու այդ ժամանակ համայնքը կկարողանա գումար հատկացնել աղբահանության համար:

Աղբահավաքության համար կարևոր է նաև թափառող շների խնդիրը: Մարդիկ վախենում են մոտենալ աղբի կուտակումներին:

Ինչո՞ւ պիտի Ախուրյանի աղբը տանեն Նոր Ախուրյան ու անտեր վիճակում թողնեն: Քամին ու թափառող **շները** ոնց ասես չեն տարածում այդ աղբը: Մինչև թափառող շների հարցը չլուծվի, նորմալ աղբահանություն չի իրականացվի:

Մեր բնակչությունը ու նաև երկիրն ընդհանուր առմամբ, դեռ չենք հասել էնտեղ, որ կարող ենք մեզ նման շքեղություն թույլ տալ: Մեզ որտեղի՞ց էսքան բյուջե: Բայց անգամ բյուջեի հարցի չի. մարդիկ էլ դեռ շատ հեռու են նման գիտակցությունից՝ տեսակավորում և այլն:

Մեր համայնքում կես-կես ենք անում, մեկը մենք ենք տալիս, կեսը հատուկ ծրագրերով, որ մեքենաներ առնենք:

Համայնքի բյուջեն էլ է իմ փողը, ու ես չեմ ուզում, որ իմ հարկերով նոր մեքենա գնվի: Հինգ-վեց մեքենա առել, կանգնեցրել են, հիմա էլ նո՞ր մեքենա են ուզում:

Բյուջեի հինգ տոկոս ի՞նչ է նշանակում՝ 29 միլիոն դրամ. դրանով միայն նոր մեքենա են առնելո՞ւ...

Բյուջեն ընդհանուր է հավաքվում, ո՞վ է որոշել, որ դա պետք է կենտրոնացված լինի Աշոցքում ու Ախուրյանում:

Բարերարի կողմից աղբամանների նվիրատվությունը անիրականանալի բան է:

Մեր ասած աղբահավաք մեքենան սովորական բեռնատար է, դրա սպասարկումը նորմալ կանենք, դուք բերեք:

Մեր պետության բյուջեից պիտի գումար հատկացվի նորմալ տեխնիկա գնելու համար:

Համայնքի բյուջեից ամեն տարի ավելորդ ծախսեր են իրականացվում, ավելի լավ է դրանց փոխարեն նորմալ աղբահանություն իրականացվի:

Համայնքի հավաքված գումարները չգնան պետական բյուջե ու մնա համայնքի տիրապետման տակ, համայնքն էլ կկարողանա լուծել աղբահանության խնդիրը:

Աղբի համար բյուջեից շատ գումար հատկացնելը այդքան էլ արդարացված չէ:

Աղբահանող մեքենա գնելը համայնքի բյուջեի համար լրացուցիչ ծախսեր է ենթադրում: Մի կողմից շատ լավ է, որ բարերարը նոր աղբամաններ է նվիրում համայնքին, բայց պետք է հասկանալ, թե դրա պահպանումն ինչ է նշանակում համայնքի համար:

Աղբի համար ծախսվող գումարների նպատակային չէ, քանի որ աղբը մի կետից վերցնում են տանում են մեկ այլ տեղ թափում, փոփոխություն չկա:

Ամեն ինչը ինչ գիտենք աղբահանության մասին, գրանտներով է, էնպես չի, որ պետությունն է տալիս:

Հազիվ ենք աղբահանության գումարը տալիս, որ թանկացավ ընդհանրապես չենք տա:

Բարեկամավանը շուրջ 170 հոգի են բնակվում, հիմա խոսում ենք ուրիշ երկրների օրինակի մասին: Բա այս համայնքի բնակչությունն ի՞նչքան գումար դնի, որ աղբարկղ ապահովի, մեքենա: Ավելի լավ կլինի մենք շարունակենք վառել:

Մեքենայի անվադողը եթե փչացավ արդեն անհնար կլինի դրա շահագործումը. չես կարող նվեր տվողից մեկ էլ անվադողի փող ուզել:

Համայնքում դեռևս մեքենա չի կանգնել փող չլինելու պատճառով:

Մարդիկ նախընտրում են գումար չտալ աղբահանության համար, ինքնուրույն թափել կամ վառել իրենց աղբը:

Գյուղական համայնքներում ասում են այդքան գումար տալու փոխարեն, կլցնեմ ձորը

Պետք է բարեգործական ծրագրերի շրջանակում լուծել գյուղերի աղբահանության խնդիրը:

Կարելի է հատուկ խորհուրդ լինի, ովքեր մշակեն, թե որ ընտանիքից որքան գումար հավաքեն:

Եթե տեխնիկան նոր լինի, մաշվածությունը քիչ կլինի, արդյունավետությունը՝ շատ, ծախսերն էլ կպակասեն:

Ճիշտ օգտագործման դեպքում հավաքված գումարը կհերիքի աղբահանությանը: Պարզապես տարիներ շարունակ այդ գումարները այլ՝ անձնական հարցերը լուծելու համար են ծախսվում:

Չտված գումարը կորած է: Եթե մտածես, որ պիտի հինը վերցնես, հետո նորը սկսես, կսխալվես: Պարտքը միշտ կա, դրա հետևից չպետք է ընկնենք:

Պետք է հստակ հաշվարկվի, թե ինչքան գումար է պետք աղբահանությունը իրականացնելու համար ու այդ մեծ գումարը ճիշտ բաժանվի բնակիչների մեջ:

Աղբահանությունը Բաղանիսում առաջնային խնդիր չի. լավ, թե վատ, բայց ապահովվում է:

Կարծում ենք գումար շատ կա, պետք է ճիշտ ծախսել ուղղակի:

Մեր աղբը մենք կվառենք մեր փռում, թող աղբահանության համար հատկացվելիք գումարը տան մեզ:

Լավ տեխնիկան բերեցինք, աղբարկղեր տեղադրեցինք: Բա դրա պահպանման ու շահագործման հարցը՞: Համայնքը պետք է դա վերցնի իր վրա:

Շատ լավ կլիներ նյութատեխնիկական բազան նորացվեր. հիմա որոշ բնակավայրերում մարդը սեփական **մեքենայով** է աղբը հավաքում, բայց լավ կլիներ կարողանայինք վարձակալել:

Աղբի հարցը ոնց էլ ասես կլուծենք, բայց ավելի կարևոր է գազի խնդիրը, մինչև աղբահանության խնդիրը գյուղացին այնքան խնդիրներ ունեն:

Սահմանային գյուղերում առաջնայինը ոչ թե աղբահանության խնդիրն է, այլ աշխատատեղերի ստեղծումը:

Ծախսերը տարբեր են. գյուղում այլ է, քաղաքում այլ, հետևաբար աղբահավաքության գումարն էլ պետք է համապատասխանաբար տարբեր լինի:

Մենք հիմա այն վիճակում ենք, որ սպասարկման նվազագույն մակարդակն էլ էական է, դա պետք է լինի, որ հետո հասկանանք ինչպես զարգացնել:

Ե. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿԵՆՑԱՂ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ, ԱՐԺԵՔՆԵՐ, ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ, ՎԱՐՔԱԳԻԾ

Առաջինը պետք է փոխենք համայնքների մտածելակերպը: Փոքր համայնքները մինչև խոշորացումը սովոր չեն եղել նորմալ աղբահավաքություն իրականացնել:

Մարդկանց պետք է կրթել, բայց պետք է հետևողական լինել: Աղբի տեսակավորումն աշխատեց, մարդիկ առանձին թափում էին պլաստիկ շշերը, բայց հետոն ինչպես է կազմակերպվում, պարզի չի, այդ մասին էլ պետք է տեղեկացնել մարդկանց:

Պետք է համայնքներում, համայնքի ղեկավարի հետ միասին պարբերաբար **շաբաթօրյակներ** կազմակերպվեն:

Համապետական **շաբաթօրյակի** միջոցով ենք փորձում համայնքում աղբը հավաքել, սակայն բոլոր բնակիչները չէ, որ մասնակցում են: Օրինակ՝ դպրոցի տարածքներն ամբողջությամբ միայն այդ դեպքում են մաքրվում:

Շաբաթօրյակ արինք, հավաքինք ջրամբարի կողքի աղբը երեխեքի հետ: Պրծնելուց հետո պաղպաղակ տվինք երեխեքին: Պաղպաղակը կերան, թղթերը գցեցին իրանց հավաքած տարածքում:

Դպրոցներում ու մանկապարտեզներում արդեն **շաբաթօրյակը** պարտադիր է:

Ես իմ տարածքը շատ մաքուր եմ պահում, մինչև առաջին քամին: Հետո էլի **շաբաթօրյակի** կարիք ունեմ: Յուրաքանչյուր մարդ, եթե ինքը մաքուր պահի, խնդիր չի լինի:

Քարինջ գյուղի մոտակայքում կան հուշարձան-աբյուրներ, որտեղ մարդիկ գնում ժամանակ են անցկացնում և աղբը թափում հենց այդտեղ: Գարնանը դպրոցի երեխաներով շաբաթօրյակ կազմակերպեցինք, մաքրեցինք, սակայն մարդիկ սովորույթի ուժով թափում են նույն վայրում:

Շաբաթօրյակների առկայությունը նույնպես կարևոր տեղ ունի աղբահանության խնդրի լուծման համար:

Եթե շաբաթօրյակների շնորհիվ աղբամանները մաքրում ես, մի քանի շաբաթ հետո նորից նույն վիճակն է լինում. պետք է մարդկանց գիտակցությունը փոխել:

Շաբաթօրյակներին միայն երիտասարդներն են մասնակցում, համապատասխանաբար ավելի շատ մեծահասակներն են աղտոտում, քանի որ չմասնակցելով համընդհանուր մաքրության ակցիաներին, չեն պատկերացնում աղբն ամեն տեղ չթափելու կարիքը:

Շաբաթօրյակներին միայն դպրոցականներն են մասնակցում: ՏԻՄ-ը կարող է աշխատել բնակիչների հետ, որպեսզի ապահովի շատերի մասնակցությունը:

Աղավնավանքում մենք տարեկան մի քանի անգամ շաբաթօրյակ ենք անում, անգամ գետն ենք մաքրում:

Համապետական շաբաթօրյակ հասկացությունը ընդունելի չէ, ամեն համայնքը պիտի ինքնամոբիլիզացվի, ինքնակազմակերպվի, էդպիսի օր իր համար որոշի՝ համայնքի բնակիչներին հարմար:

Տարիքով մարդկանց ներգրավել կամավոր աղբահավաքության մեջ, շատ դժվար խնդիր է, բաց երիտասարդները շատ հետաքրքրված ներգրավվում են: Էն ստիպողական շաբաթօրյակները հարց չեն լուծում, դրանց մասնակցում են միայն պետական աշխատողները, բայց երբ կամավոր ներգրավում ես, բոլորն էլ շատ հաճույքով ու հասկանալով ներգրավվում են:

Մարդիկ կան, որ իրենք աղբը թափում են գյուղում, բայց շաբաթօրյակին թույլ չեն տալիս, որ իրենց երեխաները դուրս գան ու համայնքի մաքրմանը մասնակցեն:

Գյուղերում պարբերաբար **շաբաթօրյակներ** ենք կազմակերպում, աղբյուրներ ենք մաքրում: Մարդիկ իրենց մեքենաներով են գալիս մասնակցում:

Բնակիչը պետք է **գիտակցաբար** աղբը ճիշտ վայրում թափի, այլ կերպ անհնար է:

Ես գիտակցում եմ աղբը վառելու հետևանքները: Բայց այլընտրանք չունենք:

Մարդկանց գիտակցության բարձրացումն է մեծագույն խնդիր: Մարդ կա հատ-հատ իր աղբը անընդհատ թափում է այստեղ և այնտեղ, այն կոմպակտ ինչ-որ բանի մեջ հավաքելու ու նոր թափելու փոխարեն:

Ամեն մարդ իր օրինակով պետք է ցույց տա, որ իրավիճակ փոխվի:

Առաջնայինը մարդկանց գիտակցության վրա ազդելու մեխանիզմների կիրառումն է:

Պետք է ավելի շատ աշխատել մարդկանց գիտակցականի վար:

Մարդկանց գիտակցության մեջ դեռ չի մտել, որ աղբն էլ է կոմունալ ծառայություն:

Մեծ մասը անգիտակցաբար է աղբը ձորը գցում, իսկ մյուս փոքր մասն էլ աղբի հանձնման, վերամշակման տարբերակներ է փնտրում, որ էլ ձորը չթափի:

Աղբահանության խնդրում կարևոր է բնակչության գիտակցության խնդիրը, սակայն կարելի է ֆիքսել, որ այս հարցում դրական տեղաշարժ կա աղբատարների ավելացումից հետո:

Մեր ժողովրդի ինքնագիտակցությունը շատ ցածր է, աղբի տեսակավորման խնդրի մասին դեռ վաղ է խոսել:

Գյուղերում պետք է պրոպագանդա անել ու օրինակ ծառայել, որպեսզի քաղաքակրթությունը այնտեղ էլ հասնի ու աղբահանության կուլտուրա զարգանա:

Գյուղապետն ինքն իր օրինակով պետք է ստիպի համայնքի բնակիչներին մասնակցելու հանրային տարածքները մաքրելու միջոցառումներին: Եթե ինքն առավոտյան ցախավելը ձեռքին հայտնվի դպրոցի բակում, մյուսները կես ժամ հետո նույն տեղում կլինեն:

Պետք է սահմանել տեղերը, նշել, տեղեկացնել, ընդգծել, կարմիրով: Աղբը սխալ տեղ թափողին էլ՝ ստալին անել:

Կողքինին նախազգուշացնելը տարբեր կերպով կարելի է անել. ահազանգելու փոխարեն աղբահանության ժամանակ կարելի է ծառայությունն իրականացնողին ուղղակի տեղեկացնել, թե որտեղից է գոյանում աղբը ոչ պատշաճ վայրում, ով է դրա համար պատասխանատու: Վերջինս էլ արդեն պետք է զբաղվի այդ հարցով:

Համայնքի ղեկավարը կարող է բնակիչներին տեղյակ պահել, որ մեքենա կա, բայց շահագործման գումարը չկա, կսահմանվի գումար մեքենայի պահպանման և վառելիքի համար:

Բնակիչները պետք է տեղյակ լինեն նորմատիվների մասին, որոնցից է օրինակն այն, որ շինարարական աղբը չի կարելի թափել սովորական աղբամաններում:

Հաղարծինում աղբը աղբամաններում ենք թափում, բայց տեղյակ էլ չեմ, թե որտեղ են թափում հավաքած աղբը:

Ես առաջարկում եմ, որ մեր գյուղում պաստառներ տեղադրեն ու քարոզեն, որ մարդիկ պատասխանատու կերպով վերաբերվեն աղբահանությանը:

Դպրոցի միջոցառման ժամանակ համայնքի ղեկավարն իր ավտոյով գալիս է ու տանում աղբը:

Մեր ժողովրդի մեջ էդ կուլտուրան չկա, աղբամանի կողքին են դնում աղբը, ոչ թե մեջը:

Քո հետևից աղբը թափելու կուլտուրան պետք է սովորեցվի մանկապարտեզներից սկսած:

Կարելի է ձորում գնալ լավ ժամանակ անցկացնել, աղբը հավաքել տանել մոտակա աղբավայրում թափել, ամեն ինչ ներքին կուլտուրայի խնդիր է:

Ոչ մի ծրագիր չի աշխատի ու ոչ մի բյուջե չի հերիքի, եթե մարդիկ կուլտուրա չունենան:

Պետք է խիստ օրենքներ լինեն ու ներքին կուլտուրա լինի բնակիչների մոտ:

Գյուղապետը, համայնքապետը, մարզպետը ի՞նչ անեն, եթե բնակիչը աղբը ճիշտ վայրում թափելու կուլտուրա չունի:

Կառուցողական քննադատությունը անձնական ընդունելու կուլտուրան մինչև չփոխվի, էս երկրում բան չի փոխվելու:

Ձբոսնելու վայրերում աղբամաններ կան, բայց մարդիկ որտեղ ուտում են, շարունակում են նույն տեղը աղբ թափել:

Հայ զբոսաշրջիկները շատ փնթի են, գալիս թափում գնում են. արտասահմանցիները իրենց հետևից նորմալ հավաքում - գցում են աղբամանները:

Պետք է սեմինարներ անել բնակիչների մասնակցությամբ և բացատրել, որ աղբը ճիշտ տեղը թափելու օգուտ իրենց է ու ոչ ոք, բացի իրենցից, չի տուժում, երբ աղբը սահմանված վայրերում չեն թափում:

Հայերը մտածում են, որ իր տունը միայն ցանկապատի այս կողմն է, եթե այդ հոգեբանությունը փոխվի, մենք ինչ-որ բանի կհասնենք:

Մեզ մոտ փոխանակ նկատողություն անենք աղբը թափողին էլ իր հետևից ենք սկսում թափել

Նոր սերնդին պետք է կրթենք, թե ինչպես մաքուր պահենք մեր շրջապատը:

Ինչ էլ անես, երկու տարի հետո նույն վիճակն է լինելու: Գեղ չկա, որ շուն չեղնի:

Առավոտ կելնիս, գտեսնես երեխեքը տոպրակով իրենց աղբը չիդես որտեղից բերել շպրտել են հայաթիդ մեջ:

Ասում ենք փակ կափարիչներով աղբամաններ, բայց հարց ունեմ. դուք համաձա՞յն եք գործի գնալիս էդ կեղտոտ կափարիչը բացել ու նետել աղբը: Թե մի հատ էլ պետք է տուն գնաս լվացվես, հետո գնաս գործի: Դա էլ լուծում չի, աղբամանների տեսակը պետք է փոխվի:

Շատ մարդիկ զզվում են աղբամանի կափարիչը բարձրացնեն ու աղբը թափեն:

Մեր կենտրոնական փողոցում փակ աղբամաններ են դրված, միանշանակ էֆֆեկտիվ է: Բայց մի խնդիր կա. երբեմն մարդիկ զզվում են աղբամանի կափարիչը բացելուց ու աղբը գցում են աղբամանի կողքը:

Աղբամանների տեսակն էլ է շատ կարևոր: Կափարիչները լուծում չեն: Անցքով քառակուսի արկղեր են պետք, որպեսզի մարդիկ կողքը չդնեն, չշպրտեն աղբը:

Դիլիջանում աղբամանները առանց կափարիչի են, դրա համար էլ աղբը շպրտում են:

Վեց տարեկան երեխան չպիտի աղբը տանի թափելու, բոյը չի հասնում, որ աղբամանի մեջ գցի:

Գյուղի տատիկներից մեկը նշում էր, որ իր երեխա ժամանակ աղբյուրի ջրից բաժակով ջուր էին խմում, մի քիչ ավելի ուշ լվացք էին անում, իսկ հիմա միայն աղբ են թափում այդ աղբյուրի մոտ:

Կոթիում սկզբնական շրջանում մարդիկ թերահավատ էին աղբահանության հարցում, բայց հիմա արդեն սովորել են աղբը ճիշտ տեղում թափելուն:

Ժողովրդի մեջ մշակույթ չկա, որ աղբը բերեն ու գցեն աղբամանի մեջ. կողքն են դնում:

Այսօր Ձուջևանում տասնվեց հատ աղբարկղ կա, բայց ճանապարհի վրա են բոլորը: Գալիս գողանում են, ստիպված բետոն ենք անում:

Բաղանիս համայնքում վերջին երեք տարիներին տեղադրվել են աղբամաններ, բայց մտահոգիչ է աղբավայրերի հարցը: Բնակավայրը գտնվում է միջպետական ճանապարհին մոտ և Հայաստան այցելողները շատ տհաճ կարծիք կկազմեն համայնքի և երկրի մասին:

Տարիներ ի վեր հայաստանցին իրեն սեփականատեր չի զգացել, ընդհանրական գույքին վերաբերվել են որպես օտարի գույքի, էստեղից էլ գալիս է էդ անփույթ վերաբերմունքը հանրային գույքին:

Ժողովուրդը ամեն ինչի համար դժգոհում է ու միևնույն է շարունակելու է դժգոհել, ինչ ուզում եք արեք:

Գյուղացիները կաշխատեն նույնիսկ աղբամանի հսկիչ, որպեսզի աղբը ճիշտ վայրում թափվի:

Նինոցմինդայում տասը մետրը մեկ աղբաման է դրած, կենտրոնական աղբահանությունն էլ վրեն: Բայց ահավոր կեղտոտ քաղաք է: Դաստիարակություն չկա: Նույն էլ էստեղ է, ինչքան ուզում եք համակարգ դրեք, եթե դաստիարակությունն ու մտածելակերպը չփոխվի, բան էլ չի էղնի:

Պետք է աղբամանների վրա ինչ որ արտահայտություն գրված լինի, որ մարդիկ ամաչեն՝ ուրիշ տեղերում չթափեն:

Երեխես ասում է, թե ինչու եմ վառում աղբը: Դպրոցում անցել է, որ դա վատ է, ու հիմա ընդդիմանում է:

Աղբամանը ու կողքի տարածքը էնքան վատ վիճակում են, մարդիկ չեն մոտենում, հեռվից շպրտում են:

Մարդկանց մտածելակերպը պիտի փոխենք, թե չէ ոչ մի մեքենա կամ աղբարկղ օգուտ չի տա:

Ամեն մարդ իր վրա պետք է աշխատի, մենք պիտի փոխվենք, միայն աղբի մեքենաները, աղբամանները ու դրանց աշխատանքը չի:

Ռուսի զուգարանի կաֆել կշարեն, իրենց գյուղում աղբահավաք չեն աշխատի. հիմա մարդիկ արդեն խելոքացել են, կմնան - կանեն:

Սեփական տներում բնակվողները միշտ դժգոհ են լինելու աղբահանությունից, քանի որ իր անասունների աղբը ինքը թափում է կենցաղային աղբի համար նախատեսված աղբավայրում ու այդ պատճառով իրենք երբեք չեն բավարարվի:

Թումանյանում աղբարկղ կա հենց խանութի մոտ, բայց էլի երբեմն էնտեղ չեն թափում աղբը: Պետք է տարբեր սեմինարների միջոցով աշխատել մարդկանց հետ:

Երեկոյան աղբն ուզում էի թափել, աղբարկղի կողքին նստած մարդն ասում է գետնին գցի, եթե դու չես կարող, ես կգցեմ.

Երեխաները դեռ մանկապարտեզից պետք է սովորեցնել, որ պետք է իր կերած կոնֆետի թուղթը ճիշտ տեղում թափել:

Երիտասարդները փոխվում են, մենթալիտետը փոխվում է ու հույս ունենք հինգ տարի հետ բոլորը կհասկանան, որ աղբը պետք է աղբամանի մեջ թափել:

Որ մաքուր տեղ ես մտնում, ուզում ես կեղտոտ կոշիկներդ մաքրես, նոր մտնես, որ չկեղտոտես: Հիմա եթե մեր շուրջը մաքուր լինի, մեր վարքն էլ կփոխվի:

Պետք է աղբի նկատմամբ վերաբերմունքը փոխվի: Դա պետք է սովորեցնել դպրոցից:

Զարգացած մարդը փնթի չի կարող լինել:

Ծառայությունների որակի բարձրացումն առանց կրթական կոմպոնենտի հնարավոր չի: Մարդն իր տնից պիտի աղբը տարանջատել սկսի:

Մեզ ավելի նպատակահարմար է ոչ թե փակվող, այլ հին՝ բաց աղբամանները: Հաշվի առնելով բնակչության դաստիարակության մակարդակը՝ դա ավելի լավ է:

Մեր ազգը աղբը հեռացնելու մշակույթ չունի:

Հարևաններնն ունեն սովորություն «մեկը մյուսի վրա գցելու», բոլորը պետք է հասկանան, որ աղբի խնդիրը մեզ բոլորիս համար է կարևոր:

Պետք է խնդրի լուծումը սկսել դպրոցից, մարդու ուղեղի մեջ էլ պետք է մտցնել, որ աղբը պետք չի ամեն տեղ թափել:

Գյուղերում դաստիարակության խնդիրն ավելի լուրջ է:

Բնակիչների մոտ պետք է ձևավորվի այն մտածելակերպը, որ աղբը գետնին քցելու փոխարեն պետք է անպայման աղբամանի մեջ գցի:

Ստեփանավանում պլաստմասե աղբամաններ կան, որոնք դրա քույր քաղաքն է նվիրել, բայց զգալի մասը վատ վիճակում է: Ծխում են, առանց հանգցնելու նետում աղբաման ու վնասում:

Բնակիչները պետք է աղբը գետնին գցող մարդուն նկատողություն անեն ու խորհուրդ տա, որ աղբը ճիշտ վայրում գցի:

Սեմինարներ է պետք անցկացնել ու մարդկանց բացատրել՝ ինչ, ինչպես և ինչու:

Աղբաման ավելացնելով խնդիրը չի լուծվելու, որովհետև դրան զուգահեռ պետք է նաև կրթել բնակիչներին, թե ինչպես պահպանել նորմատիվները:

Դաստիարակությունը պետք է փոխել, մարդկանց համար պետք է սովորություն դառնա աղբը չթափել ուր կպատահի:

Ես՝ որպես բժշկականի ուսանող, կարող եմ սեմինար կազմակերպել, որ մարդիկ գան՝ իմանան վնասները. եթե ամեն անգամ տասը հոգի էլ գա, օգուտ կլինի:

Գրեթե բոլոր համայնքներում, փողոցներում աղբը հիմնականում տղամարդկանցից է գոյանում՝ ծխախոտ, գարեջրի շշեր...

Դպրոցներում հերթապահություն է սահմանված, բայց հիմնական մաքրությունը հավաքարարներն են ապահովում:

Աշակերտները, եթե իմանան որ իրենք են մաքրելու դասարանն ավելի մաքուր կպահեն:

Հայկական մենթալիտետով ակտիվ կնոջ հետևից ինչ ասես ասում են, նույնիսկ տան անդամները:

Եթե աղբամանը դրված է միայն աղբը թափելու համար, էլ ինչ պետք է անենք, որ մարդիկ հասկանան, թե ինչի համար է այդ աղբամանը:

Գյուղում բնակիչները սաղ իրար կճանչնեն, գյուղում էս տեսակի խնդիրները ավելի հեշտ է կազմակերպել:

Մենք ասիացի ենք, ուզում են մեզ եվրոպացի դարձնել:

Ցանկացած գաղափար լավն է, բայց պետք է տեղայնացվի, մարդկանց մենթալիտետի հետ համապատասխանեցվի:

Ժողովուրդն ամեն գյուղում արդեն գտել է իր ավանդական աղբահանության մեթոդները:

Բնակիչներն էլ են խնդիր. հաճախ աղբը լցնում են կողքը, ոչ թե աղբամանի մեջ:

Ամեն առավոտ աղբը հավաքում են, բայց ժամը չորսի կողմը աղբամանը բացում ես, մեջը դատարկ է, իսկ կողքերը լրիվ աղբ:

Եթե նորմալ ասենք բնակիչներին, որ աղբը պետք չի թափել աղբամանի մոտ, կաշխատի:

Բնակիչներն իրենց ուժերով փորձել են համոզել բնակիչներին աղբը թափել աղբամանում, օրինակ՝ աղբամանները ներկելով, սլաքները դնելով, բայց փոփոխություն չկա:

Երբ աղբամանը տեղադրվեց մարդիկ դեռ սովոր չէին աղբը թափել աղբամանում, բերում կողքի փոսն էին լցնում, բայց մի քանի օր հետո մարդկանց վարքագիծը փոխվեց. մարդիկ սկսեցին աղբանը լցնել:

Մի քանի անգամ աղբամաններ գողացողներ ենք բռնել Զուջևանում:

Աղբամանների քանակի ավելացումից հետո մարդկանց վարքում էլ ենք դրական փոփոխություններ նկատում:

Վերջին մի տարում երիտասարդների ու երեխաների վարքում ինչ-որ բան փոխվել է. երեխաներն արդեն սպասում են, մինչև հասնեն աղբամանի, նոր ձեռքի թուղթը թափեն:

Ասում են փոխենք վիճակը, սկզբում ժողովրդին պիտի փոխենք, հետո նոր անցնենք մյուս հարցերին:

Համայնքների շատ բնակիչներ չեն ուզում ծառայություններ, որովհետև սովոր են բլուրի հետևը աղբը թափել:

Եթե մեկը բերի իմ տան դեմը աղբը դնի, կտամ գլխին:

Առաջնային խնդիրը հետևյալն է. ամեն մեկս մեր երեխային պետք է սովորացնենք, որ աղբ չթափի: Դա է հարցի միակ լուծումը:

Երիտասարդ սերունդը կարող է հարմարվի աղբահանությանը, բայց **մեծերը** կշարունակեն աղբը այրել տան հետևում:

Ծերերի համար պետք է հատուկ պայմաններ ստեղծվի, որպեսզի նրանք կարողանան իրենց տան աղբի հարցը լուծել:

Համայնքում **երիտասարդները** ակտիվ են, բայց մեծահասակները ասում են ինչներիս է պետք:

Աղբահանության պես մի բան է, մենք պետք է սկզբից ինքներս փոխվենք, նոր մնացածից սպասենք:

Գոշում կա թաղամաս որտեղ աղբամանը և շրջակա տարածքը մաքուր է, իսկ նույն համայնքի այլ բնակավայրում աղբամանում աղբ չկա, ամբողջը թափված է կողքը:

Ինչո՞ւ պետք է ես ուրիշի անասունի կեղտն իմ բակից մաքրեմ...

Եթե չեմ ծխում, բայց որ տեսնում են գետնին ընկած ծխախոտի տուփ տանում-գցում եմ աղբամանը, բայց էն ծխողը թափում է գետնին:

Պետք է սկսել մանկապարտեզից սովորեցնել: Ծնողը խանութից դուրս է գալիս, պաղպաղակը տաիս է երեխայի ձեռքը, թուղթը պոկում ու գցում գետնին:

Թղթերը փողոցում գցելու դեմ պայքարել ենք հետևյալ կերպ, ես ինքս երիտասարդների ետ ձեռնոցներ ենք հագել ու համայնքում սկսել հավաքել աղբը, ու այդ երիտասարդները հետո արդեն իրենք դիտողություն էին անում այլոց, որ թափում են աղբը փողոցում: Սա դաստիարակելու մի ձև է, երիտասարդների ուժերով կարելի է վարքագիծ փոխել համայնքում:

Ձուջևանում հիմա մի մեծ աղբանոց կա, որն առաջին հերթին պիտի փակենք, թե չէ տանում են, աղբը էլի գցում էնտեղ:

Ձմռանը աղբի գործը հեշտ է, ծյունը գալիս, ծածկում է, թափթփված չի լինում:

Եթե հասարակական կազմակերպությունները ակտիվիստները չլինեն, սովորական բնակիչները առանձնապես չեն էլ հետաքրքրվում:

Մենք մի քանի տարի առաջ ակցիա կազմակերպեցինք, երեխաներին հորդորելով հեռախոսներով նկարել բոլոր անօրինական աղբաթափության դեպքերը, հետո արդյունքները ներկայացրեցինք համայնքապետարան:

Քանի աղբատար ավելացվում, է այնքան ավելանում է համայնքի խնդիրը, մարդիկ ալարում են աղբը աղբարկղի մեջ գցել, դնում են կողքը ու խնդիր ստեղծում համայնքի համար՝ լրացուցիչ աշխատուժ ներգրավելու, լրացուցիչ մաքրման աշխատանքներ կազմակերպելու համար:

Մարդկանց դաստիարակության և կրթելու մեծ խնդիր կա. մարդիկ արդեն սովորել են աղբը թափել որտեղ իրենց հարմար է:

Աղավնավանքում **տարեցների** համար դժվար է հասնել աղբամաններին:

Ժողովրդի մտածողությունը պիտի փոխվի, պետք է այսպիսի քննարկումներ հրավիրվի ու ժողովրդին բացատրվի ու ցույց տրվի այլ երկրների փորձը, որ մարդիկ լսեն սովորեն ու վարքագիծ փոխեն

Տանը աղբ թափող մեկը կլինի: Մեծահասակներն ավելի պատասխանատու և մաքրասեր են:

Մերոնք սիրում եմ բոլորին «քրքրել», հարևանները կփնտրեն, կգտնեն սխալ աղբը թափողին:

Ոչ մեկը մեղավոր չի, որ մենք մաքուր քաղաքը թողել, գնացել հեռու գյուղում ենք ապրում:

Անհատական փաթեթների միտքը հետաքրքիր էր. քաղաքում դա միգուցե բավականին լավ աշխատի, քանի որ սոցիալական տարբեր խավեր կան:

Ստեփանավանցիները շատ իներտ են: Նախաձեռնող չեն, այսօր մենք ունենք շատ հնարավորություններ մեր ծրագրերը իրականացնելու համար:

Աղբահանության ծառայության գրասենյակը գտնվում էր մեր փողոցում, բայց ես էի մաքրում, իրենք օգնելու փոխարեն ընդամենը ոգևորիչ խոսքեր էին ասում:

Թումանյանում երեխաներին սովորեցնում ենք, որ աղբը փողոցում չեն թափում: Նույնը՝ Քարինջում: Երիտասարդներն արդեն սովորել են աղբ չթափել փողոցում, բայց մեծերը դեռ սովորույթի ուժով են առաջ շարժվում:

Առաջվա համեմատ արդեն իսկ մաքուր է, էդ էլ հերիք է:

Մեր մոտ էլ մարդիկ աղբը տանում են և նետում ջրատարի մեջ, բայց աղբատար մեքենաներ հաստատ տեսել եմ:

Ինչքան էլ լավ կազմակերպված լինի աղբահանությունը, ինչքան էլ աղբարկղեր լինեն, առաջի հերթին պետք է ուշադրություն դարձնել բնակիչների կրթությանը:

Մեր ազգի առաջին խնդիրը գալիս է կիրթ լինելուց, տարրական կենցաղային էթիկա մեր ազգը չունի: Եթե ուզում ենք մի բանի հասնել պետք է սկսել հենց բնակչության կենցաղային կրթությունից:

Մի առանձնահատուկ խնդիր կա հատկապես գերեզմանոցների աղբահանության հետ կապված. ընդունված է, որ գերեզմանոցից ոչինչ չեն տանում, էդպես էլ ծաղկեպասակներն ու նման այլ իրեր մնում են էնտեղ: Անհրաժեշտ է յուրահատուկ մոտեցում ցուցաբերել այս խնդրին:

Մարդկանց մտածելակերպ պետք է փոխվի, որպեսզի աղբահանության խնդիրը վերջնականապես լուծվի:

Պետք է բնակիչներն էլ հասկանան, որ աղբը ամեն տեղ չարժի թափել:

Գյուղի մարդը պետք է ապրի այն միջավայրում, որում ապրում է քաղաքի բնակիչը ու պետությունը այդ պայմանները պետք է ստեղծի:

Մեր մոտ շատ կռիվներ են լինում աղբի համար, հարևանների բակն են գցում աղբը կամ անցորդներն են աղտոտում:

Ներկայումս ունենք մեծ փոս, որին հետևում ենք: Առայժմ խնդիրը կարողանում ենք լուծել: Բայց մարդիկ ամեն դեպքում աղբը տանում են ու լցնում հենց փոսի կողքը, ոչ թե նախատեսված տեղում:

Զ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐ

Հայաստանցի տուրիստները, ի տարբերություն արտերկրերից եկող տուրսիտների, գալիս, բնության գրկում հանգստանում են, հետո ամբողջ աղբը թողնում, գնում:

Աղբարկղերի առկայությունը օգնում է նաև զբոսաշրջության զարգացմանը:

Զբոսաշրջիկները հրաժարվում են մեր բնակավայրերում շատ մնալ, քանի որ շատ դեպքերում նրանք չեն կարողանում տեղ գտնել աղբ թափելու համար, իսկ նրանք ունեն այդ կուլտուրան, որ աղբը պետք է թափել միայն սահմանված վայրում:

Մենք հասկանում ենք, որ զբոսաշրջիկների համար ավելի մաքուր պիտի պահենք տարածքը:

Եթե զբոսաշրջիկների հետ կապված դիմում ենք, ավելացնում են, նորմալ է:

Փոքր համայնքների կենտրոնական փողոցներում ապրում են նաև մարդիկ, ովքեր անասնապահությամբ են զբաղվում ու այդ բնակիչները հրաժարվում են մաքրել աղբը, իսկ պետությունը ոչ մի լծակ չունի նրա վրա ազդելու և ստիպելու համար:

Անասնապահական շրջանը շատ կեղտոտ շրջան է, ահավոր է, չունենք ոչ մի համակարգ:

Է. ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

Մարդիկ սոցիալապես անապահով են ու իրենց աղբը իրենց վառարանում են այրում տաքանալու նպատակով: Իսկ մենք բնությանը պատճառած վնասի մասին ենք մտածում:

Մենք աղքատ չենք, համայնքապետերն են հարուստ:

Բնակավայրեր կան, որտեղ ընտանիքներ ունենք, որտեղ ամեն իրիկուն ընտանիքի անդամները նստում հատիկ-հատիկ հաց են բաժանում իրար մեջ: Աղքատ երկրում սա երազանք է:

Մեծ է նաև սոցիալական խնդիրը, օրինակ մարդիկ շինարարական աղբը թափելու համար ի վիճակի չեն լինում մեքենա վարձել, դրա համար հիմնականում թափում են տան մոտ, որ սելավների ժամանակ ամբողջ տարածքն է աղտոտվում:

Եթե մարդկանց կենսամակարդակը բարձրանա, ավելի մաքուր կպահեն շրջապատը:

Բոլորին պետք է հավասար հնարավորություններ տալ, բայց բոլորը հավասար չեն, սա փաստ է:

Գյուղում մարդիկ կան, ովքեր գործազուրկ են: Համայնքապետարանը կարող է այս ընտանիքներին ներգրավել աղբահանության ծառայությունը մատուցելու գործում:

Ը. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Պարտադիր պետք է կիրառել տուգանքների կիրառման մեխանիզմներ՝ չնախատեսված վայրերում աղբ թափելու համար:

Մինչև մարդու գրպանին «չկպնես», չտուգանես, ոչ մի արդյունքի չես հասնի:

Եթե մարդկանց տուգանեն, կգիտակցեն, որ աղբ թափելը վատ է: Նույն ամրագոտու պատմությունն է:

Արմավիրում տեսախցիկներ են տեղադրվել աղբամանների մոտ, ու ով աղբամանից զատ ուրիշ տեղ մոտակայքում աղբ է դնում, տուգանվում է: Առաջարկում եմ այս փորձը այստեղ էլ կիրառել: Խիստ վարչարարություն է պետք էս բնագավառում:

Տուգանքի ինստիտուտը մտցնելուց առաջ ճիշտ կլինի մարդ նշանակեն, որ ժողովրդին զգուշացնի հետևանքների մասին, հսկի իրավիճակը գյուղերում: Էդ ժամանակ հաստատ չեն թափի:

Եթե նորմալ աղբահանություն կազմակերպվի, այդ ժամանակ տուգանքներ էլ ճիշտ կլինեն:

Տուգանքները հարցը չեն լուծի, եթե չկա աղբարկղ, ինչպես տուգանես:

Առանց աղբահանության վիճակին հետևող մարդու անհնար է հարց լուծել: Տուգանելու փոխարեն ճիշտ կլինի պատասխանատու նշանակել, որը կվերահսկի իրավիճակը:

Ավելի լավ է որոշակի տուգանքներ սահմանել, քան թե տարին երկու անգամ շաբաթօրյակ պարտադրել դպրոցահասակ երեխաներին:

Տուգանքը լավ է, բայց ինչպես են իմանալու, թե ով է աղբը թափել:

Մինչև չտուգանեն, բան էլ չի փոխվի: Հաստատ:

Մեր մոտ տուգանքների համակարգը աշխատում է:

Մարդկանց կենցաղային վարքը փոխելու համար պետք է տուգանքներ սահմանել:

Եթե իրոք տուգանեն մեկին աղբը չնախատեսված տեղում թափելու համար, մյուսները էլ չեն թափի:

Գյուղի կեսից ավելին նույն ազգանունով են. ո՞վ ո՞ւմ տուգանի:

Միայն մարդկանց գրպանին խփելով կարող ենք մի բանի հասնել: Տուգանքներ պետք է սահմանել աղբը թափելու համար:

Թող խստորեն վերահսկեն ամեն ինչ և տուգանեն աղբահանություն վատ կատարողին, աղբը սխալ տեղ գցողին և այլն: Դա շատ հարցեր կլուծի: Օրինակ, վարորդները վախենում են տուգանքներից ու չեն խախտում ճանապարհային երթևեկության կանոնները:

Անգամ եթե մասնավորին պատվիրակվի ծառայության մատուցումը, համայնքը պետք է վերահսկողություն սահմանի: Տուգանքներ պետք է սահմանվեն:

Վեց տարի առաջ մեքենան վարելուց հորս տուգանեցին աղբը պատուհանից գցելու համար: Դրանից հետո ես պատահական տեղ աղբ երբեք չեմ գցել:

Տուգանելուց հետո բնակիչը երկրորդ անգամ սխալ վայրում աղբ չի թափի, ավելին, հարևանները նույնպես այլևս իրենց թույլ չեն տա սխալ վայրում աղբ թափել:

Թող զգուշացնեն, հետո տուգանեն:

Տուգանքները կարող է երկրորդ, երրորդ դեպքում ավելանալ:

Պետք է պայմաններ ստեղծեն, նոր տուգանեն:

Ստեփանավանի համայնքի ղեկավարն աղբից իմացավ, թե ով է աղբը թափել: Հանրային ամոթանք տվեց, բայց տուգանքն ավելի արդյունավետ կլինի:

Ճանապարհային ոստիկանությունը միայն ամոթանք տալով ոչնչի չի հասնի, նույնն էլ աղբահանության դեպքում է, պետք է տուգանքներ սահմանել:

Ավագանին պետք է որոշի տուգանքի չափը:

Տուգանքներ պետք է սահմանվել միայն այն դեպքում, եթե կան աղբամաններ ու աղբահավաքությունը նորմալ իրականացվում է:

Պետք է նաև տուգանել այն տուրիստներին, ովքեր սխալ վայրում են աղբ թափում:

Համայնքը պարտավոր է ստեղծել արտադրական ճանապարհ, եթե ուզում է, որ կենդանին մարդու ճանապարհով չանցնի: Որպեսզի դու փոխես մարդկանց վարքը, պետք է այլընտրանք ապահովես: Տուգանք կիրառելուց առաջ պետք է հասկանալ, թե վարքը փոխելու այլընտրանք առաջարկե՞լ ես: Հակառակ դեպքում, տուգանքը մեզ մոտ չի աշխատելու:

Գտնում եմ, որ վերջապես պետք է կիրառել տուգանքների մեխանիզմը: ՏԻՄ-ը դա չի անում: Այս գործիքն էլ կարող է իր դրական ազդեցությունն ունենալ:

Միայն տուգանքներով կարող ենք մարդկանց ստիպել աղբը չթափել չնախատեսված վայրում կամ այրել:

Շատ չէ, բայց փոքր տուգանքներ պետք է լինեն աղբը ոչ ճիշտ տեղում թափելու համար, այդ թվում՝ սովորական աղբամանների մոտ շինարարական աղբ թափելու համար:

Տուգանելով հո չի, մարդ կա, աշխատանք չունի, էդ տուգանքը որտեղի՞ց պիտի տա:

Մեր գյուղից մեկը աղբը տարել էր, անտառում թափել: Իմացանք, ասեցինք, որ հինգ հարյուր հազար տուգանք պիտի տաս, ստիպված գնաց հավաքեց:

Քաղաքապետարանը հո ինչքան իրեն չի՞ տուգանելու վատ աղբահանության համար, բայց մասնավորին կարող է վերասիկել ու տուգանել:

Պետք նախապես աղբը թափելու պայմաններ ստեղծել, նոր տուգանենք:

Տուգանքը միակ աշխատող ձևն է, որպեսզի բնակիչը տանի աղբը աղբամանի մեջ թափի:

Պետք է վերահսկում լինի սկսած աղբի հավաքումից, մինչև բյուջեյի ծախսում:

Պետք է տուգանել, նույնիսկ առանձին դեպքեր կան ոստիկանության կողմից տուգանելու:

Օրենքով պետք է տուգանքներ սահմանել, բայց դա հարցի լուծում չէ, մարդիկ կսկսեն գիշերը թափել աղբը:

Մեր տարածաշրջանում միանշանակ տուգանքի կիրառումը կտա ցանկալի արդյունք:

Սխալ վայրում աղբը թափողին դժվար է տուգանել, քանի որ մեխանիզմ չկա, որով պետք է վերահսկեն բոլորին:

Պիտի ուրիշ տեղից մարդ բերես գյուղ, աղբի համար տուգանես, որ ժողովուրդը համոզվի:

Փոքր համայնքներում համայնքապետարանը չի կարող տուգանել բնակչին, քանի որ մյուս ընտրություններին այդ բնակիչը չի ընտրի համայնքապետին:

90 տարեկան տատիկին, որ հազիվ դուրս է եկել ու աղբը թափում է փողոց, ո՞նց տուգանեմ: Բայց իրեն չտուգանեմ, երիտասարդին էլ չեմ կարողանալու տուգանել:

Պետք է ոչ թե համայնքի բնակչին տուգանել, այլ համայնքին, այսինքն կիրառել միջոցների համայնքի նկատմամբ, զրկել ինչ-որ բաներից, ներդնել բալային համակարգ ու այդ համակարգով փորձել խթանել մաքուր համայնքներին:

Վրաստանում ճանապարհային ոստիկանը կմոտենա ու աղբ թափողին կտուգանի:

Ես ծխող եմ, ու քանի որ աղբամաններն ու ուռնաները սակավաթիվ են, ես պրոբլեմի առաջ եմ կանգնում ու ստիպված աղբը գցում եմ պատահական տեղ: Այս պայմաններում վարորդին, որը պատուհանից սիգարետի մնացորդը գցում է, չի կարելի պատժել:

Ուրասար համայնքում աղբամաններ չկան, ինչպե՞ս պատժենք դրսում աղբ թափողին: Պատժելուց էլ պիտի արդարության սկզբունքը պահենք:

Պետք է պատժվեն նաև այն մարդիկ, ովքեր աղբը մեքենայից դուրս է շպրտում:

Հիմա էլ պիտի էկոլոգիական ոստիկանություն սարքե՞նք, որ մարդկանց տների կողքը հերթապահեն, տեսնեն ով գցեց աղբը: Ամեն ինչ չի որ հնարավոր է վերահսկել:

Ինչ-որ մեկդ գոնե մի օրինակ կբերի, երբ վարչական գործ է բացվել աղբը չնախատեսված տեղում թափելու համար: Ո՜չ: Վերահսկողությունը շատ կարևոր է, շատ:

Եթե լինի անհատական աղբամանների սիստեմ, արդեն կկարողանանք վարչական տույժեր կիրառել, իսկ եթե քսան ընտանիք մի աղբամանից է օգտվում, չենք կարող վերահսկել:

Թող բյուջեյով պլանավորվի, որ վերահսկողություն իրականացնելու համար մարդ աշխատի:

Անհատական աղբամանները որ համարակալվեն, վերահսկողության անհրաժեշտություն չի լինի:

Դիլիջանում տեղակայված ուսումնական հայտնի կենտրոններում աղտոտելու նկատմամբ վերաբերմունքը շատ խիստ է, այդ պատճառով էլ այդ հաստատությունների տարածքում կատարյալ մաքրություն է տիրում: Հետևություն. անհրաժեշտ է խստացնել վերահսկողությունը այլ տեղերում էլ:

Հասարակությանը կրթելուն զուգահեռ նաև պետք է գրպաններին խփել:

Մերոնք էդպես են, հենց գրպանին կպնեն, ավելի ուշադիր կլինեն:

Եթե մարդու ստորագրությունը ինչ-որ տեղ չեղավ կամ գրպանին չկպար, ոչ մի բան էլ չի հասկանա:

Մինչև մարդու գրպանին չկպնես, ոչ մի հարց չի լուծվի, պետք է անպայման լինեն օրենքներ:

Հենց մարդկանց գրպանին կպան, իմացեք բոլորն էլ մաքրասեր կդառնան:

Անշնորհք մեծահարուստին ոչինչ չի կարող հետ պահել աղբը սխալ վայրում թափելու համար, քանի որ իր գրպանին կպնելով չես կարող լուծել այդ հարցը:

Մարդու գրպանին պիտի կպչել, որ վարքագիծ հնարավոր լինի փոխել:

Մինչև մարդու գրպանին չկպչես, չի փոխվի:

Խիստ տույժեր է պետք կիրառել բնապահպանական վնասի համար: Ու պետք է տույժեր լինեն անգամ աղբահանությունը ոչ ճիշտ իրականացնող աշխատակիցներին:

Պետք է սահմանել տեղերը, նշել, տեղեկացնել, ընդգծել, կարմիրով: Աղբը սխալ տեղ թափողին էլ՝ ստալին անել:

Եթե ես գյուղում տեսա աղբ թափողին, ես նրան չեմ տա «գելի բերան», ես իրան կարող եմ դիտողություն անել, բայց վստահ էլ չեմ, որ դա որևէ արդյունք կտա:

Տեսախցիկները շատ թանկ չեն, կարելի է հատկապես խոշոր աղբավայրերի մոտ տեղադրել:

Պետք է հստակ նորմեր և կարգավորումներ լինեն, որ աղբը ինչպես պետք է հավաքել, ում տալ, ինչպես տեղափոխել: Ոչինչ չկա:

Գուցե պետք է որոշ տեղերում տեսախցիկներ լինեն, որ հսկենք աղբահանությունը:

Ձրաչափի պես պիտի աղբաչափ ստեղծեն:

Հարևանիս առաջին անգամ կզգուշացնեմ, որ աղբը փողոցում կամ ձորում չթափի, երկրորդ անգամ արդեն կզանգեմ համապատասխան մարմիններին:

Գյուղերում մարդկանց վարչական պատասխանատվության ենթարկելը սխալ է. պարտքի վրա պարտք պիտի կուտակվի ընդամենը:

ՏԻՄ-ը պետք է մարդկանց վրա ազդելու գործիքներ ունենա:

Տեսախցիկներ կարելի է տեղադրել, որի շահագործումը համայնքապետարանը պետք է իրականացնի:

Աղբամանները որ ավելացնեն, մնացածը մենք կանենք, կիսկենք:

Փոքր համայնքների կենտրոնական փողոցներում ապրում են նաև մարդիկ, ովքեր անասնապահությամբ են զբաղվում ու այդ բնակիչները հրաժարվում են մաքրել աղբը, իսկ պետությունը ոչ մի լծակ չունի նրա վրա ազդելու և ստիպելու համար:

Տեսախցիկներով հսկողությունը նույնպես կստիպի բնակիչներին աղբը ճիշտ վայրում թափել:

Եթե իրավական ակտ չկա, ապա հարևանները նույնիսկ իրար հետ կկռվեն աղբահանության խնդրի պատճառով: Ու ինչի՞ այս պետությունը մինչև հիմա օրենք չունի:

Անցած տարի մեր լիազորը մե վախտմ ման եկավ, սաղին հսկեր գը, ու էդ ժամանակ աղբի վիճակը լավացավ, հետո երբ ինքը դադարեց հսկելուց, էլի նույն վիճակն էր:

Վարչական պատասխանատվությունը աշխատող տարբերակ է, բայց քանի որ համակարգը դեռ խարխուլ է, հիմա չի կարող նորմալ գործել:

Ամեն թաղամասից մարդ պիտի նշանակվի, որը կհետևի աղբ թափելու պրակտիկային:

Լիքը մարդ գիշերը գոմաղբը հանում, լցնում է մայթին: Թող էդ մարդկանց տուգանեն, էդ հավելյալ գումարն էլ ամբողջությամբ ուղղեն աղբահանությանը:

Ավելի լավ ա ինձ ասեն ես «կլյաուզնիկ» եմ, քան թե էդ համատարած թափված աղբի պատճառով իմ երեխեն, իմ հարազատը տուժի:

Պետք է ստիպել սեփականատերերին իրենց տարածքները մաքրեն:

Ոստիկանությանը անհրաժեշտ է ներգրավել աղբահանության գործին, մեր համայնքում ոստիկանը նկարը բերել ցույց է տվել ու պահանջել որ մաքրեն: Բայց սա էլ մի կայուն մեթոդ չի: Ի՞նչպես պիտի հայտնաբերվի: Հո ամեն տանը մի ոստիկան չես կցի

Եթե անասունը մտել է քո տարածքը, քեզ վնաս է հասցրել, 100000 դրամ պետք է մտնի է պետ. բյուջե, դրան էլ գումարած քո փոխհատուցումը: Պետք է ուղղակի դիմում գրես համապատասխան մարմնին:

Գյուղերում չի աշխատի «գործ տալու» մեխանիզմը չի գործի, քանի որ իրար ճանաչում են ու մեկը մյուսին չի բացահայտի:

Մարդիկ իրար հետ կռված պիտի լինեն, որ գնան ցուցմունք տան աղբը սխալ տեղում թափելու համար:

Մինչև օրենքը չգործի ո՛չ աղբահանության խնդիրը կլուծվի, ո՛չ էլ բնակիչները աղբը ճիշտ վայրում կթափեն:

Թ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ, ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրը, մեր առողջությունն է կարևոր, սա պետք է լինի հիմնական միտքը:

Մարդիկ սոցիալապես անապահով են ու իրենց աղբը իրենց վառարանում են այրում տաքանալու նպատակով: Իսկ մենք բնությանը պատճառած վնասի մասին ենք մտածում:

Հայաստանցի տուրիստները, ի տարբերություն արտերկրերից եկող տուրսիտների, գալիս, բնության գրկում հանգստանում են, հետո ամբողջ աղբը թողնում, գնում:

Զարմանալի է, որ մարդիկ չեն գիտակցում, որ աղբի կուտակումից լուրջ առողջական և էկոլոգիական վնասներ կարող են լինել:

Սոցիալական գովազդը, ՀԿ-ները աշխատանք պետք է տարվի որ հասկանանք որ միայն աղբը թափելը չէ, սա մի մեծ էկոլոգիական շղթայի մաս է:

Մենք հասկանում ենք, որ վատ էկոլոգիան բոլորի համար վնաս է:

Արևիկում հիգիենիկ վիճակն էլ սարսափելի է. աղբը նույնիսկ փոսը չեն գցում, շպրտում են ոնց ասես ու աղբի փոսի շուրջը նոր աղբակույտ է գոյանում:

Ինչո՞ւ պետք է նորմալ մեքենա գնել, եթե հինը կա: Պետք է ուղղակի հինը լվանալ, պահպանել հիգիենիկ վիճակը:

Մեքենայի սանիտարահիգիենիկ վիճակը ամենակարևոր խնդիրը չէ: Դա կլուծվի, երբ այլ, ավելի առաջնային հարցերը լուծվեն. նորմալ աղբավայր լինի, փակ աղբարկղեր:

Ավելի լավ կլիներ, որ աղբամանները բացվեն ոտքով, ձեռքով այդքան էլ հիգիենիկ չէ:

Համայնքի տնտեսական սպասարկում իրականացվում է, ներառյալ մեքենայի սանիտարահիգիենիկ վիճակի պահպանումը, բայց սովորական բնակիչը դա չի նկատում:

Գյուղերում աղբի խնդրի պատճառով տուժում են նաև մեր երեխաները, ովքեր ստիպված են լինում այդ կեղտոտ օդը շնչել:

Բնակիչները, համայնքի ղեկավարները պետք է հասկանալ որ բնապահպանական հարցերն ամենակարևորն են:

Մեր մոտ գերեզմանների հետևում փոս է, տանում այրում են, ինչ տարբերություն, որ տանում են, միևնույն է մի քիչ ավելի հեռվում վառում են ու վնաս է լինում բնապահպանությանը:

Աղբանոցները բնակավայրերին մոտ են և ուղիղ ազդեցություն են ունենում մեր բնապահպանության վրա:

Մեքենան ուղղակի ջրով լվացվում է, ոչ մի ախտահանիչ նյութ չի օգտագործվում:

Դիլիջան քաղաքում կովերը աղբից են սնվում, աղբամանից ուտում են, հետո գնում կաթ տալիս: Դրա արդյունքում կովի կաթից հաճախ աղբի հոտ է գալիս: Պետք է էս երևույթի դեմ էլ պայքարել:

Ցանցապատումն անհարժեշտ է, որպեսզի կենդանիները չթափեն, բնակիչները սովորեն աղբամանի կափարիչները փակել:

Աղբամանների տարածքը **ցանկապատված** պետք է լինի, որ գոնե մինչև մեքենայի գալը աղբը չթափվի փողոցում:

Գյուղական համայնքներում պետք է աղբամանները **ցանկապատեն**:

Ցանկապատից չեն մտնի, ցանկապատի վրայից կշպրտեն...

Եթե թափառող կենդանիներ չլինեն, **ցանկապատի** կարիք էլ չի լինի: Ամեն ինչ փոխկապակցված է. աղբից գլոբալ խնդիրներ են առաջ գալիս:

Ըստ նորմերի՝ աղբամանների տարածքը պետք է **ցանկապատվի**, սակայն գրեթե երբեք այս նորմը չի պահպանվում: Աղբամանները պետք է ճիշտ տեղում տեղադրվեն, բայց մենք նման «ճիշտ» տարածքներ էլ չունենք, գրեթե բոլոր աղբամանները տեղադրված են մայթերին:

Եթե աղբավայրերը **ցանկապատված** չլինեն, կովերը մտնում ու սկսում են ցրել:

Հաղարծինում աղբավայրը նպատակային հողի վրա չի, անասունները աղբամանից օգտվել ու սատկել են: Պետք է անմիջապես այն **ցանկապատել** ու առանձնացնել:

Աղբամանների **ցանկապատումը** անիմաստ ու ոչ արդյունավետ ծախս է. ոչ մի օգուտ չի տա:

Ավելի լավ է պայմաններ ստեղծել, որ **ցանկապատի** կարիք չլինի: Սիրուն նորմալ դրված լինեն:

Բնակիչները աղբը հանում են տանից դուրս, սպասելով աղբատար մեքենային, սակայն փողոցի **կենդանիներն** ամբողջ աղբը թափում են փողոցում:

Աղբամանները ուշ դատարկելու հետևանքով գարշահոտ էր լցվում, իսկ ընտանի **կենդանիները** ամբողջ տարածքով տարածում են այդ աղբը: Ավելի լավ կլինի աղբամաններ չլինեն:

Շատ կարևոր է, որպեսզի աղբամանները կափարիչով լինեն՝ **կենդանիների** ու տեղումների ազդեցությունից խուսափելու համար:

Սեմ եմ ամենագնացներին, քանի որ բաց են ամենագնացները և **կենդանիները** Ոսկեպարում թափում են աղբը, չնայած կափարիչներ կան:

Պարտադիր է, որ աղբամանը փակվի, հակառակ դեպքում **կենդանիները** և քամին ցրում են:

Դիլիջանում **կենդանիներից** բացի մարդիկ էլ են քրքրում աղբը:

Աղբամանները պիտի բարձր սարքեն, որ **կենդանիները** չմտնեն, թափեն:

Աղբամանները նաև վտանգավոր կարող են լինել՝ միջից **կենդանիներ** են դուրս թռչում, շատ դեպքերում հարձակվում:

Բաղանիսից մինչև Ձուջևան ամբողջ ճամփեզրը աղբ է, իսկ ընտանի **կենդանիները** ամբողջը տարածում են:

Անտառամերձ հատվածներում հատկապես **կենդանիները** թափում են աղբը աղբամաններից:

Բնակիչների անփութության խնդիր կա, աղբամանը հաճախ չեն փակում, ինչից հետո գիշերները **կենդանիները** աղը փորփրում են ու շաղ տալիս:

ՏԻՄ-ին մի քանի մեխանիզմ ենք առաջարկել աղբանոցներից **կենդանիների** հեռացման վերաբերյալ, բայց արդյունք չի եղել:

Աղբարկղերը պետք է այնպես սարքեն, որ **կենդանիները** չկարողանան շրջել:

Ինչո՞ւ պիտի Ախուրյանի աղբը տանեն Նոր Ախուրյան ու անտեր վիճակում թողնեն: Քամին ու թափառող **շները** ոնց ասես չեն տարածում այդ աղբը: Մինչև թափառող շների հարցը չլուծվի, նորմալ աղբահանություն չի իրականացվի:

Աղբամանները պետք է փակ կափարիչներով լինեն, հատկապես գյուղերում՝ խուսափելու թափառող **շներից** ու քամուց:

Ախուրյանում մեծ վտանգ են թափառող **շները**, թե՛ աղբահանության, թե՛ անվտանգության առումով:

Թափառական **շները** տարածում են աղբն ամենուր: Եթե այդ հարցը չլուծվի, ինչքան էլ ավելացնենք աղբամանների թիվը, խնդիրը չի լուծվի:

Շատ լավ կլիներ ոտքով բացվող աղբամաններ ունենայինք, որպեսզի կափարիչը պաշտպաներ աղբարկղը թափառող **շներից**:

Թափառող **շները** խնդիր են թե՛ գյուղում, թե՛ քաղաքում: Հատուկ տեղեր են պետք, որտեղ կարելի է հավաքել այս շներին, և այսպիսով լուծել նաև աղբը ամբողջ համայնքով տարածելու խնդիրը:

Աղբամանների վրա միշտ հավաքվում են **շներ կատուներ**... բա դրանց ինչ անենք:

Աղավնավանքում աղբամանները ծանր կափարիչ ունեն, հազիվ բացում ենք, աղբը գցում, բայց կարևորը՝ **շուն** չի մտնում մեջը:

Աղբը փողոցում թողնելու դեպքում շատ հաճախ **շները** քանդում, թափում են ամբողջը:

Անգամ եթե տոպրակով փակված աղբ ես հավաքում, **շները** հարձակվում, պատառոտում են ու այստեղ այնտեղ թափում աղբը:

Աղավնավանքում աղբամանները շարած են, նորմալ կափարիչով: Եթե բաց լինի, **շներն** էլ կգան կքրքրեն:

Մեր համայնքում ամեն տարի առնվազն մի երկու **կով** սատկում է աղբից սնվելու հետևանքով:

Գյուղերում աղբամանները պիտի փակ կափարիչով լինեն, որ անասունները ինչ-որ բան չուտեն, թունավորվեն:

Վեց տարեկան երեխան չպիտի աղբը տանի թափելու, բոյը չի հասնում, որ աղբամանի մեջ գցի:

Աղբամանները գտնվում են բնակելի շենքերից բավականին հեռավորության վրա, աղբն էլ ժամանակին տանում են, դրա շնորհիվ էլ նույնիսկ ամռան ամիսներին տհաճ հոտ չի լինում:

Աղբահանության խնդիրը ավելի արդիական է դառնում հատկապես ամռանը, քանի որ գարշահոտն անտանելի է դառնում:

Աղբը չի կարելի վառել, քանի որ, միևնույն է, այդ վառած աղբի հոտը պետք է մենք շնչենք:

Ես որ դեմ եմ աղբամանին, պատճառը հետևյալն է. մինչև հիմա չեմ տեսել մի աղբաման մեր համայնքներում, որտեղ գարշահոտություն ու կուտակում չլինի: Եթե էդպիսի աղբաման եք դնում, անիմաստ է, հարցի լուծում չէ: Եթե հավաքելու եք, չեք թողնելու, որ լցվի, վատ չի լինի:

Գյուղական համայնքում խնդրել եմ ժողովրդին, որպեսզի օրգանական աղբը չլցվի ընդհանուր աղբի հետ, հետևաբար գարշահոտության հարցը կարծես թե լուծված է:

Մեծ տարաների գաղափարն այնքան էլ լավը չի, քանի որ գարշահոտության աղբյուր կհանդիսանան այդ տարաները: Սա վերաբերում է հատկապես քաղաքների կենտրոնական հատվածներին:

Աղբամանները երբևիցե չի լվացվում: Ինչքան էլ պարբերականությունը աղբը տանելու նորմալ լինի, եթե չեն լվացվում, հոտը մնում է:

Աղբամանները չեն լվացվում, պահ է գալիս, որ աղբը չես էլ ուզում աղբամանի մեջ գցես, կողքն ես դնում:

Համայնքն ունակ չի ավելի լավ ծառայություն մատուցել, դրա համար հնարավորություն ու միջոցներ չկան: Հիմա, օրինակ, եթե աղբատար մեքենան լվանանք, կանաչները կգան ու կասեն. բա էդ լվացման ջրերը ու՞ր ենք լցրել: Դրա համար էլ հիմա չենք լվանում էդ մեքենաները:

Գյուղի տատիկներից մեկը նշում էր, որ իր երեխա ժամանակ աղբյուրի ջրից բաժակով ջուր էին խմում, մի քիչ ավելի ուշ լվացք էին անում, իսկ հիմա միայն աղբ են թափում այդ աղբյուրի մոտ:

Աղբատար մեքենաներն արտաքինից մաքուր են, հնարավոր է, որ մաքրում են:

Ուր էլ տանեն աղբը լցնեն, մեկ է՝ վերջում վառում են:

Աշոցք համայնքի բոլոր բնակավայրերի աղբը հավաքվում է Զույգաղբյուր գյուղի մոտ, դա հիվանդության «բուն» է:

Սեպասար գյուղում մի քանի տարի առաջ աղբամաններ դրեցին, բայց այդ աղբամանները երբեք չմաքրվեցին, դրա համար ավելի լավ է, որ այսօր արդեն չկան դրանք:

Աղբը վառելու ժամանակ այնպիսի ծուխ չի լինում, որ մարդկանց վնասի:

Շատ աղբամաններ կան, որ խոլերայի բուն են: Պետք է արկղի որակը փոխեն:

Գյուղերում աղբամանների բացակայության պատճառով դաշտերը կեղտոտվում են, քանի որ գյուղացիները աղբը կենտրոնացնում են ու տանում լցնում են դաշտերը:

Խնդիրը աղբամանն է, կարելի է աղբամանը պատրաստել այնպես, որ լցվելուց հետո ինքը որևէ ձև ծածկվի:

Պետք է լինեն պատասխանատուներ կամ աշխատողներ, ովքեր կհետևի աղբամաններին, կմաքրի աղբամանի կողքերը:

Շատ համայնքների աղբամանները չեն համապատասխանում ստանդարտներին:

Բնակավայրի ներսում դրված աղբամանները վտանգավոր են, անասունները գալիս են, փորփրում, ուտում աղբը:

Աղբամանի ձևի մասին այդքան էլ չենք մտածում, կարևորը առկայությունն է:

Ոչ բոլոր տեղերում են փակովի աղբամաններ, որոշ տեղերում չեն եղել, որոշ տեղերում էլ կոտրել են:

Աղբամանները կարող են փակվել բանալիով. բնակիչները գան-բացեն աղբամանը, ու լցնեն աղբը: Իտալիայում էդպես ենք տեսել:

Աղբատար մեքենաները պետք է զինված լինել շամպուններով ու համապատասխան մաքրող սարքերով, որպեսզի տարածքը ևս մաքրեն, ոչ միայն աղբը տեղափոխեն:

Աղբահանությունը միայն աղբը բակից տանել չի, քանի որ աղբահանություն իրականացողները աղբը տանում են երկու կիլոմետր հետո թափում՝ հիմնականում անտառներում ու գետերի մեջ:

Սեփականաշնորհված տարածքներում խոշոր աղբակույտեր կան, որոնց մաքրման հարցը չի լուծվել:

Խոտի մնացորդը եթե երկու տարի մնա, կդառնա հող:

Մենք գիտակցում ենք, որ աղբահանությունը գործի կեսն է, պետք է կարողանալ նաև մեծ աղբանոցների հարցը լուծել:

Երեխեքը գետում լողանում են ու հիվանդանում, անցած տարի մի երեխա կեղտոտ ջուրը կուլ տալու պատճառով հիվանդացել էր, հազիվ փրկվեց:

Զուջևանում մի աղբյուր կա, որ հիմա աղբանոց է դարձել: Ինչքան մաքրում ենք, նորից նույն վիճակն է դառնում:

Աղբի այրում իրականացրած վայրերում հողը այլևս անպիտան է դառնում գյուղատնտեսության համար:

Աղբի այրումը ընդհանրապես չի կարելի, նույնիսկ տերև այրել չի կարելի:

Դրական տեղաշարժ կա աղբահանության ոլորտում, նախկինում տոպրակները թափված էին փողոցում, այժմ նման խնդիր չկա Ստեփանավանում:

Մեր աղբատար մեքենան նոր է, դրա համար էլ դեռ մաքուր է: Նախորդ մեքենան ահավոր վիճակում էր:

Աղբը այրել չի կարելի, բայց որ ասում ես, չեն հասկանում ու նույն ձև շարունակում են: Հասկացնել է պետք մարդկանց:

Որ հողերը վերջացան, աղբը ու՞ր ենք թափելու:

Ձյունը փակում է աղբը, չի երևում, բայց երբ գարունը բացվում է, պարզվում է ահավոր շատ աղբ է հավաքվել:

Ամբողջ աշխարհը պայքարում է մաքուր մոլորակի համար, մեր մոտ հակառակը ոնց որ լինի:

Խոշորացումից հետո փորձ է կատարվում լուծել աղբահանության խնդիրը, բայց գյուղացին հրաժարվում է մուծել գումար, քանի որ ինքը տանում աղբը գետն է թափում:

Մեր փոքր բնակավայրերի դեպքում աղբի գարշահոտության խնդիր համարյա չկա, քանի որ, ի տարբերություն խոշոր քաղաքների, շուտ փչացող բաներ մեզ մոտ քիչ կան:

Ժ. ԱՂԲԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ, ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ

Ունենք երկու տեսակի աղբ՝ վառելիք (պլաստիկ և պոլիէթիլեն) և անասնակեր:

Գյուղերում ուտելիքի մնացորդները տալիս ենք ընտանի կենդանիներին, գոմաղբն էլ վառում ենք, միայն պլաստիկն ու խոտի մնացորդն է մնում թափելու համար:

Պետք է առանձնացված աղբամաններ լինեն՝ ինչպես կուլտուրական երկրներում. ապակի, պլաստիկ...

Տեսել ենք, որ պլաստիկ շշերն առանձին հավաքվում են, բայց չգիտենք, թե հետո ինչ է լինում դրանց հետ. վերամշակվո՞ւմ է, թե՞ նորից խառնում են աղբի այլ տեսակներին: Մինչդեռ եթե իմանանք, որ վերամշակման գործարան կա, արդեն սիրով կտեսակավորենք:

Մարդկանց պետք է կրթել, բայց պետք է հետևողական լինել: Աղբի տեսակավորումն աշխատեց, մարդիկ առանձին թափում էին պլաստիկ շշերը, բայց հետոն ինչպես է կազմակերպվում, պարզի չի, այդ մասին էլ պետք է տեղեկացնել մարդկանց:

Բյուջեի միջոցներն էլ մեր միջոցներն են, աղբի վրա մեր միջոցների մեծ ծախսերի կարիք չկա, քանի որ հարցը նորմալ լուծվում է: Այլ հարց է, որ թերևս կարիք կլիներ պլաստիկի առանձնացման խնդրին առանձին մոտեցում ցուցաբերելը:

Թումանյանում փորձում ենք աղբի տեսակավորման ծրագիր իրականացնել: Տեղադրելու ենք պլաստիկ շշերի համար նախատեսված աղբամաններ: Կարծեմ Վանաձորում վերամշակող կա, կտեղափոխենք այնտեղ:

Եթե պլաստիկի թափոնը հանձնելուց համայնքը գումար ստանա, դրա գումարները կարելի է ուղղել աղբահանության խնդրին:

Փորձ ունեցել ենք, որ պլաստիկն առանձին հավաքենք, որ գան տանեն: Բայց հավաքեցինք, սպասեցինք, էլի սպասեցինք, չեկան՝ թափեցինք:

Գյուղերում աղբի սորտավորում պետք չի: Պլաստիկ շշերով մենք կաթ ենք բերում քաղաք, թող քաղաքացիները մտածեն էդ պլաստիկի մասին:

Պետք օրենքով արգելվի պլաստիկ տոպրակները:

Կարևոր խնդիր է պլաստիկ փաթեթներից հրաժարումը, թղթով փաթեթավորման դեպքում աղբը նույնիսկ չնախատեսված տեղերում թափելուց հիմնական մասը քայքայվում է առանց հետևանքների:

Աղավնավանքում երբեմն գալիս էին հատուկ ալյումին, պլաստիկ հավաքում, հիման նման բան չկա: Հիմա պլաստիկը ուր ասես շպրտում են:

Դիլիջանում մի քանի արկղ կա՝ հատուկ նախատեսված պլաստիկի համար:

Մեր գյուղերում եթե փայտ չունենան, պլաստիկ էլ կվառեն:

Նոյեմբերյանում մեկը փորձեց տեսակավորված աղբից բիզնես սկսի. ամբողջ Հայաստանից պլաստիկ շշեր հավաքեց, ֆուռով տեղափոխեց Ռուսաստան, բայց էս պահին ոչ մի առաջընթաց չկա: Կարծես կասեցվեց էս գործունեությունը:

Պետք է բնակչության շրջանում անցկացնել սեմինարներ, օրինակ, ի՞նչ կարելի է անել պլաստիկ թափոնների հետ, ի՞նչ կարելի է դրանից պատրաստել, ի՞նչպես կարելի է դրանք օգտակար մի բանի մեջ օգտագործել: Սրանով մենք կխթանենք ձեռներեցությունը: Մարդիկ իրենց մտքի աշխատանքի շնորհիվ կարող են գործի տեր դառնալ: Անհրաժեշտ է սովորեցնել, տեղեկացնել, օրինակ ցույց տալ:

Մարդ կա մեզ մոտ, որ պլաստիկ շշեր ու տոպրակներ է հավաքում, բայց չնչին գնով: Դրա համար էլ նորմալ վերամշակում պիտի ստեղծենք:

Ցանկալի կլիներ ընդհանրապես հրաժարվել պոլիէթիլենային տոպրակների օգտագործումից:

Դպրոցում դասերից հետո բնապահպանական թեմաներով քննարկումներ էինք անում, որոշեցինք մեր ուժերով կտորից տոպրակներ կարեցինք, տվեցինք բնակիչներին և խանութներին, բայց մարդիկ թափեցին դրանք և սկսեցին նորից պոլիէթիլենային տոպրակներ օգտագործել:

Նոյեմբերյանում տարբեր տեսակի աղբարկղեր ունենք՝ ինքնաշեն, բարերարի կողմից տրամադրված պլաստմասե տարաներ և այլն: Ըստ տեսակի՝ խնդիրները ևս տարբեր են, օրինակ՝ ինքնաշեն աղբարկղերի մոտ աղբը

Պետք է ինչ որ մեկը այցելի գյուղ ու հայտարարի, որ ինքը կգնի պլաստմասի շշերը, ապա բոլորն էլ կհավաքեն շշերը նույնիսկ 100 դրամի համար :

Առաջին հերթին պետք է պլաստամսե շշերն ու տոպրակները վերացվեն:

Բերդավանիցք ամեն հարսանիքից հետո շշերով կռվում, հիմա լավ է որ պլաստմասից են, իրար չեն վնասում:

Աղբի մեծ մասը «ցելաֆոն», «կապրոն» է, մնացածը կովերը կուտեն:

Աղբի տեսակավորումը խնդրի լուծում է. երբ սկսենք տեսակավորել, վերամշակել, աղբի ծավալը միգուցե նվազի, թե չէ ի՞նչ տարբերություն ես եմ տանում աղբը ձորում թափում, թե՞ շրջիկ մեքենան:

Պետք է Եվրոպայի նման աղբը սորտավորվի:

Դիվերսիֆիկացված աղբահանության իմաստը բացարձակ չկա: Մենք տանջվենք, սորտավորենք, հետո հավաքեն ու լցնեն նույն տեղը, իմաստը՞...

Մեր ազգը պատրաստ չէ սորտավորված աղբը թափելուն:

Աղբի սորտավորված թափելու համար նախ պետք է աղբավայրերի հարցը լուծել:

Քաղաքի աղբն ու գյուղի աղբը տարբեր է, պետք է հասկանալ, դա ինչպես տեսակավորել:

Մեր բնակչությունը ու նաև երկիրն ընդհանուր առմամբ, դեռ չենք հասել էնտեղ, որ կարող ենք մեզ նման շքեղություն թույլ տալ: Մեզ որտեղի՞ց էսքան բյուջե: Բայց անգամ բյուջեի հարցի չի. մարդիկ էլ դեռ շատ հեռու են նման գիտակցությունից՝ տեսակավորում և այլն:

Շատ կարևոր խնդիր է այն, որ մեր մոտ աղբը չի տեսակավորվում. կենցաղային աղբը գոմաղբի հետ խառն է:

Առաջին՝ չաղտոտել, երկրորդ՝ աղբը տեսակավորել, երրորդ՝ աղբը չայրել. ահա ինչ քայլերի անհրաժեշտություն կա:

Մենք հասկանում ենք, որ պետք են ոչ միայն աղբամաններ, այլ նաև աղբի տեսակավորում, բայց դա մեր համար մեզ դեռ շատ շուտ է:

Անգամ տներում պետք է աղբը տեսակավորեն:

Շատ լավ կլիներ, որ քաղաքում աղբը տեսակավորվեր, որովհետև մեկ-մեկ տեսնում եմ, թե ինչ են թափում, ասում եմ, բա չկարողանայինք հավաքել, բերել գյուղ ու օգտագործել:

Մեզ շատ կօգներ աղբի տեսակավորման մասին գիտելիքը, օրինակ, ինչպես օգտագործենք չորացած խոտը, ուտելիքի մնացորդը... Մենք էսպիսի գիտելիքներ չունենք:

Հայաստանում աղբի տեսակավորման ու վերամշակման վերաբերյալ տարբեր նախաձեռնություններ կան, բայց իրականում մենք իմանում ենք միայն դրանց սկզբի մասին: Հետևողական տեղեկություններ չկան, թե ին չ եղավ դրանց հետո, աշխատեցին, չաշխատեցին, ինչպիսի ճակատագիր ունեցան այդ ծրագրերը:

Հենց ժողովուրդը հասկացավ, որ կարելի է տեսակավորել ու իրացնել, բավական բան կփոխվի, էլ չեն վառի, էլ չեն լցնի գետը:

Տեսակավորումը անխուսափելի է, պետք է հիմիկվանից դրան գնացող ներդրումներ անենք:

Ամենամեծ մտահոգությունը Նոյեմբերյանի **աղբավայրն** է, որն ընտրվել է չգիտակցված ձևով, գերեզմաններին մոտ: Տրակտորով աղբը լցնում են ձորը, որտեղ խմելու ջրի աղբյուրներ կան, եթե աղբը լցվում է ձորը, որտեղով գնում է համայնքի խմելու ջուրը, մեծ խնդիր է:

Նոյեմբերյանի մոտ կա ձոր, որտեղից ջուրը հոսում է դեպի Ադրբեջան, ավելի լավ կլինի **աղբավայրը** տեղափոխել այդտեղ, դրանով կխուսափենք Նոյեմբերյանի տարածաշրջանի գյուղեր կեղտոտ ջուր հոսելուց:

Աղբավայր որպես այդպիսին հիմա չկա: Օրինակ, Արևիկ գյուղում աղբը կուտակվում է գյուղի հենց մուտքի մոտ, որը շատ տհաճ է:

Հատուկ **աղբավայրեր** կառուցելը հիմա մեր երկրի համար շատ հեռու է:

Մինչև կենտրոնացված աղբահանությանն անցնելը պետք է որոշել, թե որտեղ պետք է լինի **աղբավայրը**:

Միայն **աղբավայրով** չի: Պիտի աղբի նորմալ վերամշակում լինի, թե չէ կհավաքվի:

Աղբավայրերը շատ սխալ են տեղադրված, դրանք գալիս են դեռ խորհրդային միության տարիներից, հիմնականում ճամփեզերերին, գերեզմանների մոտ, այսինքն՝ բնակավայրերին շատ մոտ են, իսկ քամու ժամանակ ամբողջ աղբը լցվում է բնակավայր:

Կենտրոնացված **աղբավայրի** վերափոխումն է ամենակարևոր խնդիրը:

Հիմա հնարավորություն է ստեղծվել **աղբավայրի** փոփոխության հարցը բարձրացնելու համար:

Շատ կարևոր է որպեսզի **վերամշակման** գործարան լինի: Այդ գործարանի շնորհիվ աղբահանությունը շատ լավ կիրականացվի, քանի որ դրանից գումար կգոյանա:

Աղբը պետք է ոչ թե այրել, այլ տանել ու **վերամշակել**:

Աղբի **վերամշակման** գործարաններ պետք է ստեղծվեն ու դրա մասնաճյուղերը լինեն գյուղերում: Գործարանների բացումը կօգնի նաև աշխատատեղերի ստեղծմանը:

Աղբահանության լավագույն լուծումը կլինի աղբը **վերամշակող** գործարանի ստեղծումը:

Աղբի **վերամշակման** դեպքում գուցե ավել գումա՞ր ստանանք:

Տարբերակված աղբահանության իմաստն էլ է անհասկանալի, Հայաստանում աղբի **վերամշակման** ոչ մի գործարան չկա:

Տվյալ ոլորտի զարգացման միակ շարժիչը կարող է հանդիսանալ աղբի **վերամշակման** գործարանը Հայաստանում: Դա կապահովի լրացուցիչ եկամուտ, որն էլ իր հերթին կուղղվի աղբահանության պրոցեսի կամզակերպմանն ու առաջխախացմանը:

Մարդիկ ամբողջ աշխարհում միլիոններ են աշխատում աղբի **վերամշակումից**, չենք հասկանում ինչու դա Հայաստանում չի կազմակերպվում:

Ինչքան էլ մենք աղբարկղ դնենք, ու տրանսպորտի քանակը ավելացնել, միևնույն է անհրաժեշտ է որ **վերամշակման** գործարաններ դրվեն:

Պետությունը միլիոնների ու միլիարդների ծախս է անում աղբահանության կազմակերպման համար: Անհրաժեշտ է որ պետությունը այդ միլիարդները մի տեղ հավաքի ու սուբսիդավորի աղբ **վերամշակող** կազմակերպություն հիմնողին:

Եթե խելացի մարդ լինի աղբի **վերամշակում** կհիմնի, աղբահանությունն էլ կիրականացնի:

Պետք է անպայման լինի գործարաններ, որոնք իրականացնի **աղբամշակում**:

Տնից դուրս եկած աղբն ուրիշ է, բայց ունենք նաև **գյուղատնտեսական** ու **շինարարական** աղբ: Պետք է տարանջատել խնդիրները:

Մարդ տեղ չունի, որ **շինարարական** աղբը թափի: Փոս ենք գտնում, աղբը լցնում մեջը:

Խնդիր է նաև այն, որ **շինարարական** աղբն է խառնվում կենցաղայինին. պետք է դա տարբերակվի:

Եթե մի տոպրակ **շինարարական** աղբ ես ունենում, ի՞նչ պիտի անես: Ոչ կարող ես աղբամանը գցես, ոչ էլ՝ մեքենա կանչես, որ տանի:

Արևիկ գյուղ մտնող ճանապարհի մոտ փոս են փորել և գյուղի ամբողջ աղբը լցնում են այնտեղ:

Բիոդիզելի համար լիքը նյութ ունենք: Խոսում էին, որ ուզում են դա առնեն: Թող գան, մենք ձրի կտանք:

Մենք տարբեր աղբամանների մեջ էինք լցնում, տեսնում էինք՝ վերջում մեքենան գալիս խառնում է իրար, էլ ինչի առանձնացնենք:

Ամռան ամիսներին ընտանի կենդանիներին տանում են սար, հետևաբար սննդային մնացորդները թափվում են աղբամանների մեջ:

Գոմաղբը վառելիք է, ոչ-ոք չի թափում:

Գոմաղբը հիմնականում հողամասում է օգտագործվում: Քանի որ մենք անտառներ ունենք, աթար սարքելու կարիք չկա: Եթե տանը գազ կա, փետով ճաշ կեփե՞ք:

Դիլիջանի ծայրամասային շենքերի մոտ գոմեր կան, որտեղ մարդիկ անասուն են պահում: **Գոմաղբը** երբեմն աղբամաններ են լցնում:

Լիքը մարդ գիշերը գոմաղբը հանում, լցնում է մայթին: Թող էդ մարդկանց տուգանեն, էդ հավելյալ գումարն էլ ամբողջությամբ ուղղեն աղբահանությանը:

Գյուղացու աղբն այն է, ինչ որ կենդանին չի ուտում ու չի վառվում:

Աղբահավաքման բովանդակությունը շատ կարևոր է հասկանալ: Որովհետև ներկայիս վիճակը կարելի է ահագին թեթևացնել, եթե թեկուզ տարբերակված աղբահանության միջոցով աղբի գոնե մի բաղադրիչի հարցը լուծվի:

Աղբամանների տարանջատումը անօգուտ է, քանի որ միևնույն է աղբահանություն իրականացնողը բոլորը խառնում է իրար և տանում թափում:

Գյուղում աղբագոյացությունն ավելի քիչ է: Գյուղացին հիմնականում բնամթերքից գոյացած աղբը չի թափում, այլ կերպ է օգտագործում:

Անասնապահությամբ զբաղվող գյուղացին գրեթե աղբ չի ունենում. ինքը հնարավոր ամեն ինչ իրացնում է:

Մեր համայնքներում մի նորմալ աղբարկղ չկա, էլ ուր մնաց տարբերակված աղբարկղ:

Կենտրոնացված և տարբերակված աղբահանությունն ավելի լավ կլինի:

Կենցաղային աղբն այսօր թե՛ գյուղում, թե՛ քաղաքում գրեթե նույնացվել է, ուստի աղբահանությունը երկու բնակավայրում էլ պիտի նույն կերպ կատարվի: Գոնե կենցաղային աղբի դեպքում:

4. Սոցիալական երկխոսություն

Ա. ՏԵՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա.1. ԽՈՇՈՐԱՑՈՒՄ

Խոշորացումից հետո Ղազանչին ստացել է նոր աղբատար մեքենա, Բավրայում նոր աղբարկղեր են տեղադրվել:

Բավրան խոշորացումից միայն շահել է աղբահանության մասով: Աշոցքում էլ աղբահավաք մեքենա ենք ստացել, որը մաքսատան համար է աշխատում, մենք էլ իմիջիայլոց օգտվում ենք:

Մինչև համայնքների խոշորացումը բոլոր բնակավայրերի ավագանիները եղել են համայնքապետերի գրպանի ավագանի ու երբեք շահագրգռված չեն եղել աղբահանության համար իրական գումարներ տրամադրել բյուջեից: Թղթի վրա, իհարկե, միլիոններ են ծախսել: Հիմա ավագանին իրոք շահագրգռված է այս հարցը լուծելու:

Խոշորացումից հետո շատ բան է փոխվել: Սարչապետում առաջ չկար աղբահանություն, ձորն էին գցում աղբը:

Խոշորացումից հետո աղբամաններ դրեցին, մեքենա բերեցին: Բայց քաղաքացին էլ պիտի պահանջատեր լինի, հասկանա իր կարիքները:

Խոշորացման դրական հետևանք ունենք աղբահանության մասով, մարդիկ ուշադիր հետևում են, աղբահանությունը կազմակերպում են: Այս հարցում շահել ենք:

Ոչ մի գյուղ մինչև համայնքի խոշորացում չէր կարող իր բյուջեի հաշվին աղբի մեքենա գնել: Խոշորացումը մեզ օգնեց:

Երբ խոշորացված չէինք աղբահանություն չկար, խոշորացումից հետո աղբամաններ էլ հայտնվեցին: Դա մեզ գոհացնում է:

Աղավնավանքում ինչ-որ ծրագրով աղբամաններ են տրամադրել, որոնք լրիվ բավարարում է գյուղի կարիքներին: Անձի համար հիսուն դրամ ենք վճարում: Խոշորացումից հետո աղբահանության համար Դիլիջանից են գալիս:

Նախկինում ամեն մարդ ինքն էր որոշում աղբի հարցը ոնց լուծել. խոշորացումից հետո իհարկե իրավիճակ փոխվեց, բայց դե աղբամանները հեռու են ու մշակույթ էլ չկա:

Խոշորացումը Դիլիջան համայնքին մեծ օգուտ տվեց, միջազգային դոնորները նվիրեցին մեքենաներ ու աղբարկղեր, ու շատ լավ կազմակերպվում է աղբահանություն:

Բայց խոշորացումը իրա հետ բերեց այլ բացասական բաներ, աղբահանությունը լուծվեց, բայց մյուս հարցերը մնում են չլուծված:

Ծառայությունը քիչ թե շատ լավ է: Թող բյուջեից գումար հատկացնեն և բարելավեն ծայրամասերի

Մինչև խոշորացումը աղբահանության հետ լրիվ նույն վիճակն էր, ոչինչ չի փոխվել:

Համայնքները խոշորացան, բայց... Այրել ենք, այրում ենք ու այրելու ենք:

Եթե խոշորացված համայնքներ չլինեին, ամեն գյուղ իր աղբի հարցը կլուծեր:

Խոշորացումից հետո միակ տարբերությունն այն է, որ կենտրոնում աղբահանությունն ավելի լավ է իրականացվում, իսկ մնացած բնակավայրերում նույն իրավիճակն է:

Ստեփանավանի խոշորացած համայնքի Որրասար և Կաթնաղբյուր բնակավայրերում աղբը հիմնականում այրում են կամ լցնում ջրատարը:

Սխալ է խոշորացումը մեր համայնքների համար: Մի համայնքի ղեկավարը չարչարվում է իր համայնքի համար, միանում մյուսին, որը ոչ մի բան էլ չի անում:

Խոշորացման արդյունքում համայնքները սկսեցին տուժել. հիմա ոչ թե ավելի շատ գումար է հավաքվում, այլ ավելի շատ ծախսվում է: Դա ազդում է նաև աղբահանության վրա:

Խոշորացումը Բարեկամավանի վրա ոչ մի ազդեցություն չունեցավ, այդ թվում նաև աղբահանության ոլորտում:

Շատ կցանկանայի, որ Կամո գյուղին ավելի շատ ուշադրություն դարձվեր: Աղբահանության ոլորտում ընդհանրապես ոչինչ չի արվում մեզ մոտ:

Բյուջեն ընդհանուր է հավաքվում, ո՞վ է որոշել, որ դա պետք է կենտրոնացված լինի Աշոցքում ու Ախուրյանում:

Համայնքի բյուջեից աղբահանության համար հատկացումների դեպքում Թումանյանի փոքր գյուղերում, ըստ իրենց չափի, հատկացումների դեպքում հարց լուծել հնարավոր չէ, քանի որ գումարը շատ քիչ է ստացվում: Նորից կշահի համայնքի կենտրոնը:

Ուշադրություն դարձնում են միայն համայնքի կենտրոնին, իսկ գյուղերում նույնիսկ աղբարկղեր չկան:

Ամենալավ տարբերակը համայնքներն իրար չմիացնելն էր: Էդ ժամանակ ամեն գյուղ իր համար էս հարցը կլուծեր:

Նոյեմբերյանի սահմանամերձ Բարեկամավան բնակավայրում ընդհանրապես աղբահանություն չի իրականացվում:

Գյուղական համայնքներում չկան հնարավորություն, որ աղբը հավաքեն տանեն մի

աղբահանությունը: Այդքան էլ շատ բան չկա անելու հիմա:

Մոտակա տաս օր-մի ամսից նոր մեքենաներ ենք ստանալու, հենց էդ մեքենաները գան, դրանց մի մասը կուղղվի նաև գյուղական համայնքների աղբահանության կազմակերպմանը:

Ես Աշոցք բնակավայրից եմ ու շատ գոհ եմ աղբահանության վիճակից:

Նախկինում մաքսատունը (Բավրա) ամենավատն էր աղբի տեսանկյունից, հիմա այդ խնդիրը կարծես թե կարգավորվել է:

Ստեփանավան քաղաքում աղբահավաքությունը շատ լավ է իրականացվում:

Խոշորացման հետևանքով երևացող տարբերությունները ավելի շատ ոչ թե հենց խոշորացման հետևանք է, այլ անձի: Ստեփանավանի քաղաքապետը շատ լավ է հետևում և կազմակերպում աղբահանության պրոցեսը:

Նոյեմբերյանի խոշորացումից հետո աղբահանության կարիքների բավարարման համար կանխատեսումներ ենք արել, բայց հիմա պիտի վերլուծենք պրակտիկան, հասկանանք, թե խոշորացումից հետո կարիքներն ինչպես են փոխվել՝ հաշվի առնելով բնակավայրի առանձնահատկությունները՝ ռելիեֆը, աղբի գոյացումը և այլն:

Եթե խոշորացված համայնք է, բոլոր մաս հանդիսացող համայնքներն էլ ներդրում ունեն ու պետք է բոլորն էլ հավասարապես օգտվեն:

Խոշորացված համայնքներում պետք է կենտրոնացում չլինի ու ողջ բյուջեն հավասարաչափ բաշխվի:

Եթե բյուջեն միասին են հավաքում, ուրեմն աղբահանության բոլոր ծառայությունները նույնպես պետք է միանման լինեն:

Բյուջեն ընդհանուր է հավաքվում, ո՞վ է որոշել, որ դա պետք է կենտրոնացված լինի Աշոցքում ու Ախուրյանում:

Ներկայում քննարկվում է խոշորացված համայնքում բոլոր բնակավայրերում նույն համակարգը ներդնելու հարցը: Պետք է հասկանալ, թե ինչպիսի ընդհանուր համակարգ է ներդրվելու, հետո նոր անդրադառնալ յուրահատուկ կարիքների:

Խոշորացման տրամաբանությունը այն պիտի լիներ, որ խոշորացումից ավելի պիտի օգտվեին փոքր բնակավայրերը, քան մեծերը: Ճիշտ է, Բարեկամավան, մեկ մեկ սկսել է մեքենա գալ, բայց որ մարդ չկա համայնքում բնակվող, ինչպե՞ս պիտի կյանքներս կլավանա:

Թող աղբահանության ծրագիրը ինչպես քաղաքներում են կազմակերպում, նույն ձև իրականացնեն նաև գյուղերում:

Պետք է բողոքներին չնայել՝ աղբամանները տեղ կենտրոնացնեն:

Արևիկ համայնքում աղբարկղ չկա, մենք այն բերում-թափում ենք Գյումրիում:

Մեր գյուղում ամեն օր վիճում են, թե ինչու Աշոցքում կա աղբահանություն, իսկ մեր գյուղում չկա:

Եթե մայրաքաղաքում էդ բանը կազմակերպված չէ, գյուղում ինչխ բդի կազմակերպվի:

Խոշորացումից համայնքներ կան, որ օգտվել են, համայնքներ կան, որ ընդամենը ծխախոտ նետելու ամաններ են տրամադրել:

Զուջևան համայնքում խոշորացումից հետո փողոցի վրա նոր աղբամաններ են դրել: Դրանք համայնքից հեռու են ու շաբաթը մեկ աղբի մեքենա է գալիս:

Զուջևանի անունը պիտի լինի Աղբևան: Ինչպես բոլոր հարցերում, էստեղ էլ կենտրոններում աշխատանքներ տարվում է, իսկ հեռավոր գյուղերին ուշադրություն չեն դարձնում:

Բոլոր դեպքերում սահմանամերձ գյուղերը միշտ առանձնահատուկ պայմաններով են, անգամ աղբահանության դեպքում:

էդ համայնքները միավորողը տեսել ա ինչ ա անում: Կաթնաղբյուրն ու Ուրասարը Ստեփանավանին ո՞նց են միանում:

Խոշորացումը շատ վատ է, որովհետև մենք չենք կարողանում տնօրինել մեր գյուղի բյուջեն:

դրվեն կենտրոնական փողոցներում:

Խոշորացված համայնքներում պետք է աղբատարությունը լինի ամեն օր, իսկ համայնքներում պետք է լինի շաբաթը երկու անգամ, բայց հստակ ժամերի և գրաֆիկով:

Մեծ համայնքները կարող են օգնել փոքր համայնքներին և բնակիչների հետ համատեղ կազմակերպեն աղբահանությունը:

Պետք է ոչ թե խոշորացում լինի, այլ ամեն գյուղ ունենա իր աղբահանման համակարգը:

Ա.2. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետք է **վերահսկում** լինի սկսած աղբի հավաքումից, մինչև բյուջեի ծախսում:

Ծառայության որակի վերահսկողություն պետք է սահմանել: Համայնքի կողմից հատուկ խումբ պետք է ստեղծել, որը պետք է վերահսկի, թե ինչպես է իրականացվում աղբահանությունը:

Աղբահանության ցանկացած տարբերակ, որի նկատմամբ բնակիչները վերահսկողություն կունենան, նախընտրելի է:

Ծառայություն մատուցողների հաշվետվողականության աստիճանը պիտի բարձրացվի, վերահսկողություն է պետք սահմանել: Սակայն ինչպե՞ս պիտի էդ վերահսկողությունն իրականացնել: Սա մեծ խնդիր է:

Քաղաքը բոլորի աչքի առջև է, վերահսկողությունն էլ ավելի շատ է, նորմալ աշխատում են, գյուղերի մասին մարդ չգիտի:

Աղբահանության որակի վերահսկման և մոնիթորինգի խնդիր էլ կա, որի վրա գումար չի ծախսվում:

Շուրջ երեք հեկտարի վրա աղբավայր է հիմնվել, որը ոչ մի կերպ չի կառավարվում ու վերահսկվում, իսկ առաջիկա տարվա բյուջեում գումար չկա: Խնդիր է դառնում: Առաջարկում ենք ցանկապատել, մի մարդ նշանակվի որ հետևի, որ չայրեն աղբը, պետք եղած դեպքում իրականացնի շրջապատի մաքրում

Ես հարկ եմ տալիս, բայց ինձ չեն ասում, թե ինչի վրա է ծախսվում գումարը: Տարիքով մեծ մարդը չի կարող ինտերնետով տեսնել բյուջեն: Պիտի հանդիպեն, տեղյակ պահեն:

Բացարձակ հավատ չկա, որ մենք դառնանք բյուջետային կառավարման մասնակից:

Վստահության խնդիր կա. էսօր էլ մեքենայի վրա բան է փչանում, բնակչից են փող վերցնում: Վաղը նոր մեքենայի սպասարկումն էլ ենք մենք անելո՞ւ:

Մենք վստահ չենք, որ նախատեսվող գումարները արդյունավետ են օգտագործվում:

Հիմա վերահսկողությունը շատ լավ է: Համայնքի ղեկավարությունը բավականին դրական տեղաշարժ է ապահովել ոլորտում՝ գրագետ վերահսկելով:

Ստեփանավանում մի անգամ ԶԼՄ-ներին կարողացել ենք լավ ներգրավել աղբահանության վերահսկողություն իրականացնելու համար: Կարելի է կրկնել:

Ճիշտ վերահսկողական մեխանիզմի միջոցով է միայն հնարավոր ամբողջ շղթային անխափան գործունեությունն ապահովել:

Նվեր տրված մեքենան մտնում է համայնքի բալանսի մեջ, և ավագանին ավտոմատ ստիպված պետք է իրականացնի վերահսկողությունը:

Աղբամանները վերացան այն ժամանակ, երբ աղբատար մեքենաներ հայտնվեցին: Չհասկացանք՝ ինչու: Պետք է աղբահանության վրա ծախսվող գումարների թափանցիկություն լինի: Հաճախ է լինում, որ աղբահանության համար հավելյալ գումարներ են պահանջում, այդտեղ կոռուպցիոն ռիսկեր կան: Ոչ մեկս էլ չգիտի, թե ոնց է տնօրինվում համայնքային բյուջեն, եսիմ ո՞նց են ծախսում: Պետք է հասկանալ, որ կուռուպցոն ռիսկեր կան: Եթե ես գյուղում տեսա աղբ թափողին, ես նրան չեմ տա «գելի բերան», ես իրան կարող եմ դիտողություն անել, բայց վստահ էլ չեմ, որ դա որևէ արդյունք կտա: Եթե համայնքի բյուջեն նպատակային ծախսվի, ապա հնարավոր է էս հարցը լուծել: Ճիշտ օգտագործման դեպքում հավաքված գումարը կհերիքի աղբահանությանը: Պարզապես տարիներ շարունակ այդ գումարները այլ՝ անձնական հարցերը լուծելու համար են ծախսվում: Կարծում ենք գումար շատ կա, պետք է ճիշտ ծախսել ուղղակի	
Աղբահանության ծառայությունը պետք է իրականացվի ոչ թե համայնքապետարանի կողմից այլ երրորդ կառույցի կողմից, քանի որ համայնքապետարանը ինքն իրեն չի կարող վերահսկել: Եղած մրցույթներին, որ արվում են աղբահանության ոլորտում, միշտ մի կազմակերպություն է մասնակցում: Բայց իրականում այլ ցանկացողներ էլ չկան: Աղբահավաքման կազմակերպությունների համար ֆինանսապես այդքան էլ շահավետ չի, որ այլ ընկերություններ էլ մասնակցեն մրցույթներին: Հետո, մյուսները տեխնիկա էլ չունեն, իսկ ներկա կազմակերպությունը գոնե էդ տեխնիկան արդեն ունի: Կարող է նորմալ բիզնես ծրագիր լինել, ծառայություն առաջարկել մարդկանց:	Աղբահանություն իրականացնող - բնակիչ կապը շատ թույլ է, էս երկուսի մեջ փոխհամագործակցության եզրեր է պետք գտնել: Եթե համայնքն իրականացնի աղբահանությունը, մենք ավելի պահանջատեր կլինենք: Համայնքն ավելի լավ գիտի, թե որոնք են աղբահանության խնդիրները, ուստի ավելի լավ կկազմակերպեն աղբահանությունը: Ծառայություն մատուցողն էլ հաճույքով չի իրականացնում իր գործառույթը, շատ անտարբեր են, աշխատողները վերցնում են միայն մեծ աղբերը, դրա համար ոչինչ չի փոխվում աղբահանության ճակատում: Համատիրությունների առկայությունը չարդարացրեց իրեն, քանի որ բնակիչները փող չտվեցին:
Այս քննարկումներին պետք է հրավիրել նաև յուրաքանչյուր համայնքի ղեկավարին: Եթե փոսն է լուծումը, արդեն լրիվ հարցը կայանում է վարչական ղեկավարի կարողություններում: Մեկը կարողանում է կազմակերպել և հետևել, մյուսը՝ ոչ: Վարչական ղեկավարները ինչի համար են գումար ստանում, պետք է ուսումնասիրեն հասկանան՝ որտեղ ինչ տեսակ է պետք հարցը լուծել. թե չէ միայն ղեկավար լինելով խոմ չի: Աշոցք համայնքի ղեկավարը եկավ Կրասարի աղբավայրերը փակեց, դրա շնորհիվ համայնքը մաքրվեց, տհաճ հոտը կորավ:	Բնակչությունը պետք է պահանջի համայնքի ղեկավարներից իրենց պարտականությունները կատարել: Կարելի է մշակել պայմանագրի ձև, ներկայացնել թեկնածուներին, որպեսզի ցույց տանք հետագայում թե ինչի տակ է ստորագրել և պահանջենք իրականացնել: Կամավորությունը, կամ համայնքի համար մեզ ազդեցություն ունեցող մարդկանց խոսքը շատ կարևոր կլինի, աղբահանությունը ճիշտ կազմակերպելու համար:

Աղբահանության գումարը բարձրացնելու համար համայնքի ղեկավարն առաջին հերթին պետք է հարցնի բնակիչներին:

Դպրոցի միջոցառման ժամանակ համայնքի ղեկավարն իր ավտոյով գալիս է ու տանում աղբը:

Համայնքի ղեկավար ընտրելուց պետք է ճիշտ ղեկավար ընտրվի ու ճիշտ ավագանի ընտրվի, ում միջոցով բոլոր խնդիրները բարձրացվի:

Դիլիջան համայնքի ղեկավարը տեսախցիկով հետևում է թե որտեղ են գտնվում մեքենաները, այդպիսով բավականին արդյունավետ հսկողություն է իրականացվում:

Կախված է համայնքի ղեկավարից՝ նվեր տրված իրերը ըստ անհրաժեշտության օգտագործվեն:

Բնակիչները, համայնքի ղեկավարները պետք է հասկանալ որ բնապահպանական հարցերն ամենակարևորն են:

Ես համայնքի ղեկավար եմ, բայց չգիտեմ՝ ուր գցեմ իմ տան աղբը:

Համայնքապետերը պետք է գան կանգնեն գյուղացիների մոտ ու միասին որոշեն, թե որն է ամենաճիշտ ճանապարհը աղբահանությունը իրականացնելու համար:

Աշոքում ավագանին բավականին ակտիվ մասնակցում է համայնքի կյանքին:

Այն, որ աղբը քո դռան դեմից չեն տանում, ուղղակի կախված է ավագանու ու համայնքապետի ընտրությունների ժամանակ խղճով ու ճիշտ ընտրություն կատարելուց: Այն որ այսքան խնդիր է կուտակվել այս բնագավառում հենց արդյունքն է այն բանի, որ ժամանակին ընտրել ենք հարևանին ու բարեկամին:

Ստեփանավանի քաղաքապետի՝ տևական ժամանակ հետևողական աշխատանքի արդյունքում քաղաքում աղբահանության հարցն ահագին լավ կազմակերպված է:

Ամեն ինչ պայմանավորված է կազմակերպչի տրամադրվածությունից, եթե ցանկություն լինի, կարող են կազմակերպել:

Ընտրություններից բացի բնակիչներն ավագանու հետ չեն շփվում:

Աղբահանության խնդիրը ներքին ռեսուրսներով կազմակերպելու դեպքում հարցը շատ հեշտ կլուծվի: Մի հատ կազմակերպիչ է պետք ընդամենը:

Համայնքապետի սրտացավ լինելու դեպքում ամեն խնդիր էլ հնարավոր է լուծել ու ոչինչ էլ չի խանգարի:

Համայնքի ղեկավարը կարող է բնակիչներին տեղյակ պահել, որ մեքենա կա, բայց շահագործման գումարը չկա, կսահմանվի գումար մեքենայի պահպանման և վառելիքի համար:

Ստեփանավանը Հայաստանի ամենամաքուր քաղաքներից է, բայց դա հիմնականում համայնքային իշխանությունների շնորհքն է: Ավագանին պետք է նորմալ վարձատրվի, որ կարողանա նաև անկողմնակալ լինել: Բոլոր ոլորտներում ավագանիներում հանձնաժողովներ կան, թող լինի նաև աղբահանության հանձնաժողով... Պետք է համակարգ լինի, եթե կոմունալ ծառայությունները լավ չլինեն, դատի տան: Մարդիկ իմանան իրենց իրավունքները և պարտականությունները:	
Բարերարը մեր հարցերը չի լուծի, դա անհավանական է: Ճիշտը համայնքի կենտրոնացված միջոցներով աղբատար մեքենաներ ու աղբամաններ ձեռք բերելն է, աշխատացնելը: Բնակիչների ու համայնքի ընդհանուր ֆինանսական մասնակցությամբ հնարավոր է այս հարցը լուծել: Նվիրատուն պետք է երաշխիք ուզի, որ տրված մեքենան ըստ անհարժեշտության պետք է գործի: Օրինակ ԵՄ-ի կողմից Դիլիջան համայնքը մեքենաներ են ստացել, բայց պայմաններից մեկն այն է, որ նվիրատուն հստակ երաշխիքներ է պահանջում, պարբերաբար հետևում է: Ստեփանավանին նվիրեցին նոր աղբատար մեքենա, բայց մենք դա չենք տեսել: Ստեփանավանի աղբանները Ֆրանսիայից ենք նվեր ստացել, ու ներկայում իրավիճակը անհամեմատ լավ է: Քաղաքապետն էլ հետևում է:	Մենք կարող ենք ինքնուրույն էլ աշխատացնել, առանց նվերների. էլ չասեմ, որ նվեր ստանանք, ավելի լավ: Մենք ունենք մեքենաներ, բայց գարաժում կանգնած է, չեն հասկանում՝ ինչպես ծախսերը կազմակերպել, որ աշխատի:
Պետք է փորձարկումներ լինեն, պիլոտային ծրագրեր, որ լավագույն տարբերակները գտնենք: Պետք է միջազգային փորձը ուսումնասիրել: Պետք է փորձել արտասահմանյան փորձն ուսումնասիրել, նոր հեծանիվ չենք կարողանալու հորինել: Էսքան խոսում ենք, սրա օգուտը ո՞րն է մի ընդհանուր հայտարարի գալ: Անհրաժեշտ է այլ երկրների օրինակները ուսումնասիրել: Հասկանալ, թե ինչպես են իրենք կազմակերպում աղբահանությունը համայնքներում, ոչ մեծ քաղաքներում: Պիլոտային ծրագրեր են իրականացվում մեր մոտ, որ ճիշտ տարբերակներ գտնենք:	Ամեն հաջորդ տարվա համար պետք է նախորդ տարվա գնահատում տեղի ունենալ, օրինակ եթե տեսնում ենք որ մի տարածքում մի աղբամանը քիչ է, կողը դնում ենք երկրորդը: Պետք է աղբահանության խնդիրները այնպես լուծել, որ հաջորդ տարի նոր խնդիրներ չառաջանան: Ամեն բնակավայր իր առանձնահատկությունն ունի, ցանկալի է նախ քննարկեն, և բնակիչները իրենք լուծումներ առաջարկեն: Եթե նորմալ աղբահանություն ենք ուզում, պետք է ամեն բնակավայրում հավաքվենք, քննարկենք, թե տվյալ բնակավայրում ինչպես է ավելի նպատակահարմար իրականացնել աղբահանությունը: Հիմա նստած քննարկում ենք, չէ, կարելի է չէ բոլոր հարցերը այսպես նորմալ քննարկել լուծումներ գտնել: Բարեկամավանը շուրջ 170 հոգի են բնակվում, հիմա խոսում ենք ուրիշ երկրների օրինակի մասին: Բա այս համայնքի բնակչությունն ի՞նչքան գումար դնի, որ աղբարկղ ապահովի, մեքենա: Ավելի լավ կլինի մենք շարունակենք վառել:

Մի քանի օր առաջ մեքենայից մի կին իջավ, շուրջը նայեց, որ տեսնի մարդ կա, թե չէ, ու մի մեծ տոպրակով աղբ գցեց փոսը: Ես ու՞ր գնամ, ու՞մ բողոքեմ:

Բազմաբնակարան շենքերում աղբահանության ծառայության մատուցման թերությունների դեպքում մեկ էլ հայտնաբերում ենք, որ ոչ ոք պատասխանատու չէ. համատիրության գործը չի, թաղապետարանի գործը չի, ո՞ւմ գործն է:

Եթե մեր բողոքները ավելի բարձր ատյանների հասնեն, գուցե հարցերը լուծվեն: Մեր մասին չգիտեն:

Ու՞մ կրնաս բողոքես: Ինչխ բդի բողոքենք, օր: Համակերպվել ենք արդեն, որ աղբի խնդիրն ամենավերջինն է:

Մեր երկրում կառավարման խնդիր կա, աղբահանությունը դրա արտահայտումն է:

Առաջարկները պետք է լինեն այնպիսին, որ հնարավոր լինի իրականացնել:

Պետք է ինչ-որ կողմից սկսել ու հերթով խնդիրները լուծել, ոչ թե բոլորը միանգամից:

Սրանք այնպիսի հիմնավոր խնդիրներ են, որ կարճ ժամկետներում հնարավոր չէ լուծել: Հակառակը՝ ժամանակ է պետք:

Մեր մարզադպրոցն ամենափոքր ֆինանսավորում ստացող մարզադպրոցն է, բայց աշխարհի չեմպիոն ենք տալիս: Կարևորը աշխատելու ցանկությունն է:

Պետք է սա ներդնել այն վայրերում, որտեղ նման պահանջարկ կա, պետք է պահանջարկը ուսումնասիրել:

Քաղաքներում հիմնականում մաքրվում են հիմնական փողոցները, ծայրամասերից անընդհատ բողոքներ են գալիս, որ տարեցտարի վիճակը չի փոխվում: Աղբամանների ավելացման հստակ պահանջ կա: Հաշվի չի առնվում սեզոնայնությունը, հետևաբար աղբահանման ժամանակացույցի պլանավորման ու հանրայնացման խնդիր կա:

Աղբարկղի համար պետք է ունենալ հետևողականություն և ֆինանս:

Զույգաղբյուր գյուղի բնակիչները պետք է դիմեն գյուղապետին, իսկ նա էլ արդեն մարզպետարան:

Մարդիկ ակտիվ չեն աղբահանությունը բարելավելու հարցերում:

Գյուղացիները իրենք կարող են ինքնակազմակերպվել:

Մարդիկ պետք է հասկանան, որ եթե իրենք հավաքվեն իրենց պահանջները ներկայացնեն որևէ արդյունքի կհասնեն, հիմա իրավիճակի է փոխվել:

Ա.3. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼ

Եթե աշխատավարձ նորմալ տան, շատ մարդիկ չեն ամաչի կգնան կաշխատեն:

Աղբահանության ոլորտում զբաղվող աշխատակիցները քիչ են ու պետք է աշխատատեղեր ավելացնեն որպեսզի արդյունքը ավելի տեսանելի լինի:

Եթե աղբահանություն կազմակերպող կազմակերպությունը շահագրգռված լինեն միայն այդ դեպքում արտաժամյա կաշխատեն:

Դժվար է ասել, արդյոք մարդիկ կգնան աղբահավաքության մեջ աշխատելու:

Մարդիկ միայն 55000 դրամ աշխատավարձ են ստանում, միայն աղբամանները մաքրելու համար, ոչ թե փողոցը մաքրելու, բայց աշխատավարձը քիչ է:

Պետք է ժողովրդի միջից վերացնել կարծարտիպը, թե աղբահանության համակարգում աշխատելը ամոթ է:

Գյուղում մարդիկ կան, ովքեր գործազուրկ են: Համայնքապետարանը կարող է այս ընտանիքներին ներգրավել աղբահանության ծառայությունը մատուցելու գործում:

Բ. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ (ՖԻԶԻԿԱԿԱՆ). ԼԱՆԴՇԱՖՏԻ ԿՏՐՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Ձմռանը աղբահանությունը ընդհանրապես վատթարանում է, ճանապարհները անանցանելի են դառնում: Նույնիսկ մեքենայի առկայության դեպքում խնդիր կլինի:

Ձմռանը ճանապարհների փակ լինելու պատճառով շատ համայնքներում աղբահանության իրականացումը դառնում է անհնար:

Հասկացեք, ձմռանը ճանապարհները գրեթե անանցանելի են, Աշոցքում ենք, չէ՞: Աղբահավաքության հարցում սա կարևոր է:

Հատկապես ձմռանը վայրեր կան, որտեղ մեքենաներ չեն կարող հասնել:

Բացի ձմեռները, բնակավայրեր կան, որ փողոցները այնքան նեղ են, որ հատուկ տեխնիկա է պետք:

Մեր գյուղում նույն ձևով չի կարող աղբատարություն իրականացվել, քանի որ ճանապարհային խնդիրներ կան:

Աթանում ճանապարհ չկա, որ աղբահավաք մեքենա գա:

Համայնքների խոշորացումը լավ ազդեցություն է ունեցել աղբահանության ոլորտի վրա: Գյուղերը նույնպես սպասարկվում են հիմա: Բայց խնդիրը այն է, որ աղբատար մեքենան բավականին ուշ է գալիս, կամ մինչև չես զանգում, չի գալիս: Դա էլ բացատրություն ունի, ու դա այն է, որ ճանապարհները լավը չեն ու մեքենան հաճախ չի կարող մոտենալ:

Մարց գյուղում աղբամաններն իրարից հեռու են գտնվում, կան ոչ բարեկարգ ճանապարհներ, արդյունքում եղած աղբամաններն էլ հասանելի չեն բնակչությանը: Հետևաբար աղբը նետում են որտեղ պատահի:

Շատ դեպքերում աղբահանության հարցերը չեն լուծվում, որովհետև ճանապարհների հարց կա. ամեն մեքենա չի հասնում:

Ճանապարհների որակը ուղիղ ու մեծ ազդեցություն ունի աղբահանության վրա,

Մենք մեղավոր ենք, որ ճանապարհներ չկան կամ հեռու ենք, ուրեմն պետք է աղբի մեջ ապրե՞նք:

Ամբողջ աշխարհում ինչու չկա՞ն վատ կամ դժվարանցանելի ճանապարհներ, թող համապատասխան մեքենաներ բերեն:

Պետք է ոչ թե ասել՝ վատ ճանապարհներ են, մեքենաներ չեն գալիս, այլ նորոգեն ճանապարհները:

մանավանդ փոքր ու հեռավոր գյուղերի դեպքում: Ճանապարհները բարելավել է պետք:

Ստեփանավանում ծայրամասերի ճանապարհները թեև շատ լավը չեն, բայց շրջիկ մեքենայի համար այդտեղով անցնելը խնդիր չի: Ուղղակի մեքենաների թվի խնդիր է:

Եթե լավ ճանապարհ չունենք, ինչքան ուզում ենք աղբահանության վրա ծախսեր անենք, դրանց արդյունավետությունը բարձր չի լինելու: Առաջնահերթությունների խնդիր ունենք:

Ստեփանավան խոշորացված համայնքում Կաթնաղբյուր գյուղի ճանապարհը շատ վատն է 16 կմ ճանապարհը անցնում է 40 րոպեում, դրա համար, առաջի հերթին պետք է ճանապարհները վերանորոգել:

Երբ խոսում ենք նոր տեղերում աղբամաններ դնելու մասին, պետք է հիշենք, որ կենտրոնականից դուրս փողոցները մեծամասամբ անանցանելի են՝ ճանապարհների իմաստով:

Որտեղ մարդիկ դեռ հին ձևով են աղբը հեռացնում, մեքենա չի այցելում ու աղբաման չկա, դրա պատճառը հիմնականում վատ ճանապարհներն են: Ճանապարհներով է պետք առաջին հերթին զբաղվել կամ ամենագնացներ գնել:

Եթե ճանապարհը լավը չլինի, ոչ մի մեքենա էլ չի հասնի մեր գյուղեր:

Մոտակա հինգ տարին եթե ճանապարհների հարցը չլուծվի, մարդիկ գյուղերում քիչ-քիչ կպակասեն, ու այդպիսով աղբահանության հարցը իրան-իրան կլուծվի:

Ավելի լավ է աղբի համար նախատեսված գումարները ծախսեն ճանապարհների վրա, հետո անցնեն աղբահանությանը:

Հանրապետությունում կան շատ լավ ճանապարհներով համայնքներ, որոնք նույնպես աղբահանության խնդիրներ ունեն:

Խաչարձան համայնքում աղբահանությունը սկսել է խոշորացումից հետո, միակ խնդիրը ձմռան ամիսներին ճանապարհների անանցանելիությունն է: Կարելի ա ավելացնել աղբամանների թիվը, որպեսզի աղբը կուտակվի դրանցում, մինչև աղբահանությունը տեղի կունենա:

Աղբավայրի շրջապատում ամբողջ տոպրակներ են, ճանապարհ չկա, կամերաներ պետք է դրվի, որ ով աղբը այլ վայրում թափելիս նկարվի ու պատասխանատվության կանչվի:

Գյուղական համայնքներում ամենագնաց մեքենա է պետք, գործածության մեջ կան ոչ ամենագնաց մեքենաներ, բայց Գոշում մի անգամ ճանապարհների պատճառով մեքենա է շրջվել:

Սահմանամերձ գյուղում յուրահատկություններ կան. այլընտրանքային ճանապարհ սարքելու համար պետք է հաշվի առնել Ադրբեջանի կողմից

գնդակոծությունը, սահմանի մոտիկությունը...

Ռելիեֆի պատճառով Դիլիջանում աղբամանները շրջվում են և աղբը մնում է գետնին

Գյուղի ճանարհները նեղ են ու դրա պատճառով շատ տեղեր աղբատար մեքենան չի կարող հասնել:

Շատ գյուղեր աղբատար մեքենաներ չեն մտնում, էլ ո՞րն է դրանց օգուտը:

Ահնիձոր համայնքում փոքր «քիփլիկ» մեքենա ունեինք աղբահանության համար, հիմա մեծ մեքենա են բերել, ի տարբերություն նախորդի, սա չի կարողանում բոլոր տեղերը նորմալ հասնել:

Մեր առանձին համայնքներին անհրաժեշտ են ամենագնացներ, որ հնարավոր լինի աղբահանությունը կազմակերպել: Համայնք սովորական մեքենան չի բարձրանում:

Ձուջևանում բարձրադիր տեղամասերում աղբը դժվարությամբ է հեռացվում

Մարդիկ կալոշներով քայլում են մինչև կենտրոնական փողոց, հետո հագնում իրենց հիմնական կոշիկները: Ըտեղ ի՞նչ աղբատար կհասնի:

Քաղաքի աղբի մեքենան այլ պիտի լինի, գյուղինը՝ այլ:

Հաղարծինում և Ոսկեպարում ամենագնաց մեքենայի անհրաժեշտություն կա

Բյուջեում ավելի կարևոր ծախսեր կան, քան աղբահանությունը: Օրինակ՝ ճանապարհները: Իսկ աղբահանության մասով ավելի արդյունավետ կլինի մարդկանց գիտակցության բարձրացման ուղղությամբ աշխատելը:

Կիսաքանդ ճանապարհներով, կիսաղքատ, անջուր ու անջեռուցում գյուղում խոսել աղբահանության մասին, ակտուալ չէ:

Հարցի լուծումը շղթայական է. համայնքի բյուջեն չի բավարարելու ամբողջական լուծումներ տալու համար: Ներդրումային ծրագրերի կարիք կա՝ հատկապես ճանապարհների շինարարության համար:

Աղբահանության հարցը տվյալ պահին Ստեփանավանում առաջնային խնդիրը չէ: Ավելի լուրջ խնդիրներ էլ կան, օրինակ՝ ճանապարհները:

Օրինակ, նվեր ենք ստացել կանգառներ, բայց ճանապարհ ու ավտոբուսներ չկան. նույն էլ այստեղ՝ մեքենաներ կան, բայց աղբամաններ ու գիտակցություն չկա:

Ամեն դեպքում ճանապարհներն է պետք սարքել:

Ինչից խոսում ենք, վերադառնում ենք նորմալ ճանապարհների բացակայությանը:

Գ. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՈՐԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

Գ.1. ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՂՈՒՄ, ՇՐՋԻԿ ՄԵՔԵՆԱՆԵՐ, ԱՂԲԱՄԱՆՆԵՐԻՑ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

Շրջիկ մեքենան ավելի լավ է, որովհետև կենդանիների, կուտակումների և այլ տեխնիկական հարցերը կլուծվեն:

Գյուղերում շրջիկ մեքենայի գաղափարը ավելի ճիշտ է: Աղբամանը չի աշխատի այնպես, ինչպես շրջիկ մեքենան: Աղբամանը նաև կարող է լցվել ու երկար ժամանակ մնալ տեղում մեքենայի ուշ գալու պատճառով:

Գյուղերում մարդիկ շատ աղբ են ունենում, ամբողջը լցնում են շրջիկ մեքենայի մեջ, էլ տեղ չի մնում մյուսների աղբի համար:

Ենթադրենք կան կենտրոնացված աղբամաններ: Մինչև գան էդ աղբը տանելու, կենդանիներն էդտեղ բան չեն թողնի: Իսկ շրջիկ մեքենայի դեպքում ամեն մեկը աղբը կպահի իր տանը, մինչև հավաքեն: Ու կենդանիներից էլ կպահի:

Աղբը կարող ենք դնել դրսում կոնկրետ ժամերին, մեքենան գա և հավաքի: Աղբամանները կուտակումների համար վատ են:

Անգամ գյուղի կաթի հավաքման մեքենան գյուղի թաղերով չի պտտվում, կանգնում է կենտրոնում, մարդիկ մոտենում են: Նույնն էլ կարելի է աղբի դեպքում՝ կենտրոնական մի տեղում կանգնի:

Եթե մեքենա եկավ, աղբը չենք վառի:

Մեկ աղբահան մեքենան կարող է հարյուր բահով լցնողի գործ անել:

Բարեկամավանում ամեն տուն ունի իր բնական ճանապարհով ստեղծված աղբամանը, որտեղից մեքենան գալիս տանում է:

Շատ լավ կլիներ նյութատեխնիկական բազան նորացվեր. հիմա որոշ բնակավայրերում մարդը սեփական **մեքենայով** է աղբը հավաքում, բայց լավ կլիներ կարողանայինք վարձակալել:

Աղբամաններն ենք գերադասում շրջիկ մեքենային, բայց այն պայմանով, որ աղբը ժամանակին հեռացնեն:

Եթե ընտրելու լինենք շրջիկ ծառայություն, թե աղբամաններ, իհարկե աղբամանները, շրջիկին

Աղբահանության համար առաջինը տեխնիկա է պետք: Ախուրյանում էլ, Աշոցքում էլ չկան նորմալ քանակի մեքենաներ:

Աղբատար մեքենաները մուտք ունեն միայն կենտրոնական փողոցներ: Պետք է տարբերել դրանք շրջիկ աղբահավաք մեքենաներից:

Տասնմեկ գյուղի համար մի աղբատար մեքենա է աշխատում, էդ ավտոն ի՞նչ անի:

Իրականում Ախուրյանում աղբատար մեքենա չկա, երկու հատ կա, մեկը միշտ փչացած է, մյուսում էլ՝ աղբը ձեռքով են լցնում:

Մեր երկու աղբատար մեքենան չի կարող ամբողջ Ախուրյան համայնքի աղբը հավաքել: Դրա համար էլ նորմալ աղբահան մեքենաներ են պետք:

Մեր գեղի աղբը պռես արած էլ գցեն գը, աղբատար մեքենան էլ պռես չի գրնա էնե:

Գյուղապետարանը մեքենա ունի՞, որ մի հատ էլ հատկացնի աղբահանության համար:

Ոսկեվանում մի մեքենա ունենք առայժմ, որը չի բավարարում, չի հասցնում համայնքից համայնք գնալ, աղբը հավաքել:

Ստեփանավանի ծայրամասերում աղբահանության վիճակն ավելի վատ է: Մի երկու շրջիկ մեքենա է շրջում և դա բավարար չէ:

Շրջիկ աղբի մեքենաներին դեմ եմ, ախր ես որտեղ հավաքեմ աղբը մինչև տանելը: Մեր մոտ գյուղ է՝ շները կցրեն:

Շրջիկ ավտոմեքենաներն անարդյունավետ են, քանի որ, օրինակ, Աշոցքում ժամերը հարմար չէին, մարդիկ տանում ուրիշ տեղերում՝ դաշտերում, ճամփեզրերին էին թափում:

Շրջիկ մեքենան աղբահանության խնդիր չի լուծի, քանի որ մենք միգուցե իր այցի ժամանակ տանը չլինենք:

Շրջիկ մեքենաները ձեռնտու չեն, քանի որ դրանք ուշ-ուշ են գալիս, և գարշահոտը տուն է լցվում:

Թումանյանի բնակավայրերում մարդիկ սովոր չեն սպասել շրջիկ մեքենային: Աղբը թափում են իրենց սովոր տեղերում:

Մեկին ձեռք է տալիս զնգզնգացնող աղբի մեքենաները, մյուսին չէ. ես էդ ժամին գործի եմ, աղբս մնա տանը:

Ստեփանավանում շրջիկ մեքենաները գան-չգան աղբահանության գումարը պահանջում են:

Այգաբացում ո՞չ աղբարկղ ունենք դրված, ո՞չ էլ աղբահավաք մեքենա: Ամբողջովին մենք ենք տանում-բերում:

Աշոցքի համայնքի Կրասար բնակավայրում նույնիսկ աղբարկղեր չկան, իսկ շրջիկ

կարող ես հասցնել:

Որ աղբարկղ դրվի համայնքում, պարզ չի՞, որ բոլորին էլ հարմար կլինի տանել աղբարկղ լցնել աղբը:

Աղբամանը ամենաճիշտ տարբերակն է, աղբը նորմալ լցնում ես՝ առանց շուրջը կեղտոտելու:

Իրականում մեր բախտը բերել է, որ Ֆրանսիայից նվեր ստացանք էդ աղբամանները: Առաջ ծառից մեխ ունեինք մեխած, էնտեղ էինք կախում աղբի տոպրակները:

Դիլիջանի ու համայնքների աղբահանությունը կենտրոնացված է այս պահին ու շատ արդարացված է նման գործելաոճը:

մեքենաները սպասարկում են Աշոցքը:

Եթե աղբահանության հարցը գյուղերում չլուծվի, գյուղացին փոսը փորելու է աղբը լցնի փոսի մեջ ու աղբը լցնի մեջը:

Լորուտում, մեր թաղում աղբաման չկա, մեքենան էլ չի այցելում, ու մարդիկ առաջվա պես աղբը այրում են կամ տալիս են անասունին:

Մեր աղբահանության հիմնական համակարգն այսօր այն է, որ աղբը վառենք: Հույսներս մաքրելու վրա չենք կարող դնել:

Ամեն գյուղում, ամեն մարդ գիտի, թե ինչ է անելու իր աղբի հետ: Կենտրոնացվածը չի աշխատի:

Եթե աղբաման չկա, մարդիկ ստիպված գետն են լցնում աղբը:

Ժողովուրդն ամեն գյուղում արդեն գտել է իր ավանդական աղբահանության մեթոդները:

Աշոցքում այս պահի դրությամբ ոչ մի աղբաման չունենք: Ես իմ աղբը այրում եմ:

Աղբահանությունը ակամայից կատարում է նաև գյուղացին՝ հավաքելով աղբը իր տան բակից ու գետափին կամ ձորում թափելով:

Աղբահանության կենտրոնացվածությունը ձեռնտու չէ գյուղացուն, քանի որ գյուղացին աղբի մեծ մասը վառարանում է վառում ու չի տանի թափելու:

Ախուրյանում տեղ չկա աղբը լցնելու, տանում են սրա-նրա դռան դիմաց գցում: Ամեն մեկը իր ֆանտազիայով է թափում աղբը:

Նա ով մեքենա ունի, կարող է իր աղբը տանել-թափել, տարեցները չեն կարողանում հարմարվել:

Բարեկամավանում աղբահանություն չկա, յուրաքանչյուր բնակիչ իր տնամերձ տարածքում աղբը թափում է, բայց ավելի մաքուր է, քան այն համայնքներում որտեղ աղբահանություն է կազմակերպվում:

Քարինջում կարծես ավելի հարմար է ձորը նետել աղբը, ոչ թե հավաքել:

Մեր գյուղում փոս ենք փորում ու աղբը լցնում մեջը: Լավ կլիներ, որ Ախուրյանի պես մեզ մոտ էլ նորմալ աղբահանություն կատարվեր:

Նոյեմբերյանում ծայրամասերում տներ ունենք, որտեղ աղբամաններ չկան, մենք էլ այլ կերպ ենք լուծում խնդիրը: Մի մեծ տակառ ենք վերցնում, վրա գրում աղբ, ու մեքենան անցնելիս, արդեն դա էլ է տեղափոխում:
Հիմա մենք աղբը պարկերով դնում ենք մեր մեքենաները, բերում ենք այն տեղերում, ուր աղբամաններ կան, թափում ենք:

Արևիկում նույն իրավիճակն է. կենտրոնական մասերում ապրողներն օգտվում են շրջիկ մեքենայի ծառայությունից, ծայրամասերում կամ այրում են, կամ հավաքում, մեքենայով տանում Գյումրի:

	Կամո համայնքում մի մասն այրում է աղբը, մյուս մասը՝ հավաքում, սեփական մեքենայով տանում Գյումրիում թափում, մոտավորապես 12 կմ: Իհարկե մենք կարող են պայմանավորվել հարևաններով, բայց ցանկալի է, որ կենտրոնացված աղբահանման համակարգ լինի:
Կենտրոնական փողոցներում կարելի է աղբամաններ դնել, հեռու փողոցներում՝ մեքենայով հավաքել: Շրջիկ մեքենային զուգահեռ արդեն կա նաև կենտրոնական աղբահանություն: Առաջ մեքենան գալիս էր, բայց մարդիկ աղբը մեջը չէին գցում, իսկ հիմա տանում են աղբը գցում աղբարկղ: Շրջիկ մեքենան էլ է պարտադիր, աղբամանն էլ: Երկուսն էլ միաժամանակ պետք են: Յուրաքանչյուր գյուղ թող ինքը որոշի, աղբաման, թե շրջիկ մեքենա: Բայց երկուսն էլ իրար հետ ավելի լավ են: Մարդաշատ վայրերում պետք է լինեն աղբամաններ, գոնե մեկ հատ: Նաև շրջիկ մեքենաներ: Այդ համակարգը կարող է աշխատել: Ինչի համար եք ասում կա՞մ աղբաման, կա՞մ մեքենա, թող երկուսն էլ լինի: Գյուղում առաջին փուլում արդյունավետ է շրջիկ մեքենան, իսկ հետո՝ աղբարկղերի տեղադրումը: Մեքենաների և աղբատարների առկայության դեպքում բնակիչները կդժգոհեն միայն եթե աղբահանությունը ժամանակին չիրականացվի: Եթե համայնքներում աղբարկղներն ավելացվեն, տրանսպորտ տրամադրվի, շրջիկ ծառայությունը բարելավվի, մեր բարեկեցությունն էլ կբարելավվի:	Գյուղերում աղբարկղեր չկան, իսկ շրջիկ մեքենաները քիչ են: Կենտրոնացված աղբահանությունը ոչ մի օգուտ չի տալիս գյուղերի համար ու չի արդարացնում իրեն: Աղբահանության կենտրոնացված ծառայությունը չի կարող աշխատել, ինչպես կենտրոնացված ջրամատակարարումը չաշխատեց. Վեղլա ջուր դառնալուց հետո ջրի մատակարարումն էլ ավելի վատացավ: Կենտրոնացված աղբահանությունը փոքր համայնքներում անիմաստ է և շռայլություն:

Գ.2. ԱՂԲԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱՖԻԿ

Խոշորացված համայնքներում պետք է աղբատարությունը լինի ամեն օր, իսկ համայնքներում պետք է լինի շաբաթը երկու անգամ, բայց հստակ ժամերի և գրաֆիկով: Պետք է աղբահանության որոշակի հստակ գրաֆիկ լինի, մարդիկ իմանան՝ ինչ, ոնց, ինչպես... Գոյություն չունի աղբահանության ժամանակացույց, արդյունքում դժվար է վերահսկել պրոցեսը: Բնակչությունը պետք է հստակ տեղեկացված լինի աղբահանության գրաֆիկի մասին, որպեսզի կարողանա հետևել ծառայությունների իրականացման որակին: Եթե մեքենան շաբաթական երկու անգամ գյուղի տներից աղբը հավաքի, նույն հաճախականությամբ կարող է աղբամաններից տանել: Համայնքի մեծությունը կամ աղբի քանակը	Քանի որ Գոշը տուրիստական համայնք է, հատկապես ամռան ամիսներին, կախված աղտոտվածության աստիճանից՝ կոմունալ ծառայությունների հետ կապը պահելով փոխում ենք աղբահանության գրաֆիկը: Լավ կլիներ սեզոնային աղբահանություն արվեր. օրինակ՝ ամռանը, երբ աղբն ավելի շատ է կուտակվում, կարելի է հավելյալ գումար վճարել և աղբահանության հաճախականությունն ավելացնել: Աղբահանությունը նաև պետք է հարմարեցնել սեզոններին. տարվա տարբեր շրջաններում տարբեր պարբերականությամբ է պետք իրականացնել: Շրջիկ մեքենաների դեպքում, ես կարծում եմ, առնվազն երկու օրը մեկ մեքենան պետք է այցելի բնակիչներին: Ձմեռը կարելի է՝ ասենք, շաբաթը մեկ:

չպետք է ազդի աղբատար մեքենայի այցելության հաճախականության վրա: Այդ աղբը որ երկար ժամանակ մնում է, թունավոր է դառնում:

Թող մոնիտորինգ անեն ամեն բնակավայրի համար ու, ըստ բնակիչների ցանկության, որոշեն աղբատար մեքենայի այցելությունների հաճախականությունը:

Աղբահանության հաճախականությունը հիմնական խնդիրն է, ինչքան էլ շատ լինեն աղբամանները եթե լցվում են, ամեն ինչ փչանում է:

Բաց աղբամանները ավելի հարմար են, բայց միայն այն դեպքում, երբ աղբահանությունը հաճախակի իրականացվի:

Աղբահավաք մեքենաները միանշանակ գերադասելի են աղբամաններից, շաբաթը երկու անգամ:

Եթե Կամոյում շաբաթական գոնե երկու անգամ աղբահանություն իրականացվեր, շատ շնորհակալ կլինեիք:

Պետք է գոնե շաբաթը մեկ անգամ աղբատար մեքենա այցելի մեր գյուղեր:

Վաղ առավոտյան բոլորս էլ տանն ենք, եթե աղբահավաք մեքենան գա, շատ լավ կլինի: Գոնե շաբաթը երկու անգամ:

Շաբաթական երկու-երեք անգամով հազիվ էլ հասցնեն աղբը հավաքել մեքենաները:

Եթե շաբաթը մեկ գա մեքենան, նորմալ է, բայց չի գալիս:

Շաբաթը երկու անգամ Ոսկեպարում լինի շրջիկ աղբարկղ:

Գյուղում պիտի մի աղբատար մեքենա լինի, որ երկու շաբաթը մեկ գա, տներից հավաքի աղբը:

Շատ կուզենամ, որ շատ լինեն աղբամանները ու գոնե շաբաթը երեք անգամ պարբերկանությամբ աղբահանություն:

Ուզում ենք շաբաթը նվազագույնը երկու անգամ դատարկվող աղբարկղներ:

Աղբը պետք է ամեն օր հավաքել, որպեսզի կարողանանք խոսել նորմալ աղբահանության մասին:

Պետք է աղբահանությունը իրականացվի ամենօրյա ռեժիմով, որպեսզի գարշահոտ չլինի:

Քաղաքում օրական երկու անգամ են անում, թող այդպիսի աղբահանություն իրականացվի նաև գյուղերում: Այդ ժամանակ ոչ մի խնդիր էլ չի լինի:

Ռուսաստանի հյուսիսում, Սիբիրում աղբի հավաքելու հետ ոչ մի խնդիր չկա: Ամեն օր հավաքելու դեպքում սառելու խնդիր էլ չկա: Օրը նույնիսկ երկու անգամ են հավաքում:

Մեր բնակավայրերում շատ կարևոր է աղբամաններ ունենալը, բայց պետք է ապահովել ամենօրյա աղբահանություն: Սովետական

Ըստ օրենքի +5 ջերմաստիճանի և ավելիի դեպքում ամեն օր պետք է իրականացվի աղբահանություն, բայց եթե գյուղի բյուջեն ամբողջապես էլ դնեն այդ գործի մեջ, չի հերիքի դրա համար:

Պետք է սահմանվի աղբահանության սեզոնային գրաֆիկ, որով պետք է ֆիքսվի այն, որ ամառը աղբահանությունը ավելի հաճախակի լինի:

Ձմռանը աղբը հավաքվում է, բայց թեկուզ ֆիզիկապես հնարավոր չէ այդ աղբը տեղափոխել: Խոսքը մեկ տնտեսության աղբի մասին չէ, այլ մի քանի:

ժամանակ առավոտյան և երեկոյան շրջիկ մեքենան գալիս էր աղբը տանում, ու ոչ մի կուտակում չէր լինում: Եթե աղբատարարերը շատ լինեն ու ամենօրյա ռեժիմով մաքրություն իրականացվի համայնքներում, ապա աղբահանության խնդիր չի լինի ու մարդիկ մեծ սիրով աղբը կտանեն ու կթափեն աղբարկղի մեջ: Կարելի է գյուղերից դուրս մեծ աղբավայրեր կառուցել ու ամեն օր աղբը հավաքել, տանել այնտեղ լցնել: Աղբահանության խնդրի լուծման համար ամենակարևոր քայլը այն է, որ աղբահանությունը իրականացվի ամենօրյա ռեժիմով: Եթե մեկ անգամ աղբ հավաքելը քիչ ա, ապա անհրաժեշտ է պարզապես աղբարկղներն ավելացնել, ու թող հավաքվի: Մեքենան հետո կգա կհավաքի կտանի Բնակավայրերում թող աղբարկղեր լինեն, մարդիկ երբ ցանկան, տանեն իրենց աղբը թափեն, կարող է մեզ այդ ժամերը հարմար չեն:	
Եթե աղբամաններից աղբի հեռացման հաճախականության խնդիրը նորմալ չլուծվի, ես կշարունակեմ չվճարել աղբահանության համար: Ես Ախուրյանի ավագանու անդամ եմ: Մենք արդեն նախատեսել ենք հարյուր քսան նոր աղբաման ձեռք բերել հունվար-փետրվար ամիսներին: Մենք նախատեսում ենք նաև մեքենայի այցելությունների հաճախականությունը ավելացնել: Եթե բնակչությունը լուրջ մոտենա անձը հարյուր դրամ չնչին վարձավճարին ու ժամանակին միշտ մուծի, ապա ամեն ինչ նորմալ կաշխատի: Գյուղի ժողովուրդը որ տեսնին ժամանակին աղբը կտանեն, ինչխ գրնա չճարե: Հարևանները ամոթանք կուդան:	Վճարը հարյուրից դարձավ երկու հարյուր դրամ: Արդյունքում աղբահանության գրաֆիկը չի խախտվում, բայց անհավասար պայմանները պահպանվել են:
Համայնքների խոշորացումը լավ ազդեցություն է ունեցել աղբահանության ոլորտի վրա: Գյուղերը նույնպես սպասարկվում են հիմա: Բայց խնդիրը այն է, որ աղբատար մեքենան բավականին ուշ է գալիս, կամ մինչև չես զանգում, չի գալիս: Դա էլ բացատրություն ունի, ու դա այն է, որ ճանապարհները լավը չեն ու մեքենան հաճախ չի կարող մոտենալ:	
Ամենաճիշտը անհատական աղբարկղերն են, մարդիկ կիմանան որ շաբաթական մի անգամ կգա կտանի, իսկ այսօր քսան տանը հասնում է մի աղբաման, արդեն շաբաթվա կեսին աղբամանը լցվում է: Եթե մենք առանձին աղբի բաժանորդներ դառնանք, շատ լավ կլինի, բայց իրենց համար հարմար չի լինի կամ էլ բաժանորդավճարը այնքան թանկ կլինի, անհասանելի կդառնա:	Անհատական փաթեթների ներդրումը կբերի նորից կաստաների առաջացմանը: Այսինքն, դու հարուստ ես, քո համար ուրիշ ծառայություններ են մատուցում ու ուրիշ գրաֆիկով, իսկ եթե հնարավորություն չունես, ապա՝ ոչ: Ես դրան կտրականապես դեմ եմ: Թող այս ծառայությունը բոլորի համար ունենա նույն գինը ու նույն ձև իրականացվի: Անհատական փաթեթը չի աշխատի մեր պայմաններում ու կռվի բուն կդառնա: էդ մասնավոր աղբարկղի մեջ չվճարողն էլ կբերի ու աղբ կնետի:

Ստեփանավանում աղբահանությունը լավ է կազմակերպված «շենքային» թաղամասերում, իսկ սեփական տներով թաղամասերում այդքան էլ հաճախ չէ:

Աթանում 250 բնակիչ կա ու ունենք չորս աղբաման: Հաճախակի լցվում է գյուղամիջի աղբամանը: Ու քանի որ աղբը ուշ-ուշ է տարվում, խնդիրը գյուղամիջի աղբարկղի դեպքում է: Ստացվում է, որ մնացած աղբամանները նորմալ են սպասարկվում:

Նոյեմբերյանում շրջանում աղբահանությունը հաճախակի չի տեղի ունենում ամռանը:

Կենտրոնական բնակավայրերում էլ մեծ խնդիրներ կան. օրինակ՝ Ախուրյանի ծայրամասերում միայն երեքշաբթի և շաբաթ օրերին է մեքենան հավաքում աղբը:

Սարչապետում աղբամաններ չկան: Շրջիկ մեքենան շաբաթը երկու անգամ գալիս հավաքում է աղբը:

Սարչապետ գյուղում շաբաթական երկու անգամ շրջիկ մեքենան շրջում է և աղբը հավաքում, սակայն մինչ աղբահանության կազմակերպումը կուտակված աղբը դեռ մնում է ձորերում:

Մարց գյուղում միայն գլխավոր փողոցում կա տեղադրված աղբաման, բայց շաբաթներով մեքենան չի գալիս, աղբը չեն տանում:

Մեր թաղամասում ամեն հինգշաբթի գալիս տանում են աղբը, բայց մարդիկ պետք է մի շաբաթ սպասեն որ աղբը թափել:

Որոշ գյուղեր կան, որ ամիսը մեկ հազիվ աղբատար մեքենան գնա:

Քարինջում ամիսը մեկ հազիվ աղբահավաք մեքենա գա: Ժողովուրդն էլ աղբը չի լցնում աղբարկղ, որ հոտ չգա: Ստիպված ուրիշ տարբերակներ են գտնում:

Ստեփանավանում ամեն օր տանում են աղբը, իսկ Քարինջ գյուղում ամիսը մեկ անգամ, այն էլ մի քանի անգամ զանգելուց հետո:

Ամիսը երկու անգամ է գալիս աղբահանության մեքենան, աղբամաններ չկան. ստիպված վառում ենք:

Ոսկեպարում ամիսը մեկ հազիվ աղբատար մեքենա գա, աղբը տանի: Բոլորն էլ տանում են ձորը լցնում, հետո էլ՝ վառում:

Ստեփանավանում աղբարկղերն ամեն օր դատարկվում են, բայց միայն կենտրոնական թաղամասերում: Օրինակ՝ Չարենց փողոցում աղբամաններ ընդհանրապես չկան:

Կոնկրետ օր չկա, որ գյուղացին իմանա մեքենան գալիս է: Պատահում է, որ մենք ենք զանգում, ասում՝ եկեք:

Մեր մոտ երկու անգամ աղբատար մեքենաները գալիս են, բայց մարդիկ կան, որ տանը չեն լինում, ավելի լավ է աղբամաններ էլ լինեն:

Թումանյանում շաբաթը երկու անգամ մեքենան գալիս, աղբը տանում է ու դա լրիվ հերիք է: Լավ կազմակերպման դեպքում հնարավոր է խնդիրները լուծել նաև առանց մեծ ծախսերի:

Թումանյանում շրջիկ մեքենան շաբաթական երկու անգամ հավաքում է աղբը: Նորմալ հաճախականություն է: Հիմնականում մենք գոհ ենք:

Թումանյանում հինգշաբթի և կիրակի օրերին է իրականացվում աղբահանությունը՝ շրջիկ մեքենայի միջոցով: Աղբը հավաքում ենք տանը, մեքենային հանձնում:

Դիլիջանում բոլոր աղբարկղերը բաց են, բայց քանի որ հաճախակի է կատարվում աղբահանությունը, մենք թափառող շների հետ խնդիր չունենք:

Խաչարձան համայնքում երբ աղբի կուտակումը շատ է լինում, զանգում ենք, աղբահանության ծառայությունը արձագանքում է, հարցը հրատապ լուծում:

Հովք համայնքում շաբաթը մեկ անգամ աղբահանություն իրականացնելը գյուղի կարիքներին բավարարում է:

Արշալույս գյուղում լավ փորձ ունեն, ամեն օր կոնկրետ ժամին տրակտորը լաֆետով կուգա, մարդիկ իրենց աղբը տոպրակով փաթաթած կբերեն, կդնեն լաֆետի մեջը: Էդպիսի գյուղ էլ չկա, որ համապատասխան տեխնիկա չունենա, հնարավոր չեղնի էդպես կազմակերպելու աղբահանությունը, մի հոգի էլ կունենա իր համար գործ: Մեր կարծիքն էս մասով առիթ չի եղել հայտնելու:

Դիլիջանում ամեն օր, առավոտյան 8-ին աղբամաններից շրջիկ մեքենան հավաքում է աղբը: Հիմնականում գոհ ենք:

Նոյեմբերյանում մարդիկ հստակ գիտեն, թե մեքենան երբ է գալիս, առավոտյան 7-ին, ու տան մոտ սպասում են մեքենային:

Դիլիջանում կանոնավոր ձևով աղբահանություն է իրականացվում

Ինչքան էլ շատ լինի աղբաման, եթե մեքենաները ուշ-ուշ են գալիս, աղբը կուտակվում է:

Աշոցքից դուրս աղբահանություն ընդհանրապես չի կատարվում: Աղբամանները կան, բայց աղբը տանող չկա: Աղբամանի իմաստն էլ ո՞րն է:

Գյուղում աղբամաններ դրին, ավելի շատ աղտոտվեց գյուղը, քանի որ աղբը լցվեց աղբամանները, հետո շուրջբոլորը, քանի որ տանող չկար: Առաջ գոնե գյուղից դուրս էին տանում աղբը թափում:

Նախկինում մեր գյուղում քառասուն աղբաման է եղել, աղբը ուշ-ուշ էին հավաքում, էլի նույն վիճակն էր:

Մեքենաները աղբամաններից հավաքում են, բայց տների մոտ դրված ավելի փոքր աղբամաններին ձեռք չեն տալիս:

Բնակիչներից մեկը ծրագիր ներկայացրեց Ջորագետի աղբահանության համար: Ծրագիրը շահեց, աղբահանությունը կազմակերպվեց երեխաների շնորհիվ, աղբամաններ տեղադրվեց, աղբամանները լցվեց, բայց համայնքի պատասխանատուները չկազմակերպեցի աղբահավաքությունը:

Աղբարկղերը մեզ մոտ խնդիր են առաջացրել, քանի որ աղբը լցվում է դրանց մեջ, հետո երկար ժամանակ չի հեռացվում, ու դա խնդիր է: Անցյալում, որ աղբարկղեր չկային, ու մենք ինքնուրույն էինք մեր աղբով զբաղվում, իրավիճակը ավելի լավ էր:

Երբ սկզբում հատուկ աղբամաններ էին դրել, նորմալ էր, բայց նորմալ չհավաքեցին, արդեն իմաստը կորավ աղբի բաժանման:

Շաբաթը մեկ անգամ աղբահանության իրականացնելու ծրագիրը ավելի լավ է չլինի, քանի որ ոչ մի հարց չի լուծվի այդպես:

Բարեկամավան համայնքում ընդհանրապես աղբահանություն չի իրականացվում, մարդիկ իրենց ուժերով են կազմակերպում այդ պրոցեսը: Ոչ մեքենա կա, ոչ աղբաման:

Դիլիջանի կենտրոնական մասում աղբահանությունը միգուցե լավ է իրականացվում, բայց, օրինակ, Շամախյանում, որտեղ թե՛ առանձնատներ կան, թե՛ բազմաբնակարան շենքեր, գրեթե մեքենա չեն տեսել, որ բարձրանա:

Ամենաճիշտն էն է, որ գյուղապետարանը պայմանագիր կապի գյուղում գործող մի գյուղտեխնիկայի հետ, ներսից մարդիկ աղբամանները գոնե երեք օրը մեկ դատարկեն իրենց ինքնաթափը, տանեն թափեն: Տասնմեկ գյուղին մեկ-երկու մեքենայի միջոցով ինչպե՞ս կսպասարկեն:

Պատասխանատուները մտածում են, որ կարող են մի անգամ մեքենա ուղարկել գրել երեք անգամ, սրա պատճառով գարշահոտ է տարածվում:

Շրջիկ մեքենայի կամ աղբամաններից աղբը հեռացնող մեքենայի հաճախ այցելելը շատ բան չի փոխի, մինչև մարդկանց գիտակցությունը չբարձրացվի: Պատահական տեղ աղբ նետողը նույն ձև կշարունակի:

Հովքում տարածք կա, որ գիշերվա ժամերին մայրուղուց աղբ են բերում, թափում: Հո չե՞ս կարող ամեն օր մաքրող բերել:

Ամեն առավոտ աղբը հավաքում են, բայց ժամը չորսի կողմը աղբամանը բացում ես, մեջը

Եթե բյուջեն ունի գումար, որ երկու մեքենա գնի, թող նույն մեքենայի համար շատ բենզին լցնեն, երկու անգամ գնա գա:

Բաղանիսում աղբահանությունն իրականացվում է շրջիկ մեքենայով, շաբաթը մեկ անգամ, կիրակի օրը: Աղբը տարվում է գյուղից դուրս կենտրոնական մի վայր, որտեղ գյուղի ամբողջ աղբը թափվում է: Սա սահմանից դուրս է գրեթե, դեպի Ադրբեջան:

Դովեղում երկու շաբաթը մեկ է իրականացվում աղբահանությունը: Շրջիկ մեքենան գյուղից է: Դեպի սահմանը ծոր կա՝ հատուկ մեկուսացված աղբը թափելու համար: Մեքենա ունենք, բայց աղբամաններ դեռ չունենք:

Քանի որ օրինակ՝ Գոշում, աղբամաններ են տեղադրվել, բայց աղբամանների և մեքենաների համար անհասանելի լինելու պատճառով չի լինի տեղադրել: Նոր ամենագնաց մեքենա ենք պատվիրել, որ կարողանա այդ բոլոր փողոցները մտնենն:

դատարկ է, իսկ կողքերը լրիվ աղբ:

Մարդիկ եթե տեսնեն, որ աղբամանները լիքն են, այլևս աղբն այդտեղ չի թափի, կմտածի որտեղ տանի վառի կամ հորի:

Մարդիկ առանձին գումար և ժամանակ չեն ծախսում աղբը թափելու համար, իրենք իրենց առօրյային հարմարեցնում են աղբը թափելու ժամանակը:

Գ.3. ԱՂԲԱՐԿՂԵՐԻ ԵՎ ԱՂԲԱՆՈԹՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՏՈՊՈԳՐԱՖԻԱ՝ ԾԱԾԿՈՒՅԹ, ԽՏՈՒԹՅՈՒՆ, ԾԱՎԱԼ

Մարդկանց վերաբերմունքը պետք է փոխենք. մեկի համար հեռու է, մյուսի համար մոտիկ է: Մարդիկ պետք է հասկանան, որ կա հանրային շահ:

«Կարևորն ինձանից հեռու լինի», մարդկանց մեծ մասն այսպես է մտածում աղբարկղերի մասին: Սակայն կան նորմատիվներ, որոնք եթե հետևողականորեն պահպանվեն, ամեն ինչ նորմալ կլինի: Ուղղակի պետք է մարդկանց բացատրել, թե ինչ են այդ նորմատիվները:

Աղբամանները տներից պետք է հեռու լինեն, և հատկապես ամռան ամիսներին գարշահոտ է տարածվում շրջակայքում:

Ոսկեպարում աղբամանները քիչ են, մոտ չորս հատ՝ բոլորն էլ գյուղամեջում դրած: Ով գյուղամեջից հեռու է ապրում, աղբը տանում է, ձորը գցում: Շներն էլ հավաքում են, բերում գյուղ:

Խաչարձանում աղբարկղերը շուրջ չորս հարյուր մետր հեռու է դրված, ոչ ոք չի ուզում այդքան քայլել, պետք է վերանայել այդ բաշխվածությունը, ավելացնել աղբարկղերը:

Հայ ազգը բողոքում է և նրանից, որ աղբամանը իրենց մոտ է, և նրանից՝ որ աղբամանը հեռու է:

Քառասուն աստիճան մառոզին հեչ մարդ աղբը ձեռքը չի գնա գյուղի կենտրոն:

Աղբարկղերը պետք է տեղադրել դպրոցում, ծայրամասերում, ոչ թե միայն գյուղապետարանում: Ես չեմ կարող ծայրամասից աղբը բերել գյուղապետարանի մոտ: Ես իմ տան մոտ եմ տեղ ստեղծել, որտեղ աղբ եմ թափում, իսկ հարևանս բերում է լցնում նույն տեղում (Արևիկ բնակավայր):

Մարդ կա, հնարավորություն ունի աղբը տանել մի հեռու տեղ այրելու, մարդ կա, մեքենա չունի, աղբը մոտակայքում մի տեղ լցնում է՝ այլ տարբերակ չունենալով:

Աղբամանները տեղադրված են հիմնականում կենտրոնական փողոցներում, իսկ ծայրամասերում չկան, պետք է քաղաքի կեսն անցնենք, որ գցենք աղբամանների մեջ:

Մարդ կա աղբամանից հեռու է, բայց տանում-նետում է աղբամանում, մարդ էլ կա հենց քթի տակ է, բայց չի օգտվում:

Ով է ասում, որ աղբամանները հեռու են. ինչի, որ խանութը հեռու է լինում, չեն գնում... թող աղբի համար էլ գնան:

Կոթիում փողոցներում ավելացրել են աղբամանները, եթե նույնիսկ հեռու է աղբամանը, մեքենայով են բերում, թափում:

Իմ տանից աղբման տարածությունը կիլոմետրից ավել ա, բայց ես չեմ զլանա աղբը տանի աղբամանում թափի:

Աղբամանները չպետք է լինեն որևէ մեկի տան դիմաց, այլ ավելի չեզոք ու հարմար տարածքներում պետք է տեղադրեն:

Դիլիջանում թաղամասեր կան, որտեղ աղբամաններ չկան, ու մարդիկ երբեմն մի կիլոմետր քայլում են, որպեսզի աղբը նետեն կենտրոնական մասում տեղադրված աղբամանում:

Աղբամանը պետք է ունենա իր նորմալ տեղը, ոչ թե ուր պատահի, ինչպես պատահի:

Մենք գյուղից տոպրակներով աղբը բերում ենք քաղաքի աղբամաններում թափում:

Առաջարկում ենք, որ աղբամանները տեղադրեն ամեն գյուղի թաղերի վերջում:

Բաղանիսում ես ինքս մեր հարևաններից էլ եմ աղբը հավաքում, տանում կենտրոնական աղբամանում թափում, բայց թաղամասեր կան, որտեղ մարդիկ որտեղ ասես թափում են աղբը:

Գյուղի վերջին ապրողը կբերի՞ գյուղամեջ աղբը թափի: Չի բերի: Էսօր էլ ինքը, քանի որ ծայրամասում է ապրում, աղբի մոտակա մի առուն է լցնում, էդպես էլ շարունակելու է:

Աղբարկղերը եթե մի 50 մետր հեռավորության վրա, էլի ոչինչ, բայց եթե հանկարծ հեռավորությունը 2 կմ է, ապա ստիպված մեր սեփական մեքենաներով ենք տանում թափում

Բնակիչները աղբը սովորաբար տանում են կենտրոնական փողոցի աղբամաններում լցնում (Ստեփանավան), որ իրենց մոտ չկուտակվի:

Որպես բնակիչ, համաձայն չեմ լինի, որ աղբման դնեն իմ տան կողքը:

Ոչ բոլորը համաձայն կլինեն, որ աղբամանները տեղադրեն իրենց տան մոտ:

Համայնքներում աղբամանները այնքան քիչ են, բայց չեմ ուզենա, որ իմ տան դիմացը դնեն:

Եթե մեկը բերի իմ տան դեմը աղբը դնի, կտամ գլխին:

Մարդկանց համար կարևորը աղբը իրենց տանը

Եթե աղբահանությունը ճիշտ ժամանակին լինի, ոչ մեկն էլ չի բողքի իր տանը մոտ լինելու պատճառով:

Բնակիչը կհամաձայնվի աղբամանը իր տան դեմը լինի միայն այն դեպքում, երբ անընդհատ տանեն աղբը թափեն:

Թող աղբման լինի, թող տանս մոտ լինի, չկա:

Դիլիջանում աղբամանները տեղադրված են բազմաբնակարան շենքերի մոտ, որտեղից

չլինի, եթե տան դիմացն է՝ ոչինչ:	բեռնատարներով աղբը տեղափոխվում է: Որոշ մարդիկ տեղադրված աղբամանները քաշել-տարել են իրենց տան բակ, որ հարմար լինի: Ալարկոտ ենք, էլի: Ավելի հարմար է գետը լցնեն, քան կես կիլոմետր գնան աղբամանի մեջ լցնեն, հետևաբար ավելի մոտ պետք է լինեն աղբամանները: Եթե պետք է ամբողջ գյուղը կեղտոտ լինի, միայն իմ դուռը մաքուր, էդ էլ մի բան չի:
Ավելի ճիշտ կլինի, որ մեծ համայնքներում կամ մեծ փողոցներում իրար կպած մեծ աղբամաններ լինեն: Աղբամաններ գյուղերում պետք է չափերով ավելի մեծ լինեն, քան քաղաքներում են: Պետք է հանրային կառույցների շուրջը աղբահանությունը ավելացնել:	Մեծ տարաների գաղափարն այնքան էլ լավը չի, քանի որ գարշահոտության աղբյուր կհանդիսանան այդ տարաները: Սա վերաբերում է հատկապես քաղաքների կենտրոնական հատվածներին: Դիլիջանում քոլեջի մոտ աղբաման կա, բայց սարսափելի վիճակում է: Հա՜մ քոլեջն է թափում աղբը, հա՜մ մոտակա տների բնակիչները:
Մարցում թաղամաս կա, որ աղբարկղերի քանակը չի համապատասխանում մարդկանց թվին: Հազիվ մի աղբաման լինի: Նշված է, որ Սարագյուղում կա երեք աղբաման: Ասեմ, չկա: Կարող եք գալ և նայել: Մի գյուղում երեք աղբամանը շատ քիչ է: Մեր գյուղին երեք աղբամանը շատ քիչ է, նորից նույն իրավիճակը կուգա: Էդ էլ որ լցվավ, կողքերը նորից կուտակում է լինելու: Աղբամանը իրենով ոչ մի հարց էլ չի լուծում, եթե աղբահանություն չի լինելու, դրա իմաստը ո՞րն է: Ձրառատում աղբաման չկա: Առաջարկում եմ սկզբից աղբամաններ տեղադրել, նոր աղբահանություն կազմակերպել: Ամենակարևորը աղբամանն է: Թող աղբամաններ դնեն այնտեղ, որտեղ միշտ աղբի կուտակումներ են լինում: Թումանյան համայնքում չկան աղբամաններ ու մեծ կարիք կա աղբամանների, կամ գոնե հատուկ վայրեր առանձնացվեն, որտեղ մարդիկ կարողանան իրենց աղբը թափել: Ախուրյանում աղբաման գոյություն չունի: Մի քանի հատ կա, բայց համայնքի մակարդակով զրո է: Դրա պատճառով էլ աղբի խնդիր ունենք: Բայց ինչի ավելի շատ չենք անում աղբամանները, եթե դրա կարիքը կա. ինչ չափանիշներով են հաշվում՝ քանի հատ: Քարինջ գյուղում ընդամենը 12 աղբաման կա, սկզբում կենտրոնացված էր՝ երեք աղբաման, հետո փորձեցին բաժանել այդ 12 աղբամանները, որը սակայն բավարար չափով չի սպասարկում բնակչությանը: Ստեփանավանում աղբամանները բավարար են միայն կենտրոնի համար, օրինակ չորրորդ միկրոթաղամասում աղբամաններ չկան Հանգստյան գոտիների տարածքում աղբամաններ չկան, հետևաբար մարդիկ	Ես երկու օր առաջ Ստեփանավանից եմ եկել, շատ մաքուր քաղաք է, ամեն հիսուն մետրի վրա աղբաման կա: Առաջարկում եմ սկսել աղբամաններից: Աղբաման ավելացնելով աղբահանության հարց չես լուծի: ԱՍԻՖ-ի հետ համատեղ նախատեսվում է երեք մեքենա և հինգ հարյուր նոր աղբաման տեղադրել Ստեփանավանում Աղավնավանքում քսան տարի անընդմեջ աղբը թափում էինք գետը: Հիմա, երբ արդեն աղբամաններ կան, գյուղը բավականին կոկիկ տեսք է ստացել: Նոյեմբերյանում մոտավորապես 70%-ով աղբամանները բավարարում են աղբի հավաքման համար: Բայց դեռ խնդիր ունենք: Երկու գյուղի համար մի աղբատեղի է նախատեսված: Դիլիջանը աղբարկղերի խնդիր չունի, բայց աղբարկղերով միայն հարցը չես լուծի: Ինչքան աղբամանների քանակը շատ լինի, էնքան էլ աղբը շատ կլինի: Առաջ մեր դպրոցի տարածքում աղբարկղ չկար, շուրջն էինք թափում, իսկ հիմա նորմալ աղբարկղ կա, մեջն ենք գցում: Կենտրոնական փողոցը քաղաքի դեմքն է, դրա համար էնտեղ շատ լավ է:

հանգստից հետո աղբը թափելու տեղ չունեն, ստիպված ձորն են լցնում:

Որտեղ որ աղբը շուտ է լցվում ու մնում, առաջարկում եմ հավելյալ աղբամաններ տեղադրեն: Այդպիսով հարցը կլուծվի: Օրինակ, Ստեփանավանի մեր թաղում այդպես ենք հարցը լուծել:

Աղբամանների անհրաժեշտություն կա քաղաքի գերեզմանոցների մոտ, որտեղ առաջացած ծաղիկների և այլ աղբը հիմա չգիտենք ինչ անենք:

Երբ աղբամաններ չկան, մարդիկ ինչ որ տեղեր ուղղակի աղբանոցի են վերածում:

Աղբատար մեքենայի առկայությունն էլ լուծում չի, քանի որ գյուղացիների մեծ մասը ալարում է նույնիսկ աղբը մեքենայում թափի, պետք է անպայման աղբամաններ տեղադրվեն:

Դիլիջանում թաղամասեր կան, որտեղ աղբամաններ ընդհանրապես չկան: Մարդիկ աղբը թափում են որտեղ պատահի:

Նոյեմբերանում ընդհանրապես աղբաման չկա:

Աղբարկղերի քանակները պետք է լինի ըստ շնչի ու աղբահանությունը իրականացվի հաշվի առնելով, թե այդ տարածքում ինչքան բնակիչ կա:

Խաչարձանում աղբարկղերը նոր են տեղադրել, բայց պակասություն է անում, քսանհինգ տանը մեկ աղբարկղ է դրված, մարդիկ տանում գետն են գցում:

Ոսկեպարի այն տեղամասերում, որտեղ ասֆալտապատ է տեղադրել աղբարկղ:

Եթե աղբամաններ լինեն, մարդիկ կիմանան՝ որտեղ է պետք աղբը թափել: Չկա, թափում են ուր պատահի:

Ստեփանավանի ծայրամասերում առաջարկում էին աղբամաններ տեղադրել, որպեսզի աղբը տանը չհավաքվի:

Ժողովրդի մոտավորապես յոթանասուն տոկոսն է, որ ընհանրապես կարող է մոտենալ աղբարկղին, մնացած երեսուն տոկոսը ստիպված աղբը թափում են ձորը:

Մայրուղու վրա գտնվող աղբամանները գյուղացուն հարմար չեն:

Գ.4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ/ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Եթե մասնավորն իմանա, որ գումարը հավաքվելու է, ներդրում էլ հնարավոր է կատարի: Նախադեպ չկա, բայց հնարավորություն կա:

Մի քիչ մեր գրպանին կխփի, բայց համաձայն ենք մասնավորին փոխանցվի աղբահանության ծառայության մատուցումը:

Անգամ եթե մասնավորին պատվիրակվի ծառայության մատուցումը, համայնքը պետք է վերահսկողություն սահմանի: Տուգանքներ պետք է սահմանվեն:

Ավելի լավ է համայնքն իրականացնի աղբահանությունը, քան մասնավորը, որովհետև գոնե առաջին դեպքում կիմանանք ումից

Եթե մասնավորի կողմից աղբամանները շատացվեն, նորմալ աղբահանություն կազմակերպվի բոլոր համայնքներում, բոլորն էլ կողմ կլինեն մասնավորին փոխանցել:

Մեր համար տարբերություն չկա պետականը, թե մասնավորը, կարևորը որակյալ լինի:

Եթե վերահսկողությունը ճիշտ լինի, մասնավորը լավ կաշխատի:

Փոքր համայնքներում՝ ասենք մի հիսուն տնտեսությամբ, կարող ենք հավաքվել, ընտրել մի մասնավոր ընկերություն կամ անհատ ձեռներեց, որը կիրականցնի աղբահանությունը՝ իր մեքենայով, բանվորով, ամսական 300000 աշխատավարձով:

Մասնավորը եթե լավ չարեց իր գործը, կարող ես փոխել, իսկ հանրայինի դեպքում դա հնարավոր չէ:

Դուք միայն ասում եք մասնավորի աղբը, իսկ պետ հիմնարկների աղբը, դպրոցների աղբը...

Միանշանակ մասնավորեցումը խնդրի լուծում է:

Ամեն դեպքում մասնավորը և անհատականը ամենալավ տարբերակն է. երանի թանկ չլինի:

Ստեփանավանում աղբահանությունը իրականցնում է մասնավոր ընկերություն՝ պահելով ժամանակացույցը: Սակայն հենց ժամանակացույցն էլ խնդիր է:

Աղբահանմամբ զբաղվող մասնավոր ընկերություններին պետք է համայնքի կողմից մեծ վերահսկողություն իրականացվի:

Ստեփանավանում հիմա էլ մասնավոր կազմակերպությունն է իրականացնում աղբահանությունը, բնակիչները վերահսկում են:

Բնակչի տեսանկյունից տարբերություն չկա, թե ով է իրականացնողը՝ մասնավորը, թե պետականը:

Մենք չենք հիշում, թե պետականը ոնց էր: Համենայն դեպս հիմա, որ ասում ենք լավ է, արդեն երկար ժամանակ է մասնավորն է անում:

Մասնավորի կողմից ծառայությունների մատուցումը ձեռնտու կլինի միայն այն դեպքում, երբ ծառայությունների որակը բարձրացնի:

Ստեփանավանում աղբահանությանը նաև մասնավորն է մասնակցում:

Մասնավորին հանձնելով ծառայությունը, կարող ես նրանից նաև որակ պահանջել:

Աղբահանությամբ զբաղվող մասնավոր ընկերությունները ավելի լավ է պայմանավորվի կոնկրետ բնակչի կամ շենքի լիազորի հետ, ոչ թե համայնքի: Պետք է բնակիչը ու մասնավորը խոսեն և խելամիտ գին որոշեն ու պատասխանատվություն ստանձնի հենց բնակչի առաջ:

Եթե նորմալ գումար սահմանվի, մասնավորը իր պահանջենք:

Համայնքից կարող ես պահանջել, իսկ մասնավորին ոչինչ չես կարող ասել:

Համայնքապետարանն ավելի լավ լեզու կգտնի բնակիչների հետ, քան թե մասնավորը:

Եթե համայնքի գույքը տրվի մասնավորին, բոլորն էլ կթալանեն, օգտագործեն իրենց շահերի համար:

Ահնիձոր համայնք հասնելու համար քառասուն լիտր վառելիք է պետք, հիմա տաս-քսան լիտրինը բնակչությունը հավաքում, տալիս է, մնացածը ՏԻՄ բյուջեից է ֆինանսավորվում: Մասնավորի դեպքում էս պակասող մասն ինչպե՞ս ենք ֆինանսավորելու:

Պետականի հետ գոնե լեզու են գտնում, մասնավորի հետ չգիտես ինչպես կլինի:

Մասնավորը ավելի վատ է ապահովում աղբահանությունը, երբ մի կազմակերպություն է, ինչ ուզում անում է, իսկ համայնքապետարանը ավելի վերահսկելի է:

ՏԻՄ-երի աշխատանքը ավելի թափանցիկ է, քան մասնավորինը, չես կարողանա վերահսկել::

Մասնավորին ենք տալիս ճանապարհների սպասարկումը, հիմնարկները, ամեն ինչ: է մի բան հարցնեմ. պետությունն էլ ու՞մ է պետք: էդ էլ տանք մասնավորին ու պրծնենք:

Մենք տեսել ենք՝ Երևանում աղբահանություն անողը փողը կառնի, բայց աղբահանության վիճակն էլի լավ չի:

Եթե մասնավորին հանձնվի, կդառնա Երևանի Sanitek-ը:

Եթե մասնավորն իրականացնի աղբահանությունը, գինը կբարձրանա, դա բնակչին ձեռնտու չի լինի:

Մասնավորն իր գումարը ինչո՞ւ պետք է ծախսի, սկզբից խոստումներ կտան, հետո ժողովրդի «քթից կբերեն»:

Մասնավորն ինչո՞ւ պետք է ավելորդ գումար ծախսի, ինչպես մենք չէինք գա այս քննարկմանը, եթե մեր հետևից մեքենա չուղարկեիք:

Աղբահանության հարցը մասնավորին տալը սխալ է: Վեոլիա ջուրը մասնավոր ձեռնարկություն է, հետևները շատ դժվար է աշխատել: Նույնն էլ աղբահանության դեպքում կլինի:

Աղբահանության հարցը մասնավորին հանձնելով ՏԻՄ-ն իրենից հեռացնում է խնդրի լուծումը: Ինչքան ուզում ես հետո դատի տուր, արդյունավետությունը, մեկ է, ընկնելու է:

Աղբահանությամբ զբաղվող մասնավոր ընկերությունը ռիսկային են, քանի որ նրանք

գումարի պատճառով կգա և աղբը կտանի:

Եթե տեխնիկան նվեր ստանա համայնքը, աղբահանության գումարը կնվազի, քանի որ այժմ Ստեփանավանի աղբահանությունն իրականացվում է մասնավորի կողմից:

Մասնավորը եթե գա, ինքը իր եկամուտի համար կփորձի լավ ծառայություններ մատուցել, որ լավ էլ գումարներ աշխատի:

Մասնավորները ավելի մասնագիտացված կլինեն, ոչ թե պետականը, որն ուրիշ շատ խնդիրներ ունի:

Մասնավորի դեպքում բողոքներն ավելի արագ արձագանք կստանան:

Եթե ՏԻՄ-երն են իրականացնում աղբահանությունը, վերահսկում է միայն բնակչությունը, եթե մասնավորը՝ և ՏԻՄ-ն է վերահսկում և բնակչությունը, հետևաբար որակն էլ ավելի լավ կլինի:

Մասնավորին ծառայություն պատվիրակելու համար պետք է հստակ մշակվի աշխատանքի նկարագիրը, օրինակ՝ պետք է հստակ սահմանել, թե ի՞նչ որակ ենք ուզում:

Մասնավոր ընկերությունների ընտրության դեպքում պետք է լինեն հստակ ստանդարտներով ու արդար մրցույթներ:

Մասնավորի առավելությունն այն է, որ պատասխանատուն մեկն է: Պետք գործի կարող ես հրաժարվել կամ դատի տալ մոտեցումը:

Դիլիջանի տարածքում այսպես կոչված «բեսեդկաները» հիմնականում մասնավոր են, և տերերը մի կամ երկու աղբաման տեղադրում են, բայց պետք է ասել, որ դրանք բավարար չեն: Միևնույն ժամանակ, կան մարդիկ, որոնք ուղղակի թափում են աղբը՝ անկախ որևէ հանգամանքից:

Պետք է մասնավորին ներգրավել այս գործի մեջ: Պետությունը օժանդակի, որ մասնավորը նորմալ ծառայություն մատուցի:

Նախկին կոմունալ ծառայությունները հիսուն-վաթսուն աշխատող ունեին, որ փողոցներն ավլում ու լվանում էին: Բայց դա պետական էր, ու հավանաբար աշխատում էր վնասով: Ամեն դեպքում մասնավորին տալը ճիշտ է:

Մասնավորը գնալու է էժան ու հեշտ աղբահավաքություն կազմակերպելու, կարող է աղբը տեսակավորի ու առանձնացված նյութերը վաճառի:

Մասնավորը եթե շահ ունի, ավելի լավ է կատարում իր գործը, քան համայնքը:

Պետք է այնպես ղեկավարել, որ մասնավորը, մտածելով սեփական շահի մասին, լավ կազմակերպի աղբահանությունը:

Պետք է հասկանալ, թե որոնք են բնակավայրի կարիքները, որքան ծախս է արվում, նոր միայն

յուրաքանչյուր պահի կարող են հրաժարվել աշխատել կամ կարող են սաբոտաժ անել:

Մասնավորի ծառայությունները թանկ են, բայց շատ հաճախ՝ ոչ որակով:

որոշել՝ տալ մասնավորին, թե ոչ:

Չեն հետևում, ծրագիրն արվում է տեխնիկան գնվում, աղբարկղերը դրվում, բայց չեն հետևում ու հոգացավ չեն: Սա բերում է նրան, որ աղբահանությունը պիտի մասնավորը իրականացնի:

Եթե այսօր համայնքապետարանին բողոք է ներկայացվում, էնտեղից վազում են, փորձում խնդիրը լուծել: Եթե մասնավորին տանք այդ ծառայությունը, համայնքապետարանին կարծես ձեռնտու է. բողոքի դեպքում մատ թափ կտա մասնավորի վրա, կտուգանի, ուղիղ կապ չի ունենա արդեն բնակիչների հետ:

Եթե ուզում ենք հիմնավոր լուծում ունենալ, պետք է մասնավորին տալ արտոնյալ պայմաններ, ազատել հարկերից: Դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրություններ կատարել, հաշվարկել, պիլոտ անել:

Որպեսզի կարողանանք հասկանալ, թե որքանով է արդյունավետ մասնավորին այս ծառայությունը հանձնելը, պետք է ուսումնասիրել համայնքներ, որտեղ նման փորձ արդեն կա, հասկանալ, թե ինչպիսին է պրակտիկան, նոր միայն այն ներմուծել այլ համայնքներ:

Պետք է հասկանալ՝ ինչպես է կազմակերպվում աղբահանությունը եթե տարբեր կազմակերպություններ են կամ էլ մասնավորի հետ համատեղությամբ:

Իսկ եթե մրցակցություն լինի, մասնավորները գուցե ավելի լավ աշխատեն, քան այսպես ասած մենաշնորհ ունեցող պետականը:

Եթե աղբի տեսակավորման համար համայնքը պետք է գումար տա, չենք ուզի, բայց եթե ինչ որ մասնավորի հետ համագործակցություն լինի, և դա եկամուտ բերի, կարելի է փորձել:

Ամենաճիշտն էն է, որ գյուղապետարանը պայմանագիր կապի գյուղում գործող մի գյուղտեխնիկայի հետ, ներսից մարդիկ աղբամանները գոնե երեք օրը մեկ դատարկեն իրենց ինքնաթափը, տանեն թափեն: Տասնմեկ գյուղին մեկ-երկու մեքենայի միջոցով ինչպե՞ս կսպասարկեն:

Համայնքը պիտի պատվիրատու, ոչ թե այսօրվա նման՝ համ պատվիրատու համ կատարող: Սա ճիշտ մոդել չէ: Միայն պատվիրատու լինելու դեպքում, համայնքը կկազմակերպի գնումը և կիրականացնի հսկողություն

Աղբահանության բիզնեսը դառնալու է շահավետ, իրենք են խնդրելու որ աղբամաններ տեղադրեն:

Աղբահանությունը պետք է շահ չհետապնդի, քանի որ աղբահանությունը ի սկզբանե հանդիսանում է համայնքապետի գլխավոր գործը:

Աղբահանությունը պիտի դարձնենք եկամտաբեր, բիզնեսը պիտի շահույթի ակնկալիք ունենա: Բայց պիտի նաև հաշվի առնենք, որ այսօր բիզնեսը ընկած է գերշահույթի հետևից: Մյուս կողմից էլ,

եթե բիզնեսը իմանա, որ իր վնասը ինչ-որ կերպ կփակվի, ապա այդ դեպքում գուցե հնարավոր կլինի, նորմալ շահույթի ակնկալիքով բիզնեսին ներգրավել այս գործում:

Արդյո՞ք փորձ կա, որ մի քանի կազմակերպություն մատուցի աղբահանության ծառայություն:

Մասնավորին կարելի է տալ կարճ ժամանակներով, որ եթե լավ աշխատի, երկարացնենք, չէ՝ փոխենք:

Դ. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ, ՄՈՒՏՔԵՐ, ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ, ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ, ԾԱԽՍԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վճարը հարյուրից դարձավ երկու հարյուր դրամ: Արդյունքում աղբահանության գրաֆիկը չի խախտվում, բայց անհավասար պայմանները պահպանվել են:

Աշոցքի խնդիրներից մեկն այն է, որ աղբաման չկա: Աշոցքում աղբի դիմաց վճարը քիչ է, որովհետև ծառայություն էլ չկա, ինչի՞ դիմաց վճարենք:

Ախուրյանում կա շրջիկ մեքենա, սակայն մեքենան ոչ բոլոր փողոցներն է սպասարկում, այդ պատճառով շատերը գումարը չեն վճարում:

Աղբահանության մեքենան հեռվից ենք տեսել, էն էլ ճամփով անցնելուց: Էդ մեքենան որ չենք տեսել, ինչի՞ համար վճարենք:

Աղբահանության դիմաց վճարումների ցածր մակարդակը ուղղակիորեն կապված է աղբահանության ծառայության վատ որակի հետ: Որակը բարձրանա, վճարն էլ կվճարենք:

Ես աշխատող մարդ եմ, առավոտյան գնում եմ աշխատանքի: Մեքենան գալիս է, ու ես չեմ կարողանում իմ վճարած ծառայությունից օգտվել: Ավելի լավ կլինի մի կենտրոնացված տեղ լինի, որտեղ կարելի է աղբը թափել ցանկացած ժամի:

Աղբահանման մեքենան մեր փողոցով չի գալիս, թե «ինձ հարմար չի»: Սեփական ուժերով տան մոտ տեղ եմ սարքել, որտեղ այրում եմ աղբը: Ու բնականաբար չեմ վճարում: Բա ի՞նչ անեմ...

Ձուրն էլ, որ վատ է լինում, չենք վճարում, թող աղբն էլ լավ լինի, վճարենք:

Նոր մեքենան լուծում չէ: Նոր մեքենայով նույն սպասարկումն է լինելու, վճարն ավելացնելու են, բայց ծառայության որակն էլ նույնքան վատ է մնալու:

Հիմա մարդիկ ունեն փորած փոսեր, ամեն մեկն իր տան մոտ: Որ մտցնեք աղբահանության կարգ, նա չի վճարի՝ ասելով, որ շարունակում է օգտագործել իր փոսը: Բայց իրականում, որ մեքենան հասավ տան դեմը, ինքն էլ է աղբը լցնելու մեքենան: Ես կվճարեմ, ինքը կասի «փոս

Լույսի համար սովոր ենք վճարել, աղբի համար էլ կսովորենք, թող գան տանեն:

Վճարումների պատրաստակամություն կլինի եթե մարդիկ իմանան, որ աղբահանության համակարգն աշխատում է:

Հասկանալի է, որ կան մարդիկ, որ ծանր սոցիալական վիճակում են, բայց դե եթե իմանան, որ իրենց առողջության համար է, կվճարեն:

Ախուրյանում վարձավճարը հարյուր հիսուն դրամ է, իսկ Աշոցքում հարյուր դրամ: Բայց Աշոցքում փողը չի հավաքվում:

Համապատասխան վճարի դիմաց մեզ նորմալ ծառայություն պետք է տրամադրվի: Պատրաստ ենք ավել վճարել, բայց իմանանք ինչի՞ դիմաց:

Որպեսզի ավել վճարենք, նաև վերաբերմունքի ու վստահության խնդիր կա. պիտի հավատացած լինենք, որ վճարը նորմալ հաշվարկվել է, ոչ թե ուռճացվել, իսկ ծառայություն մատուցողն էլ պետք է նորմալ վերաբերմունք ցույց տալ:

Հիմա մարդիկ պատրաստ են վճարելու, ուղղակի ճիշտ կազմակերպում չկա:

Ես խանութ ունեմ, հազար դրամ եմ մուծում: Բայց եթե նորմալ կազմակերպվի, պատրաստ եմ ավելի շատ վճարել:

Շատ չէ, բայց մարդիկ պատրաստ են մի քիչ էլ ավել վճարել - մի քիչ ավելի լավ աղբահանության համար:

Ավելի լավ կլինի մեքենան գա, աղբը տանի, դրա դիմաց էլ վճարենք:

Ես կարծում եմ, որ աղբահանության համար պարտադիր վճարել է պետք ու ըստ այդմ պահանջել:

Կեղտոտվածության պատճառով որքան հիվանդ երեխաներ են ծնվում, եթե մարդիկ հասկանան, որ դա փոխկապակցված է, գուցե պատրաստ լինեն վճարել:

Սկզբից մարդու ուղեղին հասնելու համար պետք է շրջիկ մեքենա լինի, որ մարդ սովորի նորմալ վճարել:

ունեմ»:

Որպես կանոն՝ մարդկանց 80-90% -ը չի վճարում աղբահանության վճարը ու նախընտրում է վառել:

Հատուկ նախատեսված աղբավայրերում բնակիչները չեն տանում աղբ թափեն, քանի որ նախատեսված գումարը չի ուզում վճարի բնակիչը:

Մենք այդքան էլ պատրաստ չենք վճարել ավելին՝ ավելի լավ ծառայության համար: Հիմիկվա ծառայությունն ու գումարը բավարար են:

Ուրասարում աղբման ընդհանրապես չկա, բա ժողովուրդն ի՞նչ անի, էդ աղբն ու՞ր թափի: Համապատասխանաբար՝ աղբի համար էլ չենք վճարում:

Բնակիչները կողմ եմ ավելի վատ ծառայություններ ստանան, բայց՝ անվճար, քան լավը՝ վճարովի:

Եթե աղբամաններից աղբի հեռացման հաճախականության խնդիրը նորմալ չլուծվի, ես կշարունակեմ չվճարել աղբահանության համար:

Բոլորն էլ խոսում են, բայց ոչ մեկը չի ցանկանում հարյուր դրամ ավելի վճարել, կամ իր ժամանակը տրամադրի քննարկումներին:

Մեր մոտ առանձին աղբամաններ ունենալու գաղափարը չի աշխատի, եթե դրա դիմաց վճարը բարձրանալու է:

Ստեփանավանի կենտրոնական փողոցում խնդիր չկա, ամեն օր մաքրվում է: Բայց այդ փողոցից հարյուր մետր հեռու իրավիճակը լրիվ այլ է՝ տասը օրը մեկ: Ընդ որում, և՛ մենք, և՛ կենտրոնական փողոցի բնակիչները վճարում ենք նույն գինը:

Եթե կենտրոնացված աղբավայրում պետք է վառեն աղբը, ապա իմաստը, որն է դրա համար վճարի գյուղացին, եթե միևնույն է գյուղացին նույնպես վառում է այն:

Մարդիկ կան, որ ասում են՝ ես աղբը այրում եմ կամ գետն եմ լցնում, ես չեմ վճարի: Դրա համար պետք է տուգանել:

Կոթիից »«ձեռներդ լվացեք», Կոթին ոչ մի գումար չի վճարի:

Ես Դիլիջան համայնքում շատ եմ լսել, թե ի՞նչ են անում, որ վճարեմ արտահայտությունը:

Ավտոյի առկայությունը դեռ քիչ է, քանի որ ոչ մեկ չի վճարի նրա ծախսերի, վարորդի և օգտագործման համար:

Ուզում ենք վարձը քիչ տանք, բայց լավ հավաքեն աղբը:

Ես վստահ չեմ, որ լրացուցիչ հարյուր դրամ կտամ աղբահանության համար:

Մուծենք, բայց աղբահավաքությունը չանե՞ն: Գազի սպասարկում է, էլի:

Եթե համայնքի բյուջեից տեղադրվեն աղբամաններ, իսկ աղբատար մեքենաների շահագործման համար վճարի գյուղացին, ապա բոլոր խնդիրները կլուծվեն:

Ստեփանավանում վարձը 200 դրամ է, Սարչապետում՝ անձի համար 50 դրամ: Հիմնականում վճարումները նորմալ են հավաքվում:

Ես բնակիչ եմ ու վճարում եմ աղբահանության համար, բայց չգիտեմ՝ ումից պահանջեմ, որ նորմալ իրականացվի:

Մարդիկ պետք է գիտակցեն, որ եթե ուզում ես լավ աղբահանություն պետք է լավ էլ վճարես:

Ավելի լավ կլինի շատ վճարեմ, բայց վստահ լինեմ, որ նորմալ ծառայություն կստանամ:

Ուզում ենք, իդեալական լինի, բայց չենք ուզում վճարել՝ չնայած գիտակցում ենք անհրաժեշտությունը:

Մեզ մոտ մարդիկ տան կահույքը, ներքնակը տանում են դնում աղբամանի մոտ, բայց ճիշտ կլիներ, որպեսզի ինքը վճարի նման աղբը տեղափոխելու համար:

Եթե բնակիչների մի մասը չի վճարում, տուժում են նաև այն բնակիչները, որոնք վճարել են. մեքենան այդ թաղամաս չի գնում:

Մարդիկ պետք է հասկանան, թե ինչի համար են վճարում և ինչու հենց այդքան:

Եկեք դուք պայմաններ եք ստեղծել, ինձանից էլ պահանջեք, որ վճարեմ, ոչ թե հակառակը:

Դովեղում, որպես սահմանամերձ գյուղ, աղբահանության վճար չկա: Հիմա մտածում ենք վճարի մասին, բայց պիտի ծառայության որակը փոխենք: Օրինակ՝ երբ աղբամաններ տեղադրվեն, միգուցե սկսենք վճար հաշվարկել ու հավաքել:

Դիլիջանում աղբահանության վճարը անձի համար 100 դրամ է, ու մենք դժգոհ չենք:

Եթե աղբահանությունը նորմալ լինի, մարդիկ պատրաստ կլինեն նորմալ վճարել:

Աղբի վճարները այնքան նվազ են, որ մարդիկ պատրաստ են կրկնակի էլ վճարել, որ որակը էլ ավելի լավանա:

Կան մարդիկ, որ պատրաստ են ավելի վճարել, քանի որ գոհ է շրջիկ աղբահանությունից:

Խաչազանում բնակչության ութսուն տոկոսը հաստատ վճարում է աղբահանության համար:

Եթե պահանջում ենք ծառայության որակի լավացում, պետք է պատրաստ լինենք նաև ավել վճարել:

Պետք է հասկանալ խնդրի կարևորությունը, վարձավճարը բարձրացնենք, ծառայությունը լավացնենք, նոր վերահսկողություն սահմանել:

Հոգեբանության խնդիր կա նաև այստեղ: Եթե դու

Աղբամանների ավելացումը դեռևս չի նշանակում, որ աղբահանության խնդիրը կլուծվի, քանի որ կգա մի պահ, երբ պետք է բնակիչը ավել մուծի: Այս պայմաններում դժվար թե բնակիչը համաձայնվի ավելի շատ մուծել:

Աղբի համար ծախսվող գումարների նպատակային չէ, քանի որ աղբը մի կետից վերցնում են տանում են մեկ այլ տեղ թափում, փոփոխություն չկա:

Հազիվ ենք աղբահանության գումարը տալիս, որ թանկացավ ընդհանրապես չենք տա:

Փոքր համայնքում որ մարդուն ասես՝ փող տուր, աղբդ տանեմ, չեն տա: Հաստատ:

Ես եմ, ավտո ունեմ, շաբաթը մեկ մեշոկով աղբը կգցեմ ավտոս, կտանեմ, կթափեմ, էլ աղբահանության համար ինչի՞ պիտի փող տամ:

Սկզբից պետք է լինի պատասխանատվությամբ, հետո մտքով ու նոր փողով:

Բնակիչը օրական 350 դրամի ծխում է, բայց 200 դրամ ամսեկան չեն ուզում աղբահանության գումար վճարել:

Մարդ կա, 200 դրամը չի տալիս, ասում է ինձ պետք չի ձեր աղբահանանությունը: Իր աղբը տանում է, գցում ձորը: Այս մարդկանց ոչ ոք պատասխանատվության չի ենթարկում:

Աղավնավանքում մարդիկ կան, որոնք չեն վճարում հիսուն դրամը՝ հիմնավորելով, թե աղբամանները հեռու են, կամ 5-6 երեխա ունի, այդ գումարը չի կարողանում վճարել:

Հովանավոր է պետք, թե չէ մենք պատրաստ չենք վճարել:

Թանկացումից կարող է որակը բարելավվի, բայց արդյո՞ք բնակիչները կարող են վճարել այդ որակի համար:

Մարդիկ հաճախ չեն վճարում աղբահանության գումարը ու մեքենայի ծախսը չի լինում ապահովել:

Մեր աղբը մենք կվառենք մեր փռում, թող աղբահանության համար հատկացվելիք գումարը տան մեզ:

Պարտադիր չի անպայման վճարել աղբահանության համար, որպեսզի կարողանաս պահանջել: Մենք չենք վճարում, բայց կարողանում ենք պահանջել:

Վճարողները մի յոթանասուն-ութսուն տոկոս են: Սկզբում խստացվել էր, հետո ավելի մեղմացավ:

Ես ամիսներով չեմ վճարել աղբի համար, բայց երբ ինձ պետք է եղել, առանձին գումար եմ տվել, եկել տարել են. սա էլ լուծում չի:

Ես ինչքան հասկանում եմ, որ սցենարն էլ քննարկում ենք, վերջը՝ վարձավճարի բարձրացումն է: Աչքիս էդպես էլ լինելու է:

Կարելի է նաև համակարգ մշակել, թե ով որքան է քո հարյուր դրամ վարձը տալիս ես, ապա հետևողական ես լինելու ու հետևելու ես, որ ամեն ինչ ճիշտ կազմակերպվի: Դու այդ հարյուր դրամով մասնակից ես դառնում այդ պրոցեսին:

Եթե աղբահանության գումարը նշված է 100 դրամ, և աղբահանությունը նորմալ չի իրականացվում, միգուցե գումարն ավելացվի և ծառայության որակը բարելավվի:

Եթե ջրի, լույսի և գազի համար մուծում ենք, ինչի պետք է չմուծենք աղբի համար:

Չմուծել հասկացություն չկա, ես չեմ հավատում:

Եթե մեր հարկերի հավաքման համակարգը նորմալ լինի, մենք կունենանք մի քիչ էլ գումար՝ սուբսիդավորելու համար աղբահանությունը:

Ամեն լավ բան փող արժի, պետք է գումար ծախսել աղբի ազդեցությունը ուսումնասիրել:

Մենք պատրաստ ենք թղթե պարկերի համար քսան դրամ տալ ամեն անգամ գնում կատարելիս, բայց չենք ուզում օրինակ հազար դրամ ամսական ավելի տանք, որ աղբահանությունն ավելի լավ կազմակերպվի:

Պետք է հստակ գումար սահմանվի, ոչ թե մեկը շատ մուծի, մյուսը՝ ինչքան ուզենա:

Պետք է հստակ հաշվարկվի, թե ինչքան գումար է պետք աղբահանությունը իրականացնելու համար ու այդ մեծ գումարը ճիշտ բաժանվի բնակիչների մեջ:

Եթե մարդը փաստացի բնակվում է, պարտավոր է վճարել աղբահանության համար: Եթե չեն պահանջում, մարդը չի էլ վճարում:

Մեր մուծած գումարն էդքան էլ շատ չի, որ ինչ-որ մեծ ծառայություն էլ պահանջենք:

Միշտ կարող են լինել ավել վճարել ցանկացող մարդիկ, մեծ հաշվով դա այնքան քիչ է, որ կարելի է փորձել:

Հետաքրքիր է, որ որոշ մարդիկ չգիտեն, որ պետք է վճարեն աղբահանության համար:

Չտված գումարը կորած է: Եթե մտածես, որ պիտի հինը վերցնես, հետո նորը սկսես, կսխալվես: Պարտքը միշտ կա, դրա հետևից չպետք է ընկնենք:

Մեր համայնքում աղբահանության համար անձին պետք է յոթ հազար դրամ, բայց վճարում են՝ հազարի չափ. կամ պետք է վճարն ավելացնել, կամ համայնքի բյուջեյից, կամ էլ այլ միջոցներ ծախսել:

Մենք հիմա այն վիճակում ենք, որ սպասարկման նվազագույն մակարդակն էլ էական է, դա պետք է լինի, որ հետո հասկանանք ինչպես զարգացնել:

Թանկացումներ չենք ուզում, թող համայնքի

աղտոտում և համապատասխանաբար վճարի:

Եթե մարդկանց մի մասը սկսի վճարել և լինի նորմալ աղբահանություն, վճարողներն իրենք կճնշեն չվճարողներին, որ վճարեն:

Եթե մեկը չվճարի, հաստատ հարևանները կխոսեն, ամոթանք կտան:

Ինձ թվում է, որ աղբահանության համար վճարը պետք է դառնա օրենքի պես մի բան ու ներդրվի նաև փոքր գյուղերում: Համայնքը պատրաստ է մեքենաներ ուղարկել փոքր գյուղեր վճարի հավաքագրման դեպքում: Թող բոլորը պարտադիր վճարեն: Այդ դեպքում ամեն ինչ կբարելավվի:

Շատ լավ կլիներ, որպեսզի աղբահանության վճարները հավաքվեն ինչպես այլ ծառայությունների դեպքում: Կտրոն չի տրվում վճարի դիմաց, իսկ մենք մոռանում ենք, որ վճարել ենք: Պետք է վճարել ինչպես գազի ու լույսի դեպքում:

Պետք է նաև վստահ լինենք, որ մեր վճարած գումարներն արդյունավետորեն են ծախսվում: Մեզ հետ պետք է խոսեն այդ մասին, ասեն, թե ինչպես են ծախսվում այդ գումարները, ինչպես է ծառայության վճարը գոյանում:

Վերահսկողության մեխանիզմն ու խստությունը անհրաժեշտ պայմանն է: Եթե երկու հարյուր դրամ էլ վճարի բնակիչը, կպահանջի:

Պետք է ստիպել բոլորին վարձավճարը ժամանակին վճարել: Այդ դեպքում մարդիկ շահագրգռված կլինեն, որ ամեն ինչ ճիշտ կազմակերպվի ու մեկը մեկին կհետևի, որ սխալ տեղ աղբ չթափեն և այլն:

Մասնավորը միանգամից կթանկացնի վարձավճարը:

Մասնավորի դեպքում ինքը կախված կլինի բնակչից, եթե նորմալ չկազմակերպեց բնակավայրի աղբահանությունը բնակիչն էլ չի վճարի:

Աղբահանությունը մասնավորին հանձնելու դեպքում հարյուր դրամ վարձավճարը կարող է դառնալ հազար դրամ: Սա չի աշխատի:

Կարելի է այնպիսի մոդել մտածել, որը թույլ կտա մասնավորին ու համայնքին մրցել. ով ավելի լավ ծառայություն մատուցի, նրան էլ կընտրեմ ու կվճարեմ: Օրինակ՝ մի թաղամասը մասնավորն է սպասարկում, մյուսը տեսնում է, որ դա ավելի լավ ծառայություն է, քան մատուցվում է համայնքի կողմից ու կսկսի մասնավորից օգտվել: Աստիճանաբար մրցակցության արդյունքում կհասկանանք, թե ով պետք է ապահովի աղբահանության ծառայությունը:

Եթե աղբահանությունը կատարի մասնավոր շահույթ հետապնդող ընկերություն, ապա այն ավելի շահագրգիռ կլինի ավելի շատ բնակչություն սպասարկելու ու վարձավճարները ժամանակին հավաքագրելու:

բյուջեից ծախսվի:

Ես առաջարկում եմ, որ Ախուրյանի ավագանին կարևորի աղբահանության ոլորտը, գումար հատկացնի, նոր մեքենաներ ձեռք բերեն ու փոքր բնակավայրերում ունենանք շրջիկ մեքենաներ:

Համայնքի բյուջեն էլ է իմ փողը, ու ես չեմ ուզում, որ իմ հարկերով նոր մեքենա գնվի: Հինգ-վեց մեքենա առել, կանգնեցրել են, հիմա էլ նո՞ր մեքենա են ուզում:

Մեր պետության բյուջեից պիտի գումար հատկացվի նորմալ տեխնիկա գնելու համար:

Համայնքի բյուջեից ամեն տարի ավելորդ ծախսեր են իրականացվում, ավելի լավ է դրանց փոխարեն նորմալ աղբահանություն իրականացվի:

Ծախսերը բյուջեի հաշվին է պետք անել, ոչ թե բնակչի: Բնակիչն առանց այդ էլ փող չունի:

Պետությունը պետք է իր գործը անի. մշակի համապատասխան մի օրենք, ըստ որի աղբահանությունը կազմակերպվելու է բոլոր համայնքներում ու հստակ սահմանի կոնկրետ գումար ու, հենվելով այդ ամեն ինչի վրա, մենք պետք է կատարեն վճարումը:

Եթե լինի հինգ հարյուրից ավել աղբահանության գինը, մասնավորին էլ չենք վճարի:

Համայնքի բյուջեից պետք է սուբսիդավորվի սոցիալական ցածր խավի աղբահանության վճարները կամ համայնքի իշխանությունները պետք է միջոցներ ձեռնարկեն, որ գինը իջնի:

Ավելի լավ է, որ համայնքապետարանը կարգավորի աղբահանության վճարի հավաքագրումը:

Մասնավորը չի կարող աղբահանություն կազմակերպել, քանի որ ինքը մեխանիզմ չի ունենալու վճարները հավաքելու:

Եթե նույնիսկ մասնավորը սկսի աղբահանությամբ զբաղվի, միևնույն է բնակիչը չի վճարելու աղբահանության համար ու վճարելու է համայնքը:

Եթե ես հիմա չեմ վճարում համայնքին, վաղն էլ

Համայնքը երբեք չի կարա լուծի աղբահանության խնդիրը, քանի որ ինչ գումար էլ համայնքը առաջարկում է վճարելու համար, միևնույն է բնակիչը դժգոհում է: Նույնիսկ ամսեկան 200 դրամին նա համաձայն չի:

Ավելի լավ է, որ համայնքը աղբահանության հարցով զբաղվելու համար վճարի մասնավորին ու մասնավորը իրականացնի ողջ գործընթացը:

Այսօր, յուրաքանչյուրի անձինք գանձվում է հիսուն դրամ: Մասնավորը մտավ գուցե վարձը կդառնա հազարներ: Մոտեցումը պիտի լինի, որ ինչ որ կարող է բնակչությունը վճարի, մյուս մասը պետք է վճարի համայնքը:

Հասկանում ենք, որ կթանկանա, բայց հազար դրամներից խոսելուց առաջ, պետք է հաշվարկել թե մասնավորին պատվիրելու դեպքում, որքան կդառնա վճարը, գուցե մի քանի հարյուրի մասին է, ոչ թե հազարների, ու այդ դեպքում բնակչին էլ հարմար կլին ու մատչելի:

Մասնավորը ավելի հեշտ կհավաքի աղբը, եթե չվճարես՝ աղբը չի տանի:

Աղբի համար բյուջեից շատ գումար հատկացնելը այդքան էլ արդարացված չէ:

Մասնավորի դեպքում վարձավճարը կբարձրանա:

Նույն գումարով մասնավորը պատրաստ չէ աշխատել, իսկ բնակիչը պատրաստ չէ ավել վճարել:

Աղբի դեպքում մասնավորին կվճարեն այն դեպքում, եթե մասնավոր սպառնա դատարանով:

Մասնավորը հենց մտավ դաշտ, կառաջանա վճարների խնդիրը: Արդյոք համայնքի բնակիչը կարող է վճարել մասնավոր ծառայության համար:

Մասնավորը շահույթ պետք է հետապնդի, դա պարզ է: Եթե մենք մասնավորին ենք հանձնում աղբահանության ծառայությունը, որակը միգուցե կլավանա, բայց վարձերը կբարձրանան:

Այն գյուղերը, որոնք բողոքում են աղբահանությունից ու դրա համար չեն վճարում, ինձ թվում է, որ ուղղակի չեն կարողանում վարձի հավաքագրման հարցը կազմակերպել ու լուծել: Եթե վճարի հարցը լուծեն, ապա աղբահանությունը կիրականացվի:

Գումարը հավաքում է տեսուչը: Հաճախ իրենք գալիս են, մենք տանը չենք լինում, ավտոմատ մասնավորին չեմ վճարելու:

Օտարերկրյա ներդրողին ու ծառայություն մատուցողին բերեցին Հայաստան, դրեցին նոր տեխնոլոգիաներ, բայց չկարողացան աշխատեցնել, քանի որ վարձավճար չկարողացան հավաքել:

Պետությունը չպետք է թելադրի համայնքին, թե ինքը իր հավաքագրված գումարները ոնց ծախսի ու այդ ժամանակ համայնքը կկարողանա գումար հատկացնել աղբահանության համար:

Աղբահանության վճարումներից պետությունը օգուտ չի քաղում, այդ պատճառով աղբահանության հարցով չի զբաղվում:

Ես Ախուրյանի ավագանու անդամ եմ: Մենք արդեն նախատեսել ենք հարյուր քսան նոր աղբաման ձեռք բերել հունվար-փետրվար ամիսներին: Մենք նախատեսում ենք նաև մեքենայի այցելությունների հաճախականությունը ավելացնել: Եթե բնակչությունը լուրջ մոտենա անձը հարյուր դրամ չնչին վարձավճարին ու ժամանակին միշտ մուծի, ապա ամեն ինչ նորմալ կաշխատի:

Եթե իմանում ենք, որ մեկն անվճարունակ է, մենք ունենք գյուղական խորհուրդ, օգնում ենք, վճարում ենք, որ աղբը չկուտակվի:

Որպեսզի բնակչի վրա չմնան վճարումները, առաջարկում ենք, որ համայնքի բյուջեից ինչ-որ գումար հատկացվի ու սուբսիդավորվի:

Մենք համաձայն ենք, որ մեր վճարած հարկերից որոշակի գումար պետությունը հատկացնի աղբահանության խնդրին:

Որպես ամփոփում բոլոր հնարավոր սցենարների. լավագույն տարբերակը մեկն է. ամեն գյուղում մի փոս է փորվում որպես աղբավայր, մի մարդ է նշանակվում իր տեխնիկայով աղբահանություն իրականացնելու համար, էս մարդուն գյուղապետարանը փող է վճարում, ինքն էլ հաստատված ժամանակացույցով էդ գործն անում է: Մարդիկ հաստատ կվճարեն աղբահանության դիմաց, որովհետև կտեսնեն արդյունքը:

Համայնքի հավաքված գումարները չգնան պետական բյուջե ու մնա համայնքի տիրապետման տակ, համայնքն էլ կկարողանա լուծել աղբահանության խնդիրը:

Ներկայում ավագանին ասում է բյուջե չկա, իսկ բնակիչներն ասում են երեք հոգու համար վարձավճարները բավականին թանկ է:

Սարչապետում աղբատարի վարորդն է վճարները հավաքում:

Դիլիջանը հանրապետությունում միակ համայնքն է, որտեղ թաղապետարանը պայմանագիրը կնքում է ըստ աղբամանների քանակի, համապատասխանաբար հաշվարկվում է նաև աղբահանության վճարը: Սա շատ արդյունավետ պրակտիկա է:

դառնում ենք չվճարող: Եթե աղբահանության գումարի հավաքելը կազմակերպվի կոմունալների պես (օնլայն, փոստ, տերմինալ), միանշանակ վճարումների քանակը կաճի: Մատների վրա կարող եմ հաշվել այն գյուղական համայնքները, որտեղ աղբահանության կամ այլ ծառայությունների վճարները խնդիրներ չեն առաջացնում: Ես Քարինջի բնակիչ եմ, բայց ինձ ոչ մեկը չի մոտենում, ասի՝ վճարի աղբի համար: Ու՞մ վճարեմ: Ես հիմա ժամանակավոր ապրում եմ Դիլիջանում, բայց ոչինչ չեմ վճարում: Գումարը գանձվում է ըստ գրանցման վայրի: Երբ Իջևանում ուսանող էի, ես աղբահանության համար վճարում էի, գրանցումը պարտադիր չի: Մարդիկ պիտի իմանան, թե որն է այն օղակը, ում պիտի վճարեն: Տվյալ պահին գերակա խնդիրը աղբահանության ոլորտում կարելի է ասել, որ վճարման մեխանիզմների ներդրումն է և վերահսկողությունը: Որ վճարեն բոլորը, վճարեն հարմար եղանակով: Թող չվճարողին տուգանեն, բայց հիմնավոր: Աղբահանության համար ասել են, որ Արդշինբանկում կարող ենք վճարել աղբի համար: Բայց մի բանկով հարց չի լուծվի, մանավանդ, որ տվյալ բանկով ոչ մի գործարք չեմ անում: Նախաձեռնող չկա, որը կարողանա կազմակերպել և գյուղացիներից գումար հավաքագրի: Այդ ժամանակ բոլորը կհամաձայնվեն վճարել աղբի համար: Աշոցքում վճարը չեն գալիս հավաքելու, եթե նորմալ հավաքագրում կազմակերպվի, մարդիկ կվճարեն: Աղբահանության վճարի ձևավորումն անարդար է. կրծքով կերակրվող երեխայի համար էլ են նույն գումարը գանձում: Բայց պետք է այդ վճարի ձևավորման համար սահմանել, թե որ խումբը որքան պետք է վճարի:	Կարելի է հատուկ խորհուրդ լինի, ովքեր մշակեն, թե որ ընտանիքից որքան գումար հավաքեն:
Քաղաքում մոտավորապես 70%-ն է վճարում, իսկ գյուղում 70%-ը չի վճարում: Քաղաքում անձի քանակով են վճարում աղբը, իսկ ինչի մեր մոտ այդպես չի: Գյուղական բնակավայրերում ոչ մի բնակիչ աղբահանության համար գումար չի վճարում:: Քաղաքաբնակները սովոր են աղբահանության վճարներին, գյուղերում՝ ոչ: Վարձավճարի ավելացումը գյուղական համայնքներում հնարավոր է բացասական հետևանքներ ունենա: Ծախսերը տարբեր են. գյուղում այլ է, քաղաքում	Բաղանիսում և Ոսկեվանում, որպես սահմանամերձ բնակավայրեր, վարձավճար չի գանձվում: Մեր համայնքում չենք վճարում աղբահանության համար. սահմանամերձ համայնքներում այդպես է: Ես ինչքան լաց եմ լինում, չի նշանակում, թե էդքան անվճարունակ եմ: Շատ լավ կլիներ հասկանալ իրականությունն իր ամբողջության մեջ: Օրինակ՝ սահմանամերձ համայնքում պետք է հասկանալ, թե որն է առաջնային. կա ընտանիք, որը չորս երեխա ունի ու չի վճարում աղբահանության համար: Արդյո՞ք այս դեպքում

այլ, հետևաբար աղբահավաքության գումարն էլ պետք է համապատասխանաբար տարբեր լինի: Եթե լինի աղբարկղեր, ապա գյուղացին ժամանակի ընթացքում կսովորի, որ աղբը պետք է աղբամանի մեջ թափել, բայց աղբահանությունը պետք է լինի անվճար, քանի որ գյուղացին չի վճարի: Այս պահի դրությամբ բացառված է, որ գյուղում որևէ մեկը աղբահանության համար գումար կվճարի: Այս պահին գյուղացին նույնիսկ մթերք գնելու գումար նույնիսկ չունի, ինչպես նա պետք է աղբի համար վճարի: Համոզված եմ, որ ոչ մի գյուղացի պատրաստ չի աղբի համար վճարի նույնիսկ եթե աղբահանությունը տեղի ունենա օրական տաս անգամ: Գյուղական համայնքներում ասում են այդքան գումար տալու փոխարեն, կլցնեմ ծորը: Եթե քաղաքում էլ գյուղում էլ նույն գումարն են մուծում աղբի համար, ինչու է քաղաքում ավելի լավ, քան գյուղերում: Մարդիկ նախընտրում են գումար չտալ աղբահանության համար, ինքնուրույն թափել կամ վառել իրենց աղբը: Գյուղերում հիսուն, քաղաքում՝ հարյուր դրամ արժի աղբահանությունը:	աղբահանության վճարն առաջնային է: Սահմանային գյուղերում առաջնայինը ոչ թե աղբահանության խնդիրն է, այլ աշխատատեղերի ստեղծումը: Ձուջևանում որոշեցինք մարդը յոթանասուն դրամ հավաքենք աղբահանության համար: Բայց տվողները միշտ նույն մարդիկ էին: Մնացածն էլ ասում էին, որ աղբ չունեն, դրա տեղը տանում էին դպրոցի հետևը գցում կամ վառում: Աղբահանությունը Բաղանիսում առաջնային խնդիր չի. լավ, թե վատ, բայց ապահովվում է:
Բարերարի կողմից աղբամանների նվիրատվությունը անիրականանալի բան է: Աղբահանող մեքենա գնելը համայնքի բյուջեի համար լրացուցիչ ծախսեր է ենթադրում: Մի կողմից շատ լավ է, որ բարերարը նոր աղբամաններ է նվիրում համայնքին, բայց պետք է հասկանալ, թե դրա պահպանումն ինչ է նշանակում համայնքի համար: Մեքենայի անվադողը եթե փչացավ արդեն անհնար կլինի դրա շահագործումը. չես կարող նվեր տվողից մեկ էլ անվադողի փող ուզել: Լավ տեխնիկան բերեցինք, աղբարկղեր տեղադրեցինք: Բա դրա պահպանման ու շահագործման հարցը՞: Համայնքը պետք է դա վերցնի իր վրա: Բայց մարզպետարանը, կամ համայնքապետարանը այնքան փող ունի՞, որ կարողանա այդքան մեքենաներ առնել, բոլորի հարցերը լուծել: Բյուջեի հինգ տոկոս ի՞նչ է նշանակում՝ 29 միլիոն դրամ. դրանով միայն նոր մեքենա են առնելո՞ւ...	Մեր ասած աղբահավաք մեքենան սովորական բեռնատար է, դրա սպասարկումը նորմալ կանենք, դուք բերեք: Եթե տեխնիկան նոր լինի, մաշվածությունը քիչ կլինի, արդյունավետությունը՝ շատ, ծախսերն էլ կպակասեն: Մեր համայնքում կես-կես ենք անում, մեկը մենք ենք տալիս, կեսը հատուկ ծրագրերով, որ մեքենաներ առնենք: Համայնքում դեռևս մեքենա չի կանգնել փող չլինելու պատճառով: Ամեն ինչը ինչ գիտենք աղբահանության մասին, գրանտներով է, էնպես չի, որ պետությունն է տալիս: Պետք է բարեգործական ծրագրերի շրջանակում լուծել գյուղերի աղբահանության խնդիրը:
Աշոցքում և՛ վճարումները, և՛ աղբահանությունը նորմալ կազմակերպվում է: Ախուրյանում հավաքագրումը նորմալ է իրականացվում՝ ի տարբերություն Աշոցքի:	Աշոցքում իրավաբանական անձ գրեթե չկա, վճարողները բնակիչներն են, իսկ Ախուրյանում շատ են, դրա համար էլ վճարը հավաքվում է: Լորուտում բավական լավ է իրականացվում աղբահանությունը, աղբամաններ կան, բայց մենք աղբահանության համար չենք վճարում:

Տարիներ են պետք: Մարդիկ նախ պետք է գիտակցեն, որ աղբը տանելու համար վճարելը դա նորմալ, ընդունված երևույթ է:

Մեր գյուղերում չվճարելու պատճառը մարդկանց գիտակցությունն է: Մտածում են, եթե հարևանս չի վճարում, ես ինչի՞ վճարեմ:

Մարդկանց գիտակցության մեջ դեռ չի մտել, որ աղբն էլ է կոմունալ ծառայություն:

Քարինջ գյուղի մոտակայքում կան հուշարձան-աբյուրներ, որտեղ մարդիկ գնում ժամանակ են անցկացնում և աղբը թափում հենց այդտեղ:

Բնակիչը պետք է **գիտակցաբար** աղբը ճիշտ վայրում թափի, այլ կերպ անհնար է:

Մարդկանց գիտակցության բարձրացումն է մեծագույն խնդիր: Մարդ կա հատ-հատ իր աղբը անընդհատ թափում է այստեղ և այնտեղ, այն կոմպակտ ինչ-որ բանի մեջ հավաքելու ու նոր թափելու փոխարեն:

Ամեն մարդ իր օրինակով պետք է ցույց տա, որ իրավիճակ փոխվի:

Առաջնայինը մարդկանց գիտակցության վրա ազդելու մեխանիզմների կիրառումն է:

Պետք է ավելի շատ աշխատել մարդկանց գիտակցականի վրա:

Մեծ մասը անգիտակցաբար է աղբը ձորը գցում, իսկ մյուս փոքր մասն էլ աղբի հանձնման, վերամշակման տարբերակներ է փնտրում, որ էլ ձորը չթափի:

Մեր ժողովրդի մեջ էդ կուլտուրան չկա, աղբամանի կողքին են դնում աղբը, ոչ թե մեջը:

Քո հետևից աղբը թափելու կուլտուրան պետք է սովորեցվի մանկապարտեզներից սկսած:

Կարելի է ձորում գնալ լավ ժամանակ անցկացնել, աղբը հավաքել տանել մոտակա աղբավայրում թափել, ամեն ինչ ներքին կուլտուրայի խնդիր է:

Ոչ մի ծրագիր չի աշխատի ու ոչ մի բյուջե չի հերիքի, եթե մարդիկ կուլտուրա չունենան:

Պետք է խիստ օրենքներ լինեն ու ներքին կուլտուրա լինի բնակիչների մոտ:

Զբոսնելու վայրերում աղբամաններ կան, բայց մարդիկ որտեղ ուտում են, շարունակում են նույն տեղը աղբ թափել:

Հայ զբոսաշրջիկները շատ փնթի են, գալիս թափում գնում են. արտասահմանցիները իրենց հետևից նորմալ հավաքում - գցում են աղբամանները:

Հայերը մտածում են, որ իր տունը միայն ցանկապատի այս կողմն է, եթե այդ հոգեբանությունը փոխվի, մենք ինչ-որ բանի կհասնենք:

Առաջինը պետք է փոխենք համայնքների մտածելակերպը: Փոքր համայնքները մինչև խոշորացումը սովոր չեն եղել նորմալ աղբահավաքություն իրականացնել:

Գյուղապետը, համայնքապետը, մարզպետը ի՞նչ անեն, եթե բնակիչը աղբը ճիշտ վայրում թափելու կուլտուրա չունի:

Ես գիտակցում եմ աղբը վառելու հետևանքները, բայց այլընտրանք չունենք:

Գյուղերում պետք է պրոպագանդա անել ու օրինակ ծառայել, որպեսզի քաղաքակրթությունը այնտեղ էլ հասնի ու աղբահանության կուլտուրա զարգանա:

Պետք է սահմանել տեղերը, նշել, տեղեկացնել, ընդգծել, կարմիրով: Աղբը սխալ տեղ թափողին էլ՝ ստալին անել:

Կողքինին նախազգուշացնելը տարբեր կերպով կարելի է անել. ահազանգելու փոխարեն աղբահանության ժամանակ կարելի է ծառայությունն իրականացնողին ուղղակի տեղեկացնել, թե որտեղից է գոյանում աղբը ոչ պատշաճ վայրում, ով է դրա համար պատասխանատու: Վերջինս էլ արդեն պետք է զբաղվի այդ հարցով:

Համայնքի ղեկավարը կարող է բնակիչներին տեղյակ պահել, որ մեքենա կա, բայց շահագործման գումարը չկա, կսահմանվի գումար մեքենայի պահպանման և վառելիքի համար:

Բնակիչները պետք է տեղյակ լինեն նորմատիվների մասին, որոնցից է օրինակն այն, որ շինարարական աղբը չի կարելի թափել սովորական աղբամաններում:

Ես առաջարկում եմ, որ մեր գյուղում պաստառներ տեղադրեն ու քարոզեն, որ մարդիկ պատասխանատու կերպով վերաբերվեն աղբահանությանը:

Դպրոցի միջոցառման ժամանակ համայնքի ղեկավարն իր ավտոյով գալիս է ու տանում աղբը:

Պետք է սեմինարներ անել բնակիչների մասնակցությամբ և բացատրել, որ աղբը ճիշտ տեղը թափելու օգուտ իրենց է ու ոչ ոք, բացի իրենցից, չի տուժում, երբ աղբը սահմանված վայրերում չեն թափում:

Մեզ մոտ փոխանակ նկատողություն անենք աղբը թափողին էլ իր հետևից ենք սկսում թափել

Մարդկանց պետք է կրթել, բայց պետք է հետևողական լինել: Աղբի տեսակավորումն աշխատեց, մարդիկ առանձին թափում էին պլաստիկ շշերը, բայց հետոն ինչպես է կազմակերպվում, պարզի չի, այդ մասին էլ պետք է տեղեկացնել մարդկանց:

Գյուղացիները կաշխատեն նույնիսկ աղբամանի

Ժողովրդի մեջ մշակույթ չկա, որ աղբը բերեն ու գցեն աղբամանի մեջ. կողքն են դնում:

Ինչ էլ անես, երկու տարի հետո նույն վիճակն է լինելու: Գեղ չկա, որ շուն չեղնի:

Առավոտ կելնիս, գտեսնես երեխեքը տոպրակով իրենց աղբը չիդես որտեղից բերել շպրտել են հայաթիդ մեջ:

Վեց տարեկան երեխան չպիտի աղբը տանի թափելու, բոյը չի հասնում, որ աղբամանի մեջ գցի:

Գյուղի տատիկներից մեկը նշում էր, որ իր երեխա ժամանակ աղբյուրի ջրից բաժակով ջուր էին խմում, մի քիչ ավելի ուշ լվացք էին անում, իսկ հիմա միայն աղբ են թափում այդ աղբյուրի մոտ:

Կոթիում սկզբնական շրջանում մարդիկ թերահավատ էին աղբահանության հարցում, բայց հիմա արդեն սովորել են աղբը ճիշտ տեղում թափելուն:

Այսօր Զուլեանում տասնվեց հատ աղբարկղ կա, բայց ճանապարհի վրա են բոլորը: Գալիս գողանում են, ստիպված բետոն ենք անում:

Բաղանիս համայնքում վերջին երեք տարիներին տեղադրվել են աղբամաններ, բայց մտահոգիչ է աղբավայրերի հարցը: Բնակավայրը գտնվում է միջպետական ճանապարհին մոտ և Հայաստան այցելողները շատ տհաճ կարծիք կկազմեն համայնքի և երկրի մասին:

Տարիներ ի վեր հայաստանցին իրեն սեփականատեր չի զգացել, ընդհանրական գույքին վերաբերվել են որպես օտարի գույքի, էստեղից էլ գալիս է էդ անփույթ վերաբերմունքը հանրային գույքին:

Ժողովուրդը ամեն ինչի համար դժգոհում է ու միևնույն է շարունակելու է դժգոհել, ինչ ուզում եք արեք:

Նինոցմինդայում տասը մետրը մեկ աղբաման է դրած, կենտրոնական աղբահանությունն էլ վրեն: Բայց ահավոր կեղտոտ քաղաք է: Դաստիարակություն չկա: Նույն էլ էստեղ է, ինչքան ուզում եք համակարգ դրեք, եթե դաստիարակությունն ու մտածելակերպը չփոխվի, բան էլ չի էղնի:

Աղբամանը ու կողքի տարածքը էնքան վատ վիճակում են, մարդիկ չեն մոտենում, հեռվից շպրտում են:

Մարդկանց մտածելակերպը պիտի փոխենք, թե չէ ոչ մի մեքենա կամ աղբարկղ օգուտ չի տա:

Ռուսի զուգարանի կաֆել կշարեն, իրենց գյուղում աղբահավաք չեն աշխատի. հիմա մարդիկ արդեն խելոքացել են, կմնան - կանեն:

Երեկոյան աղբն ուզում էի թափել, աղբարկղի կողքին նստած մարդն ասում է գետնին գցի, եթե դու չես կարող, ես կգցեմ.

Որ մաքուր տեղ ես մտնում, ուզում ես կեղտոտ կոշիկներդ մաքրես, նոր մտնես, որ չկեղտոտես: հսկիչ, որպեսզի աղբը ճիշտ վայրում թափվի:

Պետք է աղբամանների վրա ինչ որ արտահայտություն գրված լինի, որ մարդիկ ամաչեն՝ ուրիշ տեղերում չթափեն:

Երեխես ասում է, թե ինչու եմ վառում աղբը: Դպրոցում անցել է, որ դա վատ է, ու հիմա ընդդիմանում է:

Ամեն մարդ իր վրա պետք է աշխատի, մենք պիտի փոխվենք, միայն աղբի մեքենաները, աղբամանները ու դրանց աշխատանքը չի:

Թումանյանում աղբարկղ կա հենց խանութի մոտ, բայց էլի երբեմն էնտեղ չեն թափում աղբը: Պետք է տարբեր սեմինարների միջոցով աշխատել մարդկանց հետ:

Երեխաները դեռ մանկապարտեզից պետք է սովորեցնել, որ պետք է իր կերած կոնֆետի թուղթը ճիշտ տեղում թափել:

Երիտասարդները փոխվում են, մենթալիտետը փոխվում է ու հույս ունենք հինգ տարի հետ բոլորը կհասկանան, որ աղբը պետք է աղբամանի մեջ թափել:

Պետք է աղբի նկատմամբ վերաբերմունքը փոխվի: Դա պետք է սովորեցնել դպրոցից:

Ծառայությունների որակի բարձրացումն առանց կրթական կոմպոնենտի հնարավոր չի: Մարդն իր տնից պիտի աղբը տարանջատել սկսի:

Պետք է խնդրի լուծումը սկսել դպրոցից, մարդու ուղեղի մեջ էլ պետք է մտցնել, որ աղբը պետք չի ամեն տեղ թափել:

Բնակիչները պետք է աղբը գետնին գցող մարդուն նկատողություն անեն ու խորհուրդ տա, որ աղբը ճիշտ վայրում գցի:

Բնակիչների մոտ պետք է ձևավորվի այն մտածելակերպը, որ աղբը գետնին քցելու փոխարեն պետք է անպայման աղբամանի մեջ գցի:

Սեմինարներ է պետք անցկացնել ու մարդկանց բացատրել՝ ինչ, ինչպես և ինչու:

Աղբաման ավելացնելով խնդիրը չի լուծվելու, որովհետև դրան զուգահեռ պետք է նաև կրթել բնակիչներին, թե ինչպես պահպանել նորմատիվները:

Ես՝ որպես բժշկականի ուսանող, կարող եմ սեմինար կազմակերպել, որ մարդիկ գան՝ իմանան վնասները. եթե ամեն անգամ տասը հոգի էլ գա, օգուտ կլինի:

Եթե նորմալ ասենք բնակիչներին, որ աղբը պետք չի թափել աղբամանի մոտ, կաշխատի:

Բնակիչներն իրենց ուժերով փորձել են համոզել բնակիչներին աղբը թափել աղբամանում, օրինակ՝ աղբամանները ներկելով, սլաքները դնելով, բայց փոփոխություն չկա:

Վերջին մի տարում երիտասարդների ու երեխաների վարքում ինչ-որ բան փոխվել է.

Հիմա եթե մեր շուրջը մաքուր լինի, մեր վարքն էլ կփոխվի:

Զարգացած մարդը փնթի չի կարող լինել:

Մեր ազգը աղբը հեռացնելու մշակույթ չունի:

Հարևաններնն ունեն սովորություն «մեկը մյուսի վրա գցելու», բոլորը պետք է հասկանան, որ աղբի խնդիրը մեզ բոլորիս համար է կարևոր:

Գյուղերում դաստիարակության խնդիրն ավելի լուրջ է:

Ստեփանավանում պլաստմասե աղբամաններ կան, որոնք դրա քույր քաղաքն է նվիրել, բայց զգալի մասը վատ վիճակում է: Ծխում են, առանց հանգցնելու նետում աղբաման ու վնասում:

Դաստիարակությունը պետք է փոխել, մարդկանց համար պետք է սովորություն դառնա աղբը չթափել ուր կպատահի:

Գրեթե բոլոր համայնքներում, փողոցներում աղբը հիմնականում տղամարդկանցից է գոյանում՝ ծխախոտ, գարեջրի շշեր...

Հայկական մենթալիտետով ակտիվ կնոջ հետևից ինչ ասես ասում են, նույնիսկ տան անդամները:

Դպրոցներում հերթապահություն է սահմանված, բայց հիմնական մաքրությունը հավաքարարներն են ապահովում:

Աշակերտները, եթե իմանան որ իրենք են մաքրելու դասարանն ավելի մաքուր կպահեն:

Եթե աղբամանը դրված է միայն աղբը թափելու համար, էլ ինչ պետք է անենք, որ մարդիկ հասկանան, թե ինչի համար է այդ աղբամանը:

Գյուղում բնակիչները սաղ իրար կճանչեն, գյուղում էս տեսակի խնդիրները ավելի հեշտ է կազմակերպել:

Մենք ասիացի ենք, ուզում են մեզ եվրոպացի դարձնել:

Ցանկացած գաղափար լավն է, բայց պետք է տեղայնացվի, մարդկանց մենթալիտետի հետ համապատասխանեցվի:

Ժողովուրդն ամեն գյուղում արդեն գտել է իր ավանդական աղբահանության մեթոդները:

Բնակիչներն էլ են խնդիր. հաճախ աղբը լցնում են կողքը, ոչ թե աղբամանի մեջ:

Ամեն առավոտ աղբը հավաքում են, բայց ժամը չորսի կողմը աղբամանը բացում ես, մեջը դատարկ է, իսկ կողքերը լրիվ աղբ:

Երբ աղբամանը տեղադրվեց մարդիկ դեռ սովոր չէին աղբը թափել աղբամանում, բերում կողքի փոսն էին լցնում, բայց մի քանի օր հետո մարդկանց վարքագիծը փոխվեց. մարդիկ սկսեցին աղբանը լցնել:

Ասում են փոխենք վիճակը, սկզբում ժողովրդին պիտի փոխենք, հետո նոր անցնենք մյուս հարցերին:

երեխաներն արդեն սպասում են, մինչև հասնեն աղբամանի, նոր ծեռքի թուղթը թափեն:

Թղթերը փողոցում գցելու դեմ պայքարել ենք հետևյալ կերպ, ես ինքս երիտասարդների ետ ձեռնոցներ ենք հագել ու համայնքում սկսել հավաքել աղբը, ու այդ երիտասարդները հետո արդեն իրենք դիտողություն էին անում այլոց, որ թափում են աղբը փողոցում: Սա դաստիարակելու մի ձև է, երիտասարդների ուժերով կարելի է վարքագիծ փոխել համայնքում:

Մենք մի քանի տարի առաջ ակցիա կազմակերպեցինք, երեխաներին հորդորելով հեռախոսներով նկարել բոլոր անօրինական աղբաթափության դեպքերը, հետո արդյունքները ներկայացրեցինք համայնքապետարան:

Ժողովրդի մտածողությունը պիտի փոխվի, պետք է այսպիսի քննարկումներ հրավիրվի ու ժողովրդին բացատրվի ու ցույց տրվի այլ երկրների փորձը, որ մարդիկ լսեն սովորեն ու վարքագիծ փոխեն

Դպրոցում դասերից հետո բնապահպանական թեմաներով քննարկումներ էինք անում, որոշեցինք մեր ուժերով կտորից տոպրակներ կարեցինք, տվեցինք բնակիչներին և խանութներին, բայց մարդիկ թափեցին դրանք և սկսեցին նորից պոլիէթիլենային տոպրակներ օգտագործել:

Նոր սերնդին պետք է կրթենք, թե ինչպես մաքուր պահենք մեր շրջապատը:

Առաջնային խնդիրը հետևյալն է. ամեն մեկս մեր երեխային պետք է սովորացնենք, որ աղբ չթափի: Դա է հարցի միակ լուծումը:

Համայնքների շատ բնակիչներ չեն ուզում ծառայություններ, որովհետև սովոր են բլուրի հետևը աղբը թափել:

Եթե մեկը բերի իմ տան դեմը աղբը դնի, կտամ գլխին:

Երիտասարդ սերունդը կարող է հարմարվի աղբահանությանը, բայց **մեծերը** կշարունակեն աղբը այրել տան հետևում:

Ծերերի համար պետք է հատուկ պայմաններ ստեղծվի, որպեսզի նրանք կարողանան իրենց տան աղբի հարցը լուծել:

Համայնքում **երիտասարդները** ակտիվ են, բայց մեծահասակները ասում են ինչներիս է պետք:

Աղբահանության պես մի բան է, մենք պետք է սկզբից ինքներս փոխվենք, նոր մնացածից սպասենք:

Գոշում կա թաղամաս որտեղ աղբամանը և շրջակա տարածքը մաքուր է, իսկ նույն համայնքի այլ բնակավայրում աղբամանում աղբ չկա, ամբողջը թափված է կողքը:

Ինչո՞ւ պետք է ես ուրիշի անասունի կեղտն իմ բակից մաքրեմ...

Եթե չեմ ծխում, բայց որ տեսնում են գետնին ընկած ծխախոտի տուփ տանում-գցում եմ աղբամանը, բայց էն ծխողը թափում է գետնին:

Պետք է սկսել մանկապարտեզից սովորեցնել: Ծնողը խանութից դուրս է գալիս, պաղպաղակը տալիս է երեխայի ձեռքը, թուղթը պոկում ու գցում գետնին:

Ձուջևանում հիմա մի մեծ աղբանոց կա, որն առաջին հերթին պիտի փակենք, թե չէ տանում են, աղբը էլի գցում էնտեղ:

Ջմռանը աղբի գործը հեշտ է, ձյունը գալիս, ծածկում է, թափթփված չի լինում:

Եթե հասարակական կազմակերպությունները ակտիվիստները չլինեն, սովորական բնակիչները առանձնապես չեն էլ հետաքրքրվում:

Քանի աղբատար ավելացվում, է այնքան ավելանում է համայնքի խնդիրը, մարդիկ ալարում են աղբը աղբարկղի մեջ գցել, դնում են կողքը ու խնդիր ստեղծում համայնքի համար՝ լրացուցիչ աշխատուժ ներգրավելու, լրացուցիչ մաքրման աշխատանքներ կազմակերպելու համար:

Մարդկանց դաստիարակության և կրթելու մեծ խնդիր կա. մարդիկ արդեն սովորել են աղբը թափել որտեղ իրենց հարմար է:

Աղավնավանքում **տարեցների** համար դժվար է հասնել աղբամաններին:

Տանը աղբ թափող մեկը կլինի: Մեծահասակներն ավելի պատասխանատու և մաքրասեր են:

Մերոնք սիրում եմ բոլորին «քրքրել», հարևանները կփնտրեն, կգտնեն սխալ աղբը

թափողին:

Ոչ մեկը մեղավոր չի, որ մենք մաքուր քաղաքը թողել, գնացել հեռու գյուղում ենք ապրում:

Անհատական փաթեթների միտքը հետաքրքիր էր. քաղաքում դա միգուցե բավականին լավ աշխատի, քանի որ սոցիալական տարբեր խավեր կան:

Ստեփանավանցիները շատ իներտ են: Նախաձեռնող չեն, այսօր մենք ունենք շատ հնարավորություններ մեր ծրագրերը իրականացնելու համար:

Աղբահանության ծառայության գրասենյակը գտնվում էր մեր փողոցում, բայց ես էի մաքրում, իրենք օգնելու փոխարեն ընդամենը ոգևորիչ խոսքեր էին ասում:

Թումանյանում երեխաներին սովորեցնում ենք, որ աղբը փողոցում չեն թափում: Նույնը՝ Քարինջում: Երիտասարդներն արդեն սովորել են աղբ չթափել փողոցում, բայց մեծերը դեռ սովորույթի ուժով են առաջ շարժվում:

Առաջվա համեմատ արդեն իսկ մաքուր է, էդ էլ հերիք է:

Մեր մոտ էլ մարդիկ աղբը տանում են և նետում ջրատարի մեջ, բայց աղբատար մեքենաներ հաստատ տեսել եմ:

Ինչքան էլ լավ կազմակերպված լինի աղբահանությունը, ինչքան էլ աղբարկղեր լինեն, առաջի հերթին պետք է ուշադրություն դարձնել բնակիչների կրթությանը:

Մեր ազգի առաջին խնդիրը գալիս է կիրթ լինելուց, տարրական կենցաղային էթիկա մեր ազգը չունի: Եթե ուզում ենք մի բանի հասնել պետք է սկսել հենց բնակչության կենցաղային կրթությունից:

Մի առանձնահատուկ խնդիր կա հատկապես գերեզմանոցների աղբահանության հետ կապված. ընդունված է, որ գերեզմանոցից ոչինչ չեն տանում, էդպես էլ ծաղկեպասակներն ու նման այլ իրեր մնում են էնտեղ: Անհրաժեշտ է յուրահատուկ մոտեցում ցուցաբերել այս խնդրին:

Մարդկանց մտածելակերպ պետք է փոխվի, որպեսզի աղբահանության խնդիրը վերջնականապես լուծվի:

Պետք է բնակիչներն էլ հասկանան, որ աղբը ամեն տեղ չարժի թափել:

Գյուղի մարդը պետք է ապրի այն միջավայրում, որում ապրում է քաղաքի բնակիչը ու պետությունը այդ պայմանները պետք է ստեղծի:

Մեր մոտ շատ կռիվներ են լինում աղբի համար, հարևանների բակն են գցում աղբը կամ անցորդներն են աղտոտում:

Ներկայումս ունենք մեծ փոս, որին հետևում ենք: Առայժմ խնդիրը կարողանում ենք լուծել: Բայց մարդիկ ամեն դեպքում աղբը տանում են ու լցնում հենց փոսի կողքը, ոչ թե նախատեսված

տեղում: Կառուցողական քննադատությունը անձնական ընդունելու կուլտուրան մինչև չփոխվի, էս երկրում բան չի փոխվելու: Մեքենայով անցնում են, աղբը շպրտում աղբամանի մոտ: Առաջին տարին է, որ աղբահանություն է իրականացվում Դիլիջանի Գոշ համայնքում, ճիշտ է հատվածներ կան որտեղ աղբամաններ չկան, բայց տեղեր էլ կան որ աղբամանը մաքուր է, իսկ աղբը կողքը դրած:	
Պետք է համայնքներում, համայնքի ղեկավարի հետ միասին պարբերաբար **շաբաթօրյակներ** կազմակերպվեն: Համապետական **շաբաթօրյակի** միջոցով ենք փորձում համայնքում աղբը հավաքել, սակայն բոլոր բնակիչները չէ, որ մասնակցում են: Օրինակ՝ դպրոցի տարածքներն ամբողջությամբ միայն այդ դեպքում են մաքրվում: Դպրոցներում ու մանկապարտեզներում արդեն **շաբաթօրյակը** պարտադիր է: Ես իմ տարածքը շատ մաքուր եմ պահում, մինչև առաջին քամին: Հետո էլի **շաբաթօրյակի** կարիք ունեմ: Յուրաքանչյուր մարդ, եթե ինքը մաքուր պահի, խնդիր չի լինի: **Շաբաթօրյակների** առկայությունը նույնպես կարևոր տեղ ունի աղբահանության խնդրի լուծման համար: Աղավնավանքում մենք տարեկան մի քանի անգամ շաբաթօրյակ ենք անում, անգամ գետն ենք մաքրում: Համապետական շաբաթօրյակ հասկացությունը ընդունելի չէ, ամեն համայնքը պիտի ինքնամոբիլիզացվի, ինքնակազմակերպվի, էդպիսի օր իր համար որոշի՝ համայնքի բնակիչներին հարմար: Տարիքով մարդկանց ներգրավել կամավոր աղբահավաքության մեջ, շատ դժվար խնդիր է, բաց երիտասարդները շատ հետաքրքրված ներգրավվում են: էն ստիպողական շաբաթօրյակները հարց չեն լուծում, դրանց մասնակցում են միայն պետական աշխատողները, բայց երբ կամավոր ներգրավում ես, բոլորն էլ շատ հաճույքով ու հասկանալով ներգրավվում են: Գյուղերում պարբերաբար **շաբաթօրյակներ** ենք կազմակերպում, աղբյուրներ ենք մաքրում: Մարդիկ իրենց մեքենաներով են գալիս մասնակցում:	**Շաբաթօրյակ** արինք, հավաքինք ջրամբարի կողքի աղբը երեխեքի հետ: Պրծնելուց հետո պաղպաղակ տվինք երեխեքին: Պաղպաղակը կերան, թղթերը գցեցին իրանց հավաքած տարածքում: Գարնանը դպրոցի երեխաներով շաբաթօրյակ կազմակերպեցինք, մաքրեցինք, սակայն մարդիկ սովորույթի ուժով թափում են նույն վայրում: Եթե **շաբաթօրյակների** շնորհիվ աղբամանները մաքրում ես, մի քանի շաբաթ հետո նորից նույն վիճակն է լինում. պետք է մարդկանց գիտակցությունը փոխել: **Շաբաթօրյակներին** միայն երիտասարդներն են մասնակցում, համապատասխանաբար ավելի շատ մեծահասակներն են աղտոտում, քանի որ չմասնակցելով համընդհանուր մաքրության ակցիաներին, չեն պատկերացնում աղբն ամեն տեղ չթափելու կարիքը: **Շաբաթօրյակներին** միայն դպրոցականներն են մասնակցում: ՏԻՄ-ը կարող է աշխատել բնակիչների հետ, որպեսզի ապահովի շատերի մասնակցությունը: Մարդիկ կան, որ իրենք աղբը թափում են գյուղում, բայց շաբաթօրյակին թույլ չեն տալիս, որ իրենց երեխաները դուրս գան ու համայնքի մաքրմանը մասնակցեն: Գյուղապետն ինքն իր օրինակով պետք է ստիպի համայնքի բնակիչներին մասնակցելու հանրային տարածքները մաքրելու միջոցառումներին: Եթե ինքն առավոտյան ցախավելը ձեռքին հայտնվի դպրոցի բակում, մյուսները կես ժամ հետո նույն տեղում կլինեն:
Աղբամանների քանակի ավելացումից հետո մարդկանց վարքում էլ ենք դրական փոփոխություններ նկատում: Աղբահանության խնդրում կարևոր է բնակչության գիտակցության խնդիրը, սակայն կարելի է ֆիքսել, որ այս հարցում դրական տեղաշարժ կա	Մի քանի անգամ աղբամաններ գողացողներ ենք բռնել Զուջևանում: Եղել է, որ աղբամանը տարել էին, հետո գտանք, հետ բերեցինք: Բայց դե դրա իմաստն էլ չենք հասկանում: Զուջևանում ձմռանը աղբամանները հավաքում

աղբատարների ավելացումից հետո:	էինք, որ չգողանան:

Զ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԿԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐ

Հայաստանցի տուրիստները, ի տարբերություն արտերկրերից եկող տուրսիտների, գալիս, բնության գրկում հանգստանում են, հետո ամբողջ աղբը թողնում, գնում:

Աղբարկղերի առկայությունը օգնում է նաև զբոսաշրջության զարգացմանը:

Մենք հասկանում ենք, որ զբոսաշրջիկների համար ավելի մաքուր պիտի պահենք տարածքը:

Եթե զբոսաշրջիկների հետ կապված դիմում ենք, ավելացնում են, նորմալ է:

Զբոսաշրջիկները հրաժարվում են մեր բնակավայրերում շատ մնալ, քանի որ շատ դեպքերում նրանք չեն կարողանում տեղ գտնել աղբ թափելու համար, իսկ նրանք ունեն այդ կուլտուրան, որ աղբը պետք է թափել միայն սահմանված վայրում:

Փոքր համայնքների կենտրոնական փողոցներում ապրում են նաև մարդիկ, ովքեր անասնապահությամբ են զբաղվում ու այդ բնակիչները հրաժարվում են մաքրել աղբը, իսկ պետությունը ոչ մի լծակ չունի նրա վրա ազդելու և ստիպելու համար:

Անասնապահական շրջանը շատ կեղտոտ շրջան է, ահավոր է, չունենք ոչ մի համակարգ:

Է. ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

Մարդիկ սոցիալապես անապահով են ու իրենց աղբը իրենց վառարանում են այրում տաքանալու նպատակով: Իսկ մենք բնությանը պատճառած վնասի մասին ենք մտածում:

Թումանյանի բնակչության ութսուն տոկոսը կանոնավոր դրամական եկամտի աղբյուր չունի, հետևաբար ինչքան էլ ցածր լինի աղբահանության վճարը, միևնույն է՝ որոշ մասի համար դա կարող է բարձր թվալ:

Նույնիսկ տուգանքների սահմանումը ոչ մի օգուտ չի տա, քանի որ միևնույն է բնակիչը փող չունի վճարելու համար:

Եթե տանը ոչ մեկ չի աշխատում, ո՞վ պետք է տա աղբահանության վճարը: Նույնիսկ ամիսը անձը հարյուր դրամը էդ մարդկանց համար շատ է:

Բնակավայրեր կան, որտեղ ընտանիքներ ունենք, որտեղ ամեն իրիկուն ընտանիքի անդամները նստում հատիկ-հատիկ հաց են բաժանում իրար մեջ: Աղքատ երկրում սա երազանք է:

Մեծ է նաև սոցիալական խնդիրը, օրինակ մարդիկ շինարարական աղբը թափելու համար ի վիճակի չեն լինում մեքենա վարձել, դրա համար հիմնականում թափում են տան մոտ, որ սելավների ժամանակ ամբողջ տարածքն է աղտոտվում:

Գյուղացիների մեծ մասը ամիսներով թղթադրամի երես չի տեսնում ու ապրում է իր աճեցրածով, ի՞նչ աղբի գումարի մասին է խոսքը:

Ժողովուրդն անվճարունակ է: Առաջին հերթին հացի խնդիրն է պետք լուծել, նոր աղբահանության:

Գյուղում մարդիկ կան, ովքեր գործազուրկ են: Համայնքապետարանը կարող է այս ընտանիքներին ներգրավել աղբահանության ծառայությունը մատուցելու գործում:

Եթե մարդկանց կենսամակարդակը բարձրանա, ավելի մաքուր կպահեն շրջապատը:

Բոլորին պետք է հավասար հնարավորություններ տալ, բայց բոլորը հավասար չեն, սա փաստ է:

Աղբահանությանը ավելի շատ միջոցներ տրամադրելու համար պետք է բյուջեն ավելանա: Իմ կարծիքով, դա հնարավոր է միայն մարդկանց զբաղվածությունը, տնտեսական ակտիվությունը ավելացնելու միջոցով:

Մենք աղքատ չենք, համայնքապետերն են հարուստ:

Աղբի հարցը ոնց էլ ասես կլուծենք, բայց ավելի կարևոր է գազի խնդիրը, մինչև աղբահանության խնդիրը գյուղացին այնքան խնդիրներ ունեն:

Բնակիչը նույնիսկ չի կարողանում ավելի կարևոր վարձեր \գազ, ջուր, հոսանք\ վճարի, աղբի վարձի մասին հաստատ չի էլ մտածի:

Համայնքում աշխատատեղեր կան միայն ուսուցիչների, բժիշկների համար ու մի քանի վարչական մարմիններում: մեկ էլ զորամասում: Բայց դա բավարար չի վճարունակ բնակչություն ունենալու համար: Ստեփանավանի մոտ երեսուն տոկոսն է աշխատում:

Ը. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Պարտադիր պետք է կիրառել տուգանքների կիրառման մեխանիզմներ՝ չնախատեսված վայրերում աղբ թափելու համար:

Խիստ տուգանքներ պետք է սահմանել. աղբը թափեցիր արգելված տեղում, տեսախցիկը ֆիքսեց, պետք է վճարես: Մինչև մարդու գրպանին չես խփում, բան չի փոխվում:

Մինչև մարդու գրպանին «չկպնես», չտուգանես, ոչ մի արդյունքի չես հասնի:

Եթե մարդկանց տուգանեն, կգիտակցեն, որ աղբ թափելը վատ է: Նույն ամրագոտու պատմությունն է:

Արմավիրում տեսախցիկներ են տեղադրվել աղբամանների մոտ, ու ով աղբամանից զատ ուրիշ տեղ մոտակայքում աղբ է դնում, տուգանվում է: Առաջարկում եմ այս փորձը այստեղ էլ կիրառել: Խիստ վարչարարություն է պետք էս բնագավառում:

Եթե նորմալ աղբահանություն կազմակերպվի, այդ ժամանակ տուգանքներ էլ ճիշտ կլինեն:

Ավելի լավ է որոշակի տուգանքներ սահմանել, քան թե տարին երկու անգամ շաբաթօրյակ պարտադրել դպրոցահասակ երեխաներին:

Տուգանքը լավ է, բայց ինչպես են իմանալու, թե ով է աղբը թափել:

Մինչև չտուգանեն, բան էլ չի փոխվի: Հաստատ:

Աղբի չվճարելու համար տուգանք պետք է սահմանվի, որպեսզի բոլորը վճարեն:

Մեր մոտ տուգանքների համակարգը աշխատում է:

Մարդկանց կենցաղային վարքը փոխելու համար պետք է տուգանքներ սահմանել:

Եթե իրոք տուգանեն մեկին աղբը չնախատեսված տեղում թափելու համար, մյուսները էլ չեն թափի:

Միայն մարդկանց գրպանին խփելով կարող ենք մի բանի հասնել: Տուգանքներ պետք է սահմանել աղբը թափելու համար:

Թող խստորեն վերահսկեն ամեն ինչ և տուգանեն աղբահանություն վատ կատարողին, աղբը սխալ տեղ գցողին և այլն: Դա շատ հարցեր կլուծի:

Գյուղի կեսից ավելին նույն ազգանունով են. ո՞վ ո՞ւմ տուգանի:

Քաղաքապետարանը հո ինչքան իրեն չի՞ տուգանելու վատ աղբահանության համար, բայց մասնավորին կարող է վերասիկել ու տուգանել:

Պետք է ոչ թե համայնքի բնակչին տուգանել, այլ համայնքին, այսինքն կիրառել միջոցների համայնքի նկատմամբ, զրկել ինչ-որ բաներից, ներդնել բալային համակարգ ու այդ համակարգով փորձել խթանել մաքուր համայնքներին:

Փոքր համայնքներում համայնքապետարանը չի կարող տուգանել բնակչին, քանի որ մյուս ընտրություններին այդ բնակիչը չի ընտրի համայնքապետին:

Անշնորհք մեծահարուստին ոչինչ չի կարող հետ պահել աղբը սխալ վայրում թափելու համար, քանի որ իր գրպանին կպնելով չես կարող լուծել այդ հարցը:

Գյուղերում մարդկանց վարչական պատասխանատվության ենթարկելը սխալ է. պարտքի վրա պարտք պիտի կուտակվի ընդամենը:

Տուգանելով հո չի, մարդ կա, աշխատանք չունի, էդ տուգանքը որտեղի՞ց պիտի տա:

90 տարեկան տատիկին, որ հազիվ դուրս է եկել ու աղբը թափում է փողոց, ո՞նց տուգանեմ: Բայց իրեն չտուգանեմ, երիտասարդին էլ չեմ կարողանալու տուգանել:

Եթե ես գյուղում տեսա աղբ թափողին, ես նրան չեմ տա «գելի բերան», ես իրան կարող եմ դիտողություն անել, բայց վստահ էլ չեմ, որ դա որևէ արդյունք կտա:

Գյուղերում չի աշխատի «գործ տալու» մեխանիզմը չի գործի, քանի որ իրար ճանաչում են ու մեկը մյուսին չի բացահայտի:

Մարդիկ իրար հետ կռված պիտի լինեն, որ գնան ցուցմունք տան աղբը սխալ տեղում թափելու համար:

Համայնքը պարտավոր է ստեղծել արտադրական ճանապարհ, եթե ուզում է, որ կենդանին մարդու ճանապարհով չանցնի:

Օրինակ, վարորդները վախենում են տուգանքներից ու չեն խախտում ճանապարհային երթևեկության կանոնները:

Անգամ եթե մասնավորին պատվիրակվի ծառայության մատուցումը, համայնքը պետք է վերահսկողություն սահմանի: Տուգանքներ պետք է սահմանվեն:

Վեց տարի առաջ մեքենան վարելուց հորս տուգանեցին աղբը պատուհանից գցելու համար: Դրանից հետո ես պատահական տեղ աղբ երբեք չեմ գցել:

Տուգանելուց հետո բնակիչը երկրորդ անգամ սխալ վայրում աղբ չի թափի, ավելին, հարևանները նույնպես այլևս իրենց թույլ չեն տա սխալ վայրում աղբ թափել:

Տուգանքները կարող է երկրորդ, երրորդ դեպքում ավելանալ:

Ստեփանավանի համայնքի ղեկավարն աղբից իմացավ, թե ով է աղբը թափել: Հանրային ամոթանք տվեց, բայց տուգանքն ավելի արդյունավետ կլինի:

Ճանապարհային ոստիկանությունը միայն ամոթանք տալով ոչնչի չի հասնի, նույնն էլ աղբահանության դեպքում է, պետք է տուգանքներ սահմանել:

Ավագանին պետք է որոշի տուգանքի չափը:

Տուգանքներ պետք է սահմանվել միայն այն դեպքում, եթե կան աղբամաններ ու աղբահավաքությունը նորմալ իրականացվում է:

Պետք է նաև տուգանել այն տուրիստներին, ովքեր սխալ վայրում են աղբ թափում:

Բիզնեսի համար ավելի բարձր վճարներ ու տուգանքներ պիտի լինեն:

Գտնում եմ, որ վերջապես պետք է կիրառել տուգանքների մեխանիզմը: ՏԻՄ-ը դա չի անում: Այս գործիքն էլ կարող է իր դրական ազդեցությունն ունենալ:

Միայն տուգանքներով կարող ենք մարդկանց ստիպել աղբը չթափել չնախատեսված վայրում կամ այրել:

Շատ չէ, բայց փոքր տուգանքներ պետք է լինեն աղբը ոչ ճիշտ տեղում թափելու համար, այդ թվում՝ սովորական աղբամանների մոտ շինարարական աղբ թափելու համար:

Մեր գյուղից մեկը աղբը տարել էր, անտառում թափել: Իմացանք, ասեցինք, որ հինգ հարյուր հազար տուգանք պիտի տաս, ստիպված գնաց հավաքեց:

Տուգանքը միակ աշխատող ձևն է, որպեսզի բնակիչը տանի աղբը աղբամանի մեջ թափի:

Պետք է տուգանել, նույնիսկ առանձին դեպքեր կան ոստիկանության կողմից տուգանելու:

Օրենքով պետք է տուգանքներ սահմանել, բայց դա հարցի լուծում չէ, մարդիկ կսկսեն գիշերը

Որպեսզի դու փոխես մարդկանց վարքը, պետք է այլընտրանք ապահովես: Տուգանք կիրառելուց առաջ պետք է հասկանալ, թե վարքը փոխելու այլընտրանք առաջարկե՞լ ես: Հակառակ դեպքում, տուգանքը մեզ մոտ չի աշխատելու:

Տուգանքի ինստիտուտը մտցնելուց առաջ ճիշտ կլինի մարդ նշանակեն, որ ժողովրդին զգուշացնի հետևանքների մասին, հսկի իրավիճակը գյուղերում: Էդ ժամանակ հաստատ չեն թափի:

Տուգանքները հարցը չեն լուծի, եթե չկա աղբարկղ, ինչպես տուգանես:

Պետք նախապես աղբը թափելու պայմաններ ստեղծել, նոր տուգանենք:

Ես ծխող եմ, ու քանի որ աղբամաններն ու ուռնաները սակավաթիվ են, ես պրոբլեմի առաջ եմ կանգնում ու ստիպված աղբը գցում եմ պատահական տեղ: Այս պայմաններում վարորդին, որը պատուհանից սիգարետի մնացորդը գցում է, չի կարելի պատժել:

Ուրասար համայնքում աղբամաններ չկան, ինչպե՞ս պատժենք դրսում աղբ թափողին: Պատժելուց էլ պիտի արդարության սկզբունքը պահենք:

Թող զգուշացնեն, հետո տուգանեն:

Պետք է պայմաններ ստեղծեն, նոր տուգանեն:

Պետք է սահմանել տեղերը, նշել, տեղեկացնել, ընդգծել, կարմիրով: Աղբը սխալ տեղ թափողին էլ՝ ստալին անել:

Պետք է հստակ նորմեր և կարգավորումներ լինեն, որ աղբը ինչպես պետք է հավաքել, ում տալ, ինչպես տեղափոխել: Ոչինչ չկա:

Սխալ վայրում աղբը թափողին դժվար է տուգանել, քանի որ մեխանիզմ չկա, որով պետք է վերահսկեն բոլորին:

Եթե լինի անհատական աղբամանների սիստեմ, արդեն կկարողանանք վարչական տույժեր կիրառել, իսկ եթե քսան ընտանիք մի աղբամանից է օգտվում, չենք կարող վերահսկել:

Զրաչափի պես պիտի աղբաչափ ստեղծեն:

Հիմա էլ պիտի էկոլոգիական ոստիկանություն սարքե՞նք, որ մարդկանց տների կողքը հերթապահեն, տեսնեն ով գցեց աղբը: Ամեն ինչ չի որ հնարավոր է վերահսկել:

Պիտի ուրիշ տեղից մարդ բերես գյուղ, աղբի համար տուգանես, որ ժողովուրդը համոզվի:

Հնարավոր է չվճարել, բայց դրա համար թե որքան տույժ կա, չգիտենք:

թափել աղբը:

Մեր տարածաշրջանում միանշանակ տուգանքի կիրառումը կտա ցանկալի արդյունք:

Վրաստանում ճանապարհային ոստիկանը կմոտենա ու աղբ թափողին կտուգանի:

Պետք է պատժվեն նաև այն մարդիկ, ովքեր աղբը մեքենայից դուրս է շպրտում:

Հասարակությանը կրթելուն զուգահեռ նաև պետք է գրպաններին խփել:

Մերոնք էդպես են, հենց գրպանին կպնեն, ավելի ուշադիր կլինեն:

Եթե մարդու ստորագրությունը ինչ-որ տեղ չեղավ կամ գրպանին չկպար, ոչ մի բան էլ չի հասկանա:

Մինչև մարդու գրպանին չկպնես, ոչ մի հարց չի լուծվի, պետք է անպայման լինեն օրենքներ:

Հենց մարդկանց գրպանին կպան, իմացեք բոլորն էլ մաքրասեր կդառնան:

Մարդու գրպանին պիտի կպչել, որ վարքագիծ հնարավոր լինի փոխել:

Մինչև մարդու գրպանին չկպչես, չի փոխվի:

Խիստ տույժեր է պետք կիրառել բնապահպանական վնասի համար: Ու պետք է տույժեր լինեն անգամ աղբահանությունը ոչ ճիշտ իրականացնող աշխատակիցներին:

Հարևանիս առաջին անգամ կզգուշացնեմ, որ աղբը փողոցում կամ ձորում չթափի, երկրորդ անգամ արդեն կզանգեմ համապատասխան մարմիններին:

ՏԻՄ-ը պետք է մարդկանց վրա ազդելու գործիքներ ունենա:

Եթե իրավական ակտ չկա, ապա հարևանները նույնիսկ իրար հետ կկռվեն աղբահանության խնդրի պատճառով: Ու ինչի՞ այս պետությունը մինչև հիմա օրենք չունի:

Անցած տարի մեր լիազորը մե վախտմ ման եկավ, սաղին հսկեր գը, ու էդ ժամանակ աղբի վիճակը լավացավ, հետո երբ ինքը դադարեց հսկելուց, էլի նույն վիճակն էր:

Վարչական պատասխանատվությունը աշխատող տարբերակ է, բայց քանի որ համակարգը դեռ խարխուլ է, հիմա չի կարող նորմալ գործել:

Ամեն թաղամասից մարդ պիտի նշանակվի, որը կհետևի աղբ թափելու պրակտիկային:

Լիքը մարդ գիշերը գոմաղբը հանում, լցնում է մայթին: Թող էդ մարդկանց տուգանեն, էդ հավելյալ գումարն էլ ամբողջությամբ ուղղեն աղբահանությանը:

Ավելի լավ ա ինձ ասեն ես «կլյաուզնիկ» եմ, քան թե էդ համատարած թափված աղբի պատճառով իմ երեխեն, իմ հարազատը տուժի:

Պետք է ստիպել սեփականատերերին իրենց

տարածքները մաքրեն: Մինչև օրենքը չգործի ո՞չ աղբահանության խնդիրը կլուծվի, ո՞չ էլ բնակիչները աղբը ճիշտ վայրում կթափեն: Եթե կա ամրագրած օրենք լույսի վերաբերյալ, պետք է լինի նաև օրենքի աղբի մասին, մինչև իրավական ուժ չտաք և տուժ տուգանք չսահմանենք, ապա վճարման խնդիրը չես լուծի: Մեքենայով եթե տուգանք է գալիս, թող աղբի համար էլ այդպես լինի: Թող նկարեն, ապացուցեն, վճարի:	
Թող բյուջեյով պլանավորվի, որ վերահսկողություն իրականացնելու համար մարդ աշխատի: Անհատական աղբամանները որ համարակալվեն, վերահսկողության անհրաժեշտություն չի լինի: Տեսախցիկները շատ թանկ չեն, կարելի է հատկապես խոշոր աղբավայրերի մոտ տեղադրել: Գուցե պետք է որոշ տեղերում տեսախցիկներ լինեն, որ հսկենք աղբահանությունը: Տեսախցիկներ կարելի է տեղադրել, որի շահագործումը համայնքապետարանը պետք է իրականացնի: Աղբամանները որ ավելացնեն, մնացածը մենք կանենք, կհսկենք: Փոքր համայնքների կենտրոնական փողոցներում ապրում են նաև մարդիկ, ովքեր անասնապահությամբ են զբաղվում ու այդ բնակիչները հրաժարվում են մաքրել աղբը, իսկ պետությունը ոչ մի լծակ չունի նրա վրա ազդելու և ստիպելու համար: Տեսախցիկներով հսկողությունը նույնպես կստիպի բնակիչներին աղբը ճիշտ վայրում թափել: Եթե անասունը մտել է քո տարածքը, քեզ վնաս է հասցրել, 100000 դրամ պետք է մտնի է պետ. բյուջե, դրան էլ գումարած քո փոխհատուցումը: Պետք է ուղղակի դիմում գրես համապատասխան մարմնին: Ոստիկանությանը անհրաժեշտ է ներգրավել աղբահանության գործին, մեր համայնքում ոստիկանը նկարը բերել ցույց է տվել ու պահանջել որ մաքրեն: Բայց սա էլ մի կայուն մեթոդ չի: Ի՞նչպես պիտի հայտնաբերվի: Հո ամեն տանը մի ոստիկան չես կցի Դիլիջանում տեղակայված ուսումնական հայտնի կենտրոններում աղտոտելու նկատմամբ վերաբերմունքը շատ խիստ է, այդ պատճառով էլ այդ հաստատությունների տարածքում կատարյալ մաքրություն է տիրում: Հետևություն. անհրաժեշտ է խստացնել վերահսկողությունը այլ տեղերում էլ: Առանց աղբահանության վիճակին հետևող	Ինչ-որ մեկդ գոնե մի օրինակ կբերի, երբ վարչական գործ է բացվել աղբը չնախատեսված տեղում թափելու համար: Ո՞չ: Վերահսկողությունը շատ կարևոր է, շատ:

մարդու անհնար է հարց լուծել: Տուգանելու փոխարեն ճիշտ կլինի պատասխանատու նշանակել, որը կվերահսկի իրավիճակը:

Պետք է վերահսկում լինի սկսած աղբի հավաքումից, մինչև բյուջեյի ծախսում:

Շրջակա միջավայրը, մեր առողջությունն է կարևոր, սա պետք է լինի հիմնական միտքը:

Զարմանալի է, որ մարդիկ չեն գիտակցում, որ աղբի կուտակումից լուրջ առողջական և էկոլոգիական վնասներ կարող են լինել:

Սոցիալական գովազդը, ՀԿ-ները աշխատանք պետք է տարվի որ հասկանանք որ միայն աղբը թափելը չէ, սա մի մեծ էկոլոգիական շղթայի մաս է:

Մենք հասկանում ենք, որ վատ էկոլոգիան բոլորի համար վնաս է:

Բնակիչները, համայնքի ղեկավարները պետք է հասկանալ որ բնապահպանական հարցերն ամենակարևորն են:

Գյուղի տատիկներից մեկը նշում էր, որ իր երեխա ժամանակ աղբյուրի ջրից բաժակով ջուր էին խմում, մի քիչ ավելի ուշ լվացք էին անում, իսկ հիմա միայն աղբ են թափում այդ աղբյուրի մոտ:

Աշոցք համայնքի բոլոր բնակավայրերի աղբը հավաքվում է Զույգաղբյուր գյուղի մոտ, դա հիվանդության «բուն» է:

Երեխեքը գետում լողանում են ու հիվանդանում, անցած տարի մի երեխա կեղտոտ ջուրը կուլ տալու պատճառով հիվանդացել էր, հազիվ փրկվեց:

Սեփականաշնորհված տարածքներում խոշոր աղբակույտեր կան, որոնց մաքրման հարցը չի լուծվել:

Զուջևանում մի աղբյուր կա, որ հիմա աղբանոց է դարձել: Ինչքան մաքրում ենք, նորից նույն վիճակն է դառնում:

Որ հողերը վերջացան, աղբը ու՞ր ենք թափելու:

Գյուղերում աղբամանների բացակայության պատճառով դաշտերը կեղտոտվում են, քանի որ գյուղացիները աղբը կենտրոնացնում են ու տանում լցնում են դաշտերը:

Արևիկում հիգիենիկ վիճակն էլ սարսափելի է. աղբը նույնիսկ փոսը չեն գցում, շպրտում են ոնց ասես ու աղբի փոսի շուրջը նոր աղբակույտ է գոյանում:

Գյուղերում աղբի խնդրի պատճառով տուժում են նաև մեր երեխաները, ովքեր ստիպված են լինում այդ կեղտոտ օդը շնչել:

Աղբանոցները բնակավայրերին մոտ են և ուղիղ ազդեցություն են ունենում մեր բնապահպանության վրա:

Դիլիջան քաղաքում կովերը աղբից են սնվում, աղբամանից ուտում են, հետո գնում կաթ տալիս: Դրա արդյունքում կովի կաթից հաճախ աղբի հոտ է գալիս: Պետք է էս երևույթի դեմ էլ պայքարել:

Աղբահանությունը միայն աղբը բակից տանել չի, քանի որ աղբահանություն իրականացողները

Խոշորացումից հետո փորձ է կատարվում լուծել աղբահանության խնդիրը, բայց գյուղացին հրաժարվում է մուծել գումար, քանի որ ինքը տանում աղբը գետն է թափում:

Դրական տեղաշարժ կա աղբահանության ոլորտում, նախկինում տոպրակները թափված էին փողոցում, այժմ նման խնդիր չկա Ստեփանավանում:

Խոտի մնացորդը եթե երկու տարի մնա, կդառնա հող:

աղբը տանում են երկու կիլոմետր հետո թափում՝ հիմնականում անտառներում ու գետերի մեջ: Ամբողջ աշխարհը պայքարում է մաքուր մոլորակի համար, մեր մոտ հակառակը ոնց որ լինի: Մենք գիտակցում ենք, որ աղբահանությունը գործի կեսն է, պետք է կարողանալ նաև մեծ աղբանոցների հարցը լուծել: Ձյունը փակում է աղբը, չի երևում, բայց երբ գարունը բացվում է, պարզվում է ահավոր շատ աղբ է հավաքվել: Հայաստանցի տուրիստները, ի տարբերություն արտերկրերից եկող տուրսիտների, գալիս, բնության գրկում հանգստանում են, հետո ամբողջ աղբը թողնում, գնում:	
Ցանցապատումն անհարժեշտ է, որպեսզի կենդանիները չթափեն, բնակիչները սովորեն աղբամանի կափարիչները փակել: Աղբամանների տարածքը **ցանկապատված** պետք է լինի, որ գոնե մինչև մեքենայի գալը աղբը չթափվի փողոցում: Գյուղական համայնքներում պետք է աղբամանները **ցանկապատեն**: Եթե թափառող կենդանիներ չլինեն, **ցանկապատի** կարիք էլ չի լինի: Ամեն ինչ փոխկապակցված է. աղբից գլոբալ խնդիրներ են առաջ գալիս: Ըստ նորմերի՝ աղբամանների տարածքը պետք է **ցանկապատվի**, սակայն գրեթե երբեք այս նորմը չի պահպանվում: Աղբամանները պետք է ճիշտ տեղում տեղադրվեն, բայց մենք նման «ճիշտ» տարածքներ էլ չունենք, գրեթե բոլոր աղբամանները տեղադրված են մայթերին: Եթե աղբավայրերը **ցանկապատված** չլինեն, կովերը մտնում ու սկսում են ցրել: Հաղարծինում աղբավայրը նպատակային հողի վրա չի, անասունները աղբամանից օգտվել ու սատկել են: Պետք է անմիջապես այն **ցանկապատել** ու առանձնացնել:	**Ցանկապատից** չեն մտնի, ցանկապատի վրայից կշպրտեն... Աղբամանների **ցանկապատումը** անիմաստ ու ոչ արդյունավետ ծախս է. ոչ մի օգուտ չի տա: Ավելի լավ է պայմաններ ստեղծել, որ **ցանկապատի** կարիք չլինի: Սիրուն նորմալ դրված լինեն: Վեց տարեկան երեխան չպիտի աղբը տանի թափելու, բոյը չի հասնում, որ աղբամանի մեջ գցի:
Բնակիչները աղբը հանում են տանից դուրս, սպասելով աղբատար մեքենային, սակայն փողոցի **կենդանիներն** ամբողջ աղբը թափում են փողոցում: Բնակավայրի ներսում դրված աղբամանները վտանգավոր են, անասունները գալիս են, փորփրում, ուտում աղբը: Աղբամանները ուշ դատարկելու հետևանքով գարշահոտ էր լցվում, իսկ ընտանի **կենդանիները** ամբողջ տարածքով տարածում են այդ աղբը: Ավելի լավ կլինի աղբամաններ չլինեն: Շատ կարևոր է, որպեսզի աղբամանները կափարիչով լինեն՝ **կենդանիների** ու տեղումների ազդեցությունից խուսափելու համար: Դեմ եմ ամենագնացներին, քանի որ բաց են	Աղավնավանքում աղբամանները ծանր կափարիչ ունեն, հազիվ բացում ենք, աղբը գցում, բայց կարևորը՝ **շուն** չի մտնում մեջը: Աղավնավանքում աղբամանները շարած են, նորմալ կափարիչով: Եթե բաց լինի, **շներն** էլ կգան կքրքրեն: Ավելի լավ կլիներ, որ աղբամանները բացվեն ոտքով, ձեռքով այդքան էլ հիգիենիկ չէ: Աղբամանի ձևի մասին այդքան էլ չենք մտածում, կարևորը առկայությունն է: Ասում ենք փակ կափարիչներով աղբամաններ, բայց հարց ունեմ. դուք համաձա՞յն եք գործի գնալիս էդ կեղտոտ կափարիչը բացել ու նետել աղբը: Թե մի հատ էլ պետք է տուն գնաս լվացվես, հետո գնաս գործի: Դա էլ լուծում չի,

ամենագնացները և **կենդանիները** Ոսկեպարում թափում են աղբը, չնայած կափարիչներ կան:

Պարտադիր է, որ աղբամանը փակվի, հակառակ դեպքում **կենդանիները** և քամին ցրում են:

Դիլիջանում **կենդանիներից** բացի մարդիկ էլ են քրքրում աղբը:

Աղբամանները պիտի բարձր սարքեն, որ **կենդանիները** չմտնեն, թափեն:

Աղբամանները նաև վտանգավոր կարող են լինել՝ միջից **կենդանիներ** են դուրս թռչում, շատ դեպքերում հարձակվում:

Բաղանիսից մինչև Զուջևան ամբողջ ճամփեզրը աղբ է, իսկ ընտանի **կենդանիները** ամբողջը տարածում են:

Անտառամերձ հատվածներում հատկապես **կենդանիները** թափում են աղբը աղբամաններից:

Բնակիչների անփութության խնդիր կա, աղբամանը հաճախ չեն փակում, ինչից հետո գիշերները **կենդանիները** աղը փորփրում են ու շաղ տալիս:

Աղբարկղերը պետք է այնպես սարքեն, որ **կենդանիները** չկարողանան շրջել:

ՏԻՄ-ին մի քանի մեխանիզմ ենք առաջարկել աղբանոցներից **կենդանիների** հեռացման վերաբերյալ, բայց արդյունք չի եղել:

Ինչո՞ւ պիտի Ախուրյանի աղբը տանեն Նոր Ախուրյան ու անտեր վիճակում թողնեն: Քամին ու թափառող **շները** ոնց ասես չեն տարածում այդ աղբը: Մինչև թափառող շների հարցը չլուծվի, նորմալ աղբահանություն չի իրականացվի:

Աղբամանները պետք է փակ կափարիչներով լինեն, հատկապես գյուղերում՝ խուսափելու թափառող **շներից** ու քամուց:

Ախուրյանում մեծ վտանգ են թափառող **շները**, թե՛ աղբահանության, թե՛ անվտանգության առումով:

Թափառական **շները** տարածում են աղբն ամենուր: Եթե այդ հարցը չլուծվի, ինչքան էլ ավելացնենք աղբամանների թիվը, խնդիրը չի լուծվի:

Շատ լավ կլիներ ոտքով բացվող աղբամաններ ունենայինք, որպեսզի կափարիչը պաշտպաներ աղբարկղը թափառող **շներից**:

Թափառող **շները** խնդիր են թե՛ գյուղում, թե՛ քաղաքում: Հատուկ տեղեր են պետք, որտեղ կարելի է հավաքել այս շներին, և այսպիսով լուծել նաև աղբը ամբողջ համայնքով տարածելու խնդիրը:

Աղբամանների վրա միշտ հավաքվում են **շներ կատուներ**... բա դրանց ինչ անենք:

Աղբը փողոցում թողնելու դեպքում շատ հաճախ **շները** քանդում, թափում են ամբողջը:

Անգամ եթե տոպրակով փակված աղբ ես աղբամանների տեսակը պետք է փոխվի:

Շատ մարդիկ զզվում են աղբամանի կափարիչը բարձրացնեն ու աղբը թափեն:

Մեր կենտրոնական փողոցում փակ աղբամաններ են դրված, միանշանակ էֆֆեկտիվ է: Բայց մի խնդիր կա. երբեմն մարդիկ զզվում են աղբամանի կափարիչը բացելուց ու աղբը գցում են աղբամանի կողքը:

Աղբամանների տեսակն էլ է շատ կարևոր: Կափարիչները լուծում չեն: Անցքով քառակուսի արկղեր են պետք, որպեսզի մարդիկ կողքը չդնեն, չշպրտեն աղբը:

Դիլիջանում աղբամանները առանց կափարիչի են, դրա համար էլ աղբը շպրտում են:

Մեզ ավելի նպատակահարմար է ոչ թե փակվող, այլ հին՝ բաց աղբամանները: Հաշվի առնելով բնակչության դաստիարակության մակարդակը՝ դա ավելի լավ է:

Ստեփանավանի ծայրամասերի աղբամանները թեև մի քանի տարի առաջ նորոգվել են, բայց արդեն շատ վատ վիճակում են՝ ջարդված, առանց կափարիչի... Պետք է դրանք փոխել:

հավաքում, **շները** հարձակվում, պատառոտում են ու այստեղ այնտեղ թափում աղբը: Մեր համայնքում ամեն տարի առնվազն մի երկու **կով** սատկում է աղբից սնվելու հետևանքով: Գյուղերում աղբամանները պիտի փակ կափարիչով լինեն, որ անասունները ինչ-որ բան չուտեն, թունավորվեն: Խնդիրը աղբամանն է, կարելի է աղբամանը պատրաստել այնպես, որ լցվելուց հետո ինքը որևէ ձև ծածկվի: Ոչ բոլոր տեղերում են փակովի աղբամաններ, որոշ տեղերում չեն եղել, որոշ տեղերում էլ կոտրել են: Աղբամանները կարող են փակվել բանալիով. բնակիչները գան-բացեն աղբամանը, ու լցնեն աղբը: Իտալիայում էդպես ենք տեսել: Աղբամանները պետք է անպայման կափարիչ ունենան: Բայց այդ դեպքում ես կզզվեմ կափարիչին դիպչելուց: Երևի լավը կամ կափարիչի ավտոմատ բացվելն է, կամ ոտքով: Ավտոմատ բացվող աղբամանը, իհարկե, հնարավոր տարբերակ չէ մեր համայնքների դեպքում, քանի որ մեր համայնքները աղքատ են: Նույնիսկ աղբահանության վարձը մարդիկ չեն տալիս, ինչ մնաց խելացի աղբամաններ գնվեն:	
Աղբամանները գտնվում են բնակելի շենքերից բավականին հեռավորության վրա, աղբն էլ ժամանակին տանում են, դրա շնորհիվ էլ նույնիսկ ամռան ամիսներին տհաճ հոտ չի լինում: Աղբը չի կարելի վառել, քանի որ, միևնույն է, այդ վառած աղբի հոտը պետք է մենք շնչենք: Ես որ դեմ եմ աղբամանին, պատճառը հետևյալն է. մինչև հիմա չեմ տեսել մի աղբաման մեր համայնքներում, որտեղ գարշահոտություն ու կուտակում չլինի: Եթե էդպիսի աղբաման եք դնում, անիմաստ է, հարցի լուծում չէ: Եթե հավաքելու եք, չեք թողնելու, որ լցվի, վատ չի լինի: Մեր փոքր բնակավայրերի դեպքում աղբի գարշահոտության խնդիր համարյա չկա, քանի որ, ի տարբերություն խոշոր քաղաքների, շուտ փչացող բաներ մեզ մոտ քիչ կան: Գյուղական համայնքում խնդրել եմ ժողովրդին, որպեսզի օրգանական աղբը չլցվի ընդհանուր աղբի հետ, հետևաբար գարշահոտության հարցը կարծես թե լուծված է: Մեծ տարաների գաղափարն այնքան էլ լավը չի, քանի որ գարշահոտության աղբյուր կհանդիսանան այդ տարաները: Սա վերաբերում է հատկապես քաղաքների կենտրոնական հատվածներին:	Աղբահանության խնդիրը ավելի արդիական է դառնում հատկապես ամռանը, քանի որ գարշահոտն անտանելի է դառնում:
Աղբի այրում իրականացրած վայրերում հողը այլևս անպիտան է դառնում գյուղատնտեսության համար: Աղբի այրումը ընդհանրապես չի կարելի, նույնիսկ	Աղբը վառելու ժամանակ այնպիսի ծուխ չի լինում, որ մարդկանց վնասի: Մարդիկ սոցիալապես անապահով են ու իրենց աղբը իրենց վառարանում են այրում տաքանալու

տերև այրել չի կարելի: Աղբը այրել չի կարելի, բայց որ ասում ես, չեն հասկանում ու նույն ձև շարունակում են: Հասկացնել է պետք մարդկանց: Ուր էլ տանեն աղբը լցնեն, մեկ է՝ վերջում վառում են: Մեր մոտ գերեզմանների հետևում փոս է, տանում այրում են, ինչ տարբերություն, որ տանում են, միևնույն է մի քիչ ավելի հեռվում վառում են ու վնաս է լինում բնապահպանությանը:	նպատակով: Իսկ մենք բնությանը պատճառած վնասի մասին ենք մտածում: Դպրոցի հավաքարարը ստիպված աղբը հավաքում ու վառում է, որովհետև տեղ չկա թափելու:
Ինչո՞ւ պետք է նորմալ մեքենա գնել, եթե հինը կա: Պետք է ուղղակի հինը լվանալ, պահպանել հիգիենիկ վիճակը: Մեքենայի սանիտարահիգիենիկ վիճակը ամենակարևոր խնդիրը չէ: Դա կլուծվի, երբ այլ, ավելի առաջնային հարցերը լուծվեն. նորմալ աղբավայր լինի, փակ աղբարկղեր: Համայնքի տնտեսական սպասարկում իրականացվում է, ներառյալ մեքենայի սանիտարահիգիենիկ վիճակի պահպանումը, բայց սովորական բնակիչը դա չի նկատում: Մեքենան ուղղակի ջրով լվացվում է, ոչ մի ախտահանիչ նյութ չի օգտագործվում: Աղբամանները երբևիցե չի լվացվում: Ինչքան էլ պարբերականությունը աղբը տանելու նորմալ լինի, եթե չեն լվացվում, հոտը մնում է: Աղբամանները չեն լվացվում, պահ է գալիս, որ աղբը չես էլ ուզում աղբամանի մեջ գցես, կողքն ես դնում: Համայնքն ունակ չի ավելի լավ ծառայություն մատուցել, դրա համար հնարավորություն ու միջոցներ չկան: Հիմա, օրինակ, եթե աղբատար մեքենան լվանանք, կանաչները կգան ու կասեն. բա էդ լվացման ջրերը ու՞ր ենք լցրել: Դրա համար էլ հիմա չենք լվանում էդ մեքենաները: Աղբատար մեքենաներն արտաքինից մաքուր են, հնարավոր է, որ մաքրում են: Սեպասար գյուղում մի քանի տարի առաջ աղբամաններ դրեցին, բայց այդ աղբամանները երբեք չմաքրվեցին, դրա համար ավելի լավ է, որ այսօր արդեն չկան դրանք: Շատ համայնքների աղբամանները չեն համապատասխանում ստանդարտներին: Շատ աղբամաններ կան, որ խոլերայի բուն են: Պետք է արկղի որակը փոխեն: Մեր աղբատար մեքենան նոր է, դրա համար էլ դեռ մաքուր է: Նախորդ մեքենան ահավոր վիճակում էր: Աղբատար մեքենաները պետք է զինված լինել շամպուններով ու համապատասխան մաքրող սարքերով, որպեսզի տարածքը ևս մաքրեն, ոչ միայն աղբը տեղափոխեն:	Պետք է լինեն պատասխանատուներ կամ աշխատողներ, ովքեր կհետևի աղբամաններին, կմաքրի աղբամանի կողքերը:

Պետք է **առանձնացված** աղբամաններ լինեն՝ ինչպես կուլտուրական երկրներում. ապակի, պլաստիկ...

Բյուջեի միջոցներն էլ մեր միջոցներն են, աղբի վրա մեր միջոցների մեծ ծախսերի կարիք չկա, քանի որ հարցը նորմալ լուծվում է: Այլ հարց է, որ թերևս կարիք կլիներ պլաստիկի **առանձնացման** խնդրին առանձին մոտեցում ցուցաբերելը:

Թումանյանում փորձում ենք աղբի **տեսակավորման** ծրագիր իրականացնել: Տեղադրելու ենք պլաստիկ շշերի համար նախատեսված աղբամաններ: Կարծեմ Վանաձորում վերամշակող կա, կտեղափոխենք այնտեղ:

Պետք է վճար սահմանվի, աշխատողներ ներգրավել, որ տեսակավորում իրականացնեն: Ամբողջ տեսակավորված աղբը սեղմվի ու խտացվի ու տեղափոխվի ըստ հնարավորության, գուցե ինչ-որ գործարանների, գուցե հենց Վրաստան, որտեղ ներդրվել է աղբի վերամշակումը:

Եթե **պլաստիկի** թափոնը հանձնելուց համայնքը գումար ստանա, դրա գումարները կարելի է ուղղել աղբահանության խնդրին:

Պետք է Եվրոպայի նման աղբը **սորտավորվի**:

Տեսակավորումը անխուսափելի է, պետք է հիմիկվանից դրան գնացող ներդրումներ անենք:

Դիլիջանում մի քանի արկղ կա՝ հատուկ նախատեսված **պլաստիկի** համար:

Աղբի **տեսակավորումը** խնդրի լուծում է. երբ սկսենք տեսակավորել, վերամշակել, աղբի ծավալը միգուցե նվազի, թե չէ ի՞նչ տարբերություն ես եմ տանում աղբը ծորում թափում, թե՞ շրջիկ մեքենան:

Շատ կարևոր խնդիր է այն, որ մեր մոտ աղբը չի **տեսակավորվում**. կենցաղային աղբը գոմաղբի հետ խառն է:

Առաջին՝ չաղտոտել, երկրորդ՝ աղբը **տեսակավորել**, երրորդ՝ աղբը չայրել. ահա ինչ քայլերի անհրաժեշտություն կա:

Անգամ տներում պետք է աղբը տեսակավորեն:

Շատ լավ կլիներ, որ քաղաքում աղբը **տեսակավորվեր**, որովհետև մեկ-մեկ տեսնում եմ, թե ինչ են թափում, ասում եմ, բա չկարողանայինք հավաքել, բերել գյուղ ու օգտագործել:

Կենտրոնացված և **տարբերակված** աղբահանությունն ավելի լավ կլինի:

Հայաստանում աղբի **տեսակավորման** ու վերամշակման վերաբերյալ տարբեր նախաձեռնություններ կան, բայց իրականում մենք իմանում ենք միայն դրանց սկզբի մասին: Հետևողական տեղեկություններ չկան, թե ի՞նչ եղավ դրանց հետո, աշխատեցին, չաշխատեցին,

Գյուղերում աղբի սորտավորում պետք չի: Պլաստիկ շշերով մենք կաթ ենք բերում քաղաք, թող քաղաքացիները մտածեն էդ պլաստիկի մասին:

Մեր գյուղերում եթե փայտ չունենան, պլաստիկ էլ կվառեն:

Բերդավանիցք ամեն հարսանիքից հետո շշերով կռվում, հիմա լավ է որ պլաստմասից են, իրար չեն վնասում:

Դիվերսիֆիկացված աղբահանության իմաստը բացարձակ չկա: Մենք տանջվենք, սորտավորենք, հետո հավաքեն ու լցնեն նույն տեղը, իմաստը՞...

Մեր համայնքներում մի նորմալ աղբարկղ չկա, էլ ուր մնաց տարբերակված աղբարկղ:

Մենք տարբեր աղբամանների մեջ էինք լցնում, տեսնում էինք՝ վերջում մեքենան գալիս խառնում է իրար, էլ ինչի՞ առանձնացնենք:

Աղբամանների տարանջատումը անօգուտ է, քանի որ միևնույն է աղբահանություն իրականացնողը բոլորը խառնում է իրար և տանում թափում:

Թումանյան համայնքում աղբահանման վճարները ցածր են, նկատելի էլ չեն: Բայց այլ խնդիր կա. երբ պլաստիկն առանձնացնում ենք, դա չգիտենք ինչ անենք, ուր տանենք: Թումանյանում պլաստիկի համար տարա չկա:

Փորձ ունեցել ենք, որ պլաստիկն առանձին հավաքենք, որ գան տանեն: Բայց հավաքեցինք, սպասեցինք, էլի սպասեցինք, չեկան՝ թափեցինք:

Աղավնավանքում երբեմն գալիս էին հատուկ ալյումին, պլաստիկ հավաքում, հիման նման բան չկա: Հիմա պլաստիկը ուր ասես շպրտում են:

Բիոդիզելի համար լիքը նյութ ունենք: Խոսում էին, որ ուզում են դա առնեն: Թող գան, մենք ձրի կտանք:

Պետք օրենքով արգելվի պլաստիկ տոպրակները:

Ցանկալի կլիներ ընդհանրապես հրաժարվել պոլիէթիլենային տոպրակների օգտագործումից:

Առաջին հերթին պետք է պլաստամսե շշերն ու տոպրակները վերացվեն:

Կարևոր խնդիր է պլաստիկ փաթեթներից հրաժարումը, թղթով փաթեթավորման դեպքում աղբը նույնիսկ չնախատեսված տեղերում թափելուց հիմնական մասը քայքայվում է առանց հետևանքների:

Մեր ազգը պատրաստ չէ սորտավորված աղբը թափելուն:

Մեր բնակչությունը ու նաև երկիրն ընդհանուր առմամբ, դեռ չենք հասել էնտեղ, որ կարող ենք մեզ նման շքեղություն թույլ տալ: Մեզ որտեղի՞ց

ինչպիսի ճակատագիր ունեցան այդ ծրագրերը:

Մարդկանց պետք է կրթել, բայց պետք է հետևողական լինել: Աղբի **տեսակավորումն** աշխատեց, մարդիկ առանձին թափում էին պլաստիկ շշերը, բայց հետոն ինչպես է կազմակերպվում, պարզի չի, այդ մասին էլ պետք է տեղեկացնել մարդկանց:

Աղբահավաքման բովանդակությունը շատ կարևոր է հասկանալ: Որովհետև ներկայիս վիճակը կարելի է ահագին թեթևացնել, եթե թեկուզ **տարբերակված** աղբահանության միջոցով աղբի գոնե մի բաղադրիչի հարցը լուծվի:

Ամենամեծ մտահոգությունը Նոյեմբերյանի **աղբավայրն** է, որն ընտրվել է չգիտակցված ձևով, գերեզմաններին մոտ: Տրակտորով աղբը լցնում են ձորը, որտեղ խմելու ջրի աղբյուրներ կան, եթե աղբը լցվում է ձորը, որտեղով գնում է համայնքի խմելու ջուրը, մեծ խնդիր է:

Նոյեմբերյանի մոտ կա ձոր, որտեղից ջուրը հոսում է դեպի Ադրբեջան, ավելի լավ կլինի **աղբավայրը** տեղափոխել այդտեղ, դրանով կխուսափենք Նոյեմբերյանի տարածաշրջանի գյուղեր կեղտոտ ջուր հոսելուց:

Աղբավայր որպես այդպիսին հիմա չկա: Օրինակ, Արևիկ գյուղում աղբը կուտակվում է գյուղի հենց մուտքի մոտ, որը շատ տհաճ է:

Հատուկ **աղբավայրեր** կառուցելը հիմա մեր երկրի համար շատ հեռու է:

Հաղարծինում աղբը աղբամաններում ենք թափում, բայց տեղյակ էլ չեմ, թե որտեղ են թափում հավաքած աղբը:

Մինչև կենտրոնացված աղբահանությանն անցնելը պետք է որոշել, թե որտեղ պետք է լինի **աղբավայրը**:

Աղբավայրերը շատ սխալ են տեղադրված, դրանք գալիս են դեռ խորհրդային միության տարիներից, հիմնականում ճամփեզերերին, գերեզմանների մոտ, այսինքն՝ բնակավայրերին շատ մոտ են, իսկ քամու ժամանակ ամբողջ աղբը լցվում է բնակավայր:

Կենտրոնացված **աղբավայրի** վերափոխումն է ամենակարևոր խնդիրը:

Հիմա հնարավորություն է ստեղծվել **աղբավայրի** փոփոխության հարցը բարձրացնելու համար:

Արևիկ գյուղ մտնող ճանապարհի մոտ փոս են փորել և գյուղի ամբողջ աղբը լցնում են այնտեղ:

Աղբի սորտավորված թափելու համար նախ պետք է **աղբավայրերի** հարցը լուծել:

Բյուջեի միջոցներն էլ մեր միջոցներն են, աղբի վրա մեր միջոցների մեծ ծախսերի կարիք չկա, քանի որ հարցը նորմալ լուծվում է: Այլ հարց է, որ թերևս կարիք կլիներ պլաստիկի առանձնացման

էսքան բյուջե: Բայց անգամ բյուջեի հարցի չի. մարդիկ էլ դեռ շատ հեռու են նման գիտակցությունից՝ տեսակավորում և այլն:

Մենք հասկանում ենք, որ պետք են ոչ միայն աղբամաններ, այլ նաև աղբի **տեսակավորում**, բայց դա մեր համար մեզ դեռ շատ շուտ է:

Մեր մոտ էդ եվրոպական բաները, թե առանձին առանձին աղբահանություն մեր մոտ չի աշխատի. հարյուր դրամ հազիվ ենք տալիս:

Մեր բնակչությունը ու նաև երկիրն ընդհանուր առմամբ, դեռ չենք հասել էնտեղ, որ կարող ենք մեզ նման շքեղություն թույլ տալ: Մեզ որտեղի՞ց էսքան բյուջե: Բայց անգամ բյուջեի հարցի չի. մարդիկ էլ դեռ շատ հեռու են նման գիտակցությունից՝ տեսակավորում և այլն:

Մեր ժողովրդի ինքնագիտակցությունը շատ ցածր է, աղբի տեսակավորման խնդրի մասին դեռ վաղ է խոսել:

խնդրին առանձին մոտեցում ցուցաբերելը:

Շատ կարևոր է որպեսզի **վերամշակման** գործարան լինի: Այդ գործարանի շնորհիվ աղբահանությունը շատ լավ կիրականացվի, քանի որ դրանից գումար կգոյանա:

Աղբը պետք է ոչ թե այրել, այլ տանել ու **վերամշակել**:

Մարդ կա մեզ մոտ, որ պլաստիկ շշեր ու տոպրակներ է հավաքում, բայց չնչին գնով: Դրա համար էլ նորմալ **վերամշակում** պիտի ստեղծենք:

Աղբի **վերամշակման** գործարաններ պետք է ստեղծվեն ու դրա մասնաճյուղերը լինեն գյուղերում: Գործարանների բացումը կօգնի նաև աշխատատեղերի ստեղծմանը:

Աղբահանության լավագույն լուծումը կլինի աղբը **վերամշակող** գործարանի ստեղծումը:

Աղբի **վերամշակման** դեպքում գուցե ավել գումա՞ր ստանանք:

Տարբերակված աղբահանության իմաստն էլ է անհասկանալի, Հայաստանում աղբի **վերամշակման** ոչ մի գործարան չկա:

Տվյալ ոլորտի զարգացման միակ շարժիչը կարող է հանդիսանալ աղբի **վերամշակման** գործարանը Հայաստանում: Դա կապահովի լրացուցիչ եկամուտ, որն էլ իր հերթին կուղղվի աղբահանության պրոցեսի կամզակերպմանն ու առաջխախացմանը:

Նոյեմբերյանում մեկը փորձեց տեսակավորված աղբից բիզնես սկսի. ամբողջ Հայաստանից պլաստիկ շշեր հավաքեց, ֆուռով տեղափոխեց Ռուսաստան, բայց էս պահին ոչ մի առաջընթաց չկա: Կարծես կասեցվեց էս գործունեությունը:

Մարդիկ ամբողջ աշխարհում միլիոններ են աշխատում աղբի **վերամշակումից**, չենք հասկանում ինչու դա Հայաստանում չի կազմակերպվում:

Միայն աղբավայրով չի: Պիտի աղբի նորմալ **վերամշակում** լինի, թե չէ կհավաքվի:

Ինչքան էլ մենք աղբարկղ դնենք, ու տրանսպորտի քանակը ավելացնել, միևնույն է անհրաժեշտ է որ **վերամշակման** գործարաններ դրվեն:

Պետությունը միլիոնների ու միլիարդների ծախս է անում աղբահանության կազմակերպման համար: Անհրաժեշտ է որ պետությունը այդ միլիարդները մի տեղ հավաքի ու սուբսիդավորի աղբ **վերամշակող** կազմակերպություն հիմնողին:

Եթե խելացի մարդ լինի աղբի **վերամշակում** կհիմնի, աղբահանությունն էլ կիրականացնի:

Պետք է անպայման լինի գործարաններ, որոնք իրականացնի **աղբամշակում**:

Տնից դուրս եկած աղբն ուրիշ է, բայց ունենք նաև **գյուղատնտեսական** ու **շինարարական** աղբ:

Մեզ շատ կօգներ աղբի տեսակավորման մասին գիտելիքը, օրինակ, ինչպես օգտագործենք չորացած խոտը, ուտելիքի մնացորդը... Մենք էսպիսի գիտելիքներ չունենք:

Հենց ժողովուրդը հասկացավ, որ կարելի է տեսակավորել ու իրացնել, բավական բան կփոխվի, էլ չեն վառի, էլ չեն լցնի գետը:

Տեսել ենք, որ պլաստիկ շշերն առանձին հավաքվում են, բայց չգիտենք, թե հետո ինչ է լինում դրանց հետ. վերամշակվո՞ւմ է, թե՞ նորից խառնում են աղբի այլ տեսակներին: Մինչդեռ եթե իմանանք, որ վերամշակման գործարան կա, արդեն սիրով կտեսակավորենք:

Պետք է բնակչության շրջանում անցկացնել սեմինարներ, օրինակ, ի՞նչ կարելի է անել պլաստիկ թափոնների հետ, ի՞նչ կարելի է դրանից պատրաստել, ի՞նչպես կարելի է դրանք օգտակար մի բանի մեջ օգտագործել: Սրանով մենք կխթանենք ձեռներեցությունը: Մարդիկ իրենց մտքի աշխատանքի շնորհիվ կարող են գործի տեր դառնալ: Անհրաժեշտ է սովորեցնել, տեղեկացնել, օրինակ ցույց տալ:

Պետք է ինչ որ մեկը այցելի գյուղ ու հայտարարի, որ ինքը կգնի պլաստմասի շշերը, ապա բոլորն էլ կհավաքեն շշերը նույնիսկ 100 դրամի համար:

Գոմաղբը վառելիք է, ոչ-ոք չի թափում:

Գոմաղբը հիմնականում հողամասում է

Պետք է տարանջատել խնդիրները:

Մարդ տեղ չունի, որ **շինարարական** աղբը թափի: Փոս ենք գտնում, աղբը լցնում մեջը:

Խնդիր է նաև այն, որ **շինարարական** աղբն է խառնվում կենցաղայինին. պետք է դա տարբերակվի:

Եթե մի տոպրակ **շինարարական** աղբ ես ունենում, ի՞նչ պիտի անես: Ոչ կարող ես աղբամանը գցես, ոչ էլ՝ մեքենա կանչես, որ տանի:

Դիլիջանի ծայրամասային շենքերի մոտ գոմեր կան, որտեղ մարդիկ անասուն են պահում: **Գոմաղբը** երբեմն աղբամաններ են լցնում:

Սեփական տներում բնակվողները միշտ դժգոհ են լինելու աղբահանությունից, քանի որ իր անասունների աղբը ինքը թափում է կենցաղային աղբի համար նախատեսված աղբավայրում ու այդ պատճառով իրենք երբեք չեն բավարարվի:

Ամռան ամիսներին ընտանի կենդանիներին տանում են սար, հետևաբար սննդային մնացորդները թափվում են աղբամանների մեջ:

Ունենք երկու տեսակի աղբ՝ վառելիք (պլաստիկ և պոլիէթիլեն) և **անասնակեր**:

Գյուղերում ուտելիքի մնացորդները տալիս ենք ընտանի կենդանիներին, գոմաղբն էլ վառում ենք, միայն պլաստիկն ու խոտի մնացորդն է մնում թափելու համար:

Աղբի մեծ մասը «ցելաֆոն», «կապրոն» է, մնացածը **կովերը** կուտեն:

Գյուղացու աղբն այն է, ինչ որ կենդանին չի ուտում ու չի վառվում:

Անասնապահությամբ զբաղվող **գյուղացին** գրեթե աղբ չի ունենում. ինքը հնարավոր ամեն ինչ իրացնում է:

Գյուղում աղբագոյացությունն ավելի քիչ է: Գյուղացին հիմնականում բնամթերքից գոյացած աղբը չի թափում, այլ կերպ է օգտագործում:

Քաղաքի աղբն ու գյուղի աղբը տարբեր է, պետք է հասկանալ, դա ինչպես **տեսակավորել**:

օգտագործվում: Քանի որ մենք անտառներ ունենք, աթար սարքելու կարիք չկա: Եթե տանը գազ կա, փետով ճաշ կեփե՞ք:

Աղբատար մեքենաները սովորաբար հրաժարվում են տանել գյուղատնտեսական և շինարարական աղբը: Դրա դիմաց վճարել պատրաստ եմ և լրացուցիչ երբեմն վճարում ենք: Հիմա մասամբ դա այրում ենք:

Շինաղբի հավելյալ վճարը երկուսից երեք հազար դրամ է՝ մեկ անգամվա համար: Հիմա դա վճարում ենք:

Առաջարկում եմ հատուկ ծրագիր մշակել, որ ինչ-որ կոնկրետ օրերին կատարել շինարարական և այլ աղբի տեղափոխում և այդ օրերի համար լրացուցիչ վճար գանձել:

Կենցաղային աղբն այսօր թե՛ գյուղում, թե՛ քաղաքում գրեթե նույնացվել է, ուստի աղբահանությունը երկու բնակավայրում էլ պիտի նույն կերպ կատարվի: Գոնե կենցաղային աղբի դեպքում:

Հավելված 1. Գունային կոդավորում

Ախուրյան և Աշոցք համայնքներ (ՀՀ Շիրակի մարզ), 27 նոյեմբերի հոկտեմբերի, 2018թ.

Ստեփանավան և Թումանյան համայնքներ (ՀՀ Լոռու մարզ), 28 նոյեմբերի, 2018թ.

Դիլիջան և Նոյեմբերյան համայնքներ (ՀՀ Տավուշի մարզ), 5 դեկտեմբերի, 2018թ.

Հավելված 2. Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքների քննարկման սցենարները

Ախուրյան, Աշոցք, Սցենար 1. Աղբահանության ճակատում՝ անփոփոխ

Շիրակի մարզի խոշորացված Ախուրյան և Աշոցք համայնքներում 2020թ. կենտրոնացված աղբահանություն իրականացվում էր բացառապես համայնքի կենտրոնական բնակավայրերում՝ Ախուրյան և Աշոցք գյուղերում: Համայնքների մյուս բնակավայրերում բնակիչներն աղբը կուտակում և հեռացնում էին ինքնուրույն:

Ախուրյանում և Աշոցքում բնակիչները տանը կուտակված կենցաղային աղբը գերազանցապես թափում էին մոտակա աղբարկղ կամ հանձնում շրջիկ աղբատար մեքենային: Սակավաթիվ էին աղբամաններն ու աղբատարները: Մյուս բնակավայրերում բնակիչները աղբը հիմնականում այրում էին կամ թափում իրենց տնային տնտեսությանը կից անհատական աղբավայրերում: Առանձին դեպքերում բնակիչները կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում էին կենտրոնացված աղբավայր, աղբը թափում ջրատար առվի կամ գետի մեջ, կամ, ի վերջո, աղբը նետում ցանկացած պատահական վայրում:

Եթե աղբահանության ծառայության դիմաց Ախուրյան գյուղում վճարում էին գրեթե բոլոր տնային տնտեսությունները, ապա Աշոցք գյուղում չորս բնակիչներից երեքը աղբահանության ծառայության համար վճարում չէր կատարում: Միաժամանակ, վճարում կատարող չորս բնակչից երեքը համարում էր, թե վարձավճարը այս կամ այն կերպ մատչելի է իր համար: Աշոցք համայնքում, հաշվի առնելով կենտրոնական բնակավայրում ծառայությունների վարձավճարի հավաքագրման անբավարար մակարդակը ավագանին որոշում ընդունեց համայնքի բյուջեի միջոցների հաշվին մասնակիորեն սուբսիդավորել աղբահանության ծառայությունների ծախսերը՝ աբահանություն իրականացնող կազմակերպությանը փոխհատուցելով չհավաքագրվող գումարը:

Թեև աղբարկղերի և աղբանոթների քանակն ու տարողունակությունը, տեղակայումն ու հասանելիությունը, հարակից տարածքի մաքրությունն ու տհաճ հոտերի առկայությունը, աղբատար մեքենայի սանիտարահիգիենիկ վիճակը խնդրահարույց էր մնում համայնքների կենտրոնական բնակավայրերում, իսկ մյուս բնակավայրերում կենտրոնացված աղբահանություն չէր իրականացվում, և բնակիչները, ընդհանուր առմամբ, բավարարված չէին աղբահանման ծառայության որակից, այդուհանդերձ, համայնքների ավագանիները, երկար քննարկումներից հետո որոշեցին աղբահանության ծառայության որակի բարելավման նպատակով լրացուցիչ ծախսեր չկատարել համայնքի բյուջեից: Համայնքների բոլոր բնակավայրերը սպասարկող շրջիկ աղբատար մեքենա ձեռքբերելու և շահագործելու, աղբահանությունը կենտրոնացված կարգով իրականացնելու, լրացուցիչ աղբամաններ տեղադրելու և մի շարք այլ խնդիրների քննարկումը հետաձգվեց մինչև 2022 թվականը:

Նման որոշումը հիմնավորվում էր, մասնավորապես, հաշվի առնելով, որ Աշոցքի և Ախուրյանի բնակիչները համեմատաբար բավարարված էին աղբահանության իրականացման և աղբանոթների մաքրման հաճախությունից, լանդշաֆտի կտրտվածության և ճանապարհների վատ վիճակի պատճառով աղբահանության ծառայություններում նոր ներդրումները նպատակահարմար չէին, իսկ վարձավճարների հավաքագրումը խնդրահարույց էր:

Ախուրյան և Աշոցք համայնքների խոշորացմանը հաջորդած հինգ տարիներին աղբահանության ծառայությունների բարելավմանը համայնքի բյուջեից լրացուցիչ միջոցներ չհատկացվեցին: Աղբահանության ոլորտում առկա նորմատիվային պահանջները համայնքներում հիմնականում չէին պահպանվում, կենտրոնացված աղբավայրերը մնում էին անցանկապատ, իսկ աղբատար մեքենաների սանիտարական մաքրման և լվացման հարմարություններ չկային:

Ախուրյան, Աշոցք, Սցենար 2. Աղբի ու աղբատարի արանքում

Շիրակի մարզի խոշորացված Ախուրյան և Աշոցք համայնքների 2018թ. բյուջեն կազմել է, համապատասխանաբար, շուրջ 557 միլիոն և 216 միլիոն ՀՀ դրամ: Աղբահանության ծառայությունների մատուցման ապահովման նպատակով համայնքները բյուջեից կատարել են ծախսեր, որոնք կազմել են բյուջեի շուրջ 5.3% (29.5 միլիոն ՀՀ դրամ) և 1% (2 միլիոն ՀՀ դրամ)՝ համապատասխանաբար:

Հաշվի առնելով աղբահանության ծառայությունների որակի վերաբերյալ համայնքի բնակիչների բարձրաձայնած խնդիրները՝ ավագանիները 2020թ. համայնքների բյուջեներում աղբահանության ծառայությունների որակի բարելավմանն ուղղված հատկացումներն նախատեսեցին: Գնվեցին և տեղադրվեցին մինչև 1 խմ տարողությամբ մետաղական նոր աղբարկղեր: 2021թ. տարեսկզբին Ախուրյան համայնքի բնակավայրերում տեղակայված էր 120 աղբարկղ՝ 2018թ. 83-ի փոխարեն, ընդ որում, շուրջ 20 աղբարկղ տեղադրված էր Այգաբաց, Արևիկ, Բասեն, Կամո, Կառնուտ, Հովիտ, Զրառատ բնակավայրերում: Աշոցքի բոլոր բնակավայրերում տեղադրված էր շուրջ 85 աղբարկղ՝ 2018թ. 43-ի փոխարեն (2018թ. աղբարկղեր կային բացառապես Աշոցք բնակավայրում), ընդ որում համայնքի Բավրա, Ջույգաղբյուր, Թավշուտ, Կարմրավան, Կրասար, Ղազանչի, Մեծ Սեպասար, Սարագյուղ, Սիզավետ, Փոքր Սեպասար բնակավայրերում տեղադրված էր երեքական աղբարկղ: 2020թ. Ախուրյանն ու Աշոցքը ձեռք բերեցին նաև մեկական աղբատար նոր մեքենա:

Այդուհանդերձ, աղբահանության ծառայությունների բարելավմանն ուղղված հատկացումների ու նոր գույքի ձեռքբերման պարագայում անգամ համայնքների բնակիչները շարունակում էին դժգոհել ծառայությունների որակից: Այսպես, Ախուրյան և Աշոցք բնակավայրերում աղբամաններից և աղբանոթներից աղբահեռացման հաճախականություն ու գրաֆիկը 2018-2022թթ. մնացին անփոփոխ: Խնդրահարույց էր մնում աղբարկղերի և աղբանոթների հարակից տարածքի մաքրությունն ու տհաճ հոտերի առկայությունը: Թե՞ Ախուրյանում, թե՞ Աշոցքում ձեռք բերված նոր աղբատար մեքենաները սպասարկում էին բացառապես ոչ կենտրոնական բնակավայրերը՝ ծառայելով որպես շրջիկ աղբատար մեքենաներ, ինչի արդյունքում այս բնակավայրերում տեղադրված նոր աղբամաններից աղբահեռացումը կատարվում էր շաբաթական մեկ անգամ, հարցականի տակ դնելով դրանց նպատակահարմարությունը: Խնդրահարույց էր աղբատար մեքենաների սանիտարահիգիենիկ վիճակը:

Անգամ նոր ներդրումների պարագայում համայնքների ոչ կենտրոնական բնակավայրերում շատ բնակիչներ շարունակում էին այրել աղբը կամ թափել սեփական աղբավայրում և ջրատարների մեջ:

Խնդիրներ առաջացան նաև համայնքների կենտրոնական բնակավայրերում տեղադրված նոր աղբարկղերի շուրջ: Բնակիչները նոր աղբարկղերը հաճախ հեռացնում էին իրենց տների մոտակայքից կամ շրջում գետնին, որպեսզի դրանց մեջ աղբ լցնել հնարավոր չլիներ: Նման վարքագիծը բնակիչները բացատրում էին «աղբի կուտակումը քթի տակից հեռացնելու» մտադրությամբ և նշում, որ աղբարկղերից աղբի հեռացման հաճախականությունը և աղբարկղերի սանիտարահիգիենիկ վիճակը, հատկապես շոգ ամիսները հաշվի առնելով, չեն ցանկանում հաշտվել իրենց հարևանությամբ աղբարկղի գոյության հետ: Միաժամանակ, շատ ախուրյանցիներ և աշոցքցիներ դժգոհում էին, թե իրենց ամենահարմար աղբարկղը «հեռու է» իրենց տնից:

Ախուրյան, Աշոցք, Սցենար 3. Նվեր աղբատարի ատամնանիվները չեն հաշվում

Թեև Ախուրյան և Աշոցք համայնքների խոշորացմանը հաջորդած տարիներին բնակիչները շարունակաբար բարձրաձայնում էին աղբահանության ծառայությունների որակի վերաբերյալ բազմաթիվ մտահոգություններ, այդուհանդերձ ծառայությունների բարելավման նպատակով համայնքի բյուջեից լրացուցիչ միջոցներ չհատկացվեցին:

2020թ. վաղ գարնանը Հայաստանի տարածաշրջանային զարգացման հիմնադրամը Ախուրյան բնակավայրին տրամադրեց նոր աղբատար մեքենա, իսկ ծագումով արևիկցի ռուսաստանաբնակ Կառլեն Թավշյանի նպատակային նվիրատվությամբ Արևիկ բնակավայրի համար գնվեցին և տեղադրվեցին մետաղական աբարկղեր ու աղբանոթներ: Բարերարի նվիրատվությամբ Արևիկը ստացավ նաև աղբատար մեքենա՝ բացառապես բնակավայրի կարիքների համար: Նույն տարվա ամռանը հայաստանյան հասարակական կազմակերպություններից մեկի և հանրապետության խոշորագույն ձեռնարկություններից մեկի համատեղ ջանքերով և ՀՀ պետական բյուջեից սուբսիդավորմամբ իրականացվող «Աղբի տեղը» ծրագրի շրջանակներում Աշոցք բնակավայրին տրամադրվեց շրջիկ աղբատար:

Չնայած արտաքին աղբյուրներից համայնքների ստացած գույքին՝ դրանց շահագործման և պահպանության խնդիրներում համայնքները բախվեցին մի շարք խնդիրների: Նախ, աղբատար մեքենաների շահագործման, աղբահեռացման, աղբամանների և աղբանոթների օգտագործման ընթացիկ ծախսերի կատարման համար միջոցներ չէին նախատեսվել համայնքների 2020թ. բյուջեների վարչական մասում:

2021թ. և հետագա տարիներին նվիրատվության միջոցով ստացված աղբահանության համայնքային նոր գույքի օգտագործման համար Ախուրյանն ու Աշոցքը ստիպված էին որոշակի լրացուցիչ միջոցներ հատկացնել իրենց բյուջեներից: Այդուհանդերձ, սահմանափակ հատկացումներն ապահովում էին ծառայությունների մատուցումը աղբահանության նախկին հաճախականությամբ և գրաֆիկով: Խնդրահարույց էր մնում աղբարկղերի և աղբանոթների հարակից տարածքի մաքրությունն ու գարշահոտությունը, աղբատար մեքենայի սանիտարահիգիենիկ վիճակը, խոշորացված համայնքների բնակավայրերի մեծ մասում կենտրոնացված աղբահանություն չէր իրականացվում:

Աղբահանության ընդլայնված ծառայությունների ծախսերը հոգալու և դրանց հետագա բարելավման նպատակով համայնքների ավագանիները 2022թ. որոշեցին բարձրացնել աղբահանության վարձավճարներն այն բնակավայրերում, որտեղ իրականացվում էր կենտրոնացված աղբահանություն: Վարձավճարների հավաքագրումը 2022թ. դարձավ խիստ մտահոգիչ, ինչի արդյունքում համայնքների ավագանիներին առաջարկվեց քննարկել 2023թ. սկսած աղբահանության ծառայությունների մատուցումը իրականացնել ոչ թե համայնքների կոմունալ սպասարկման և բարեկարգման ՀՈԱԿ-ների կողմից, այլ մասնավոր կազմակերպությունների միջոցով՝ գնումների ընթացակարգով: Քննարկվում էր մասնավոր կազմակերպության միջոցով աղբահանության իրականացումը կազմակերպել խոշորացված համայնքների բոլոր բնակավայրերում՝ աղբահանության գույքն անհատույց օտարելով ընտրված կազմակերպություններին և համայնքի կողմից վերահսկողություն սահմանելով աղբահանության նորմատիվների պահպանման հանդեպ: Նախատեսվում էր նաև վարձավճարի հավաքագրման գործառույթները հանձնել մասնավոր կազմակերպությանը և բացառել աղբահանության կազմակերպման և ծառայությունների որակի բարելավման նպատակով համայնքի բյուջեից հետագա լրացուցիչ ծախսերի կատարումը:

Ախուրյան, Աշոցք, Սցենար 4. Փողով, մտքով ու պատասխանատվությամբ

2019թ. Ախուրյան և Աշոցք համայնքների ավագանիները, հաշվի առնելով աղբահանության ծառայությունների վերաբերյալ բնակիչների բարձրաձայնած խնդիրները, որոշեցին համայնքների բյուջեներում էական միջոցներ նախատեսել ծառայությունների որակի բարելավման նպատակով: Ավագանիները հաշվի առան նաև այն, որ բնակիչների առանձին խմբեր տարբեր ակնկալիքներ ունեն աղբահանության ծառայությունների որակից, ինչպես նաև տարբեր ֆինանսական հնարավորություններ և պատրաստակամություն՝ իրենց ակնկալիքները բավարարելուն ուղղված ֆինանսական բեռ կրելու առումով:

Որոշվեց, 2020թ. սկսած, միասնական կենտրոնացված աղբահանություն իրականացնել խոշորացված համայնքների բոլոր բնակավայրերում: Ախուրյան և Աշոցք բնակավայրերում ծառայությունը կազմակերպվում էր բացառապես աղբարկղերից աղբահանությամբ, իսկ համայնքների ոչ կենտրոնական բնակավայրերում՝ բացառապես շրջիկ աղբատարներին աղբը շաբաթական երկու անգամ հստակ գրաֆիկով հանձնելու միջոցով:

Համայնքների ավագանիները նաև որոշեցին կուտակված կենցաղային աղբը այրելու, տնային տնտեսությանը կից անհատական աղբավայրերում, ջրատարներում կամ պատահական վայրում թափելու դեպքերը բացառելու նպատակով, 2021թ. սկսած, իրենց լիազորությունների և իրավասությունների սահմաններում ամենայն խստությամբ քննել ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի Հոդված 43.1-ով նախատեսված վարչական իրավախախտումների՝ աղբահանության և սանիտարական մաքրման կանոնները խախտելու և չսահմանված վայրերում սպառման թափոններ թափելու վերաբերյալ գործերը՝ համաձայն ՀՀ ՎԻՎՕ Հոդված 2191-ի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի և իրավական այլ ակտերի դրույթների:

Վարչական պատասխանատվության կիրարկումը խստացնելուն զուգահեռ, որոշվեց նաև համայնքներում միջոցներ տրամադրել և վերահսկողություն սահմանել աղբահանության ոլորտում առկա մի շարք նորմատիվային պահանջները պահպանելու հարցում, այդ թվում՝ կենտրոնացված աղբավայրերը ցանկապատումը, աղբատար մեքենաների սանիտարական մաքրման և լվացման ապահովումը: Միջոցներ հատկացվեցին տեղադրված աղբամանները կենդանիներից պաշտպանելու նպատակով աղբատեղիների չորրորդ կողմը ցանցապատելու նպատակով: Աղբի տեսակավորման նպատակով 2022թ. բյուջեներում լրացուցիչ միջոցներ հատկացվեցին Ախուրյան և Աշոցք բնակավայրերում պլաստիկ շշերի համար տարբերակված աղբահանություն կազմակերպելու, բակերը, միջբակային տարածքները, փողոցները, հրապարակները, զբոսայգիներն ու պուրակները աղբանոթներով ապահովելու նպատակով:

Տնային տնտեսությունների և տնտեսվարողների տարբեր խմբերի ակնկալիքները, կարիքներն ու հնարավորությունները հաշվի առնելով՝ Ախուրյան և Աշոցք բնակավայրերում 2022թ. ներդրվեցին աղբահանության ծառայությունների լրացուցիչ՝ անհատականացված փաթեթներ, այդ թվում՝ բաժանորդին անհատական աղբամանների տրամադրում և դրանցից աղբահանության իրականացում սահմանված գրաֆիկով:

2023թ. Ախուրյանի ավագանին «Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման միավորում» կոալիցիոն ցանցին պատվիրեց իրականացնել շրջակա միջավայրի զգայուն ընկալիչների վրա բնապահպանական ազդեցությունների ռիսկերի գնահատում՝ ծառայությունների դիմաց վճարելով համայնքի բյուջեից:

Ստեփանավան, Թումանյան, Սցենար 1. Աղբահանության ճակատում՝ անփոփոխ

Լոռու մարզի Ստեփանավան համայնքում 2020թ. կենտրոնացված աղբահանություն իրականացվում էր միայն Ստեփանավան քաղաքում: Ուրասարում և Կաթնաղբյուրում բնակիչներն աղբը կուտակում և հեռացնում էին ինքնուրույն: Խոշորացված Թումանյան համայնքի բոլոր բնակավայրերում իրականացվում էր կենտրոնացված աղբահանություն՝ շրջիկ աղբատար մեքենային աղբը հանձնելու և աղբարկղերի մեջ թափելու միջոցով:

Այդուհանդերձ, ինչպես Ուրասարում և Կաթնաղբյուրում, այնպես էլ Թումանյանի մի շարք բնակավայրերում բնակիչները տանը կուտակված կենցաղային աղբը հաճախ այրում էին կամ թափում իրենց տնային տնտեսությանը կից անհատական աղբավայրերում: Առանձին դեպքերում բնակիչները կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում էին կենտրոնացված աղբավայր կամ թափում ջրատարի մեջ:

Թե՛ Ստեփանավան քաղաքում, թե՛ Թումանյան համայնքում աղբահանության ծառայության դիմաց վճարում էին տնային տնտեսությունների բացարձակ մեծամասնությունը (90%): Եթե Թումանյան համայնքում բնակիչների ճնշող մեծամասնությունը (90%) համարում էր, թե վարձավճարը այս կամ այն կերպ մատչելի է իր համար, ապա երեք ստեփանավանցիներից միայն երկուսն էին վարձավճարը մատչելի համարում: Հաշվի առնելով ծառայությունների մատչելիության ապահովման անհրաժեշտությունը՝ Ստեփանավան համայնքի ավագանին որոշում ընդունեց նվազեցնել աղբահանության ծառայությունների վարձավճարի չափը, և համայնքի բյուջեի միջոցների հաշվին մասնակիորեն սուբսիդավորել աղբահանության ծառայությունների ծախսերը՝ աբահանություն իրականացնող կազմակերպությանը փոխհատուցելով սահմանված գումար:

Թեև աղբարկղերի և աղբանոթների քանակն ու տարողունակությունը, տեղակայումն ու հասանելիությունը, հարակից տարածքի մաքրությունն ու տհաճ հոտերի առկայությունը, աղբատար մեքենայի սանիտարահիգիենիկ վիճակը խնդրահարույց էր մնում համայնքներում, իսկ Ստեփանավանի երկու բնակավայրերում կենտրոնացված աղբահանություն չէր իրականացվում, այդուհանդերձ, համայնքների ավագանիները, երկար քննարկումներից հետո որոշեցին աղբահանության ծառայության որակի բարելավման նպատակով լրացուցիչ ծախսեր չկատարել համայնքի բյուջեից: Ստեփանավանի երկու բնակավայրերում աղբահանությունը շրջիկ աղբատար մեքենայով կենտրոնացված կարգով իրականացնելու, համայնքներում աղբամաններ տեղադրելու, գետի մեջ աղբի նետման և աղբն այրելու դեպքերը կանխելու համար վերահսկողություն սահմանելու, աղբով լցված ծորերը մաքրելու, աղբատար տեխնիկան փոխելու և դրանց թիվն ավելացնելու և մի շարք այլ խնդիրների քննարկումը հետաձգվեց մինչև 2022 թվականը:

Նման որոշումը հիմնավորվում էր, մասնավորապես, հաշվի առնելով, որ Ստեփանավանի և Թումանյանի բնակիչները համեմատաբար բավարարված էին աղբահանության իրականացման և աղբանոթների մաքրման հաճախությունից, որ լանդշաֆտի կտրտվածության և ճանապարհների վատ վիճակի պատճառով աղբահանության ծառայություններում նոր ներդրումները նպատակահարմար չէին, իսկ վարձավճարների բարձրացումը խնդրահարույց էր:

Համայնքների խոշորացմանը հաջորդած հինգ տարիներին աղբահանության ծառայությունների բարելավմանը համայնքի բյուջեից լրացուցիչ միջոցներ չհատկացվեցին: Աղբահանության ոլորտում առկա նորմատիվային պահանջները համայնքներում հիմնականում չէին պահպանվում, կենտրոնացված աղբավայրերը մնում էին անցանկապատ, աղբատար մեքենաների սանիտարական մաքրման և լվացման հարմարություններ չկային:

Ստեփանավան, Թումանյան, Սցենար 2. Աղբի ու աղբատարի արանքում

Լոռու մարզի խոշորացված Ստեփանավան և Թումանյան համայնքների 2018թ. բյուջեն կազմել է, համապատասխանաբար, շուրջ 454 միլիոն և 131 միլիոն ՀՀ դրամ: Աղբահանության ծառայությունների մատուցման ապահովման նպատակով համայնքները բյուջեից կատարել են ծախսեր, որոնք կազմել են բյուջեի շուրջ 11.5% (շուրջ 52 միլիոն ՀՀ դրամ) և 4% (5 միլիոն ՀՀ դրամ)՝ համապատասխանաբար:

Հաշվի առնելով աղբահանության ծառայությունների որակի վերաբերյալ համայնքի բնակիչների բարձրաձայնած խնդիրները՝ ավագանիները 2020թ. համայնքների բյուջեներում աղբահանության ծառայությունների որակի բարելավմանն ուղղված հատկացումներն նախատեսեցին: Գնվեցին և տեղադրվեցին նոր աղբարկղեր: 2021թ. տարեսկզբին Թումանյան համայնքի բնակավայրերում տեղակայված էր մետաղական, փակվող կափարիչով 1.2 խմ տարողությամբ 115 աղբարկղ՝ 2018թ. 84-ի փոխարեն, ընդ որում, շուրջ 30-ը՝ Թումանյան բնակավայրում, ուր աղբահանությունը նախկինում իրականացվում էր բացառապես շրջիկ աղբատարով: Ստեփանավան համայնքի բնակավայրերում տեղադրված էր 0.7 խմ տարողությամբ մետաղական 100 աղբարկղ՝ 2018թ. 67-ի փոխարեն (2018թ. աղբարկղեր կային բացառապես Ստեփանավան բնակավայրում), ընդ որում, համայնքի Ուրասար և Կաթնաղբյուր բնակավայրերում տեղադրված էր հնգական աղբարկղ: 2020թ. Թումանյանն ու Ստեփանավանը ձեռք բերեցին նաև մեկական աղբատար նոր մեքենա:

Այդուհանդերձ, աղբահանության ծառայությունների բարելավմանն ուղղված հատկացումների ու նոր գույքի ձեռքբերման պարագայում անգամ համայնքների բնակիչները շարունակում էին դժգոհել ծառայությունների որակից: Այսպես, Թումանյան համայնքի բնակավայրերում և Ստեփանավան քաղաքի աղբամաններից և աղբանոթներից աղբահեռացման հաճախականություն ու գրաֆիկը 2018-2022թթ. մնացին անփոփոխ: Խնդրահարույց էր մնում աղբարկղերի և աղբանոթների հարակից տարածքի մաքրությունն ու տհաճ հոտերի առկայությունը: Ստեփանավանում ձեռք բերված նոր աղբատար մեքենան, մեծ հաշվով, չէր սպասարկում Ուրասարն ու Կաթնաղբյուրը՝ ծառայելով որպես շրջիկ աղբատար, ինչի արդյունքում տեղադրված նոր աղբամաններից աղբահեռացումը կատարվում էր շաբաթական մեկ անգամ, հարցականի տակ դնելով դրանց նպատակահարմարությունը: Թումանյան բնակավայրում շրջիկ մեքենայով աղբահանության փոխարեն աղբահանությունն իրականացվում էր միայն աղբամաններից: Խնդրահարույց էր աղբատար մեքենաների սանիտարահիգիենիկ վիճակը:

Անգամ նոր ներդրումների պարագայում համայնքների ոչ կենտրոնական բնակավայրերում որոշ բնակիչներ շարունակում էին այրել աղբը կամ թափել սեփական աղբավայրում և ջրատարների մեջ:

Խնդիրներ առաջացան նաև համայնքների կենտրոնական բնակավայրերում տեղադրված նոր աղբարկղերի շուրջ: Բնակիչները նոր աղբարկղերը հաճախ հեռացնում էին իրենց տների մոտակայքից կամ շրջում գետնին, որպեսզի դրանց մեջ աղբ լցնել հնարավոր չլիներ: Նման վարքագիծը բնակիչները բացատրում էին «աղբի կուտակումը քթի տակից հեռացնելու» մտադրությամբ և նշում, որ աղբարկղերից աղբի հեռացման հաճախականությունը և աղբարկղերի սանիտարահիգիենիկ վիճակը, հատկապես շոգ ամիսները հաշվի առնելով, չեն ցանկանում հաշտվել իրենց հարևանությամբ աղբարկղի գոյության հետ: Միաժամանակ, շատ ստեփանավանցիներ և թումանյանցիներ դժգոհում էին, թե իրենց ամենահարմար աղբարկղը «հեռու է» իրենց տնից: Թումանյանցիները նշում էին, թե շրջիկ մեքենայի օրերում աղբահանությունն ավելի լավ էր իրականացվում:

Ստեփանավան, Թումանյան, Սցենար 3. Նվեր աղբատարի ատամնանիվները չեն հաշվում

Թեև Ստեփանավան և Նոյեմբերյան համայնքների խոշորացմանը հաջորդած տարիներին բնակիչները շարունակաբար բարձրաձայնում էին աղբահանության ծառայությունների որակի վերաբերյալ բազմաթիվ մտահոգություններ, այդուհանդերձ ծառայությունների բարելավման նպատակով համայնքի բյուջեից լրացուցիչ միջոցներ չհատկացվեցին:

2020թ. վաղ գարնանը Հայաստանի տարածաշրջանային զարգացման հիմնադրամը Ստեփանավան քաղաքին տրամադրեց նոր աղբատար մեքենա, իսկ ծագումով ստեփանավանցի ռուսաստանաբնակ Կառլեն Թավշյանի նպատակային նվիրատվությամբ Ստեփանավանի համար գնվեցին և տեղադրվեցին մետաղական աբարկղեր ու աղբանոթներ: Նույն տարվա ամռանը հայաստանյան հասարակական կազմակերպություններից մեկի և հանրապետության խոշորագույն ձեռնարկություններից մեկի համատեղ ջանքերով և ՀՀ պետական բյուջեից սուբսիդավորմամբ իրականացվող «Աղբի տեղը» ծրագրի շրջանակներում Թումանյան բնակավայրին տրամադրվեց շրջիկ աղբատար:

Չնայած արտաքին աղբյուրներից համայնքների ստացած գույքին՝ դրանց շահագործման և պահպանության խնդիրներում համայնքները բախվեցին մի շարք խնդիրների: Նախ, աղբատար մեքենաների շահագործման, աղբահեռացման, աղբամանների և աղբանոթների օգտագործման ընթացիկ ծախսերի կատարման համար միջոցներ չէին նախատեսվել համայնքների 2020թ. բյուջեների վարչական մասում:

2021թ. և հետագա տարիներին նվիրատվության միջոցով ստացված աղբահանության համայնքային նոր գույքի օգտագործման համար Ստեփանավանն ու Թումանյանը ստիպված էին որոշակի լրացուցիչ միջոցներ հատկացնել իրենց բյուջեներից: Այդուհանդերձ, սահմանափակ հատկացումներն ապահովում էին ծառայությունների մատուցումը աղբահանության նախկին հաճախականությամբ և գրաֆիկով: Խնդրահարույց էր մնում աղբարկղերի և աղբանոթների հարակից տարածքի մաքրությունն ու գարշահոտությունը, աղբատար մեքենայի սանիտարահիգիենիկ վիճակը, խոշորացված համայնքների բնակավայրերի մեծ մասում կենտրոնացված աղբահանություն չէր իրականացվում:

Աղբահանության ընդլայնված ծառայությունների ծախսերը հոգալու և դրանց հետագա բարելավման նպատակով համայնքների ավագանիները 2022թ. որոշեցին բարձրացնել աղբահանության վարձավճարներն այն բնակավայրերում, որտեղ իրականացվում էր կենտրոնացված աղբահանություն: Վարձավճարների հավաքագրումը 2022թ. դարձավ խիստ մտահոգիչ, ինչի արդյունքում համայնքների ավագանիներին առաջարկվեց քննարկել 2023թ. սկսած աղբահանության ծառայությունների մատուցումը իրականացնել ոչ թե համայնքների կոմունալ սպասարկման և բարեկարգման ՀՈԱԿ-ների կողմից, այլ մասնավոր կազմակերպությունների միջոցով՝ գնումների ընթացակարգով: Քննարկվում էր մասնավոր կազմակերպության միջոցով աղբահանության իրականացումը կազմակերպել խոշորացված համայնքների բոլոր բնակավայրերում՝ աղբահանության գույքն անհատույց օտարելով ընտրված կազմակերպություններին և համայնքի կողմից վերահսկողություն սահմանելով աղբահանության նորմատիվների պահպանման հանդեպ: Նախատեսվում էր նաև վարձավճարի հավաքագրման գործառույթները հանձնել մասնավոր կազմակերպությանը և բացառել աղբահանության կազմակերպման և ծառայությունների որակի բարելավման նպատակով համայնքի բյուջեից հետագա լրացուցիչ ծախսերի կատարումը:

Ստեփանավան, Թումանյան, Սցենար 4. Փողով, մտքով ու պատասխանատվությամբ

2019թ. Ստեփանավան և Թումանյան համայնքների ավագանիները, հաշվի առնելով աղբահանության ծառայությունների վերաբերյալ բնակիչների բարձրաձայնած խնդիրները, որոշեցին համայնքների բյուջեներում էական միջոցներ նախատեսել ծառայությունների որակի բարելավման նպատակով: Ավագանիները հաշվի առան նաև այն, որ բնակիչների առանձին խմբեր տարբեր ակնկալիքներ ունեն աղբահանության ծառայությունների որակից, ինչպես նաև տարբեր ֆինանսական հնարավորություններ և պատրաստակամություն՝ իրենց ակնկալիքները բավարարելուն ուղղված ֆինանսական բեռ կրելու առումով:

Որոշվեց, 2020թ. սկսած, միասնական կենտրոնացված աղբահանություն իրականացնել Ստեփանավան համայնքի բոլոր բնակավայրերում: Համայնքների բոլոր բնակավայրերում ծառայությունը կազմակերպվում էր բացառապես աղբարկղերից աղբահանությամբ, և շրջիկ աղբատարներին աղբը հանձնելու պրակտիկան դադարեցվեց:

Համայնքների ավագանիները նաև որոշեցին կուտակված կենցաղային աղբը այրելու, տնային տնտեսությանը կից անհատական աղբավայրերում, ջրատարներում կամ պատահական վայրում թափելու դեպքերը բացառելու նպատակով, 2021թ. սկսած, իրենց լիազորությունների և իրավասությունների սահմաններում ամենայն խստությամբ քննել ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի Հոդված 43.1-ով նախատեսված վարչական իրավախախտումների՝ աղբահանության և սանիտարական մաքրման կանոնները խախտելու և չսահմանված վայրերում սպառման թափոններ թափելու վերաբերյալ գործերը՝ համաձայն ՀՀ ՎԻՎՕ Հոդված 2191-ի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի և իրավական այլ ակտերի դրույթների:

Վարչական պատասխանատվության կիրարկումը խստացնելուն զուգահեռ, որոշվեց նաև համայնքներում միջոցներ տրամադրել և վերահսկողություն սահմանել աղբահանության ոլորտում առկա մի շարք նորմատիվային պահանջները պահպանելու հարցում, այդ թվում՝ կենտրոնացված աղբավայրերը ցանկապատումը, աղբատար մեքենաների սանիտարական մաքրման և լվացման ապահովումը: Միջոցներ հատկացվեցին տեղադրված աղբամանները կենդանիներից պաշտպանելու նպատակով աղբատեղիների չորրորդ կողմը ցանցապատելու նպատակով: Աղբի տեսակավորման նպատակով 2022թ. համայնքի բյուջեում լրացուցիչ միջոցներ հատկացվեցին Ստեփանավան քաղաքում պլաստիկ շշերի համար տարբերակված աղբահանություն կազմակերպելու, բակերը, միջբակային տարածքները, փողոցները, հրապարակները, զբոսայգիներն ու պուրակները աղբանոթներով ապահովելու նպատակով:

Տնային տնտեսությունների և տնտեսվարողների տարբեր խմբերի ակնկալիքները, կարիքներն ու հնարավորությունները հաշվի առնելով՝ Ստեփանավան և Թումանյան քաղաքներում 2022թ. ներդրվեցին աղբահանության ծառայությունների լրացուցիչ՝ անհատականացված փաթեթներ, այդ թվում՝ բաժանորդին անհատական աղբամանների տրամադրում և դրանցից աղբահանության իրականացում սահմանված գրաֆիկով:

2023թ. Ստեփանավան համայնքի ավագանին «Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման միավորում» կոալիցիոն ցանցին պատվիրեց իրականացնել շրջակա միջավայրի զգայուն ընկալիչների վրա բնապահպանական ազդեցությունների ռիսկերի գնահատում՝ ծառայությունների դիմաց վճարելով համայնքի բյուջեից:

Դիլիջան, Նոյեմբերյան, Սցենար 1. Աղբահանության ճակատում՝ անփոփոխ

Տավուշի մարզի Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքների բոլոր բնակավայրերում 2020թ. աղբահանությունն իրականացվում էր կենտրոնացված կարգով՝ շրջիկ աղբատար մեքենային աղբը հանձնելու կամ աղբարկղերի մեջ թափելու միջոցով: Վերազինված էր համայնքների աղբատար մեքենաների պարկը: Այդուհանդերձ, համայնքների մի շարք բնակավայրերում բնակիչները տանը կուտակված կենցաղային աղբը հաճախ այրում էին կամ թափում իրենց տնային տնտեսությանը կից անհատական աղբավայրերում: Առանձին դեպքերում բնակիչները կուտակված աղբը սեփական տրանսպորտային միջոցներով տեղափոխում էին կենտրոնացված աղբավայր կամ թափում ջրատարի մեջ:

Դիլիջան և Նոյեմբերյան քաղաքներում աղբահանության ծառայության դիմաց վճարում էին տնային տնտեսությունների բացարձակ մեծամասնությունը՝ ավելի քան 90%-ը: Այդուհանդերձ, խոշորացված համայնքների մյուս բնակավայրերում աղբահանության վարձավճարի հավաքագրումը մնում էր անբավարար (շուրջ 50%): Եթե Նոյեմբերյան քաղաքի բնակիչների ճնշող մեծամասնությունը (90%) համարում էր, թե վարձավճարը այս կամ այն կերպ մատչելի է, ապա Դիլիջանում չորսից միայն երեքն էր վարձավճարը մատչելի համարում: Հաշվի առնելով ծառայությունների մատչելիության ապահովման անհրաժեշտությունը՝ երկու համայնքներում ավագանին որոշում ընդունեց նվազեցնել աղբահանության ծառայությունների վարձավճարի չափը, և համայնքի բյուջեի միջոցների հաշվին մասնակիորեն սուբսիդավորել աղբահանության ծառայությունների ծախսերը՝ աբահանություն իրականացնող կազմակերպությանը փոխհատուցելով սահմանված գումար:

Թեև աղբարկղերի և աղբանոթների քանակն ու տարողունակությունը, տեղակայումն ու հասանելիությունը, հարակից տարածքի մաքրությունն ու տհաճ հոտերի առկայությունը, աղբատար մեքենայի սանիտարահիգիենիկ վիճակը խնդրահարույց էր մնում համայնքներում, այդուհանդերձ, համայնքների ավագանիները, երկար քննարկումներից հետո որոշեցին աղբահանության ծառայության որակի բարելավման նպատակով լրացուցիչ ծախսեր չկատարել համայնքի բյուջեից: Ծառայությունների որակից հատկապես դժգոհում էին Դիլիջան քաղաքի, Բարեկամավան և Ձուջևան բնակավայրերի բնակիչները: Այդուհանդերձ, համայնքներում փակվող կափարիչներով լրացուցիչ աղբամաններ տեղադրելու, դրանց համար ցանցեր կիրառելու, աղբահանության հաճախականությունն ավելացնելու և մի շարք այլ խնդիրների քննարկումը հետաձգվեց մինչև 2022 թվականը:

Նման որոշումը հիմնավորվում էր, մասնավորապես, հաշվի առնելով, որ Դիլիջան և Նոյեմբերյան համայնքների մի շարք բնակավայրերի բնակիչները համեմատաբար բավարարված էին աղբահանության իրականացման և աղբանոթների մաքրման հաճախությունից, որ լանդշաֆտի կտրտվածության և ճանապարհների վատ վիճակի ու վտանգավորության պատճառով աղբահանության ծառայություններում նոր ներդրումները նպատակահարմար չէին, Դիլիջանն արդեն իսկ ուներ մեծ թվով տեխնիկա, իսկ վարձավճարների բարձրացումը խնդրահարույց էր:

Համայնքների խոշորացմանը հաջորդած հինգ տարիներին աղբահանության ծառայությունների բարելավմանը համայնքի բյուջեից լրացուցիչ միջոցներ չհատկացվեցին: Աղբահանության ոլորտում առկա նորմատիվային պահանջները համայնքներում հիմնականում չէին պահպանվում, կենտրոնացված աղբավայրերը մնում էին անցանկապատ, աղբատար մեքենաների սանիտարական մաքրման և լվացման հարմարություններ չկային:

Դիլիջան, Նոյեմբերյան, Սցենար 2. Աղբի ու աղբատարի արանքում

Տավուշի մարզի խոշորացված Դիլիջան և Նոյեմբերյան համայնքների 2018թ. բյուջեն կազմել է, համապատասխանաբար, շուրջ 767 միլիոն և 498 միլիոն ՀՀ դրամ: Աղբահանության ծառայությունների մատուցման ապահովման նպատակով համայնքները բյուջեից կատարել են ծախսեր, որոնք կազմել են բյուջեի շուրջ 12%-ը (93 միլիոն և 62 միլիոն ՀՀ դրամ համապատասխանաբար):

Հաշվի առնելով աղբահանության ծառայությունների որակի վերաբերյալ համայնքի բնակիչների բարձրաձայնած խնդիրները՝ ավագանիները 2020թ. համայնքների բյուջեներում աղբահանության ծառայությունների որակի բարելավմանն ուղղված հատկացումներն նախատեսեցին: Գնվեցին և տեղադրվեցին մինչև 0.7 խմ տարողությամբ մետաղական նոր աղբարկղեր: 2021թ. տարեսկզբին Դիլիջան համայնքի բնակավայրերում տեղակայված էր 600 աղբարկղ՝ 2018թ. 500-ի փոխարեն, ընդ որում շուրջ 200 աղբարկղ տեղադրված էր Թեղուտ, Հաղարծին, Գոշ, Խաչարձան, Աղավնավանք, Հովք բնակավայրերում: Նոյեմբերյանի բոլոր բնակավայրերում տեղադրված էր շուրջ 255 աղբարկղ՝ 2018թ. 155-ի փոխարեն (2018թ. Բարեկամավանում աղբարկղ չկար, իսկ Նոյեմբերյանում քաղաքում կար ընդամենը 10 աղբարկղ): 2020թ. Դիլիջանն ու Նոյեմբերյանը ձեռք բերեցին նաև մեկական աղբատար նոր մեքենա:

Այդուհանդերձ, աղբահանության ծառայությունների բարելավմանն ուղղված հատկացումների ու նոր գույքի ձեռքբերման պարագայում անգամ համայնքների բնակիչները շարունակում էին դժգոհել ծառայությունների որակից: Այսպես, Դիլիջան և Նոյեմբերյան բնակավայրերում աղբամաններից և աղբանոթներից աղբահեռացման հաճախականություն ու գրաֆիկը 2018-2022թթ. մնացին անփոփոխ: Խնդրահարույց էր մնում աղբարկղերի և աղբանոթների հարակից տարածքի մաքրությունն ու տհաճ հոտերի առկայությունը: Թե՛ Դիլիջանում, թե՛ Նոյեմբերյանում ձեռք բերված նոր աղբատար մեքենաները սպասարկում էին բացառապես ոչ կենտրոնական բնակավայրերը: Խնդրահարույց էր աղբատար մեքենաների սանիտարահիգիենիկ վիճակը:

Անգամ նոր ներդրումների պարագայում համայնքների ոչ կենտրոնական բնակավայրերում որոշ բնակիչներ շարունակում էին այրել աղբը կամ թափել սեփական աղբավայրում և ջրատարների մեջ:

Խնդիրներ առաջացան նաև համայնքների կենտրոնական բնակավայրերում տեղադրված նոր աղբարկղերի շուրջ: Բնակիչները նոր աղբարկղերը հաճախ հեռացնում էին իրենց տների մոտակայքից կամ շրջում գետնին, որպեսզի դրանց մեջ աղբ լցնել հնարավոր չլիներ: Նման վարքագիծը բնակիչները բացատրում էին «աղբի կուտակումը քթի տակից հեռացնելու» մտադրությամբ և նշում, որ աղբարկղերից աղբի հեռացման հաճախականությունը և աղբարկղերի սանիտարահիգիենիկ վիճակը, հատկապես շոգ ամիսներն հաշվի առնելով, չեն ցանկանում հաշտվել իրենց հարևանությամբ աղբարկղի գոյության հետ: Միաժամանակ, շատ դիլիջանցիներ և նոյեմբերյանցիներ դժգոհում էին, թե իրենց ամենահարմար աղբարկղը «հեռու է» իրենց տնից:

Դիլիջան, Նոյեմբերյան Սցենար 3. Նվեր աղբատարի ատամնանիվները չեն հաշվում

Թեև Դիլիջան և Նոյեմբերյան համայնքների խոշորացմանը հաջորդած տարիներին բնակիչները շարունակաբար բարձրաձայնում էին աղբահանության ծառայությունների որակի վերաբերյալ բազմաթիվ մտահոգություններ, այդուհանդերձ ծառայությունների բարելավման նպատակով համայնքի բյուջեից լրացուցիչ միջոցներ չհատկացվեցին:

2020թ. վաղ գարնանը Հայաստանի տարածաշրջանային զարգացման հիմնադրամը Նոյեմբերյան բնակավայրին տրամադրեց նոր աղբատար մեքենա, իսկ ծագումով բարեկամավանցի ռուսաստանաբնակ Կառլեն Թավշյանի նպատակային նվիրատվությամբ Բարեկամավանի համար գնվեցին և տեղադրվեցին մետաղական աբարկղեր ու աղբանոթներ: Բարերարի նվիրատվությամբ Բարեկամավանը ստացավ նաև աղբատար մեքենա՝ բացառապես գյուղի կարիքների համար: Նույն տարվա ամռանը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Տավուշի թեմի և հանրապետության խոշորագույն ձեռնարկություններից մեկի համատեղ ջանքերով և ՀՀ պետական բյուջեից սուբսիդավորմամբ իրականացվող «Աղբի տեղը» ծրագրի շրջանակներում Թեղուտ, Հաղարծին և Գոշ բնակավայրերին տրամադրվեց մեկ շրջիկ աղբատար:

Չնայած արտաքին աղբյուրներից համայնքների ստացած գույքին՝ դրանց շահագործման և պահպանության խնդիրներում համայնքները բախվեցին մի շարք խնդիրների: Նախ, աղբատար մեքենաների շահագործման, աղբահեռացման, աղբամանների և աղբանոթների օգտագործման ընթացիկ ծախսերի կատարման համար միջոցներ չէին նախատեսվել համայնքների 2020թ. բյուջեների վարչական մասում:

2021թ. և հետագա տարիներին նվիրատվության միջոցով ստացված աղբահանության համայնքային նոր գույքի օգտագործման համար Դիլիջանն ու Նոյեմբերյանը ստիպված էին որոշակի լրացուցիչ միջոցներ հատկացնել իրենց բյուջեներից: Այդուհանդերձ, սահմանափակ հատկացումներն ապահովում էին ծառայությունների մատուցումը աղբահանության նախկին հաճախականությամբ և գրաֆիկով: Խնդրահարույց էր մնում աղբարկղերի և աղբանոթների հարակից տարածքի մաքրությունն ու գարշահոտությունը, աղբատար մեքենայի սանիտարահիգիենիկ վիճակը:

Աղբահանության ընդլայնված ծառայությունների ծախսերը հոգալու և դրանց հետագա բարելավման նպատակով համայնքների ավագանիները 2022թ. որոշեցին բարձրացնել աղբահանության վարձավճարները: Վարձավճարների հավաքագրումը 2022թ. դարձավ խիստ մտահոգիչ, ինչի արդյունքում համայնքների ավագանիներին առաջարկվեց քննարկել 2023թ. սկսած աղբահանության ծառայությունների մատուցումը իրականացնել ոչ թե համայնքների կոմունալ սպասարկման և բարեկարգման ՀՈԱԿ-ների կողմից, այլ մասնավոր կազմակերպությունների միջոցով՝ գնումների ընթացակարգով: Քննարկվում էր մասնավոր կազմակերպության միջոցով աղբահանության իրականացումը կազմակերպել խոշորացված համայնքների բոլոր բնակավայրերում՝ աղբահանության գույքը անհատույց օտարելով ընտրված կազմակերպություններին և համայնքի կողմից վերահսկողություն սահմանելով աղբահանության նորմատիվների պահպանման հանդեպ: Նախատեսվում էր նաև վարձավճարի հավաքագրման գործառույթները հանձնել մասնավոր կազմակերպությանը և բացառել աղբահանության կազմակերպման և ծառայությունների որակի բարելավման նպատակով համայնքի բյուջեից հետագա լրացուցիչ ծախսերի կատարումը:

Դիլիջան, Նոյեմբերյան Սցենար 4. Փողով, մտքով ու պատասխանատվությամբ

2019թ. Դիլիջան և Նոյեմբերյան համայնքների ավագանիները, հաշվի առնելով աղբահանության ծառայությունների վերաբերյալ բնակիչների բարձրաձայնած խնդիրները, որոշեցին համայնքների բյուջեներում էական միջոցներ նախատեսել ծառայությունների որակի բարելավման նպատակով: Ավագանիները հաշվի առան նաև այն, որ բնակիչների առանձին խմբեր տարբեր ակնկալիքներ ունեն աղբահանության ծառայությունների որակից, ինչպես նաև տարբեր ֆինանսական հնարավորություններ և պատրաստակամություն՝ իրենց ակնկալիքները բավարարելուն ուղղված ֆինանսական բեռ կրելու առումով:

Որոշվեց, 2020թ. սկսած, միասնական կենտրոնացված աղբահանություն իրականացնել Դիլիջան և Նոյեմբերյան համայնքների բոլոր բնակավայրերում: Համայնքների բոլոր բնակավայրերում ծառայությունը կազմակերպվում էր բացառապես աղբարկղերից աղբահանությամբ, և շրջիկ աղբատարներին աղբը հանձնելու պրակտիկան դադարեցվեց:

Համայնքների ավագանիները նաև որոշեցին կուտակված կենցաղային աղբը այրելու, տնային տնտեսությանը կից անհատական աղբավայրերում, ջրատարներում կամ պատահական վայրում թափելու դեպքերը բացառելու նպատակով, 2021թ. սկսած, իրենց լիազորությունների և իրավասությունների սահմաններում ամենայն խստությամբ քննել ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի Հոդված 43.1-ով նախատեսված վարչական իրավախախտումների՝ աղբահանության և սանիտարական մաքրման կանոնները խախտելու և չսահմանված վայրերում սպառման թափոններ թափելու վերաբերյալ գործերը՝ համաձայն ՀՀ ՎԻՎՕ Հոդված 2191-ի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի և իրավական այլ ակտերի դրույթների:

Վարչական պատասխանատվության կիրարկումը խստացնելուն զուգահեռ, որոշվեց նաև համայնքներում միջոցներ տրամադրել և վերահսկողություն սահմանել աղբահանության ոլորտում առկա մի շարք նորմատիվային պահանջները պահպանելու հարցում, այդ թվում՝ կենտրոնացված աղբավայրերը ցանկապատումը, աղբատար մեքենաների սանիտարական մաքրման և լվացման ապահովումը: Միջոցներ հատկացվեցին տեղադրված աղբամանները կենդանիներից պաշտպանելու նպատակով աղբատեղիների չորրորդ կողմը ցանցապատելու նպատակով: Աղբի տեսակավորման նպատակով 2022թ. բյուջեներում լրացուցիչ միջոցներ հատկացվեցին Դիլիջան և Նոյեմբերյան բնակավայրերում պլաստիկ շշերի համար տարբերակված աղբահանություն կազմակերպելու, բակերը, միջբակային տարածքները, փողոցները, հրապարակները, զբոսայգիներն ու պուրակները աղբանոթներով ապահովելու նպատակով:

Տնային տնտեսությունների և տնտեսվարողների տարբեր խմբերի ակնկալիքները, կարիքներն ու հնարավորությունները հաշվի առնելով՝ Դիլիջան և Նոյեմբերյան բնակավայրերում 2022թ. ներդրվեցին աղբահանության ծառայությունների լրացուցիչ՝ անհատականացված փաթեթներ, այդ թվում՝ բաժանորդին անհատական աղբամանների տրամադրում և դրանցից աղբահանության իրականացում սահմանված գրաֆիկով:

2023թ. Դիլիջանի ավագանին «Համայնքների զարգացման և մասնակցային կառավարման միավորում» կոալիցիոն ցանցին պատվիրեց իրականացնել շրջակա միջավայրի զգայուն ընկալիչների վրա բնապահպանական ազդեցությունների ռիսկերի գնահատում՝ ծառայությունների դիմաց վճարելով համայնքի բյուջեից:

Հավելված 3. Համահամայնքային քննարկման տարածական նկարագիրը



Հավելված 4. Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքների վերաբերյալ սոցիալական երկխոսությունը զուգահեռ քննարկումների արդյունքների համադրման միջոցով



Հավելված 5. Ախուրյան, Աշոցք, Ստեփանավան, Թումանյան, Դիլիջան և Նոյեմբերյան խոշորացված համայնքներում աղբահանության ծառայությունների բարելավման այլընտրանքային տարբերակներում ներառված հիմնախնդիրները, հիմնական առանցքները

- Տեղական ժողովրդավարություն. խոշորացում, արդյունավետ կառավարում, թափանցիկություն, հաշվետվողականություն
- Աշխարհագրություն և ենթակառուցվածքներ (ֆիզիկական). լանդշաֆտի կտրտվածություն, ճանապարհների վիճակ
- Աղբահանության ծառայությունների մատուցման որակի չափորոշիչներ. աղբահանության ծառայությունների մոդուս՝ շրջիկ մեքենաներով, աղբամաններից, աղբահեռացման հաճախականություն և գրաֆիկ, աղբարկղերի և աղբանոթների տեղադրման տոպոգրաֆիա՝ ծածկույթ, խտություն, ծավալ, ծառայությունների մատուցում հանրային/մասնավոր կազմակերպության կողմից
- Համայնքի բյուջե. բյուջեի մուտքեր, վարձավճարների հավաքագրում, սուբսիդավորում, ծախսերի գերակայություններ բյուջեի վարչական և ֆոնդային մասերից
- Համայնքում կարողություններ. մարդկային կապիտալ, ինստիտուցիոնալ կարողություններ
- Մշակույթ և կենցաղ. իրազեկվածություն, սոցիալական նորմեր, արժեքներ, վերաբերմունք, վարքագիծ
- Տնտեսական գործունեություն. հիմնական ճյուղեր, տնտեսվարողների կարիքներ
- Աղքատություն

Հավելված 6. Համահամայնքային քննարկումների արդյունքների համադրություն-հակադրություն սանդղակը